

**ԱՀՄԵԴ ՖԵՀԻՄ ԲԵՅԻ
ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**





Գառնիկ Խաչատուրի Ստեփանյան (Տեր-Ստեփանյան, 1909-1989), ծն.Մամախաթուն, Էրզրոմի մարզ, Թուրքիա: 1915 թվականին Մեծ եղեռնին տարագրվել է Դեյր-Չոր, հասել Մալաթիա: Առաջին համաշխարհայինից հետո ընկել է Սեբաստիա, որտեղ ստացել է նախնական կրթությունը: 1923 թվականին հայ որբերի հետ տեղափոխվել է Յոնաստան, ապաստան գտել Էդիպոսի, Խայքիսի և Օրոպոսի որբանոցներում: 1925 թվականին ընկել է Եգիպտոս և հինգ տարի որպես գրաշար աշխատել «Արև» օրաթերթի և «Ոսկետառ»-ի տպարաններում: 1930 թվականին ներգաղթել է Խորհրդային Չայաստան և գտել իր կորցրած ծնողներին: Երևանի Պետհրատի առաջին տպարանում շարունակել է իր գրաշարական աշխատանքը: 1938 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական

ֆակուլտետը: Աշխատել է «Սովետական Չայաստան» թերթի, «Սովետական Չայաստան» ամսագրի, ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագրի» խմբագրություններում, գրականության ինստիտուտում, Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (1954-1963 թթ.՝ տնօրեն), 1963 թվականից՝ ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտում: Գիտական աշխատանքները նվիրված են արևմտահայ գրականության և թատրոնի, հասարակական մտքի զարգացման պատմությանը: Գրել է 20-ից ավելի մենագրություն և «Մղձավանջային օրեր», «Որբ աշխարհ» ինքնակենսագրական վեպերը (1945):

Երկեր

- Պետրոս Աղամյան, Ե., Չայպետհրատ, 1941, 148 էջ:
- Մղձավանջային օրեր, Ե., Չայպետհրատ, 1945, 214 էջ:
- Արփիար Արփիարյան, Ե., ՀԽՍՀ ԳԱ, 1955, 289 էջ:
- Արուսյակ Փափազյան (կյանքը և բեմական գործունեությունը), Ե., ՀԽՍՀ ԳԱ, 1955, 113 էջ:
- Մկրտիչ Ջանան, Ե., Չայկական թատերական ընկերություն, 1960, 146 էջ:
- Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հատոր 3-ի, Ե., ՀԽՍՀ ԳԱ, 1962, 1969, 1975 թթ.:
- Չայ նոր գրականության պատմություն, հատոր 2 (գրքի «Ներածություն» բաժինը գրել է Գառնիկ Ստեփանյանը), * Ե., ՀԽՍՀ ԳԱ, 1962, 516 էջ:
- Չակոբ Պարոնյան (կյանքը և հրապարակախոսությունը), Ե., Չայպետհրատ, 1964, 276 էջ:
- Կենսագրական բառարան (հայ մշակույթի գործիչներ), երեք հատորով, հատոր Ա, Ա-Թ, Ե., «Չայաստան», 1973-1990 թթ.:
- Աճառյանի հետ (հուշեր), Ե., «Չայաստան», 1976, 188 էջ:
- Վահրամ Փափազյանի հետ (հուշեր), Ե., «Սովետական գրող», 1979, 102 էջ:
- Բ, Ժ-Մ, Ե., «Սովետական գրող», 1981, 327 էջ:
- Ակնարկներ սփյուռքահայ թատրոնի պատմության, հատոր 1, Ֆրանսահայ թատրոն, ՀԽՍՀ ԳԱ, 1982, 323 էջ:
- Թուրքական աղբյուրները՝ թուրք թատրոնի զարգացման գործում հայերի դերի մասին, Ե., ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների ինֆորմացիայի կենտրոն, 1983, 51 էջ:
- Չողվածներ և հուշեր, Ե., «Սովետական գրող», 1985, 292 էջ:
- Երզնկա /հնագույն դարերից մինչև մեր օրերը/, Երևան, 2005, 680 էջ:
- Ակնարկներ սփյուռքահայ թատրոնի պատմության, հատոր 2. Ամերիկահայ թատրոն, Երևան, 2008:

Թարգմանություններ (թուրքերենից)

- Վարդանյան Չովսեփ, Ագապի (վեպ), Երևան, «Սովետական գրող», 1953, 1979, 207 էջ: «Շատախոսը» 1979:


**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**



**ԱՀՄԵՂ ՖԵՀԻՄ ԲԵՅԻ
ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(1851-1930)**

ԵՐԵՎԱՆ 2026

Նվիրվում է ականավոր
գիրնական, արևմտահայ
թատրոնի պատմաբան
ԳԱՌՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ
հիշատակին



Թուրքերենից քարգմանությունները **Գառնիկ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ**
և Հասմիկ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ
Գլխավոր խմբագիր ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

ԱՀՄԵԳ ՖԵՀԻՄ ԲԵՅԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ֆ 372 Հրատարակության է պատրաստել ՀԱՖԻ ՔԱԴՐԻ ԱԼՊՄԱՆԸ
Հայերեն հրատարակությունը պատրաստել է Հասմիկ Ստեփանյանը
Գիրքը քատրոնի, կինոյի առաջին քուրք դերասան, դերասանապետ, գրող Ահմեդ
Ֆեհիմ Բեյի հիշողություններն են: Այն հրատարակության է պատրաստել Հաֆի Քադրի
Ալպմանը (Hafi Kadi Alrman): Հուլիսի 1926թ. Ստամբուլի հեղինակավոր. «VAKİT»
(Վաքիթ - Ժամանակ) օրաթերթում որպես քերթոն է տպագրվել: «MECMUA» օրա-
թերթի արտոնատեր Քեմալ ԸԼԸՋԱԶ-ը (Kemal Ilıcak) այն համարում է 1001 կարևոր
գրքերի հրատարակության շարքում արժանի երկ: Այն առանձին գրքով քուրքերեն
լեզվով լույս է տեսել 1977թ. 223 էջ ծավալով Ստամբուլում: Այս հուլիսը կարևոր աղբ-
յուր են հանդիսանում արևմտահայ մշակույթի մաս կազմող հայկական քատերախմ-
բերի պատմության համար: Այն նույնքան կարևոր է քուրքական մշակույթում իր ներդ-
րումն ունեցած հայկական քատերախմբերի, քուրքական քատրոնի կազմավորման,
հայկական քատերախմբերում գործած և հասունացած քուրք առաջին դերասան-դե-
րասանուհիների գործունեության մասին: Գիրքը հետաքրքիր է այդ քատերախմբերի
ոչ միայն գեղարվեստական պատմության, այլև դրանց կենցաղի, բազմաթիվ կարևոր
շահեկան պատմությունների ներկայացման առումով: Կարևոր է նաև կեռավարու-
թյունները հարաբերությունները:
Մեթին Անդի Թուրքական քատրոնի պատմության համար Գառնիկ Ստեփանյա-
նի «Ուրավագիծ Արևմտահայ քատրոնի պատմության» 3 հատորները և այս գիրքը
կարևոր հիմք են հանդիսացել:
Գիրքը նախատեսված է քատերասեր հասարակության, ինչպես նաև Թատրոնի
ինստիտուտի, դասախոս-ուսանողների համար:

ՀՏԴ 792.03:82-94
ԳՄԴ 85.333

ISBN 978-9939-977-26-3

© Հաֆի Քադրի Ալպման, 1977
© Հասմիկ Ստեփանյան, 2025

Կազմի վրայի նկարը Սկրտիչ Ջիվանյանի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ6
ԱՌԱՋԱԲԱՆ. Ներածական խոսք ՀԱՖԻ ՔԱԴՐԻ ԱԼՊՄԱՆԻ.....8
ՄԱՍ 1. Մուտք..... 10
ՄԱՍ 2. 10 ամիս Էդիրնեյում25
ՄԱՍ 3. Օրդույից Սամսուն.....33
ՄԱՍ 4. Չանաքքալեյից մինչև Միդիլի.....35
ՄԱՍ 5. Թեքիրդաղում.....47
ՄԱՍ 6. Երկուսուկես տարի Անկարայում.....52
ՄԱՍ 7. Չանքըրլեյից Սամսուն72
ՄԱՍ 8. Թուլուաթի հետ միասին74
ՄԱՍ 9. Սամսունից մինչև արվեստի հին հայրենիքը.....81
ՄԱՍ 10. Մնակյանի հետ միասին92
ՄԱՍ 11. Ստամբուլի անկյուններում 103
ՄԱՍ 12. «Ահմեդ Ֆեհիմ» քատերախումբը..... 119
ՄԱՍ 13. Երբ Մնակյանի ոտքը կոտրվեց..... 123
ՄԱՍ 14. «Ահմեդ Ֆեհիմ» նոր քատերախումբը..... 129
ՄԱՍ 15. Թատերական շարժումը 30 տարիների ընթացքում..... 132
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ. Մեծ վարպետի որդին է պատմում 153
ՏԱՐԲԵՐ ՀՈԴՎԱԾՆԵՐ 157
ԲԱՌԱՐԱՆ 171

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ահմեդ Ֆեհիմ բեյը թուրք առաջին պրոֆեսիոնալ դերասանն է: Նա խաղացել է պոլսահայ թատերախմբերում, հայ նշանավոր դերասանապետների հետ:

Թուրքիայում դեռ երկար տարիներ թուրքական թատերախմբեր գոյություն չունեին: Մահմանադրությունից հոտո միայն ի հայտ եկան առաջին թուրքական թատերախմբերը: Մթնոլորտում միայն ավանդական տիկնիկային, սովերային «Կարագյոզ» և փողոցային լարախաղացներով, ծաղրածույով, տեղում հնարվող սյուժեներով Օրթա օյունն էր տարածված:

Ահմեդ Ֆեհիմը որպես նվիրյալ լուրջ դերասան, կատակերգակ, երբեք վերոհիշյալ ավանդական արևելյան խմբերում չհայտնվեց:

Ահմեդ Ֆեհիմի մասին առաջին անգամ տեղեկանում ենք Գառնիկ Ստեփանյանի «Ուրվագիծ արևմտահայ թատրոնի» եռահատոր ուսումնասիրության շնորհիվ, որպես հայկական թատերախմբերում տարիներ խաղացած առաջին թուրք դերասանի:

Նրա հուշերն իր ապրած կյանքի ժամանակագրությունն է: Սա նաև հայ թատրոնի պատմությունն է և նախապատմությունը թուրք պրոֆեսիոնալ թատրոնի: Հուշերը չափազանց կարևոր են այն առումով, որ այն հեռու է ակադեմիական շարադրանք լինելուց: Սա շարունակական պատմությունն է Պոլսում, անատոլիական քաղաքներում և բալկանյան երկրներում հյուրախաղերով հանդես եկած դերասանի, որն ամենայն մանրամասնությամբ նկարագրել է իր ապրած տարիների, լավ ու անոթի օրերի պատմությունը, ուր ամենօրյա կենցաղային խնդիրները հիմնական նյութն են գրքի: Հենց այս հանգամանքն էլ կարևորում է հուշերը և թատրոնի պատմությանը ընձեռնում տվյալ տարիների բազմաթիվ երևույթների իրական նկարագրությունները, թատերական կյանքի ամենօրյա խոհանոցը, որոնք չափազանց մարդկային են և կարևոր դեր են խաղացել թատրոնի պատմության համար:

Ահմեդ Ֆեհիմի հուշերն առանձնահատուկ հմայք ու կարևորություն ունեն այն առումով, որ հայ թատրոնի դերասանների ներկայացումների մասին տրվում են ոչ միայն մասնագիտական, ակադեմիական գնահատականներ և եզրահանգումներ, այլ պարզ, հասարակ կարծիքներ՝ կապված այդ օրերի, տվյալ ներկայացումների, վայրի, հովանավոր անձանց, դեպքերի հետ՝ առանց շպարման:

Այս հուշերը երախտագիտության տուրք են հայ թատրոնին, նրա դերասանապետներին և խաղընկերներին, առանց որոնց թուրքական թատրոնի պատմությունը բազմաթիվ ճերմակ էջերով կլիներ:

Ֆեհիմը ճշմարիտ հայելու նման տարբերակում է մասնավորապես անատոլիական շրջագայությունների ժամանակ թատրոնին, որպես երևույթ, կյանքում առաջին անգամ ծանոթացող թուրք ժողովրդի, նրա քաղաքական և կրոնական առաջնորդների իրարամերժ վերաբերմունքը, սակայն գոհ է, որ թատրոնի շնորհիվ հնարավոր դարձավ հիմնականում անգրագետ Թուրքիա բերել արևմտաեվրոպական մշակույթը, գրականությունը, ծանոթացնել այդ երկրներին, նրանց պատմությանը, կենցաղին:

Օսմանյան կայսրության նման փակ երկրի համար ֆրանսիական հեղափոխական գաղափարների ներթափանցումը ևս հսկայական նշանակություն ունեցավ: Այս ամենը առիթ դարձավ Թուրքիայում նոր գրականության, գրական թուրքերեն լեզվի, դրամատուրգիայի առաջացմանը և զարգացմանը: Չէր լինի հայ թատրոնը, չէր լինի լուսավորական շարժումը, հայ թատերախմբերի շուրջ հավաքված և համագործակցող թուրք մտավորականությունը, թուրք լուսավորիչների սերունդը: Այս ամենն արժևորում են Ահմեդ Ֆեհիմ բեյի հուշերը, որպես կարևոր վկայակոչություն և փաստագրական նյութ Օսմանյան կայսրության մշակութային կյանքի: Պարզ լեզվով գրված այս հուշերում թուրք արտիստ մարդն է, որի հավատամքն է եղել թատրոնը, ազուցված հայ թատրոնի և նրա նվիրյալների հետ:

Հասմիկ Սյրեփանյան



Ա Ռ Ա Չ Ա Ք Ա Ն

1876 թվականին «Կետիկ փաշայի» թատրոնում, «Երկու խուլ» կատակերգությունում Բոնիֆասի դերում առաջին անգամ բեմ ոտք դրած Ահմեդ Ֆեհիմ Բեյը (1856-1930), Թովմաս Ֆատուլաճյանի թատերախմբի հետ Բուրսա կատարած հյուրախաղերի ընթացքում առիթ ունեցավ ծանոթանալու Ահմեդ Վեֆիկ փաշայի հետ: Մոլիերի երկերը թուրքերենի թարգմանած, փոխադրած, ադապտացրած և թուրքական թատրոնի պատմության մեջ հսկայական ներդրում ունեցած Վեֆիկ փաշայից մեծ հնարավորություններ և դյուրացում էր ակնկալվում: Կարելի է նաև ասել, որ Վեֆիկ Փաշան մեծ դեր է խաղացել թուրք թատրոնի առաջին դերասան Ահմեդ Ֆեհիմ բեյի, որպես թուրք դերասանի կազմավորման մեջ:

Մոլիերի համար ասում են, որ նա «Թատրոնին նոր կյանք տվեց»: Նրա երկերը ցույց են տալիս մարդու էությունը, մինչև ուղնուծուծը: Մարդ արարածը որչափ որ տարբեր բնավորություններ ունի, նա այդ ամենը ցուցադրում է: Մոլիերի պիեսները թատրոնի գլխավոր ուղենիշներն են: Կարևոր է, որ այս ամենը գտնում ենք նաև կրթության հետո գրված կատակերգություններում: Դրանք լիարժեքորեն «Մարդ» և «Կյանք» են արտահայտում: Մյուս կողմից, եթե այս ամենին հետևում են կատակերգության տեսանկյունից...

Սակայն կատակերգություններն ունեն իրենց ցավագին կողմերը ևս:

Դերասանը, որն ընկալում է, թե ինչպես խաղալ Մոլիերի կատակերգությունները, դյուրությամբ կարող է խաղալ բոլոր «նոր» կատակերգություններում ևս: Այս պատճառով նրա բոլոր երկերը կարդացվելիք են և դրանցից հաճույք կարելի է ստանալ: Ապագան շատ կարդացող, սակայն հասկանալով կարդացող դերասաններինն է: Հարկ է կարդալ, գրականությամբ հետաքրքրվել, այլապես դերասանական արվեստը չի զարգանա:

Այս խոսքերը Ահմեդ Ֆեհիմ բեյի՝ թատրոնի և դերասանի վերաբերյալ հայացքների հայելին են: 50 տարի թուրք թատրոնում մեծ ներդրում ունեցած առաջին մահմեդական թուրք դերասան Ահմեդ Ֆեհիմ բեյի հուշերը թատերասեր նոր սերնդին ներկայացնելը մեզ համար հաճելի մի պարտականություն եղավ:

1926թ. «VAKIT» (Ժամանակ) օրաթերթում «50 տարի բեմում» վերնագրի ներքո տպագրված հուշերը խմբագրեցինք, դրանց հավելեցինք նաև նրա անձնական կյանքի մասին որդուց՝ նկարիչ Մյունիֆ Ֆեհիմ Օզարմանից

մեր լսածները և ստեղծեցինք այս գիրքը: Ուշագրավ է, որ Ահմեդ Ֆեհիմ բեյի կողմից թատրոնը որպես մասնագիտություն ընտրելը համընկել է մի ժամանակաշրջանի հետ, երբ դերասանին որպես ծաղրածու էին ընկալում, անգամ դատարանում որպես վկա չէին ընդունում: Հուշերից մեկում բերվում է ծովային ծառայությունը լքած, փաշայի գավակ Ալի էֆենդիի՝ Չոնգուլալում տեղի ունեցած մահվան տխուր պատմությունը: «Ցավալի է, որ դիակը միայն ընկերները, տեղացի հույները, հայերը և հրեաները բարձրացրին, իսկ տեղացի մահմեդականներից և ոչ մեկը թաղմանը ներկա չգտնվեց, քանզի հանգուցյալն ընդամենը՝ դերասան էր:

«Մեր դատարաններում նույնիսկ որպես վկա չընդունվող, հանրությունում իր տեղը չգտած, կրոն, հավատ, Ալլահ չունեցող մի դերասան էր»,-ասում էին:

Ահմեդ Ֆեհիմ բեյը ջարդված մարդկանց, ծաղրածուի այդ կնիքը կարողացավ ներկայացնել որպես «էֆենդիների», բոլոր արգելքները հիմքից վերացրեց և նրանց հարգարժան մարդկանց շարքը դասեց: Նրա մատուցած ծառայություններից մեկն էլ, անկասկած, դա է:

Այդ ընթացքում հանդիպեցինք Ահմեդ Ֆեհիմ բեյի առաջին աշակերտներից Գալպ Արջանին՝ մահվանից 10 օր առաջ: Այդ հանդիպումն մասին, հարգարժան Գալիպի մի հոդվածը՝ տպված «Գեղեցիկ արվեստներ» ամսագրում և այլք, կգտնեք մեր գրքի վերջնամասում:

Ահմեդ Ֆեհիմ բեյի հուշերում ակնհայտորեն թուրք թատրոնի վերաբերյալ կարևոր տեղեկություններ կան: Այդ տեսանկյունից տվյալ երկի հրատարակումը համահունչ կլինի հրատարակվելիք 1001 կարևոր գրքերից մեկի նպատակներին:

Հաֆի Կադրի Ալփան



Ես այնպիսի մի հին գիրք եմ, որի առաջին և վերջին էջերը կորել են...

Ահմեդ Յեհիս Բեյ

ԱՌ-ԱԶԻՆ ՄԱՍ

ՄՈՒՏՔ

1876 թվականը Կեդիկ փաշայի Գյուլլի Հակոբի ղեկավարությամբ գործող թատերախումբ մտնելու տարին է: Այս թատրոնն իմ ընդունվելու տարում ռուսական պատերազմի սկսվելու պատճառով խափանվելու վրա էր: Առհասարակ Թուրքիայում հենց որ պատերազմի հոտ էր գալիս, թատրոնի գործերը տակնուվրա էին լինում:

Բենում առաջին քայլս արեցի «Երկու կույրեր» կատակերգության մեջ Բոնիֆասի դերով: Խաղին մասնակցում էր հայտնի դերասան և ռեժիսոր Ֆասուլաճյանը: Նա իմ մասին ասել էր. «Այս տղան լավ հունցվելիք խմոր է, պետք է ձեռքի տակ պահել»:

Հաջորդ օրն իսկույն ինձ ստորագրել տվեցին մի պայմանագիր: Վերջապես վեց ամիս հետո Ֆասուլաճյանի հետ միասին Բուրսա գնացինք: Խմբում էին՝ Թոսպատյանը, Թրյանը, Չանիկյանը, Հոլասյանը, Պինեմիճյանը, կանանցից՝ տիկին Ֆասուլաճյանը, Հրանույշը, Նվարդը, Շիրինյանը, Վիրժինյա Զաղիկյանը, Վիկտորը, Սոֆին: Ճամփա ընկնելիս շտապելուց մոռացել էի անձնագիրս վերցրել: Բուրսայի ճամփին, սայլով գնալիս, մեր դիմաց մի ժանդարն դուրս եկավ: Հարցրեց անցագիրս: Պարզ է, որ անգրագետ էր: Ես իսկույն գրպանումս գտնվող՝ կեսը թուրքերեն, կեսը հայերեն գրված մի ձեռագիր հանեցի և ցույց տվեցի:

Ժանդարնը գոհունակությամբ ասաց.

- Հա քո անցագիրն է, անցիր:

Բուրսայի քաղաքագլուխն էր Ահմեդ Վեֆիկ փաշան: Գեռևս Ստամբուլում փաշայի մասին մի շարք լավ բաներ էի լսել: Փաշան շատ թատերասեր մարդ էր: Շատ էր սիրում Մոլիերին: Առաջինն էր Կեդիկ փաշայում պիես ներկայացնելու թույլտվություն տվել: Այսպիսի ուժեղ, նշանավոր մարդ էր...

Շատ էի ցանկանում նրան տեսնել: «Ախ, սա մարդուն մի անգամ տեսնեն», - մտածում էի շարունակ:

Բուրսայում առաջին ներկայացումը տալու գիշերը փաշային տեսա հեռվից՝ իր օբյակում: Խաղի վերջում էլ մոտիկից տեսա: Փաշան կարճահասակ,

գեր, կլոր մորուքով, հաճելի դեմքով, գեղեցիկ մարդ էր: Հագին ուներ թուրքական թիկնոց, գլխին՝ ֆես, աչքերին՝ մոնոկլ: Հաճելի, ազնիվ, միաժամանակ շատ խելացի մարդ էր: Մարդկանց նկատմամբ միշտ հարգանքով էր:

Փաշային սիրաշահելու համար նախ խաղացինք Կեդիկ փաշայի թատրոնում նրա թարգմանած պիեսներից «Մերաքը» և «Բոնի ամուսնությունը»:

Հաջորդ օրը փաշան խմբի ղեկավարին կանչեց և ասաց. «Այստեղ մնացեք, մենք ձեզ համար մի թատրոն կշինենք»:

Արդարև նա այդ խոստումը կատարեց: Երկու ամսվա լարված աշխատանքից հետո սրահներով, օբյակներով, առանց որևէ պակաս մի բանի թատրոն կառուցելով մեզ ասաց.

- Ահա այս թատրոնում պիտի խաղաք և վարձ էլ պիտի չտաք: Միայն տարվա ընթացքում երկու ներկայացում պիտի տաք հիվանդանոցի օգտին: Ահա այսքան: Հետո փաշան ստեղծեց «Թատերասերների միություն», որի մեջ մտնում էին ֆրանսիական հյուպատոսը, հյուպատոսարանի թարգմանիչը, ավստրո-հունգարական հյուպատոսը, Ռեսիմ բեյը, որը հետագայում դարձավ փաշա, Շաքիր էֆենդին և Հոջա Իբրահիմը: Նրանցից մի մասը պիեսներ էր թարգմանում, մի մասն էլ հսկում էր թատրոնի աշխատանքը, իսկ Հոճա Իբրահիմն էլ գեղեցիկ կարդալ և խոսելու դաս էր տալիս:

Վեֆիկ փաշան Մոլիերի երկերը թարգմանում և շարունակ մեզ խաղալ էր տալիս: Առհասարակ նա Մոլիերի ամենաջերմ սիրահար էր: Մի օր մեզ ասաց.

- Մինչև հիմա աշխարհում երեք հազար գրող է եղել, սակայն դրանցից երեսունն են ընտրվել, իսկ երեսունից էլ առանձնացվել են տասը, տասից էլ մեկն է ընտրվել և դա էլ Մոլիերն է:

Հանգուցյալ փաշան, կարող եմ ասել, Մոլիերին ամենից լավ հասկացած, այդ մեծ գրողի ոգին ըմբռնած միակ մարդն էր: Շարունակ մեզ Մոլիերի ամեն մի պիեսի ոգին, գրելու շարժառիթը, կերպարների նկարագիրը մեկ մեկ բացատրում, սովորեցնում էր, հետևում փորձերին, պիեսների բեմադրությանը: Եթե հավանում էր՝ մինչև վերջը դիտում էր, մեզ լսում, բաց էր անում Մոլիերի փոքր հրատարակությունը, նայում, մեզ զանազան միզանացնային ուղղումներ էր սովորեցնում: Երբեմն էլ, երբ փորձը դուր չէր գալիս, իսկույն վեր էր կենում և գնում: Այդ ժամանակ մենք ամոթից և երկյուղից արյուն քրտինքի մեջ էինք ընկնում:

Ըստ էության մեր խումբը դուրս էր եկել սովորական թատերախմբի վիճակից, դարձել էր պաշտոնական մի թատրոն:

Մենք ռոճիկ էլ էինք ստանում: Իմ աշխատավարձը երկու ոսկի էր: Տարվա մեջ ինը ամիս խաղում էինք, երեք ամիս՝ հանգստանում: Առաջին տարին հիվանդությամբ անցկացրի, դրա համար էլ չէի կարողանում կանոնավոր աշխատել և աչքի ընկնել: Անուն չէի վաստակել: Բայց «Մերաքի» պիեսում Թամիզ Լեյնեթի դերն ինձ օգնեց: Այդ դերը խաղացող յուրաքանչյուրի առջև հաջողության դռները ամբողջովին կարող են բացվել, քանի որ դերն այդ հնարավորությունը տալիս էր:

Փաշան այդ գիշեր շատ էր հավանել իմ խաղը և որպես նվեր ուղարկել էր տասը ոսկի: Խմբի ղեկավար և ռեժիսոր Ֆասուլաճյանը շաբաթվա վերջին ծրարի մեջ դրված տասը ոսկին ինձ հանձնեց և ասաց.

- Այս փողը փաշան ուղարկեց քեզ ապրուստի համար:

Ես, որ ճշմարտությունը լսել էի փաշայի գործակատար Ռեֆաթ աղայից, ասացի.

- Ես փաշային ոչ մի դժգոհություն չեմ հայտնել ապրուստիս մասին: Փառք աստուծո, ապրում եմ:

Դրա վրա Ֆասուլաճյանն ասաց.

- Լավ, մի երկարացնի, քեզ գնահատելով է ուղարկել այս գումարը:

- Այդ ուրիշ բան, - պատասխանեցի, - հիմա կվերցնեմ: Այդպես երևան հանեցի ճշմարտությունը, որ նա ուզում էր կոծկել:

Ֆասուլաճյանն իմ ուսուցիչս էր և առաջին հովանավորը: Ժամանակի ամենից հայտնի դերասանն էր, լավ Մոլիեր խաղացող, դիմահարդարման էլ հմուտ արվեստագետ: Այդպիսի մի խորամանկություն չէր կարող մտքովն անցկացնել: Ինչ որ է, պատճառը չհասկացա: Առհասարակ բեմի վարպետները հաճախ նախանձում են անգամ սկսնակ դերասաններին:

Այդ տարի ռոճիկս չորս ոսկի դարձավ: Կարճ ժամանակից մի քանի ոսկի էլ ավելացավ, վերջում հասավ մինչև 12 ոսկու:

**ՈՒՉՈՒՄ ԵՆ ՄՆՋԱԽԱՂ ԽԱՂԱԼ. ԹԱՏԵՐԱԿԱՆ ԽՐԱՄՈՒՆՔ
ԲՈՒՐԱՍԱՅՈՒՄ. ԱՌԻԹԻՑ ՕԳՏՎԵԼ. ՓԱՇԱՅԻ ՍԵՐԸ ԴԵՊԻ ՇԱՐԿ
ԵՍ ԷԼ ԼԱՅ ԵՂԱ, ՏԻԿԻՆ**

Աշխատավարձիս այսպես արագ բարձրանալը վկայում էր, որ արդեն կազմակերպված դերասան եմ և խմբի անհրաժեշտ անդամներից: Ես այդ գիտակցում էի և սկսել էի մանր մունր կամակորություններ անել, անիրավությունները չհանդուրժել: Մի անգամ, Ֆասուլաճյանի ցանկությամբ և

փաշայի համաձայնությամբ տրվելիք մի պանտոմիմայի (մնջախաղի) ներկայացման ժամանակ ինձ էլ մի դեր տրվեց: Ըստ դերի՝ իմ գլխին մի ափսե էին կոտրելու: Ես չհամաձայնվեցի: Ֆասուլաճյանին ասացի.

- Ես քատրոնը, հատկապես՝ այստեղիներ, համարում եմ դպրոց: Չեմ ուզում պանտոմիմա խաղալ կամ լինել խեղկատակ: Ուզում եմ կարգին դերասան լինել:

Նա պնդեց, իսկ ես իսկույն որոշեցի թողնել թատերախումբը, հեռանալ: Պատրաստել էի իրերս, բայց Ֆասուլաճյանը հեղինակավոր մարդկանց մեջ գցեց և համոզեցին մնալ: Ի վերջո գիշերով ինձ սայլից իջեցրին:

Նուրի փաշայի հյուրանոցում մի խնջույք կազմակերպեցին: Ֆասուլաճյանն էլ մի ոսկի ժամացույց և ոսկի շոթա նվիրեց ու ասաց, թե այլևս պանտոմիմայում պիտի չխաղամ...

Սա եղավ իմ առաջին հաղթանակը: Բայց մինչև օրս էլ չեմ հասկանում, թե ինչու էր Ֆասուլաճյանը այդքան տարվել մնջախաղով: Ինչպես էր պատահել, որ ճանաչված դերասան, ռեժիսոր Ֆասուլաճյանը, ամենանշանավոր դասական հեղինակների գործերը ներկայացնող մի արվեստագետ, ցանկանում էր բեմ հանել անարվեստ մնջախաղ: Այս բանը այդպես էլ չհասկացա:

Բուրսայում մեր գործունեության չորս և կես տարվա ընթացքում խաղացինք փաշայի Մոլիերից թարգմանած կամ փոխադրած 34 պիես: Ճշմարտությունն այն է, որ սկզբնական շրջանում Բուրսայում այդ կարգի պիեսները չէին հասկանում, չէին գնահատում, քանի որ դրանց մի մասը չափածո էր: Բուրսայի նման փակ մի քաղաքում հեշտ գործ չէր նման բաներ բեմադրելը:

Մենք էլ այդ բանը քաջ իմանալով, հենց որ փաշան գործով հեռանում էր քաղաքից՝ սկսում էինք մեկողրամներ խաղալ: Ինքն էլ գլխի էր ընկնում և վերադարձից հետո ասում էր.

- Իմ բացակայության ժամանակ ձեր բոլոր անպետք գործերը խաղացեք և հանգստացեք...

Բուրսայի ժողովուրդը աստիճանաբար հասկացավ և փաշայի թարգմանած երկերից բացի ուրիշ պիեսների նկատմամբ հետաքրքրություն չցուցաբերեց: Միայն Մոլիերի կատակերգությունները, երբ կարճ էին լինում, փոքրիկ զավեշտներ էինք նաև բեմադրում:

Ամեն գիշեր, ներկայացման ընդմիջումներին, մի կին երգում էր: Սա արդեն ուղղակի փաշայի ցանկությունն էր: Նույնիսկ ինքն էր թարգմանում եվրոպական ընտիր երգեր, գտնում դրանց նոտաները և հանձնում նվա-

գախմբին: Երգելը ամեն մի դերասանուհու պարտքն էր: Վերջապես Ստամբուլից հրավիրեցինք տիկին Մաթենիկին, որպեսզի երգի: Մի գիշեր էլ հերթը եկավ նրան: Փաշան Մաթենիկի համար հատուկ մի երգ էր պատրաստել: Սակայն այդ կինը բավական տարիքով էր և մինչ այդ էլ չէր երգել: Չկարողացավ բեմում գլուխ հանել: Ամաչելուց կարմրեց, այլալվեց: Հաջորդ օրը նա փաշային հայտնել էր, թե վարագույրը փակվելուց հետո շատ է հուզվել, անգամ լաց եղել: Փաշան ասել էր:

- Ես էլ լաց եղա, տիկին: Այդ երգը ես լսել էի երիտասարդ հասակում՝ Նեապոլում, խեղճ ձկնորսներից: Դուք ինձ հիշեցրիք իմ երիտասարդությունը:

Փաշան այսպիսի սրամիտ պատասխան էր տվել:

Վեֆիկ փաշան շատ ուղղամիտ մարդ էր, նրա ծրագրած բոլոր գործերը ինչ որ նպատակ ունեին: Նա շատ էլ չէր ենթարկվում կառավարության, կենտրոնից եկող հակասական հրահանգներին:

Ի վերջո, երբ սադրագամ Սալիդ փաշայի կողմից կրկին ու կրկին արված մի հարցապնդմանը պատասխան չտվեց, Ստամբուլ կանչվեց, ապա՝ պաշտոնանկ արվեց:

Այդ ժամանակ մենք Բուրսայում փաշայի հակառակորդների ձեռքի տակ գաղթականի պես կուչ էինք եկել: Չէին թողնում, որ որևէ ներկայացում տանք, ոչ էլ թույլ էին տալիս ուրիշ տեղ գնալ:

Վերջապես, երբ փաշան սադրագամ դարձավ, մենք բոլորս գնացինք Ֆիլիպե (Վառնա): Մի ձմեռային թատերաշրջան անցկացրինք այնտեղ: Թատրոնը միշտ լիքն էր լինում: Խաղում էինք Բուրսայի մեր խաղացանկի պիեսները, հիմնականում Մոլիերի կատակերգությունները:

Բուլղարական ազգայնական թերթերը սկսեցին աղմուկ բարձրացնել: Ամեն օր մեծ մեծ հոդվածներ էին գրվում և տպագրվում: Մենք, - ասվում էր թերթերում, - աշխատում ենք թուրքերեն լեզուն մեր երկրից արմատախիլ անել, դուրս նետել, իսկ սրանք եկել մեզ համար թուրքերեն լեզվայացու են տալիս...

Այս աղմկոտ հոդվածների առաջ շվարել մնացել էինք: Բարեբախտաբար մեզ պաշտպանող թերթեր էլ կային: Նրանք էլ ասում էին, թե իրենք բուլղարերեն գրված ոչ մի պիես չունեն, թե գեղարվեստը առհասարակ հայրենիք չունի, պետք է հարգել թատրոնը:

Վերջապես մեր պաշտպանների շնորհիվ հանգիստ շունչ քաշեցինք: Անգամ ազատվեցինք մեզ համար շատ ծանր եղող, հայտարարությունների

վրա նամակադրոշմ փակցնելու պարտադիր օրենքից:

Սա էլ պետք է ասեմ, որ մեր ներկայացումները եղան բուլղարական թատրոնի առաջին քայլերը: Նույնիսկ բուլղարներից ստեղծված սիրողական առաջին թատերախումբը մեր խաղացանկից բուլղարերեն խաղաց Մոլիերի մի կատակերգություն: Տեսա այդ ներկայացումը, բայց չորրորդ գործողության մի տեսարանն այնքան վատ կատարվեց, որ հարկադրված եղա փակել ականջներս: Սրանով հանդերձ բուլղարները Մոլիերի նման մեծ գրողի պիեսները բեմադրելու առաջին քայլն էին կատարում:

Ֆիլիպեից վերադառնալուց հետո այցելեցինք Վեֆիկ փաշային՝ Ռումելի Հիսարում գտնվող իր ամառանոցում: Փաշան շատ էր ծերացել: Մեզ դիմավորեց առանձնահատուկ հարգանքով, ուրախ: Հյուրասիրեց, ապա ցույց տվեց գրադարանը:

Նրա գրադարանը գտնվում էր պարտեզի մեջ, բարձր մի վայրում: Փոքր էր, բայց պատրաստված ճաշակով ու բովանդակությամբ էլ շատ հարուստ էր: Բնավ չեմ մոռանա: Երբ մոտեցավ դուռը բացելու, դռան մոտ մի գառամյալ շուն պառկած քնած էր: Չեռքի գավազանի ծայրով հեռացրեց շանը՝ ասելով.- Կորիր, Սալիդ փաշայի մեծ հայր:

Ներս մտանք: Իմ առջև բացվեց մտքի մի շտեմարան: Մեկ առ մեկ մեզ ցույց տվեց բազմահատոր գրքեր, բաց էր անում, բացատրում, ինչ գրքեր են: Ապա, ծանր ծանր, մեծ հանդիսավորությամբ ու լրջությամբ մեզ հետ խոսեց դաստիարակության, թատրոնի մասին:

Դրանից հետո ընդամենը երկու անգամ եմ անհանգստացրել նրան: «Բռնի ամուսնության» մեջ իմ դերը նրա ներկայությամբ փորձելու համար: Սակայն իմ այդ այցելություններով, ըստ էության, առանց գիտակցելու, ես այդ ծերունուն թատրոնից հրաժեշտի բարևներ էի տանում...

**ՊԵՐԱՅԻ ՀՐԳԵՀԻՑ ՄՈՒՆԻՐԻ ՎԵՐԱԾՎԱԾ ԹԱՏՐՈՆՆԵՐԸ.
ԹԵՓԵՐԱՇԻԻ ԹԱՏՐՈՆԸ ԻՆՉՊԵՍ ԿԱՌՈՒՑՎԵՑ. ՀԱՅ ԱՌԱՋԻՆ
ԳԵՐԱՍԱՆՆԵՐԸ. ՍՈՒԼԹԱՆ ՄԵՋԻԳԻ ԹԱՏԵՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ.
ՓԱՅՏԵ ԳԳԱԼԻ ՀԱՅԵՐԵՆԸ. ԿԵՏԻԿ ՓԱՇԱՅԻ ԹԱՏՐՈՆԸ. ՕՊԵՐԵՏ
ԽԱՂԱՅՈՂՆԵՐԸ**

Պատմելու եմ մեզնից առաջ հինգ տարվա ընթացքում գործած արվեստագետների մասին իմ իմացածները:

Հինգ տարվա թատերական կյանքի ընթացքում Թուրքիայում թատերական շարժման սկզբնավորման և նրանց ունեցած դժվարությունների մասին ես կարողացա լսել հետևյալը:

Սուլթան Մեջիդի գահակալության տարիներին Պերայում, այժմյան Թոքատի վանդուկի վայրում, Արևելյան թատրոնի փողոցում, Նաում և Էքլեր կինոյի գտնված վայրում՝ Վերդի թատրոն կար: Այդ թատրոնները դրսից՝ իրենց շենքերով եմ հիշում, սակայն մեր մանկության տարիներին դրանք որպես արվեստի կենտրոններ դիտելը, ներսը մտնելը ամենևին մտքովս չէր անցնում և չէր էլ կարող անցնել:

Այդ շենքերը Պերայի մեծ հրդեհի ժամանակ այրվել, մոխիր էին դարձել: Թեփեբաշիի ձմեռային թատրոնը հրդեհից հետո թունելի գոյության առաջին տարիներին է կառուցվել: Այդ տարիներին Պերայի կառավարիչ Բուլակ բեյը թունելի ընկերության հետ համաձայնության էր եկել, որպեսզի դուրս բերված հողի ամեն մի սայլի համար կառավարությանը վճարվի աննշան մի գումար, իսկ դրա դիմաց՝ այդ հողը լցվի Թեփեբաշիի ձորը: Բուլակ բեյը ստացված փողը որևէ նպատակի չէր հատկացրել և պահել էր: Մի օր էլ մի խումբ գնչուների էր վարձել և բերել Թեփեբաշի: Թույլ էր տվել, որ թիթեղից, փայտից տնակներ կառուցեն, սակայն դիմացի տների տերերը, բոլորն էլ օտար հարուստներ, չէին համաձայնվել և բողոքել էին Բուլակ բեյին: Բուլակ բեյն էլ առաջարկել էր նրանց՝ վճարել, որպեսզի նույն վայրում կառուցել տա պարտեզ և թատրոն: Պալատների տերերը համաձայնվել էին փող հավաքել և տալ: Բուլակ բեյն էլ թունելից ստացած գումարները միացրել էր նրանց տվածին և կառուցվել էր Թեփեբաշիի պարտեզն ու թատրոնը:

«Արևելյան թատրոնում» հայերեն ներկայացումներ տվող Հեքիմյանը, Մերոբյանը, Արապյանը, Մաղաբյանը, Արաքսի Չիլինկիրյանը, տղամարդկանցից էլ հայտնի Մնակյանը, Էքշյանը, Մեծ Պենկլյանը, Ֆասուլաճյանը, Նալյանը, Հակոբ Վարդովյանը, Ռշտունին, Թրյանցը ստեղծել էին մի թատերախումբ: Այդ ժամանակ Նաում և Վերդի թատրոններում ներկայացումներ էին տալիս իտալական օպերան և ֆրանսիական թատերախմբերը: Սուլթան Մեջիդը ակնհայտ կերպով չէր արգելել Նաում թատրոնում տրվող և մեծ ծախսեր պահանջող ներկայացումները: Ընդհակառակը, օգնել, աշխատել էր փակել նրանց կրած վնասները: Դրա համար պալատական շրջանակներին մոտ կանգնած մոլեռանդ մարդիկ դիմել էին սուլթանին և ասել, թե զվարճության նպատակ հետապնդող այդ ցուցադրությունները հարեմական բարքերին դեմ են: Նրանք անցել են թատրոնը փակել տալու

արշավանքի: Դուժաբահչեի դիմաց նրանք կառուցել են տվել միայն պալատին ենթակա մի թատրոն և թագավորի համաձայնությամբ միառժամանակ ապահովել են նրա գոյությունը: Մի օր էլ, թատրոնի, ավելի ճիշտ գեղարվեստի թշնամի հետադեմ մարդիկ ասել են սուլթանին, թե մզկիթի դիմաց գտնվող թատրոնում ներկայացումներ տալը դեմ է բարոյականությանը և խնդրել են օգոստոսափառ կայսրից՝ փակել թատրոնը: Փակել են տվել և այսպիսով մարել է նաև սուլթանի թատերասիրությունը:

«Արևելյան թատրոնի» հայկական խումբը մերթ ընդ մերթ իր ներկայացումները տալիս էր Օրթագյուղում՝ Սարգիս (Պալյան) ճարտարապետի կառուցած թատրոնում:

Լսել եմ այս խմբի ներսում գոյություն ունեցող մանր մունր անհամաձայնությունների մասին: Քանի որ տեղը եկել է, պատմեն դրանցից մեկը:

Ճարտարապետ Սարգիս Պալյանի կառուցած թատրոնի բեմի մի անկյունում մի հայ զբաղվել է սուրճ պատրաստելով: Այս մարդը մոլություն է ունեցել ամեն ինչի հայերենը գտնելու: Մի օր, թատերախմբի անդամներից մի քանիսը նրա մոտ սուրճ խմելիս են լինում, միաժամանակ կատակում սրճեփի հետ: Հանգուցյալ Մնակյանն էլ, կրակարանի փայտե բռնակը ցույց տալով՝ հարցրել է, թե ո՞րն է դրա հայերենը:

Սրճեփը, առանց իրեն կորցնելու պատասխանել է.

- Այդ էլ չիմանալու բա՞ն է: Դա հենց դու ես: Դրա անունը Մնակյան է:

Այս փոքր պատմությունը խոր միտք ունի:

«Արևելյան թատրոնը» ներկայացրել է հայ գրողների գործերը և մեկերկու թարգմանական պիեսներ, ունենալով փոքրաթիվ հանդիսականներ: Հինգ-վեց տարի գործելուց հետո՝ թատերախումբը ցրվել է:

Դրանից հետո է, որ Հակոբ Վարդովյանը մտածել է թուրքերեն ներկայացումներ տալ և Նաումի թատրոնում բեմադրել իտալացի գրող Գոլդոնիի «Դոն Գրեգորիո» պիեսը և մեկ գործողությամբ «Փայտե սուր» կատակերգությունը: Սա թուրքերեն լեզվով տրված առաջին ներկայացումն է: Ներկայացման գիշերը՝ Եվրոպայում ապրած, թատրոնի սիրահար և գնահատող Ալի բեյը, դիտելով պիեսը, թարգմանությունը համարել է անհարթ: Հակոբ Վարդովյանին կանչել է իր օթյակը և ասել.

- Աշխատելու այս ձևը լավ չէ: Մենք ձեզ կարող ենք պիեսներ մատակարարել, սակայն դրանք այստեղ ցուցադրելը հարմար չէ: Շրջապատը կոմպոլիտ է: Կեղիկ փաշայի թաղամասում գտնվող Սուլիե կրկեսում շարունակեք ձեր գործունեությունը:

մեծ շենքի ետևում ստեղծած մի վրանում:

Վերջապես թուլութային ներկայացումներ է սկսում տալ նաև Արդյուր-րեզակի հանդերձապահի աշակերտը՝ Քել Հասանը, սա էլ՝ Շահգադերաշիում: Արդյուրրեզակին հետագայում պալատ հրավիրեցին և մեծ շնորհի արժանացավ:

Այսպիսով, իմ դերասանության տարիներին սկսված թուլութային թատրոնը գործում էր երեք տարբեր մարդկանց կողմից:

Համդին սկսել էր, Աբդին լրացրել, Հասանն էլ նրանց նմանողությամբ այս լավ կամ վատ գործի դռներն ավելի լայն բաց արեց:

Բայց արդարությունը պահանջում էր ասել, որ սրանց թատրոն չենք կարող ասել: Նրանց կատարածը թուլութի պարտաբան ձևն էր:

Շահգադերաշիի անունը այն ժամանակ Դիրեկտորարասը էր: Այնտեղ այսօրվա նման եռուզեռ չկար: Միայն Ռամազանից Ռամազան՝ պալատի նախարարական և վարչական կառքերը մեկ վեր էին գնում, մեկ վար: Թատերական կյանքը շրջապատում դեռ չէր զարթնել: Շեհգադերաշին իր այժմյան եռուզեռը պարտական է թատրոնին:

* * *

Ֆիլիպեից մեր վերադառնալուց հետո Հակոբ Վարդուկյանն արդեն թողել էր Կեդիկ փաշայի թատրոնը: Առհասարակ թատրոնի տեր Աբրահամ փաշայի հետ ունեցած պայմանավորվածության ժամկետն արդեն լրացել էր:

Այժմյան Լեթաֆեթի բնակարանների դիմացի խանութների տեղում, Ջյուդի Էֆենդիի պարտեզում, դերասան Թոսպատյանի և Սիսամի ամառային, ապա՝ տախտակածածկ պատրաստած թատրոն էին փոխադրվել: Մնակյանի հետ աշխատելիս՝ Ռամազանի կեսերին խումբը հրավիրվեցին պալատ: Մնակյանն էլ մի ուրիշ խումբ ստեղծեց և այլևս չբաժանվեց նրանից: Մենք էլ վարձել էինք Կեդիկ փաշայի թատրոնը, սակայն այդ տարի մեծ ճգնաժամ կար:

Կլեդիյուս անունով մի իմպրեսարիո ժյուլ Վեռնի «Աշխարհի շուրջը 80 օրում» երկի բեմականացումը ցուցադրեց ֆրանսիական մի խմբի հետ: Իտալական խումբն էլ «Կոնկորդիա» էր բերել Թեփերաշիի խումբը, որը դեկորներով և կոստյումներով ավելի հարուստ էր, բայց չկարողացավ տարին բոլորել և սնանկացավ: Ես էլ իսկույն, խմբի ֆրանսերեն իմացող հուշարար արտիստի հետ ընտրեցինք այդ խմբից մեզ օգտակար եղող պարողներին և պարուհիներին, հրավիրեցինք մեր խումբ:

Այդ օրերին մեծ Պենկլյանն էլ վերադարձել էր Իզմիրից: Նրան էլ բերեցինք Կեդիկ փաշա: Քանի որ տեղը եկել է, մի քիչ էլ խոսեմ մեծ Պենկլյանի մասին: Պենկլյանը վիթխարի մարմնով, գեղեցիկ դեմքով, կատարյալ օպերետի դերասան էր: Սակայն ուներ մի թերություն: Գլուխը ճաղատ էր, շարունակ կեղծամով էր ման գալիս: Շատ կատակասեր մարդ էր:

Մի օր գնացել է բաղնիք և վարսավիրին կատակով ասել .

- Մազերս լավ օճառիր, ապա բռնիր և ուժով քաշիր, պոկիր: Դալլաքը կատարել էր: Բռնել էր մազերը և ամբողջ ուժով քաշել՝ կեղծամը ձեռքում մեջքի վրա ընկել էր... Խեղճ մարդը սաստիկ վախեցել էր՝ կարծելով թե իսկապես հաճախորդի մազերը արմատից պոկել է:

Առանց առաջ անցնելու՝ մի բան էլ եմ ուզում պատմել:

Պենկլյանի և մեծ Պենկլյանի միջև մի նմանություն կար: Տիկին Ռոզալիայի ամուսնու անունը Պենկլյան չի եղել: Միայն գլխի ճաղատության և նույն արվեստին ծառայելու համար նրան այդպես են կոչել, թեև նրան ամենևին սազական չէր Պենկլյան անունը: Ինչ որ է:

1900թ. Ֆասուլաճյանի ղեկավարության տակ Կեդիկ փաշայում 130 հոգի էինք հավաքվել: Ափսոս, որ շահույթը քիչ էր: Մեծ տազնապի մեջ էինք: Ռամազանի կեսին սնանկության առաջ էինք կանգնել: Իսկ Մնակյանը Ջուդի Էֆենդիի վրանում Գյուլի Հակոբի մեկնելուց հետո աշխատում էր Շեհգադերաշիի հրապարակը ամբողջովին իր ազդեցության տակ վերցնել: Նրա հետ էր մեծ համբավի արժանացած Մարի Նվարդը: Մարին, առանց չափազանցության, կարող եմ ասել «Կամելիազարդ կինը» պիեսում Սառա Բեռնարին հավասար լավ էր խաղում: Սակայն խեղճ կինը Ռամազանի սկզբներին, մի ներկայացման վերջում անակնկալ կերպով մահանալով՝ մեծ վշտի մատնեց ամբողջ թատերասեր հասարակությանը, Ֆասուլաճյանն էլ բեմական այս աստղի մահը առիթ դարձնելով 130 հոգինոց խումբը ցրեց: Թատրոնի դուռը պատեց սև պաստառով, ծածկեց, կողպեց:

Մենք էլ, կրկին Ֆասուլաճյանի հետ, մի փոքրիկ խումբ կազմեցինք Ռամազանի 20-րդ օրվանից հետո Կադը գյուղում, Մյուհյուրդարում սկսեցինք ներկայացումներ տալ: Սակայն երբ ավարտվեցին Ռամազանի օրերը, խմբի Ստամբուլում մնալն անիմաստ դարձավ: Ֆասուլաճյանը բոլորին հավաքեց և տարավ Սելանիկ, իսկ ես մնացի Ստամբուլում:

**ԿԵԴԻԿ ՓԱՇԱՅԻ ԹԱՏՐՈՆԸ ԻՆՉՊԵՍ ՔԱՆԳՎԵՑ. ՄԻԳՂԱՏ ԷՖԵՆԴԻԻ
«ՁԵՆԿԻ» ՊԻԵՍԸ. ԿԵԴԻԿ ՓԱՇԱՅԻ ԵՐՐՈՐԳ ՇՐՋԱՆԸ ԲԱՅՎՈՒՄ Է.
ՉՎԱՐՃՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԵՐԱՅՈՒՄ.
ՄԻԳՂԱՏ ԷՖԵՆԴԻԻ ՊԱԼԱՏ ՀՐԱՎԻՐՎԵԼԸ**

Մնացել էի անգործ: Մեկ մեկ Սկյուտարից իջնում էի Ստամբուլ, հանդիպում բարեկամների, ծանոթների, ապա երեկոները երգիչ Հայդար բեյի հետ կրկին Սկյուտար էի վերադառնում:

Մի երեկո նավի մեջ, բժշկական դպրոցի դեղագործական բաժնի աշակերտներից Ջեքայի բեյն ինձ մի գիրք երկարեց.

- Վերցրու, կարդա,- ասաց: Նայեցի: Միդիատ էֆենդիի (Ահմեդ Միդիատ) «Ձենկիններ» գործն էր: Արագորեն աչք գցեցի մի քանի էջերի վրա: Պիեսը դուր եկավ: Իսկույն Հայդար բեյի մոտ վազեցի: Սեղանը դրվեց: Պիեսը սկսեցինք միասին կարդալ: Երկուսս էլ խանդավառվեցինք:

Հայդար բեյն ասաց.

- Սա մի շատ լավ օպերետ կարող է դառնալ: Պատրաստի մի քանի քառյակներ էլ ունի: Պետք է իսկույն եղանակավորել, սակայն որոշ փոփոխությունների համար անհրաժեշտ է հանդիպել հեղինակի հետ, համաձայնություն ստանալ:

Ասացի թե Միդիատ էֆենդիի հետ ես ծանոթացել էի Կեդիկ փաշայում, «Թերջիմանը հաքիքաթ» թերթի տպարան գալու, գնալու առիթով: Կզնամ, կխոսես: Հաջորդ օրն այցելեցի Միդիատ էֆենդիին իր տպարանում: Պարզվեց, որ նա մեզնից ավելի ոգևորված է: Իսկույն գտանք Հայդար բեյին, երեքով վեր կացանք գնացինք Բեյքոզ՝ Ակբաբայի ագարակը:

Բարեհոգի Միդիատ էֆենդին զարմանալի մարդ էր, բառիս բուն առումով արևմուտքի ոգին գնահատող գրող: Չէր սիրում ավելորդ ցուցամոլություն:

Ակբաբայի ագարակը բավական մեծ էր: Չի, կառք ուներ: Կառքն էլ շատ հրապուրիչ էր. Նոյ Նահապետի օրվանից մնացած բան:

Ագարակում նա մեզ ցույց տվեց տանիքը նոր զգված մի տուն և ասաց.

- Սա Նաջիի տունն է. ես սկզբից չէի կռահել. Հետո հասկացա, որ այդ տունը իր փեսայի՝ ուսուցիչ Նաջիի համար էր շինել տալիս:

Սեղանը դրվեց: Մենք էլ թեններս քշտեցինք: Եկավ նաև ուսուցիչ Նաջին: Մի կողմից խմում էինք, մյուս կողմից գործը վերլուծում:

Միդիատ էֆենդին գիտակ էր բեմական տեխնիկային և երկերին: Իսկ Հայդար բեյը եվրոպական երաժշտության, անգամ կոմպոզիցիայի լավա-

տեղյակ էր, միայն մի քիչ անփույթ էր և խմիչքի սիրահար: Ալաթուրքա մուղաններ էր վերցնում և դաշնավորում: Ես սկսեցի զբաղվել Միդիատ բեյի երկերի միզանցեցնային գործով, Հայդար բեյը՝ երաժշտությամբ, Նաջի բեյն էլ չափածոյի վերածելով: Այս գործի համար ուղիղ մեկ ամիս մնացինք Աքբաբայում: Այդ ամբողջ ժամանակամիջոցում միայն ես մերթ ընդ մերթ իջնում էի Միդիատ էֆենդիի հողվածները թերթերին հանձնելու համար, միաժամանակ հանդիպում էի մարդկանց, որոնք կարող էին օգտակար լինել երկը բեմադրելու գործում: Հրավիրում էի երաժիշտների: Մի գիշերվա ընթացքում էլ Սկյուտարում, Հայդար բեյի տանը գրվեցին պարտիտուրաները: Այդ պատճառով ուշ սկսեցինք փորձերը: Առաջին ռեժիսորը Մնակյանն էր, երկրորդը՝ ես: Եվ դա՛ Միդիատ էֆենդիի ցանկությունն էր:

Վերջապես «Չենգի» (գնչուի պարուհի) կարողացանք բեմադրել Կեդիկ փաշայի թատրոնում: Շատ հավանեցին և մենք շարունակաբար ցուցադրեցինք այն: Կեդիկ փաշայի թատրոնի երրորդ շրջան այդպես սկսվեց:

Սակայն այս փայլուն սկիզբը շատ տխուր վախճան ունեցավ:

Այդ շրջանում խաղացինք Կեդիկ փաշայի առաջին թատերաշրջանի խաղացանկից «Գայե» (Նպատակ), «Սեիդ յահյան», «Բեսան», Միդիատ էֆենդիի վերջին երկը՝ «Չերքեզ եոզենները»: Այս վերջին երկը, սակայն, մասնուլում և գաղտնագրություններում մեծ իրարանցում առաջացրեց: Ասեկոսները գնալով մեծացան և վերջապես գործը հասավ պալատ՝ տարբեր մեկնաբանություններով: Ասվում էր, թե բարձրացվում է չերքեզական հարցը, ավելի ճիշտ՝ գաղտնի կերպով պահանջվում է կիսաանկախ իրավիճակ չերքեզների համար: Նույն ժամանակում Մուրադ բեյի և ուրիշների կողմից գաղտնի կերպով գրվում էր չերքեզների պատմությունը, իսկ դա ուղղակի Օսմանյան կայսրության, պետության դեմ ապստամբության կոչ էր դիտվում: Անհրաժեշտ էր արգելել պիեսը և ձերբակալել մեղավորներին:

* * *

Մի գիշեր ես, Հայդար բեյը, Միդիատ էֆենդին, վերջինիս սիրուհու ամառանոցում զվարճանում էինք: Դուռը խփեցին: Միդիատ էֆենդիին պալատից կանչում էին: Վեր կացավ, գնաց: Իսկ մենք գիշերն անցկացրինք մեծ վախի ու տագնապի մեջ: Առավոտյան վեր կացա, թատրոնի ճանապարհը բռնեցի: Կամաց կամաց Կեդիկ փաշա իջնելիս՝ հեռվից նկատեցի, որ թատրոնի առաջ սպիտակ գոտիներով ոստիկաններ են լեցվել: Աղետի նշան էր: Իսկույն գուշակեցի վտանգը: Ետ դարձա և շունչս Սկյուտարում, մորս մոտ առի:

Ես ու Հայդար բեյը Անատոլիայի ծայրամասի այս խեղճ անկյունում կանգնած՝ դիտում էինք Ստամբուլի մինարետները և սպասում նրանց ուրվագծերի ետևում թաքնված արվեստի փոքրիկ օջախում կատարված դեպքերի վախճանին:

Վերջապես լսեցինք, որ Սուլթան Համիդի մի հրամանով թատրոնը գետնին հավասար էր դարձել... Ախ, այդ վայրը քանդող անիծյալ ձեռքերը: Չէին իմանում, որ իրենց փլցրածը թուրքական թատրոնի առաջին դարբնոցն էր:

* * *

Մենք կրկին անգործ մնացինք: Հուսահատ՝ մի այլ աշխատանք գտնելու մասին էի մտածում: Վերջապես վտանգի դիմող, միաժամանակ հետևանքի մասին չմտածող մի թելադրանքով Կարանտինայի պետ նշանակված Միդհատ էֆենդիին դիմեցի: Բայց նա իր բարեկամությունը խնայեց: Առաջարկեց ինձ աշխատել իր թերթում որպես քարտուղար: Ես էլ, թատրոնում այնքան թավալվելուց հետո, ամենևին չցանկանալով «սին»-ի մեջտեղը, «Ե»-ի վերջը (նկատի ունի խմբագրական աշխատանք) ասելով, դիմադրել սրտիս թելադրանքին, մերժեցի: Ափսոս, որ Միդհատ էֆենդին չէր հասկացել իրեն դիմողի ցանկությունները և աչք էր փակել: Հուսահատ՝ որոշեցի սպասել:



ՄԱՍ 2

ՏԱՍ ԱՄԻՍ ԷԳԻՐՆԵՅՈՒՄ

Սուլթանական պալատի հրամանով չորս հարյուր մարդու տունը միանգամից քանդվածը, կտոր կտոր արվածը՝ միայն մի շենք էր: Արվեստը միշտ էլ հոգու մեջ, մտքի մեջ է արմատացած լինում: Մենք՝ թատրոնի մարդիկս այդ ժամանակ սկսել էինք ավելի համարձակ դառնալ: Մի պատմություն շատ տեղին է: Մի անգամ, Կեսարիայում մեծ հրդեհ է ծագել: Սուլթան Մահմուդը լսելով լուրը, սկսել է լաց լինել: Մոտը գտնվողներն ասել են.

- Աման, տեր արքա, շնորհ արեք, մի լացեք: Վառվողը այստեղ չէ, այլ Կեսարիայում:

Սուլթան Մահմուդը պատասխանել է.

- Ախր եթե Կեսարիան վառվում է, մեջինները պիտի ցրիվ գան ամեն կողմ և ամենուր պիտի տարածեն հրդեհը...

Այո, սա շատ ճիշտ է: Մեր էլ թատրոնը, օջախը քանդել էին: Մենք էլ ամեն կողմ ցրիվ եկանք և երկրի ամենախուլ անկյունները արվեստի հրով բոցավառեցինք:

Ֆասուլաճյանը Հրանուշից, Սոֆիից, Բյուք Մարիից և Պինեմենճյանից բաղկացած փոքրիկ մի խմբով Սելանիկից Էդիրնե էր անցել: Պինեմենճյանը Էդիրնեցի լինելով՝ իր մոտ էր հրավիրել: Մեկ երկու շաբաթ անց՝ Հրանուշին ուղարկելով, ինձ էլ հրավիրեցին Էդիրնե: Զանի որ անգործ էի, վեր կացա գնացի: Պինեմենճյանը, Ֆասուլաճյանը և ես միացանք: Սկսեցինք գործի: Սակայն խմբի կազմը փոքր էր: Ուրիշ դերասանների կարիք ունեինք: Էդիրնեում թատերասերներ փնտրեցինք և գտանք չորս հայ երիտասարդների: Չորսն էլ տիպեր էին... Մեկը վարսավիր Ալեքսանն էր, շատ տարօրինակ մի երիտասարդ: Առավոտները, վարսավիրանոցում, աթոռը առջևն առած, սովորում էր մեր տված դերը և ասում էր, թե խոսակիցն էլ ինչ որ պետք է կասի: Նման մի երկխոսության ծիծաղելի փորձը կատարած էր համարում: Մյուսը՝ մեր նվագախմբի ջութակահար Գրիգոր Մաքյանն էր: Մեկն էլ՝ ժամացույցի մասեր հայթայթող, կոմիկական արտաքինով Ժամկոչյանն էր, իսկ չորրորդը շապկագործի աշակերտ Արթինն էր: Խմբի նման կազմը, ճիշտ ասած՝ շատ խեղճ էր: Այնուամենայնիվ, անվարան ներկայացրինք Վիկտոր Հյուգոյի և Մոլիերի պիեսները, նաև «Գող Սիմոն»ը ու «Ծերունի տասնապետը»:

Ներկայացումները տալիս էինք զբոսայգու կենտրոնում գտնվող և «Հին դատարան» անունով հայտնի վայրում: Այդ տունը առաջ դատարանի մի հին շենք էր եղել: Սրահը շատ մեծ էր, ուներ եկհարկանի օթյակներ:

ԷԳԻՐՆԵՅՈՒՄ ԶԲՈՍԱՅԳԻ, ԹԱՏՐՈՆ, ՀՅՈՒՐԱՆՈՅ, ՍՐՃԱՐԱՆ Է ԿԱՌՈՒՑՎՈՒՄ. ՄԵԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՊԱՍԿԱԼ ԱՆՏՈՆԻ ԳԼԽԻՆ ԵԿԱԾՆԵՐԸ

Բուլղարական հարցը երբ փակվեց, զինվորները, փաշաները մեկ մեկ սկսեցին ետ քաշվել: Շոգ օրեր սկսվեցին: Որոշեցինք վերադառնալ Ստամբուլ: Այս որոշումը կայացնողները երեքս էինք՝ ես, Պինեմենճյանը և նրա տիկինը: Երեքով վեր կացանք եկանք Ստամբուլ:

Ֆասուլաճյանը մնացած դերասաններով Էդիրնեի քաղաքապետարանի պարտեզում սկսեցին ամառային ներկայացումներ տալ:

Պոլսից Թողորի և Պասկալ Անտոնի հայտնի պանտոմիմայի խումբը բերել էին տվել և աշխատեցնում էին իրենց անունով ու հաշվին: Ես էլ Ստամբուլում առողջական նկատառումով ուզում էի մի փոքր հանգստանալ: Բայց շատ չանցած՝ եկավ Հրանույշը և խնդրեց, որ վերադառնամ Էդիրնե: Մեկնեցի:

Պանտոմիմայից առաջ սկսեցի մեկ գործողությունով կատակերգություններ խաղալ: Ներկայաումներից հետո շրջապատի մարդկանց հետ պարտեզում նստում, զվարճանում, ժամանակ էինք անցկացնում: Մի գիշեր ընկերներով որոշեցինք պասկալ Անտոնի գլխին մի խաղ խաղալ: Ներկայացումից հետո մի կողմ կանչեցի շապկագործի աշակերտ Անտոնին և ասացի.

- Դու տաղանդավոր արվեստագետ ես, միաժամանակ մեծ և հայտնի գերդաստանի որդի: Բնավ չեմ կարողանում քեզ ներել, որ հանդուրժում ես բեմում Պասկալ Անտոնից այդքան ծեծ ուտել: Դու էլ նրան ծեծիր...

Այսպես համոզեցի նրան: Հետո գտա շատ հին, սակայն շատ էլ անճարակ պանտոմիմայի մի դերասան: Նույն խոսքերն ասացի նաև նրան: Հաջորդ գիշերն էլ Անտոնին վերցրի տարա մի գինետուն, լավ խմացրի, ասացի թե այդ գիշեր նրան ծեծելու եմ. պետք է զգույշ լինել:

Մնջախաղը սկսվեց: Երկու դերասանների համագործակցության արդյունքը Անտոնը իսկույն իր վրա զգաց: Սակայն ամենևին իրեն չկորցրեց: Ապա,

կրկին ըստ խաղի, մահացած Արթինին դրեց պարկի մեջ, գետնով տվեց և բեմից դուրս շարտեց:

Օրեր շարունակ խոսվեց այս կատակի մասին:

* * *

Սակայն տոնական օրերին տրված ներկայացումների հաշիվների առիթով իմ ու Ֆասուլաճյանի հարաբերությունը լարվեց: Մի գիշեր անգամ հրաժարվեցի խաղալուց և Ֆասուլաճյանը հարկադրված եղավ ինքը կատարել իմ դերը:

Ժողովրդի դժգոհությունը հաշվի առնելով, մեջ գցեց Հրանույշին, որպեսզի ինձ սիրաշահի: Այնուամենայնիվ, այնքան էի զայրացել նրա դեմ, որ Ստամբուլ վերադառնալուց հետո իսկույն բաժանվեցի նրա խմբից:

Սա տասը ամսվա մի հյուրախաղ էր:

Մինչդեռ մենք Էդիրնեում մեծ գործ էինք սկսել, «Իսլամական Միություն» Ստամբուլում աշխատել էր ապահովել մի զբոսայգու, մի թատրոնի, մի հյուրանոցի, մի զբոսարանի ստեղծումը: Իսկ դա մեզ համար ևս շատ օգտակար մի գործ էր:

* * *

Ադրիանապոլսի մեր հյուրախաղերի նկարագրությունն ավարտելուց առաջ ուզում եմ մի քիչ էլ խոսել գրաքննության մասին:

Կար պոլսեցի մի երիտասարդ գրաքննիչ, Փաշազադե Ասաֆ անունով: Հետագայում փաշա դարձավ: Թատրոնից բավական հասկանում էր: Հաճախ տեղի անտեղի հատվածներ կրճատելով անդամահատում էր մեր պիեսները: Դրանով հանդերձ՝ վատ սիրտ մարդ չէր:

Մի գիշեր նա ինձ կանչեց իր տուն, ասաց, թե ուզում է պիես գրել.

- Արդյոք ինչի՞ մասին գրեմ: Կնոջս թողել եմ: Եթե այդ մասին գրեմ՝ չի՞ լինի...

- Դա դաստիարակչական նշանակություն ունեցող նյութ չէ, - ասացի:

Նստեցինք և «Գյուղացիներ» խորագրով երգախառն մի պիես գրեցինք՝ Գյուղական կյանքից: Արագորեն գործը պատրաստեցինք, առատորեն օգտագործելով իմ կատարած դերերից անգիր իմացածս հատվածները: Պիեսի հեղինակ գրեցինք Ասաֆ բեյին և այդպես էլ հայտարարեցինք: Դա կառող էր մեզ փրկել գրաքննության փորձանքից:

Ստամբուլ վերադառնալուց անմիջապես հետո Մնակյանից բաժանված

դերասաններին հավաքեցի, խումբ կազմեցի: Հայ դերասաններից ամենից հայտնին համարվող Մնակյանին էլ իր անկյունից դուրս բերելով դրի խմբի գլխին: Դրանով հանդերձ՝ հարմար համարվեց թատերախումբը կոչել իմ անունով, քանի որ կազմակերպչական և նյութական գործը դրված էր ինձ վրա:

Սկսեցինք ներկայացումներ տալ Մյուսուրդարի, Գյուկսուի, Մաքրիքեռ-յի, Բաղլարբաշըի նման ամառանոցային վայրերում: Շահույթն այնքան էլ վատ չէր: Սակայն դերասանները հանգիստ կարո՞ղ են մնալ: Սկսեցին իմ դեմ խոսել: Նստում են ու իրենց մեջ որոշում՝ ռեժիսորությունն ու խմբի ղեկավարությունը տալ Մնակյանին, ինձ էլ՝ հիմնական ռոճիկից դուրս տալ ինչ որ տոկոս: Այդ բանն ինձ վրա ազդեց: Ադրիանապոլսից Տրապիզոն անցած Ֆասուլաճյանից հրավերի նամակ էի ստացել:

Մի երեկո վերցրի Մնակյանին, տարա ճաշարան և Ճաշի ընթացքում խոսեցի լսածներիս մասին ու ասացի.

- Մնակյան էֆենդի, ես ձեզ հրավիրեցի և նշանակեցի խմբի ղեկավար: Նպատակս էր գործը գլուխ բերելուց հետո թողնել հեռանալ: Ձեր նկատմամբ մեծ հարգանք ունեմ, մինչդեռ իմ իրավունքը ինձնից խլելով ձեզ են տվել: Ասածս վատ իմաստով միք հասկանա: Ես էլ, դրան ի պատասխան, հարկադրված եմ Ֆասուլաճյանի հրավերն ընդունել:

Մնակյանն ազնիվ և շատ քաղաքավարի մարդ էր: Նա այդ գիշեր շատ հուզվեց, սակայն ելք չկար:

Հենց հաջորդ օրը մեկնեցի Տրապիզոն:

**ԱՐԱԲԵՐԵՆ ԲԱՌԵՐ՝ ԱՆՀԱՎԱՏԻ ԲԵՐԱՆՈՒՄ. ՊԻԵՍՆԵՐԻ ՄՆՏՈՒԿԻ
ԳԼԽԻՆ. ԳԵՍԻՑ-ԳԵՆԻՑ ՀԱՎԱՔՎԱԾ ՀԱՏՎԱԾՆԵՐ.
ՄԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ ԻՆՉՊԵ՞Ս ԿՕԳՆԻ ԹԱՏՐՈՆԻ ՄԱՐԴԿԱՆՑ
ԱՍՏՂԻ ՊԵՍ ՀԱ... ՈՏՔԵՐԻ ՊԱՐԻ ԳՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ**

Իսկույն պայմանավորվեցինք Ֆասուլաճյանի հետ: Ինձ ամսական 12 ոսկի աշխատավարձ որոշեց: Բացի այդ՝ համաձայնվեց, որ հյուրախաղերի ընթացքում իմ օգտին մի ներկայացում տրվի:

Խմբում տղամարդկանցից կային Սանճագճյանը, Բամպուկճյանը, Ֆասուլաճյանի որդին՝ Երվանդը, Բարութճյանը, Սեֆերյանը, Պարոնյանը, կանանցից՝ հայտնի Հրանույշը, տիկին Սանճագճյանը, Օֆելյան, Ռեջինեն,

Սեֆերյանը, Ադավնին: Նման մի խումբ ի վիճակի էր ամեն պիես խաղալու: Սակայն բոլոր դերերում աչքի ընկնող Հրանույշը հիվանդացել էր: Արդեն այդ պատճառով և գործին չվնասելու համար, կատակերգություններին լայն տեղ տալով խումբը փրկելու համար էր, որ ինձ հրավիրել էին:

Տրապիզոնի քաղաքագլուխն էր Կեդիկ փաշայի թատրոնի հիմնադիր հայտնի Ալի բեյը: Նա հենց սկզբից էլ որևէ օգնություն չէր զլացել: Խաղում էինք ամառային թատրոնում: Տրապիզոնը առաջին անգամն էր թատրոն տեսնում:

Այս գավառում առհասարակ ուժեղ էր կրոնամոլությունը և մեծամտությունը: Դրանով հանդերձ ոչ ոքից վատ վերաբերմունք չտեսանք:

Մի գիշեր խաղից հետո ժանդարմի հագուստով մի մարդ ինձ կանգնեցրեց բեմի դռան մոտ: Ասաց թե ինքը Տրապիզոնի գավառային ժանդարմերիայի պետ Շեֆքին է:

- Մեծ հաջողություն եք ունենում, այնքան խանդավառվեցի ձեր գործով, որ ես էլ մի պիես գրեցի: Ձեր ընկեր Ֆասուլաճյանին էլ վերցրեք ձեզ հետ և եկեք ինձ մոտ:

Իսկույն Ֆասուլաճյանին վերցրի և գնացինք: Մարդը մեզ կարգին հյուրասիրեց: Ապա, վերցրեց մատիտով գրված տողերով սևացած մի մեծ թուղթ և ասաց.

- Ահա իմ գրածը: Եթե համաձայնվեք խաղալ, ես բոլոր տոմսերը կվաճառեմ բարձր գներով: Դրանով էլ ձեզ համար մեծ օգուտ ապահոված կլինեմ:

Ֆասուլաճյանի հետ ակնարկներ փոխանակեցինք: Պիեսի անունն էր «Երևակայական ապուշը»: Ընթերցելը կես րոպե էլ չքաշեց: Իսկույն երկը խլեցի նրա ձեռքից և ասացի. «Շատ լավ, շատ փայլուն գործ է, իսկույն պիտի խաղանք»:

Մարդը շատ զոհ մնաց, իսկ Ֆասուլաճյանը զարմացավ:

Երբ վերադարձանք հյուրանոց, Ֆասուլաճյանը դիմելով ինձ ասաց.

- Գժվեցի՞ր: Սրա ինչը՞ պիտի խաղացվի:

Ես պատասխանեցի նրան.

- Դու գործ չունես: Հիանալի առիթ է: Բո ինչ բանն է...

Անցա մեր պիեսների սնտուկի գլուխը: Հուշարարն ինձ հետ էր: Առանձնացրի 10-15 պիես: Դրանց միջից վերցրի երկուական, հնգական հատվածներ, հուշարարին առաջարկեցի արտագրել: Դրանք բոլորը տեղավորեցի ինձ մոտ գտնվող «Երևակայական ապուշ» երկի սյուժեի մեջ: Այս ձևով հրապարակի վրա դրինք ըստ ամենայնի բեմական մի գործ: Ի՞նչ կարող

էինք անել օտարության մեջ: Ապրուստ ճարելու հարկադրանքի տակ էինք: Իսկապես էլ դա հանցանք չէր կարող համարվել, քանի որ կատարվածը մեր խաղացանկում գտնվող, բայց հեղինակներն արդեն մոռացված, հիմքում էլ պիես չմնացած, թարգմանական մի նոր գործ էր ստեղծվել: Հեղինակը մեզ մի կարևոր գործ էր վստահել: Տարօրինակն այն է, որ այս կեղծ պիեսը շատ մեծ հետաքրքրություն առաջացրեց: Հանդիսականների ցանկությամբ հարկադրված եղանք երեք գիշեր իրար ետևից կրկնել ներկայացումը: Հեղինակն էլ, նստած իր օթյակում, արտակարգ փառքի մեջ, հպարտությամբ ժպիտներ էր բաժանում իր երկի արժեքը գնահատողներին:

Երկու երեք ներկայացման համար Տրապիզոնից անցանք Օրդու: Նահանգապետ Ալի բեյը մեզ ներկայացնող մի փակ նամակ էր տվել, որ հանձնեինք տեղի քաղաքապետին: Վերջինս ստամբուլցի էր, փոքր մորուքով, խեղճ մի մարդ: Ծրարը բաց արեց, կարդաց նամակը, ապա դողդողալով երեք անգամ համբուրեց, դրեց գլխին: Հուզվեց, քիչ էր մնում լաց լինեք:

Մենք էլ, ականատես այս բոլորին, ուղղակի զարմացել, շփոթվել էինք: Հետաքրքրությամբ սպասում էինք այս անմարմին, անարյուն մարդու պատասխանին: Վերջապես դարձավ մեզ և ասած.

-Ախ, էֆենդիներ, ես այս տարիքին եմ հասել, դեռ բեմ չեմ բարձրացել և դերասանություն չեմ արել. Ինչպե՞ս կարող եմ ձեզ օգնել, չգիտեմ:

Ես իսկույն հասկացա նամակի էությունը: Զաղաքապետը պարզապես կարդացածի իմաստը չհասկացող մի թշվառ մարդ էր: Ափսոս մեզ: Օգնության կարոտ մի մարդուց օգնություն էինք խնդրում: Արդեն բռնապետական այդ տարիներին ամեն ինչ քանդող, մտավորականությանը կաղապարի մեջ պահողները իրենց գործը սխալ հասկացող նման տգետներն էին:

Քանի որ առիթը ներկայացել է, չեմ կարող չնկարագրել վիշտս, քաշածներս: Մի կողմից՝ սակառի նման գլուխ ունեցող փաթթոցավոր մյուս կողմից՝ կաշառակեր ոստիկաններ, և վերջապես գրաքննություն: Այս երեք տգետ ուժերը տևաբար թատրոնը, արվեստը բռնաքահարուս, կռնակի վրա շուռ էին տալիս: Օրինակ՝ քաղաքից դուրս՝ մի տեղ էի գնում: Ներկայացում տալու պատրաստություններ էի տեսնում: Հենց առաջին գիշերը դիմացս ցցվում էին այդ վայրի քննիչը և մեկ երկու փաթթոցավորներ: Ասում էին.

- Ռամազանի սրբազան տոնի ամսում խաղ խաղալը մեղք է: Բոլոր խաղերն արգելված են:

Կամ՝

- Մեր քաղաքը փորձանք ու դժբախտություն բերելու՞ էք եկել,- ասում էին ու վռնդում:

Ստամբուլում էլ Ռամազանի օրը ժանդարմերիայի պետը արտոնություն չէր տալիս: Մեկ էլ տեսար՝ Արաբ Աբդուլլահի նման մի պատուհաս մեջ էր ընկնում, մեզ կողոպտում, պլոկված տխր էր դարձնում:

Իսկ գրաքննությունը: Ամենից վտանգավորը սա էր: Մեկ վազիր մամուլի տեսչություն, մեկ ոստիկանություն, մեկ՝ տպագրական տեսչություն: Երիտասարդներից ստեղծված գրաքննական մի մարմին, առանց գաղափար ունենալու ձեռագիր պիեսի մասին, ըստ իր ցանկության, միայն պալատին դուր գալու համար, կրճատում, երբեմն էլ բոլորովին արգելում էին պիեսը:

Մի օր, երբեք չեմ մոռանում, այդ հանձնաժողովին տարել էի թարգմանական մի պիես: Արդեն Կեդիկ փաշայի թատրոնի քանդումից հետո ազգային պիեսներն արգելված էին: Միայն թարգմանություններ էին ներկայացվում:

Հանձնաժողովի անդամներից մեկը՝ Սկյուտարի ոստիկանության ներկայացուցիչը, միրուքավոր մի անբան, դարձավ.

- Այս պիեսի հերոսներից քահանայի խոսքերի մեջ որքան արաբերեն բառ կա, բոլորը պետք է հանել, քանի որ այդ բառերը կան Դուրանում: Այդ սրբազան բառերը անհավատի բերանը դնելը սրբապղծություն է,- ասաց և հարցը փակեց:

Ես մնացել էի ապշած: Բարեբախտաբար հանձնաժողովի անդամներից մեկ երկուսը այդ տգետի խելքին չէին: «Երեք գլխարկ» վոդևիլի մեջ էլ «Հունական տարեգրություն» արտահայտությունն էլ չհասկանալով դարձրել էին «Հունական վեպ»:

Մի գիշեր խաղում էի թարգմանական մի կատակերգությունում: Ըստ տեքստի՝ դիմացս նստած կնոջն ասացի. «Աչքերդ աստղերի պես փայլում են»: Իսկույն մի քանի լրտես ոստիկան ցցվեցին առջևս: Ինձ կանչեցին. նայեցին ուղիղ երեսիս ու ասացին. «Յըլդըզի... /աստղի/ պես հա...»: Ես իսկույն պիեսը ցույց տվի նրանց և ասացի – «Սա հաստատված, վավերացված պիես է. գրաքննությունն այդ նախադասությունը չի ջնջել»: Ռադեղան, գնացին:

«Չերբեզ էոզդեններ» պիեսի դեպքից հետո գրաքննությունը նոր խստություններ էր հաստատել: Հրամայված էր արգելել գրաքննության կնիքով չհաստատված ամեն մի ցուցադրություն: Այդ ժամանակ Ստամբուլում դադարել էր թատերական կյանքը: Վախից ամեն մեկը մի կողմ էր քաշվել: Դերասաններից հրապարակի վրա մնացել էր միայն Չափրաստճյանը:

Նա Սկյուտարի կալվածապատկան մի զբոսավայրի վերին սրահում հիմնել էր պարի դպրոց: Գործունեությունը սկսելու համար խնդրագիր էր ներկայացրել Սկյուտարի կառավարչությանը:

Վարչության պետը Չափրաստին կանչել է և ասել.

- Այդ խաղի հաստատումը կա՞: Եթե կա՝ թույլ կտամ, եթե չկա՝ չեմ կարող թույլ տալ:

Չափրաստը զարմացել էր.

- Էֆենդի,- ասել էր,- սա պար է, ոտքերի շարժում: Սրա հաստատումը չի կարող լինել:

Պետը պնդել էր, առաջարկել էր գնալ և արտոնությունը բերել:

Խեղճ Չափրաստը մյուսասարիֆի ներկայությամբ սկսել էր պարել:

Մյուսասարիֆը, կարծելով թե իրեն ձեռ է առնում,

- Հաստատվածը բեր, հրաման կա, չեմ կարող թույլատրել, ռադ եղիր գնա, բղավել էր և խնդրագիրը վերադարձրել:

Սրանք բոլորը ցույց են տալիս մեր այն ժամանակվա դեկավարների գիտելիքների մակարդակը: Այդպիսի մարդկանց նկատմամբ մինչև այժմ էլ ատելությանբ են լցված: Ժամանակ է լինում, որ մեռածների նկատմամբ անգամ չեմ կարող ներողամիտ լինել: Հիսուն տարիների իմ հիշողությունները գրելիս՝ սրանք անսահման ցավ են պատճառում ինձ: Նրանք ինձ, իմ ընտանիքին համարում էին անհավատ: Ես տարիներ շարունակ իմ հայ ընկերների միջավայրում ինձ մեռակ էի զգում:

Թուրք առաջին դերասանը ես էի: Հետո է, որ Նուրի անունով մի ուրիշը եկավ: Բայց այդ խեղճը ինձ չափ տոկունություն չունեցավ: Բաշվեց գնաց: Իսկ ես, մինչև սահմանադրության հռչակումը, անգամ դրանից հետո, հոշոտվեցի, պայքարեցի:



ՄԱՍ 3

ՕՐԴՈՒՅՑ ՍԱՄՍՈՒՆ

ԳԵՐԱՍԱՆՈՒՀԻ ՀՐԱՆՈՒՅՇՇԸ ԳԵՂԵՑԻԿ, ԿՐԱԿՈՏ ՄԻ ԿԻՆ ԷՐ. ՍԱՄՍՈՒՆՈՒՄ ՄԵ ԳՐՈՂԻ ՀԻԱՆԱԼԻ ԵՐԿԸ. ՄԻՄՅԱՆՑ ՆԱԽԱՆՁՈՂ ԿԱՆԱՅՔ. ՉԱՆԱՔՔԱԼԵՈՒՄ

Հասանք Սամսուն: Հայերի ակումբում սկսեցինք ներկայացումներ տալ: Գործներս վատ չէր գնում: Հետո հայերի ակումբից բաժանվեցինք: Ներկայացումները շարունակեցինք Ռեժիի դիմացի տանը: Այլևս խաղալու պիես չէր մնացել: Այդ ժամանակվա պիեսները շատ հին, մաշված էին: Օրինակ՝ «Ժան դը Կալե» անունով մի պիես խաղացինք, որի դեպքերը տեղի էր ունենում հին Իսպանիայում: Թե՛ երկը, և թե՛ նրա հեղինակը բոլորին անձանոթ էին: Ապա խաղացինք Վիկտոր Հյուգոյի «Էռնանին», «Անջելո Մալիբիերին» և Մոլիերից մի քանի կատակերգություն:

Վերջապես մի օր էլ այլևս ներկայացնելու պիես չէր մնացել: Վերցրի «Անջելո Մալիբիերին»: Նրանից նոր բեմականացում ստեղծեցի և անունն էլ դրի «Լալերահ»: Այնտեղ ներմուծեցի մի քանի հատվածներ «Ժիրոֆլե Ժիրոֆլյա» օպերետից: Պիեսը խաղացինք և լավ ընդունվեց, հայ հանդիսականները ծիծաղից թուլացել էին: Ոչ ոք չիմացավ, թե դա «Անջելո Մալիբիերի» պիեսն էր: Նույնիսկ մի հայ երիտասարդ ասաց թե ինքը այդ պիեսը ոնց որ Լոնդոնում տեսած պիսի լինի, թե դա մի մեծ գրողի հիանալի գործն էր:

Ես էլ նրան պատասխանեցի.

- Ճիշտ է, սակայն մենք էլ հեղինակի անունը չենք իմանում:

Ես Ֆասուլաճյանի հետ Հրանուշի մոտ վարձակալ էինք: Ֆասուլաճյանը կանանց նկատմամբ մի քիչ թուլություն ուներ և շատ խանդոտ էր: Խանդում էր Հրանուշին: Նա էլ խանդում էր Ֆասուլաճյանին, այնքան որ Ֆասուլաճյանը հարկադրված եղավ Օֆելիային նավ նստեցնել և Ստամբուլ ուղարկել:

Մի երեկո խմեցինք, զվարճացանք: Ես, Ֆասուլաճյանը և Հրանուշը մեր տներում էինք ճաշում: Հրանուշը սկսեց ինձ հետ կատակներ անել, ծիծաղել: Ֆասուլաճյանը, հարբած մարդու խանդի ուժով ապտակեց Հրանուշին: Ես շատ վիրավորվեցի դրանից և դա համարեցի անպատվություն ինձ

համար: Իսկույն թողի նրանց տունը և իրերս վերցրած՝ տեղափոխվեցի Սեֆերյանի մոտ:

Մի քանի օր անց, ըստ պայմանավորվածության, իմ օգտին ներկայացում էր տրվելու: Ֆասուլաճյանը չհամաձայնվեց, ասաց թե ինքն արդեն վնաս է կրել և չի կարող իմ օգտին ներկայացում տալ: Ես էլ իմը պնդեցի:

Մեր հարաբերությունները բավական վատացան: Այնուհետև Ֆասուլաճյանը բացե ի բաց սկսեց չհանդուրժել իմ բեմական հաջողությունը, ժողովրդի կողմից ինձ ցույց տրված հարգանքը: Պարզապես ուզում էր ինձ վնասել: Ի վերջո միջամտեց Ռեժիի տեսուչը, որն ինձ շատ էր համակրում: 100 ոսկու տոմս վաճառելով իմ նյութական վիճակը բարելավեց:

Արդեն դանակը ոսկորին էր հասել: Էլ չդիմացա: Ինձ հետ վերցրի Սեֆերյանին, նրա կնոջը՝ Ռեջինային, Սանճագճյանին ու նրա տիկնոջը, նաև Երվանդին, հուշարար Բատիստին և վերադարձա Ստամբուլ: Որոշել էի ընդմիջտ բաժանվել Ֆասուլաճյանից և գործել առանձին: Պոլսում Օֆելիային և մի քանի այլ դերասանների միացնելով մեր խմբին, վեր կացանք և գնացինք Չանաքքալե:

Այդ ժամանակ Հրանույշը Սամսունում վախճանվեց թոքախտից: Հրանույշը Մարի Նվարդին հավասար, նրանից էլ գեղեցիկ դերասանուհի էր: Նրա մահը ցնցեց թատրոնի մարդկանց: Այդ կնոջ քեռին՝ Չոփճյան Անտոնը Ստամբուլին մեծ ծառայություն էր մատուցել: Այդ տարիներին կառավարության կողմից քաղաքամաքրման աշխատանքների վրա դեռ ուշադրություն չէր դարձվում: Պոլսի փողոցները աղբի, կեղտի և գարշահոտության մեջ էին: Անտոնը ստեղծել էր քրոցավորների մի ջոկատ և փոքր աշխատավարձով սկսել էր տներից հավաքել աղբը: Այս ձևով թե՛ քաղաքին էր օգտակար եղել երկար տարիներ, և թե՛ ինքն էլ նյութապես օգտվել:



ՄԱՍ 4

ՉԱՆԱՔՔԱԼԵԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԻԳԻԼԼԻ

18 հոգուց բաղկացած իմ խմբի համար անհրաժեշտ էր մի կարգին դեկավար, որը կարողանար բավարարել խմբի բոլոր պահանջները:

Ընդհանուրի ցանկությամբ դիրեկտոր նշանակեցի Սեֆերյանին: Նա լավ դերասան էր, սակայն մի քիչ մեծամիտ էր, շատ էր սիրում թուրք երիտասարդների նման հագնվել, հետևել նրանց արդուզարդին: Կինը՝ Ռեջինան կրթված, ծանրաբարո կին էր:

Հասանք Չանաքքալե: Իսկույն վարձեցինք նավահանգստի զբոսարանը և ստեղծեցինք բեմը: Տպագրեցինք առաջին ներկայացման հայտարարությունը, սակայն խաղը չներկայացրած, կառավարությունը արգելեց մեր գործունեությունը: Մնացինք անօգնական: Մեզ պատահածի պատճառը հասկանալու համար այս ու այն կողմ էինք դիմում, միաժամանակ տարբեր միջոցների դիմում՝ թույլտվություն ձեռք բերելու համար: Չգիտեի ինչ անեմ:

Մի օր սրճարանում նստած մտածում էի, երբ մեկն ինձ ձայնեց: Նայեցի. փոքրամարմին, անմորուս մեկն էր, անունը՝ Ազիզ էֆենդի:

- Արի, - ասաց, քեզ համար մի խնդրագիր գրեմ և տար Ալժիրի Միջերկրականի հրամանատար Ասաֆ փաշային:

- Շատ լավ, - ասացի: Մտածում էի գուցե մի բան դուրս գա: Կարող է մեր բախտից օգտակար լինել:

Ազիզ էֆենդին դիմումը սկսեց այսպես. «Ճիշտ է, ձեր անձնավորությանը չի վերաբերում խնդիրքս, սակայն խորհրդատու չունեմ, որ նրան դիմեմ....»:

Դիմումը տարա փաշային. նա շատ զայրացավ, կատարվածի համար: Ոստիկանատնից երկու հազարապետ ուղարկեց քաղաքապետարան, կարգադրելով իսկույն թույլտվություն տալ մեզ: Արվեստի ու արվեստագետների նկատմամբ փաշայի ցուցաբերած այս հոգատարությունը իմ սիրտը լցրեց խոնարհ հարգանքով և մանկական հրճվանքով: Ուրախությամբ վերադարձա ընկերներիս մոտ:

Երկու ժամ անց մեր դռան առաջ լավեց ոստիկանական թրերի ձայն: Ապա խփեցին դուռը: Ցած իջա, հետաքրքրվեցի: Երկու ոստիկան չավուշ հեկալով ասացին.

- Իսկույն կարող եք սկսել ձեր ներկայացումները, անպայման, հենց այս գիշեր, մեր գլխին փորձանք չբերած:

**ՉԱՆԱՔՔԱԼԵ. ԷԶԻՆԵ. ՏՈՆԱԿԱՆ ՀՅՈՒՐԱՆԱԳԼԵՐ.
«ԿԱՐՄԻՐ ԿԱՄՐՉԻ ԴԵՊՔԻ» ՆՅՈՒԹԸ.
ԳԼՈՒԽՆ ԱՌԱՃ ԲԵՄ ԲԱՐՉՐԱՆԱԼԸ ԳՈՐԾ ՉԷ .
ԱՆՑՅԱԼ ՏԱՐԻ ՅՈՒՂԱՎԱՃԱՌԻՆ ԱՅՍՏԵՂ ՍՊԱՆԵՑԻՆ**

Առաջին գիշերը խաղացինք մեր հայտարարած «Կարմիր կամրջի դեպքը»: Հետո իմացանք, որ մեզ պատահած փորձանքի պատճառը այդ մեղքամայի անունն է եղել: Նախքան մեր այնտեղ գնալը ծրագրվել է այդ քաղաքի մոտակայքում մի կամուրջ կառուցել: Քաղաքապետարանի նախահաշվի համաձայն այդ կամուրջը 1000 ոսկով հազիվ հնարավոր պիտի լիներ կառուցել: Չգձգվել է: Գործին միջամտել են զինվորական իշխանությունները: Կամուրջը կառուցվել է 200 ոսկով: Ավելացած գումարով էլ կամուրջի մոտ կառուցել են մի զբոսարան: Կամուրջը ներկված է եղել կարմիր: Այդ բոլորը ժողովուրդի մեջ պատմվել է որպես կարմիր կամրջի դեպք: Մենք էլ, անտեղյակ այդ բանից, պիեսի անունը այդպես էինք հայտարարել, իսկ քաղաքապետարանը կարծել է, թե թատրոնում՝ ցույց ենք տալու Կարմիր կամրջի կառուցման ներքին ծալքերը... Դրա համար արգելել էին ներկայացումը:

Այս բոլորը մենք իմացանք հետագայում:

* * *

Ասաֆ փաշան մեր մոտի նոտաները վերցրեց, տվեց զինվորական նվագախմբին և կարգադրեց, որ ամեն երեկո նվագեն: Ինքն էլ ներկա էր լինում մեր բոլոր ներկայացումներին:

Ներկայացումները տալիս էինք խուռներամ բազմության առաջ: Ես ընտրում էի պիեսները, պատրաստում ծրագրերը, կոստյումները, մեծացնում դեկորները: Երեկոյան էլ մի կատակերգություն վերցրած՝ շրջում էի այս ու այն կողմ: Սրանք ամենևին չէին հոգնեցնում ինձ, քանի որ կատարում էի հաճույքով: Ինձ վիշտ պատճառող միակ հարցը խմբի անդամների միջև տիրող անհամաձայնությունն էր, հետևանք դերերի լավ պատրաստված չլինելուն, նաև ամեն մեկի անհիմն հավակնություններին:

Ունեինք թատրոնի խենթ, բայց անճարակ մի մարդ, անունը՝ Սկրտիչ: Խաղում էր մեզ հետ: Ընկերները նրան երես տալուց բացի՝ դերեր էլ էին տալիս: Առաջին անգամ բեմ բարձրանալու գիշերը վախից փակվել էին աչքերը, կողպվել ծնոտը: Տեսնելով անհաջողությունը, հաջորդ երեկո որոշում է

մի քանի բաժակ օղու զորությամբ համարձակություն ստանալ: Խնում է, բարձրանում բեմ, սակայն լեզվին մի տեսակ տկարություն է գալիս: Մյուս օրը երեք բաժակ կոնյակ է զորում... սակայն կրկին նույնը, քանի որ այս անգամ էլ կոնյակը ազդում է ուղեղին:

Վերջապես հասկացավ, որ բեմը իր տեղը չէ, քաշվեց գնաց:

Սեֆերյանն էլ իր ստեղծած երևակայության դիրեկտորական փառքի մեջ, խմելով լուլիկ էր դարձել:

Մեծ ու փոքր այս երևույթները վնասում էին մեր աշխատանքներին:

Ռամազանի տոնական օրերն անցնելուց հետո Չանաքքալեի ամենից հարուստ մարդը համարվող հրեա Խայիմմաջիի տան մեծ սրահում օթյակներ և բեմ պատրաստեցինք: Համաձայնության եկանք Խայիմմաջիի հետ և սկսեցինք ներկայացումները: Պայմանագիրը լրանալուց հետո էլ «Կլուբ» կոչվող մի տուն տեղափոխվեցինք:

Աստիճանաբար քչացրինք ներկայացումների թիվը: Գործերը գնալով վատացան, դրմի համ տվին: Մնացել էինք առանց փողի, հազարումի պարտքի տակ ընկել: Բայց չէինք մտածում բաժանվել միմյանցից և ապրուստի միջոցներ էինք որոնում: Ամեն մեկը մի տեղ՝ աղոտ լույսի տակ խմում էր մինչև առավոտ, մինչև պայթելը, անտեղյակ իր գլխին հյուսվող փորձանքներից: Իսկ ես, նրանց համար մի ճար անելու նպատակով ամբողջ գիշերներ պայթեցնում էի գլուխս, միջոցներ որոնում: Մինչդեռ նրանք, շրջապատած Սեֆերյանին, քառասուն օր քառասուն գիշեր հարսանիք անող հեքիաթի թագավորի նման անհաշիվ խմում էին: Այն էլ ո՞ւմ հաշվին... ներկայացման գիշերը հարևանիս՝ Խաչիկին վճարելու խոստումով: Իմ ստացած երկու մեջիդով կարող էի սնվել միայն սպիտակ լոբու փլաքիով և ճակնդեղի թթվով:

Եվ այսպես՝ ամեն օր: Այլևս անհնար էր շարունակել: Որքան ժամանակ որ մնայինք Չանաքքալեում, վիճակը չէր կարող փոխվել: Ընդհակառակը՝ սեղանները բոլորովին դատարկվում էին:

* * *

Հակառակ մեր այս ծանր վիճակին, մարդիկ ականջից ականջ փսփսում էին, թե դերասանները շատ հարուստ են, որ մինչև առավոտ խմում են, զվարճանում: Դա ինձ ավելի էր զայրացնում: Սակայն չէի կարող մարդկանց կարգի հրավիրել, նրանց վրա բղավել: Բռնություն կիրառելիս կարող էի բոլորովին կորցնել փրկության ճամփան: Անհրաժեշտ էր մի քիչ համբերատար, խոհեմ լինել:

Չանաքքալեի դեկավար աշխատողներից մի խումբ գնալու էր հարկեր հավաքելու: Նրանք մեզ հույսեր ներշնչեցին, թե կարող ենք այդ վայրերում լավ գործ տեսնել: Տեղերում՝ նախապատրաստական աշխատանքներ կատարելու համար որոշեցին նախ ինձ ուղարկել: Արդեն մեր գործերի կարգավորման համար գրասենյակից գրասենյակ թափառելիս պաշտոնյաներից մեկի գրասենյակում տեսել էի Չանաքքալեի մի մեծ քարտեզ: Իսկույն նշանակել էի այն վայրերը, ուր կարող էինք այցելել:

* * *

Դրանց մեջ Էզինեն առաջին բնակավայրն էր: Իսկույն մի ձի վարձեցի և առավոտ արևը չծագած՝ միջնորդ Խաչիկյանի հետ Էզինեի ճամփան բռնեցինք: Անցանք սար ու ձոր: Ճանապարհը գնալով երկարում էր, իսկ ժամերն անցնում էին: Լորու փլաքիով և ճակնդեղի թթվով լցված աղիքներս սովածությունից գալարվում էին, ոսկորներս լիկլիկում: Անընդհատ հարցնում էի Խաչիկյանին.

- Ասում էիր վեց ժամից հասնելու ենք: Չանաքքալեից մեր դուրս գալը յոթը ժամ եղավ, իսկ Էզինեն չի էլ երևում:

Մի քիչ էլ գնացինք: Այլևս չկարողացա համբերել: Մի անտառի եզրին իջա ձիուց, տարածվեցի կանաչ խոտերի վրա:

Խաչիկյանը տագնապահար ասաց.

- Ի՞նչ ես անում, անցյալ տարի յուղավաճառին այստեղ մորթեցին: Վեր կաց:

Թուլացած, անտրամադիր պատասխանեցի.

- Ոչինչ թող այս տարի էլ ինձ մորթեն:

Էզինե հասնելուց անմիջապես հետո վարձեցի այնտեղի սրճարան-գրասարանը: Նրա մառանի մասում կողք կողքի շարված էին օղու կամ սուրճի սենյակներ, բերանները տախտակով փակված: Հենց դրանց վրա պատրաստել էինք ընդունել:

Երկու օրից եկան նաև մյուս ընկերներս: Սկսեցինք ներկայացումները: Գործերը վատ չէին գնում: Սակայն ամեն գիշեր, մութը կոխելուց հետո բացվում էին օղու կարասների բերանները և սափորներով օղի է որ գողացվում էր դիրեկտոր Սեֆերյանի և նրա բաժակի ընկերների կողմից: Ու մինչև առավոտ կերուխում:

Այդ բանն ինձ ավելի անհանգստացրեց, բայց մի կերպ շարունակելու էինք ներկայացումները:

Մեր գնալիք երկրորդ բնակավայրը լինելու էր Բայրամիջը: Էզինեում, վեր-

ջին գիշերվա հրաժեշտի սեղանին, կենացներ առաջարկողներից մեկը ասաց.

-Եկեք ապստամբվենք, Բայրամիջ չգնանք, ետ վերադառնանք: Երվանդ Ֆասուլաճյանը, Բամպուկճյանը, Պարոնյանը, Բատիստը մի խումբ կազմած ընկել էին ճանապարհ:

* * *

Բայրամիջ գնացինք Սեֆերյանը, տիկ. Ռեջինեն, ես և Օֆելիան: Խումբը փոքր էր, սակայն դեկորով, զգեստներով և խաղացանկով հարուստ էինք: Ընտրեցի այնպիսի պիեսներ, որոնք հնարավոր լինեին խաղալ չորս հոգով: Դերերը բաժանեցի: «Բռնի ամուսնությունում», օրինակ, Մյուսթեջատ Չեֆիի, երկրորդ վարպետի և մեծ Աղայի դերերը կատարեցի ես՝ առանց հոգնելու, առանց ֆիասկոյի ենթարկելու, սակայն տրանսֆորմատորի պես պտտվում էի բեմում:

ԲԱՅՐԱՄԻՋԻ ԿԱՆԱՅՔ ԳԵՐԱՍԱՆՆԵՐԻՆ ՏԵՄՆԵԼՈՒ ԵՆ ԳԱԼԻՍ.

«ՍԻՐԵԼԻՍ, ՔԵՉ ՇԱՏ ԵՄ ՍԻՐՈՒՄ».

ՀԱՃԵԼԻ ՊԱՀԵՐ՝ ԾԱՌԵՐԻ ՏԱԿ, ՀՈՒՅՆ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՀԵՏ.

ՓՈՔՐԻԿ ՄԻ ՆԱՎԱԿՈՎ ՄԱՐՍԵԼԻՅ ԳՆԱՅՈՂ ԵԿՈՂ ԹՈՒՐԲԸ

Սեֆերյանը շատ հաջող էր Իվագ աղայի դերում: Այդ օրերին «Այար Համգան» էլ բեմադրեցինք: Բեմը ստեղծել էինք Բայրամիջի հյուրանոցի մի փոքրիկ սրահում: Ժողովուրդը լավ էր գալիս: Մի անգամ, ներկայացման ժամանակ բեմում արտասանված «Սիրելիս, ես քեզ շատ եմ սիրում» նախադասությանն ի պատասխան մի գյուղացի պարտերից բղավեց. «Ես էլ եմ սիրում», սակայն ոստիկանները և ժողովուրդը իսկույն նրան սաստեցին: Մեր ներկայացումներով արթնացրել էինք թատրոնի սերը ժողովրդի մեջ: Բայրամիջի ժողովուրդը չափից մի քիչ ավելի աշխուժություն էր հանդես բերում, սակայն ոչ մի վնաս կամ անկարգապահություն չտեսանք:

Մեկ էլ տեսար, վաղ առավոտյան մեր բնակած տան տերը գալիս հայտնում էր, թե կանայք ուզում են գալ և մեզ այցելել: Իսկույն հագնվում էինք, կատարում մեր արդուզարդը: Եվ ահա Բայրամիջի կանայք խումբ խումբ կատարում էին, շրջապատում մեզ և հետաքրքրությամբ դիտում, ինչպես գալիս էին, շրջապատում մեզ և հետաքրքրությամբ դիտում, ինչպես հարսնևորներ: Սկսում էին միմյանց ականջին փսփսալ. -Տես, տես, բեղեր էլ ունի, աա... հլա շապիկի ձևին նայիր»:

Ես այս բոլորը բացատրում էի նրանց չտեսությանմբ: Կանայք գնում էին, տղամարդիկ էին գալիս... Ու մենք այսպես՝ կահ կարասիների նման դառնում էինք զննումների առարկա: Դե, հետաքրքրական մի տեսարան էլ սա էր:

* * *

Մեր այցելելիք երրորդ վայրը լինելու էր Բոհջա Ադան: Այնտեղ գնալու համար Բայրամջիցի Բեշիկլեր կոչվող նավահանգիստ իջանք: Մեզ հետ էին մի սպասավոր, մեկ էլ Բայրամջիի հայտնի մարդկանցից, ժանդարն, Սեմերճի Սկր ադան: Այս մարդը ծերացել էր ժանդարմության մեջ: Հազիմ ուներ հազար ու մի կտորով կարկատված լաջիվերդ զգեստ, մեջքին տախտակյա թուր. այդ արտաքինով էլ պտտվում էր փողոցներում: Մեր մոտից չէր հեռանում, բայց անհրաժեշտ ամեն ինչ անում էր: Բեշիկլերի նավահանգստի ճամփին նա մեզնից առաջ հասնում էր գյուղերը և հայտնում, թե կառավարական քննիչներ են գալու:

Խեղճ գյուղացիները թափվում էին ճանապարհների վրա, ձեռքներին՝ խնդրագրեր: Դիմավորում էին մեզ, խնդրում բարեկարգել ճանապարհները:

Սեմերջի Սկրը իսկույն վազում էր մեզ մոտ, զգուշացնում, որ գաղտնիքը մեջտեղ չհանենք: Իսկ մենք անշուշտ ծիծաղում էինք: Սկրը յուրաքանչյուր գյուղում մեզ տարբեր կերպ էր ներկայացնում: Միայն թե ամենևին չէր ուզում մեզ ծանոթացնել որպես դերասանների: Արտաքուստ խենթություն թվացող նրա այս արարքը այդ ժամանակներում, այն էլ նման միջավայրում միանգամայն բնական էր հնչում:

* * *

Բեշիկլերի նավահանգստում նստեցինք մի առագաստանավ, որի մեջ մեզնից բացի, կային գյուղացիներ, անգամ մի քանի կով, հավ, այծ: Առ նավը նման էր Նոյ նահապետի տապանին: Քանու բացակայության ս նառով առավոտից մինչև երեկո չարչարվելով, ի վերջո, երբ արդեն ջրե սին էին տալիս, դուրս եկանք ցամաք:

Այդ գիշեր հյուր եղանք տեղի երևելիներից Խաչիկ և Սկրտիչ Էֆենդիներին: Նրանք մեծապես օգտակար եղան մեզ:

Հաջորդ օրը վարձեցինք մի հրեայի տուն և այնտեղ ապրեցինք:

Բահջե Ադան այդ տարիներին ծովի մեջտեղում փոքրիկ մի կղզի էր: Ժողովուրդը հարուստ էր և քաղաքավարի:

Այնտեղ ութը ներկայացում տալուց հետո որոշեցինք վերադառնալ Ստամբուլ: Որպես ճանապարհի պաշար պատրաստել էինք հալվաներ, սուտ դոլմաներ և այլն:

Սեֆերյանը ինչպես միշտ, զբաղված էր կերուխումով: Դարձել էր ակաճավոր հայերի, հույների, հրեաների տներում կազմակերպվող երկսեռ խնջույքների հերոսը: Մի օր, հարբած վիճակում, անգամ համարձակվել էր մեր հանդերձարանից վերցնել մի գեներալի զգեստ և հագրել էր Մկրին ու ման էր տվել փողոցներում՝ կղզու ամբողջ ժողովրդին հավաքելով կրկեսից մասն էր տվել փողոցներում՝ կղզու ամբողջ ժողովրդին հավաքելով կրկեսից փախած այս ծաղրածուի շուրջը: Իսկ վերջին գիշերը, նա իր հետ վերցնելով հույն աղջիկների, քեֆի էր նստել, և բաց անելով մեր ճանապարհի պաշարը պարունակող կապոցները, անուշ էին արել մեր հալվաները, սուտ դոլմաները, օղին: Կերել ու խմել էին մանդոլինի նվագի տակ: Միրուն աղջիկներից ոգևորվելով այնքան էր խմել, որ քաշել էր փոքրիկ ատրճանակը և մի քանի անգամ կրակել օդում:

Այս դեպքը ամբողջ ոստիկանությանը ոտի հանեց: Հարկադրված եղա միջամտել և ոստիկաններին ասել թե կրակոցները իրական ատրճանակից չեն, այլ բեմում օգտագործվող շագանակի փամփուշտներ են: Այս կերպով գեթ այդ գիշերվա համար գործը մի կերպ փակեցինք: Բայց դեպքը հասցրել էին քաղաքապետի ականջը: Հաջորդ առավոտ ներկայացա քաղաքապետին, եղելությունը պատմեցի ինչպես պատահել էր: Քաղաքապետը իրավացիորեն ասաց.

- Ֆեհիմ էֆենտի, դուք դաստիարակված մարդ եք. նման բաներ ձեզ վախել չէ:

- Արդեն մենք այսօր մեկնում ենք: Կարող եք մեզ համարել աքսորված, այդպես էլ գործը կփակվի: Խոսք են տալիս այսօր իսկ մեկնել խմբով:

Մի կերպ ներողամտության արժանացանք, սակայն երբ վերադարձա ընկերներիս մոտ՝ նավն արդեն մեկնել էր: Բացատրեցի քաղաքապետի հետ ունեցած զրույցս, անպայման այդ օրը մեկնելու խոստումս:

* * *

Ահա այդ ժամանակ է, որ Միդիլի կղզում, Մոլվե գնացող մի նավավար սկսեց Մոլվեի գովքն անել: Ասաց թե այնտեղի բնակիչները շատ լավ մարդիկ են, բնությունն էլ գեղեցիկ է: Բոլորս միասին՝ գանձ գտնողների հրճվանքով ծափ տվեցինք և որոշեցինք գնալ Մոլվե: Իսկույն տեղավորվեցինք այդ նարդու նավի մեջ և գնացինք:

Մոլվեում տեղավորվեցինք բյուրավայի իջևանատանը, որը կառուցվել էր մի բարերարի ծախսով՝ գյուղաքաղաք եկող հյուրերի համար: Ոչ ոքից փող չէին վերցնում:

Բենը, ինչպես միշտ, պատրաստեցինք մի մեծ սրճարանում: Գյուղաքաղաքը իսկապես որ գեղեցիկ էր և բնակիչներն էլ լավ էին վարվում մեզ հետ:

Առաջին ներկայացման գիշերը դրամարկը ժամերով հաճախորդի էր սպասում և ոչ ոք չէր գալիս: Հարցրինք պատճառը:

- Նավահանգստում հանդես կա, Ալի Ռեիզն է գալիս, ասացին: Հետաքրքրվեցի: Իսկույն վազեցի ծովափ: Եվ ինչ տեսնեմ... Ժողովուրդը, բոլորի ձեռքերին լապտերներ, վազում են ծովափ՝ դիմավորելու գույնզգույն լապտերներով զարդարված մի նավ: Խառնվեցի դիմավորողներին:

Մի քիչ անց, նավից ափ դուրս եկավ կարճահասակ, լիքը լիքը մարմնով, պղնձագույն դեմքով մի մարդ՝ այդ նավի նավավարը:

Բոլորը միասին սկսեցին բղավել. Կեցցե Ալի Ռեիզը:

Հարցի՝ ո՞վ է այդ մարդը: Պատասխանեցին.

- Քո տեսած այդ փոքրիկ նավակով, առանց արտոնության և առանց քարտեզի մինչև Մարսել յուրի տակառներ տանող մի հերոս է, որն այժմ վերադառնում է:

Հետաքրքրությունս շարժեց: Ուրեմն այդ մարդը աննման մի ծովագայլ էր: Այդ գիշեր Ալի Ռեիզը մեծ խմբով եկավ մեր թատրոն և նրա շնորհիվ լավ եկամուտ ունեցանք:

Հաջորդ օրը մի խումբ ընկերներով գնացինք Ալի Ռեիզի նավը: Նա իր առագաստանավի ամեն կողմը ցույց տվեց մեզ: Ֆրանսիացիներն այնքան էին հրապուրվել նրանով, որ իրենց ձեռքով ներկել էին նրա նավը, մի կերպ մտցրել Եվրոպա, նրան անգամ անցագիր էին տվել:

Ամեն անգամ երբ հիշում եմ այս ծովայինին, ուրախությամբ է լցվում սիրտս և արտասվում եմ:

* * *

Մոլվեյում կարողացանք տալ ընդամենը չորս ներկայացում: Որոշեցինք այնտեղից գնալ Միդիլի: Բայց նախ ես պիտի գնայի, գտնեի Նամըկ Բենմալի բարեկամներին և խնդրեի նրանց աջակցությունը և կատարեի նախապատրաստական որոշ աշխատանքներ:

Հաջորդ օրը ճանապարհ ընկա փայտե համետով մի ձիով:

ՈՎ ՈՐ ՌԻԹԸ ՄԵՋԻԳԻԵ ՏԱ, ՆՐԱ ՆԱՎԱԿՆ ԵՄՆՍՏԵԼՈՒ ՄԻ ԿՈՂՄԵՑ ԱՆՓՈՂ ՎԻՃԱԿ, ՄՅՈՒՍ ԿՈՂՄԵՑ՝ ՍՈՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՄԻԳԻԼԼԻՆ ՄԵՐ ԲՈԼՈՐ ՎՇՏԵՐԸ ՄՈՌԱՅՆԵԼ ՏՎԵՑ

Քսանութ ժամվա տաժանակիր ճամփորդությունն ինձ խեղճացրել էր: Այնուամենայնիվ, Միդիլի հասնելուս պես իսկույն հետաքրքրվեցի, թե ովքեր են մնացել Բենմալի բարեկամներից:

Գտա առատածեռն Սուլեյման բեյին: Խնդրեցի, որ օգնի: Խոստացավ օգնել և վեց ներկայացման տոմսերի վաճառքը գլուխ բերել: Իսկույն անցավ գործի:

Ընկերներիցս բաժանվելիս՝ ինձ հետ վերցրել էի միայն երկու մեջիդիե: Այդ գումարից տվել էի ձիու վարձը և երկու օր ապրել: Մնացած քառորդ մեջիդիեով հեռագրել էի ընկերներին, վիճակս և գրպանումս մնացած երկու մեթեղիկով գնել էի երկու սիմիթ (բոկեղ) և խաբել ստամոքսս:

Այս էր թատրոնի կյանքը...

Տոմսերը վաճառվել էին: Ընկերներս նավով ճանապարհ ընկած գալիս էին: Այս բոլորը լավ էր, բայց ես սոված ու հուսահատ թափառում էի Միդիլում: Չէի ուզում փող խնդրել Սուլեյման բեյից, իսկ ուրիշ մարդ չէի ճանաչում: Ընկերներս չեկած պարտք վերցնել չէի ուզում: Շրջապատիս մարդիկ կարող էին ինձ համարել խաբեբա: Շատ էի վախենում դրանից: Երեկոները, երբ Սուլեյման բեյը ճաշի էր հրավիրում, ներողություն էի խնդրում և խույս ելի տալիս: Սոված փորով չէի կարող խմել: Ամեն օր գնում էի նավահանգստի գործակալի մոտ հետաքրքրվում, թե երբ է հասնելու նավը:

Մի օր էլ լսեցի թե նավը խրվել է ավազի մեջ: Ինձ թվաց, թե ուղեղիս կաթված խփեց: Ինչպե՞ս պիտի կարողանայի ևս մի քանի օր ապրել: Արժանավատությունս թույլ չէր տալիս սրանից նրանից փող խնդրել:

Մի օր, ոտներս, առանց ինձ ենթարկվելու, դժվարությամբ շարժվեցին դեպի նավահանգիստ և ինձ գտա շուռ տրված մարմարյա մի քարի մոտ: Հանգած, թուլացած աչքերով երկար նայեցի ծովին, կրկին նայեցի: Ջրերն ալիք ալիք մոտենում, խփվում էին ափերին: Արտևանությունիս տակ մի անբողջ կյանքի ստվերն էր դողդղում, սարսռում:

Որոշել էի անձնասպան լինել:

Այս օտար ափերին, այս մութ ճամփաներին, մի տարօրինակ քուն եկավ վրաս: Մարմարի վրա կուչ եկա ու քնեցի:

* * *

Խոր քնի մեջ էի, որ մի ձեռք ինձ ցնցեց: Չարթնեցի: Մի հույն նավավար, բաց ծովը ցույց տալով, հունարեն ինչ որ բան ասաց: Մի նավ էր գալիս: Հասկացա: Մերոնք մեջը պիտի լինեին:

Իսկույն ցատկեցի հույնի նավակը: Հազիվ էինք մոտեցել նավին, որ Սեֆերյանը, ձեռքը մոտեցնելով բերնին, ուժեղ ձայնով բղավեց.

- Նավին ութը մեջիդիե պարտք ունենք: Սարսափեցի: Մի այլ նավակ էլ, որի տերը նաև թատրոնի մեքենավարն էր, նույնպես մոտեցել էր նավին և քանի որ սկզբից նրա հետ էի սակարկել, հունարեն հայոյանքներ էր տեղում մյուս նավավարի գլխին: Ես երկու քարի արանքում սառած մնացել էի:

Երկու հույները, կարծեցյալ հարուստ հաճախորդներին միմյանց ձեռքից խլելու համար կոկորդ կոկորդի էին եկել և գլորվեցին ծովը: Վերջապես՝ նավի կապիտանը, ծանոթ դուրս գալով նրանց, միջամտեց. հանգստացրեց:

- Ով որ ինձ հենց հիմա ութը մեջիդիե փոխ տա, ես նրա նավակն եմ նստելու, բղավեցի:

Երկուսն էլ իսկույն քանդեցին իրենց քսակների բերանը և ութական մեջիդիե հաշվեցին:

Մերոնց բերող նավի կապիտանն ասաց.

- Հիմա ձեզմից մեկի նավակը կնստեն կանայք ու պարոնները, մյուսի նավակը՝ կլցնենք ապրանքները, ամեն ինչ կվերջանա:

Երկու նավավարները, լսելով ապրանքների մասին, ուրախությունից ցնծացին:

Մի կերպ ցամաք դուրս եկանք: Իսկույն վազեցի Սուլեյման բեյի մոտ, հայտնեցի ընկերներիս ժամանումը, ասացի թե հաջորդ օրը անպայման ներկայացում ենք տալու և որոշ կանխավճար ստացա: Վճարեցի նավավարների վարձը: Ինձ էլ զցեցի մի ճաշարան և կրկին դեպի կյանք վերադառնալու համար մի աման տաք ապուր կերա:

Սուլեյման բեյը, Նամըկ Բենալի Միդիլիում ապրելու օրերին եղել էր նրա ամենամոտիկ բարեկամը:

* * *

Միդիլիում կային մի քանի նվագախմբեր, սակայն, նրանք արևելյան գնչուների նման, լավ նվագելով հանդերձ՝ նոտաներ չգիտեին: Գտա դրանցից մեկի երիտասարդ գործակալին և առաջարկեցի նվագել մեզ համար: Միդիլիի թատերաշրջանի համար մեզ երաժշտություն էր հարկավոր: Սա-

կայն այդ խմբի բուն ղեկավարը, մորուսավոր մի ծերունի, քաղաքում հայտարարել էր. «Օ, քառասուն հոգինոց օպերա է եկել», - ծաղրել էր մեզ և անպաստ կարծիք ստեղծել մեր նկատմամբ: Դրա համար մենք շատ զայրացել էինք:

Մեր ընտիր օպերետների նոտաները թևիս տակ՝ գնացի երիտասարդի մոտ և ասացի.

- Ահա մեր ներկայացնելիք գործերի նոտաները. վերցրու ջութակդ և նվագիր ինձ համար:

Մարդը շփոթվեց:

- Մենք նոտա չենք իմանում, - ասաց:

Իսկույն վրա տվի.

- Առանց նոտա իմանալու նվագող չի կարող լինել: Այ դու երիտասարդ, քառասունհինգ հոգիանոց օպերա ասելով մեզ ծաղրել էիր, հա... Այո, մենք չորս հոգի ենք, բայց ձեզ բոլորիդ հավասար, վաղը բոլորիդ հրավիրում եմ թատրոն. տեսնենք չորս հոգով ներկայացում տալ հնարավո՞ր է, թե հնարավոր չէ:

* * *

Հաջորդ օրը նրանք խմբով եկան և դիտեցին մեր ներկայացումը: Երբ տեսան, որ շատ կանոնավոր և ամբողջությամբ խաղացինք պիեսը, ամոթով մնացին: Ներկայացումից հետո մորուսավորը մոտս եկավ և ներողություն խնդրեց, խոստացավ դրանից հետո 16 հոգիանոց խմբով ամեն անգամ գալ և անվճար համերգ տալ մեր ներկայացման օրերին: Մարդն արդարև նույնուրբայամբ կատարեց խոստումը:

* * *

Սուլեյման բեյը որպես արձեմենտների արժեք մի քսակ լիքը մեջիդիե և մի լիքը թղթե ծրար ոսկի հանձնեց մեզ:

Միդիլի մեր բոլոր վշտերը մոռացնել տվեց:

Թատրոնի շենքը տանելի էր, իսկ դեկորները՝ մեր սպասածից լավ: Այդ թատրոնում եմ սկսել հունական մեծ թատերախմբերն իրենց թատերաշրջանները:

Մի խոսքով՝ Միդիլի մեր վրա շատ մեծ տպավորություն թողեց:

* * *

Ապա Միդիլլիից մի քանի ժամ հեռավորության վրա գտնվող Երո գնացինք, որտեղ բացվել էր մեծ տոնավաճառ: Երկու ներկայացում էլ այնտեղ տալուց հետո կրկին վերադարձանք Միդիլլի և մի քանի ներկայացում ևս տվեցինք:

Մի օր էլ լուր ստացանք, թե Օֆելիայի հայրը վախճանվել է: Նրան կանչում էին Ստամբուլ: Այդ պատճառով բոլորս միասին վերադարձանք Ստամբուլ:

* * *

Այս շրջագայության ամենամեծ օգուտն այն եղավ, որ թատերական արվեստը մեր հնարավորության սահմանում հասցրինք Անատոլիայի այս խուլ անկյունը:

Մյուս դեպքերի գնահատումը թողնում եմ ընթերցողին:



ՄԱՍ 5

ԹԵՔԻՐԴԱՂՈՒՄ

ՏԻԿԻՆ ՔՆԱՐՆ ԻՆՉՊԵՍ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵՑ ԹԱՏՐՈՆ ՌՈԳՈՍՏՈՅԻ ՀՅՈՒՐԱԽԱՂԵՐԸ ՉԱՀԻՐԵ ԽԱՆԻՑ ԹԱՏՐՈՆ. ՍՊԻՏԱԿ, ԿԱՐՄՐԱԹՈՒՇ ԵՎ ՈՍԿԵԾԱՄ ԱՂՁԻԿԸ

Կրկին աշխատանք էի որոնում: Վեր կացա, գնացի Ռոդոստո: Մտածում էի այնտեղ թատերաշրջան սկսել: Բայց ամենից առաջ չկար թատրոնի շենք: Արտաքինից իջևանատան նմանող մի շենք գտա: Պատկանում էր Ահմեդ բեյին և Գրիգոր Ջինգոզյանին: Նրանց հետ համաձայնության գալով՝ սկսեցի այդ իջևանատունը (որ կոչվում էր Չախիրե խան), թատրոնի վերածել: Ինձ հետ եղող դերասաններն էին Գրիգոր Գասապյանը, Աշոտը, Չավուշյանը, հուշարար Շալճյանը և միայն մի կին՝ Օֆելիան: Մինչդեռ մարդիկ զբաղված էին թատրոնը կարգի բերելու գործով, ես վերադարձա Ստամբուլ, նոր դերասանուհիներ ապահովելու համար: Ընկա այս ու այն կողմ:

Մի օր մտա փայտե կամուրջի վերևում գտնվող սրճարանը: Դա սովորաբար դերասանների ժամադրավայրն էր: Այնտեղ էր Ֆասուլաճյանը: Ինձ հրավիրեց իր սեղանին: Նստեցինք: Ֆասուլաճյանը Սև ծովի ափերից նոր էր վերադարձել: Երևում էր, որ մեծ վշտի մեջ է: Իր ամենասիրելի անձը՝ էրանույշին կորցնելուց հետո իրեն տվել էր խմիչքի: Այդ բանը երևում էր նրա դեմքից: Աչքերն ամբողջովին փոսն էին ընկել, սկսել էր խոսակցին դիտել՝ գլուխը շարունակ շարժելով: Ջրույցը սկսեց արտասովոր աչքերով:

-Ֆեհիմ, անշուշտ լսել ես էրանույշի մահը: Խեղճ էրանույշ, խեղճ: Մի մեծ դերասանուհի մի ակնթարթում չվեց: Նա սովորական մարդկանց նման չմտավ... Ապրում է, բոլորիս սրտերում, բեմահարթակի վրա ուր դրած ամեն մարդու սրտում, ապրում է մեծ վայելչությամբ, գուցե ես մեծ թախիծով: Մեր բոլորի անունների սկզբում մի «մեծ» կամ «հայտնի» բառ կա, սակայն ի՞նչ արժի, երբ բոլորս էլ մեր ցանկություններից հեռու, նեղության մեջ ենք ապրում:

Ֆասուլաճյանը խոր հուսահատության մեջ էր: Նրան վշտից հեռացնելու մտադրությամբ ասացի.

- Արի նորից մի գործ սկսենք: Աշխատանքը քիչ թե շատ մոռացնել է տալիս վշտերը: Արի գնանք Ռոդոստո, միայն թե դերասանուհու կարիք կա:

Գլուխն օրորեց:

- Ես,- ասաց,- շատ հոգնած եմ: Հրանույշի մահը ինձ խիստ ցնցեց: Ինձ մոտ մի քանի երիտասարդ աղջիկներ կան: Կարող եմ քեզ տալ: Ես էլ կգամ, միայն թե հանգստի կարիք ունեն: Երբեմն կարող եմ խաղալ: Ռեժիսորն էլ դու կլինես և քո ուզածի պես կդեկավարես: Համաձայն ես:

- Համաձայն եմ, - ասացի:

Հաջորդ օրն ինձ ծանոթացրեց երկու երիտասարդ աղջիկների: Մեկը երկարահասակ, սպիտակամորթ, կարմրաթուշ, ոսկեծամ գեղեցիկ աղջիկ էր, անունը՝ Ռոզա Ֆելեկյան, մյուսը՝ փոքրամարմին, ավելի ջահել, միաժամանակ շատ անուշ մի աղջնակ, անունը՝ Զնար:

Ֆասուլաճյանն այս երկու աղջիկների հետ պայմանագիր կնքեց, գնացինք Ռոդոստո:

* * *

Թատրոնի վերակառուցման գործն արդեն ավարտվել էր: Օթյակներով, բեմով, ըստ ամենայնի գեղեցիկ տուփի պես մի շենք էր դարձել:

Զբաղվեցինք «Հայտարարություններ» տպագրելով: Ֆասուլաճյանը բաց արեց Կեդիկ փաշայի թատրոնից մնացած դերաբաշխման մատյանը, որը պարունակում էր 300 պիեսներում խաղացած դերասանների անուններ:

Օրերից մի օր այդ մատյանը անցել էր Կեդիկ փաշայի դերասաններից կատակասեր Թոսպատյանի ձեռքը: Նա, պիեսների անունների կողքին պատասխաններ էր գրել: Օրինակ՝ «Խենթերի բժիշկ» – Հակոբ Վարդովյան, «Կեղծծամ» – Պենկյան: Այսպիսի դատարկ, անիմաստ բաներով սևացրել էր մատյանը:

Մենք այդ տետրը բաց էինք արել պիեսներ ընտրելու համար, բայց դրանով բացեցինք անցյալի դռները: Փորներս բռնած՝ ծիծաղում էինք:

Առաջին ներկայացման համար ընտրեցինք «Կարմիր կամրջի դեպքը»: Ռոզա Ֆելեկյանը բեմական իր առաջին քայլը կատարեց այդ պիեսում, Ռոզալիի դերով և շատ մեծ հաջողություն ունեցավ:

Հիշյալ դրամայից հետո մեր ներկայացրած մեկ գործողությամբ «Փունջիները» կատակերգությունում էլ Զնարն առաջին քայլը կատարեց, խաղալով Կոլոմբինայի դերը:

1891թ. իր մոր՝ Պերճուհու հետ Ռոդոստո եկած և դերասանուհի դառնա-

լու նպատակ ունեցող Զնարը այդ գիշեր որոշակիորեն ի հայտ բերեց բեմական մեծ ապագա խոստացողի կարողություն, իր փոքր մարմնի մեջ ցուցադրելով արվեստագետի մեծ ուժ:

Կարճ ժամանակ անց դադարեցրինք ներկայացումները: Ես էլ, ինչ որ անծանոթ վայրից եկած մնջախաղի մի խումբ տեղավորեցի այդ թատրոնում, որի վարձակալն էի դեռ: Մեր դերասաններին էլ միացրինք մնջախաղի խմբին և քիչ շատ ապահովեցինք նրանց ապրուստը: Ֆասուլաճյանը դժգոհ էր դրանից:

-Բոլորն էլ թող նստեն ու ռոճիկ ստանան,- ասում էր: Ես էլ պատասխանեցի.

- Եթե բոլորն էլ անգործ նստեն, նրանց ո՞րտեղից փող պիտի տանք: Բանկում փող ունե՞նք: Ո՛չ: Ուրեմն լավ վատ պիտի աշխատենք: Ես աշխատանքի կողմն եմ, դրա համար էլ երբեք պարտքի տակ չեմ ընկել, իսկ դու պարտքեր ունես և չես էլ ուզում աշխատել:

Ֆասուլաճյանը զայրացավ: Վերցրեց Զնարին, Ռոզա Ֆելեկյանին, տիկին Պերճուհուն, նաև մեկ երկու ուրիշ դերասանի, գնաց Սալոնիկ:

Մնացի Օֆելիայի և մեկ երկու անփորձ դերասանների հետ, բայց դրանով հանդերձ ինձ ավելի ուժեղ էի զգում:

* * *

Մինչ այս դեպքերն էին կատարվում, հայտնի երաժիշտ Բեքարյանի փեսա, Դիշլիօղլուի կողմից հրավեր ստացա Չորլույում ներկայացումներ տալու: Այդ մարդը Չորլուի ամենից հարուստ կալվածատերն էր և հայոց եկեղեցու հոգաբարձու: Իմացրել էի Ֆասուլաճյանին և առաջարկել միապին գնալ, սակայն նա նախընտրել էր Սելանիկ մեկնել: Ուստի մեն-մենակ կառք նստեցի ու Չորլուի ճամփան բռնեցի:

Ռոդոստոյում իմ վաստակած փողը, որ ոմանք մեծ գումար էին կարծում, ճանապարհներին ջրաղացների առաջ խաղացող երեխաներին բաժանելով՝ գրպանումս գրոշ չէր մնացել: Շատ զայրացել էի, մի քանի ազահների աչքը վրան մնացած այդ փողը հետս չէի վերցրել:

Երբ սայլապանն ասաց. -Աման, բեյ, ի՞նչ ես անում, փողը այդպես կարելի՞ է շաղ տալ.

-Բեֆս այդպես է ուզում, - պատասխանեցի: Փողն այդպես շաղ տալը

աշխարհում իմ ամենասիրած բանն է: Դու սայլը քշելուդ նայիր...

Խեղճ սայլապանը, իր հարուստ հաճախորդի վարմունքից զարմացած՝

փաթաթվել էր ձիերի սանձին և ամբողջ ուժով քշում էր՝ ճանապարհի վարձից բացի նվերներ ստանալու համար: Նա չէր էլ կարող հասկանալ, որ հաճախորդը բեմի մի խենթ էր և սայլի վարձը տալու փող անգամ չուներ:

ՉՈՐԼՈՒԻՑ ԷԳԻՐՆԵ. ՌԱՄԱՋԱՆԻ ՏՈՆԵՐԻ ՍՐԲԱՋԱՆ ԱՄԻՍ. ՆԱՎԱՊԵՏ ԱԹԱՆԱՍ ԷՖԵՆԴՈՒ ՎՆԱՍԸ ՖԵՀԻՄ ԷՖԵՆԴԻՆ ԷԼ Է ՎՆԱՍՈՒՄ. ՕՐԵՐՈՎ ՊԱՇԱՐՎԱԾ՝ ՔԸՐՔ ՔԻԼԻՍԵՈՒՄ

Դիշլիօղլուն ինձ դիմավորեց իր կալվածքի դռանը: Ես իսկույն խնդրեցի նրան՝ վճարել սայլի փողը:

Դիշօղլուն կառուցել էր մի մեծ դպրոց, որն ուներ նաև թատերասրահ: Նա խնդրեց, որ այդ սրահում մի ներկայացում տանք դպրոցի օգտին: Թեև սեղմելով ասացի, թե դեկորներ են անհրաժեշտ: Իմ միջոցներով պատրաստեցի դեկորները և նվիրեցի դպրոցին: Ընկերներին կանչելով երեք ներկայացում տվինք դպրոցի օգտին, երեք ներկայացում էլ մեզ համար: Չորույն մեծ հետաքրքրություն ցուցաբերեց մեր ներկայացումների նկատմամբ և բավական լցրեց մեր քսակները:

Այդ փողով մեկնեցինք Էդիրնե: Քաղաքագլուխը կրկին Ալի Իզեթ փաշան էր: Ռամազանի տոները մոտեցել էին: Խնդրագիր ներկայացրինք քաղաքապետարանին, որպեսզի թույլատրվի տոնական այդ օրերին ներկայացումներ տալ: Բավական տանել բերելուց հետո, ի վերջո մերժեցին մեր խնդիրը, պատճառաբանելով, թե Ռամազանը սրբազան աղոթքների ամիս լինելով, շերիաթի օրենքով ամեն տեսակի խաղեր արգելված են: Այսպիսով մեզ զրկեցին ներկայացումներ տալու հնարավորությունից:

Հանդիպեցի ծանոթների: Նրանց միջոցով դիմեցինք ղեկավարներին և խնդրեցինք օգնել մեզ: Բան դուրս չեկավ: Թռչունի ուղեղ ունեցող և ծայրահեղ կրոնամուլ այդ մարդկանց անիմաստ որոշումների առաջ պարտվել էինք: Բայց այդ պարտությունը ավելի էր ամրացրել իմ հավատը արվեստի նկատմամբ:

* * *

Ռամազանի ավարտից հետո մի քանի թատերասերների ուժերով 3-4 ներկայացում տվինք: Անցյալում իմ խաղը տեսնողները զարմացել էին իմ առաջադիմության վրա: Գուցե չէին սխալվում: Այդ առաջադիմությունը եր-

կար ճանապարհորդությունների, հազարումի զրկանքների և համառ վճռականության արդյունք էր:

Այս անգամ էլ մեր վաստակած մի քանի ոսկով մեկնեցինք Քըրքքիլիսե: Մի շաբաթ կանոնավոր ներկայացումներ տվեցինք:

Բայց հենց այդ օրերին Սինեկլիի և Չորլուի մեջտեղում կապիտան Աթանաշը կանգնեցրել էր եվրոպական գնացքը և յոթը հարուստ եվրոպացիների փախցրել սարերը: Այս Աթանաս նավապետը շատ հայտնի մի ավազակ էր: Նա յոթը եվրոպացիներին ազատ թողնելու համար օսմանյան կառավարությունից պահանջել էր 10.000 ոսկի փրկագին: Նրան բռնելու համար ուղարկվել էին 3000 զինվորներ և մեծ քանակությամբ բանտարկյալներ: Որքան էլ որ աշխատել էին, զենքի ուժով չէին կարողացել հարցը լուծել և, եվրոպական կառավարությունների ճնշման տակ պետությունը հարկադրված էր եղել վճարել 10.000 ոսկին և ազատել կալանավորներին:

Բայց այս դեպքը մեր գործին էլ վնաս պատճառեց: Քըրքքիլիսեում օրերով փակված մնացինք: Չէինք կարողանում դիմանալ նյութական դժվարությունների: Վերադարձանք Ստամբուլ: Բոլոր այս անախորժությունները մոռացանք:



ՄԱՍ 6

ԵՐԿՈՒՍՈՒԿԵՍ ՏԱՐԻ ԱՆԿԱՐԱՅՈՒՄ

Պոլսում կրկին անգործ ու անօգնական թափառելիս դեմս դուրս եկավ օսլայի գործով զբաղվող մի մարդ՝ Հակոբ անունով: Նա Անկարայում Կոջամանօղլուի կառուցած թատրոնի վարձակալն էր: Ինձ տարավ Համիդիե խան կոչվող վայրը: Այնտեղ Անկարայում տրվելիք ներկայացումների համար բանակցության մեջ մտանք Կոջամանօղլուի եղբոր և Հակոբի հետ: Վար ու վեր անելուց, սակարկելուց հետո համաձայնվեցին ինձ վճարել ամսական 150 ոսկի: Այդ փողով ապահովելու էի իմ ստեղծելիք թատերախմբի անդամների ռոճիկը, մնացածով էլ ես էի ապրելու:

Անմիջապես բավականաչափ մեծ մի գումար վերցրի, որպես կանխավճար և անցա գործի: Այցելեցի դերասանների ժամադրավայրեր եղող անկյունները: Վերջապես Քյուլիանյանին, իտալացի Ռեջինային, Աղավնի Քեսեջյանին, տիկին Քյուլիանյանին հրավիրեցի խմբում խաղալու և ճանապարհ ընկա դեպի Անկարա:

Մեզ հետ էին թատրոնի վարձակալ, օսլայագործ Հակոբը և թատրոնի սրճարանի համար վարձված յոթ հոգինոց նուրբ սազի նվագախմբի անդամները:

Այդ տարիներին Անկարա մեկնող երկաթուղու ճանապարհը դեռ շինված չէր: Մինչև Գեյվե գնացինք գնացքով, այնտեղ, վարձելով ինը սայլ՝ ինը օր, ինը գիշեր սար ու ձոր անցնելով, հասանք Անկարա: Սակայն ամբողջ ճանապարհորդությունը անցավ զվարթ ու կատակի մթնոլորտում: Եվ արդեն նման ճանապարհորդություններն են, որ մոռացնել են տալիս թատրոնի մարդկանց բոլոր տառապանքները: Ուրախության յուրահատուկ գինովության մեջ սահում էինք դեպի գույնզգույն հորիզոնները:

* * *

Անկարան այն ժամանակ ամայի տարածության մեջ գտնվող քաղաք էր և հանդիսանում էր հայ կաթոլիկների կենտրոնը: Մուսուլմանները քիչ էին: Նրանք ապրում էին քարքարոտ վայրերում, հյուղակիների նման տներում: Եվ արդեն մենք՝ երկրի տերերը, նմանվում էինք քաջ գողերի հարձակումներին ենթարկված տանտերերի:

Քոջամանօղլուի թատրոնը կառուցված էր Բալըք բազարի աջ կողմի

բարձունքում գտնվող խանութների և սրճարանների վրա: Անուր շենք էր, միայն թե դեկորներ չունեիր:

Իսկույն անցա գործի: Վաթսուն ոսկի ծախսելով և ընկերներիս օժանդակությամբ մեկ շաբաթվա ընթացքում ավարտեցի ամեն ինչ:

ԱՆԿԱՐԱՅՈՒՄ ԲԱՅՎԱԾ ՆԿԱՐՉԱԿԱՆ ԴՊՐՈՅԸ ՔՅՈՒԼՀԱՆՅԱՆԸ ՓԱԽՉՈՒՄ Է ՄԻ ՎՐԱՆ. ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ ՔԱՅՔԱՅՄԱՆ ԱՌԱՋ. ԽՄԲԻ ՎԵՐԱԴԱՐՉԸ ՍՏԱՄԲՈՒԼ. ԻՐԱՎԱԲԱՆ ՉԻԼՕՂԼՈՒԻ ՈՒԺԸ

Սկսեցինք ներկայացումները: Առաջին գիշերը ներկա եղավ նաև քաղաքագլուխ Աբիդին փաշան և դրանով էլ քաջալերեց մեզ և մեր համար ապահովեց անհրաժեշտ հարգանք ու դրական վերաբերմունք:

Կրկին սկսել էինք մխրճվել երեք հարյուր պիեսների մեջ: Դրանով հանդերձ՝ գործը գլուխ էր եկել: Միայն թե մեր օսլայագործ Հակոբը մի քիչ ավելի աչքբացություն էր հանդես բերում և ինձ զայրացնում:

Աշխատավարձերը տալուց հետո ամսական ինձ մնում էր 45 ոսկի: Այս հյուրախաղերից բոլորը նույնպես գոհ էին: Սակայն ամեն գործ, մասնավորապես թատրոնի գործը իր տհաճ կողմն է ունենում:

Երկրորդ ամսի կեսերին Քյուլիանյանը սկսել էր ընկերների մոտ ինձ քննադատել, մարդկանց լարել իմ դեմ: Ամեն կերպ աշխատել էր ինձ դեկավարի պաշտոնից հեռացնել:

Իրենց փաստարկումներին սոցիալիստական գաղափարների տեսք տալով, ուզում էին վնասել գործատիրոջը, այսինքն իմ եկամտին. առաջարկելով վճարումները կատարել ոչ թե ըստ անհատների, այլ բոլորին հավասարապես:

Հենց որ լսեցի այդ բանը, վստահ, որ նրանք մեծամասնություն լինելով հաղթելու են ինձ, աչքերս բաց արի: Նրանց ծրագիրը չիրագործված՝ իսկույն իմ օգտին կազմակերպեցի մի ներկայացում և գրպանս դրեցի որոշ գումար՝ սև օրվա համար: Արդեն մի քիչ էլ ունեի: Երկու հարյուր ոսկուց ավելի դրամ ունեցա: Հիմա այլևս չէի վախենում: Նույնիսկ կարող էի ինձ դեմ դավադրություն կազմակերպողներին ասպարեզ կարդալ և ստիպել որ շարունակեն աշխատել:

Սակայն Քյուլիանյանը կնոջ հետ միացավ Շուկամիջին գտնվող մի տա-

ղավարում գործող թուլուաթի խմբին, որն ամենևին Պոլսում չէր լինում և թատրոնի գործն էլ վարում էր ըստ իր հայեցողության: Միայն Անադոլուի ճաշակը բավարարող մի քանի խաղեր և պարեր կատարելով՝ թափառում էին քաղաքից քաղաք:

Այդ խմբի ղեկավարն էր Մեհմեդ Ջեմիլ անունով մի երիտասարդ, որն Օրթա օյունուի խմբերում կանացի դերեր էր կատարել: Ուղղամիտ, առատաձեռն այս մարդն ուներ կանացի նախասիրություններ. վզից կախ էր տալիս հինգ ոսկիանոց զարդեր, դեմքը ծածկում էր մետաքսյա քողով: Կլիներ 35-36 տարեկան: Բառիս լայն առունով հաճելի երիտասարդ էր, լավ գրուցակից: Գլխին ուներ հազարումի պատմություններ, քառյակներ, սրամիտ խոսքեր, որոնք հմտորեն շաղ էր տալիս բեմում, իր դերակատարումների ժամանակ, արագությամբ և աշխույժ կատարելով իր դերերը, ունկնդիրների համակրությանն արժանանում: Սիրված դերասան էր մանավանդ կանացի հաճելի ձայնով կատարած դերերգերով, որոնց համար էլ նրան կոչում էին Լուսիքա իզական անունով:

Երբ Զյուլհանյանն իր տիկնոջ հետ անցավ հիշյալ խումբը, օսլայագործ Հակոբը հրաժարվեց մեր աշխատավարձը վճարելուց: Ես իմ ամբողջ ուժով ընդդիմացա դրան: Ունեինք գրավոր պայմանագիր, որը սակայն ոչ ոքի կողմից ստորագրված չէր, հետևաբար երկու կողմն էլ չէր կարող հենվել այդ պայմանագրի վրա: Մարդը սկսեց իր ասածը պնդել. ես էլ իմն էի պնդում: Վերջապես բղավեց.

- Այ տղա, երբ քո մարդիկ այս ու այն կողմ են փախչում, էլ ինչո՞ւ պիտի դրամ տամ:

Խզված, եղեգի ձայնով խոսող այս մարդու վրա ես էլ բղավեցի և ասացի.

- Մարդիկ փախչում են այն պատճառով, որ գիտեն թե իրենց աշխատավարձը չես տալու: Փողը տուր, ես նրանց կրկին ետ կբերեմ:

Այնուամենայնիվ նա տեղի չտվեց: Գործը խափանվեց: Բայց պարտավորված էի Պոլսից քարշ տալով այնտեղ բերած 13 դերասաններին թշվառ վիճակում չթողնել:

* * *

Մյուս կողմից, մի շաբաթ անց, չկարողանալով հարմարվել իրենց նոր գործին, Զյուլհանյանն ու կինն էլ թողել էին թուլուաթի խումբը և ուզում էին կրկին մեզ հետ խաղալ:

Մի օր Զյուլհանյանին մի կողմ կանչեցի և ասացի.

- Գործիս խանգարեցիր: Դա ինձ չվնասեց, քանի որ ես վաղուց գլխիս ճարը տեսել էի: Իսկ դո՞ւ ինչ ես անելու հիմա: Եթե ուժդ չէր ներում, ինչո՞ւ նման քանի ձեռնարկեցիր: Արի քեզ փող տամ, ընկերներիդ վերցրու, տար Ստամբուլ, հասցրու իրենց տները:

Զյուլհանյանը գլուխը կախ, ամաչելով լսեց իմ խոսքերը: Նրան էլ, մյուսներին էլ փող տալով հաջորդ օրը ուղարկեցի Ստամբուլ:

* * *

Անկարայում մնացի մենակ: Ուզում էի մի անկյուն քաշվել և սպասել: Ապրում էի Ֆեսեր (գլխարկ) կաղապարող մի կաթուղիկի տանը:

Արդեն ամառ էր: Չէի կարող անգործ մատել: Իսկույն տունս վերածեցի արվեստանոցի և զբաղվեցի նկարչությամբ: Պատրաստում էի պլակատներ, նկարներ: Մի դեղատան համար պատրաստում էի լեզուն դեպի թույնը երկարած և գալարված օձ, դերձակի համար՝ զարդարում մի մողեյ, պողա-վաճառի համար՝ ձմերուկ, տանձ: Այսպիսի բաներ նկարելով ապրում էի: Երբեմն էլ իմ առաջ ցցվող որևէ մեկի դիմանկարը պատրաստելիս՝ ստեղծում էի մի նատյուրմորտ:

Այնուամենայնիվ այս գործից բավական փող էի վաստակում և անուն հանում:

Մի քանի ամիս անց Անկարայի փողոցները զարդարվեցին իմ պատրաստած պլակատներով, իսկ բնակարանների ու խանութների ներքնամասերը՝ նկարներով:

Դպրոցների արձակուրդի ժամանակ, իրենց երեխաների ձեռքից բռնողը բերում էր արվեստանոցը, որպեսզի նկարչություն սովորեն: Բնակարանս լեցվել էր մեծ ու փոքր երեխաներով և թաղային դպրոցի տեսք էր ընդունել:

Մի օր, հոգնած, դադրած տուն վերադարձիս՝ աշակերտներիցս մեկը՝ ամենից առաջադեմը, Տարտյուֆի պես թափանցեց մոտս և փորձանք հայտնող մարդու հուզումով ասաց.

- Վարպետ, քեզ բնակարանից հանելու են: Տանտերը քեզնից առաջ ինչ որ անձանոթի հետ եկավ, նրան ցույց տվեց տունը, ինչ որ բաներ փափսացին, գնացին:

Լուրն ինձ շատ մտահոգեց: Երեկոյան դեմ իսկույն շտապեցի իրավաբան Չիլօղլուի մոտ, պատմեցի եղելությունը: Այս իրավաբանը ամբողջ Անկարայում հայտնի մարդ էր, ճարպիկ, ազդեցիկ, իսկ դատարաններում կատարյալ մի ըմբիշ էր: Նա ասաց:

- Կշինեն, կտեսնես, միայն թե փողը դեղագործ Քեստանյանին կտաս:

Չերկարեն: Ավարտեցի սակարկությունը և իսկույն ինձ մոտ կանչեցի Յանկոյին: Դռները փակեցինք, անցանք գործի: Մեքենան կարգի դրեցինք: Մի շիշ զովացուցիչ ըմպելի էլ պատրաստելով պատիվ արեցի Վիչենին: Այդ գործը կարող էի անել՝ քանի որ Թոփիհաներից դուրս եկած վարպետ էի:

* * *

Այդպիսի ջրեր վաճառող մի մարդ էլ կար՝ Գրիգորը: Լսելով վարպետ լինելս՝ նա էլ կանչեց... և այսպես՝ մեքենագիտության մեջ էլ անուն հանեցի:

Այդ ժամանակ Գրիգորը հրավիրեց ինձ թատերական գործ սկսելու: Խոստացավ դրամագլուխը ինքը դնել: Ես պետք է մեկնեի Ստամբուլ և դերասաններ գտնեի ու բերեի:

Պայմանավորվեցինք վարձել Կոջամանոլլուի թատրոնը: Տերը որպես տարեկան վարձ պահանջեց 160 ոսկի: Մեր հաշվին չեկավ: Շենքի հարցը ոչ մի կերպ չէինք կարողանում լուծել:

Մի օր ինձ իր մոտ կանչեց Ջենդերեջիօլլուն: Բաց արեց մի փոքր դուռ և հարցրեց.

- Սա կարո՞ղ է թատրոն լինել:

- Կատարելապես, – պատասխանեցի:

Տեղը իսկապես որ հարմար էր: 12 ոսկու փոխարեն գծեցի թատրոնի նախագիծը: Իսկույն սկսվեց շինարարությունը: Բանվորներին ղեկավարելու համար օրական ստանում էի կես ոսկի: Երկրորդ ամսվա կեսերին թատերական գործի նախագծով կառուցված և աղավնիների նման սպիտակ ու սիրունիկ Ջենդերեջիօլլուի թատրոնը հրապարակ եկավ: Հիմա էլ բոլորն ինձ ճանաչում էին որպես ճարտարապետ:

* * *

Ջրավաճառ Գրիգորից ստացած կանխավճարով իսկույն բռնեցի Պոլսի ճանապարհը: Սակայն երթևեկությունը դեռ չէր սկսվել: Չէր ավարտվել ճանապարհի կառուցումը: Մինջանում կանգ առնելիս՝ հանդիպեցի Ադրիանապոլսից ինձ լավ ծանոթ ու բարեկամ Ժանոյին: Երկաթգծի պաշտոնյա էր: Ուստի նա հատուկ վագոնով Էսկիշեհիրի և Մինջանի արանքում գտնվող հանգույցն էր պատրաստում: Ինձ վերցրեց իր վագոնը, հասցրեց Էսկիշեհիր, խոստանալով՝ վերադարձին էլ տեղափոխել ինձ հետ եկողներին: Այս

բոլորի համար շատ ուրախացա: Ինձ ու ինձ ասում էի. - Գործս հաջող է գնում հենց սկզբից:

Պոլսում առաջին օրն անցկացրի բարեկամներիս այցելելով, երկրորդ օրը եղա Պերայում: Համաքիում գտա նվագողների միջնորդ Սաքա Կարապետին: Առաջին օրվա գրույցներս համոզել էին ինձ, որ պետք է հրաժարվեի թատրոնի մտքից և թատրոնս դարձնել կաֆեշանտան:

Սաքա Կարապետը ինձ ծանոթացրեց հրապարակի վրա անուն հանած մի քանի նվագողների հետ, քարշ տվեց տնից տուն: Լսածներս սազի եղանակներ էին: Ում տունը որ գնում էինք, մեզ հյուրասիրում էին օղիով: Այդ օրը այնքան շատ տներ այցելեցինք, որ մինչև երեկո խմածս օղուց գլուխս օրորվում էր:

Վերջապես՝ թատրոնի նախասրահում նվագելու համար ընտրեցի հինգ վեց հոգու: Մեջները կանայք էլ կային: Սկսեցին բանակցությունը, որի ընթացքում հայերեն մտքեր էլ էին փոխանակում: Չնացրի, թե հայերեն ամենևին չեմ հասկանում: Նրանց խոսքերից հասկացա, որ այնքան էլ տրամադիր չեմ ինձ հետ գնալ, բայց ուզում էին օգտվել ինձնից: Կանխավճար պահանջեցին:

- Շատ լավ, կտամ, - ասացի, - պայմանով որ ձեր անձագրերը ինձ հանձնեք: Փորձեցին խույս տալ: Ի վերջո նրանց ղեկավարին կանչեցի ինձ մոտ: Արդեն երեկո էր: Տարա Ղալաթա՝ Այնալը գազինո: Կերցրի, խմցրի: Միմյանցից բաժանվելիս՝ ինձնից փող խնդրեց: Ես էլ իսկույն պատասխանեցի՝ հայերեն.

- Է, լավ, այ երիտասարդ, Դուք ամբողջ օրը ինձ հյուրասիրեցիք: Չուզեցի պարտքի տակ մնալ: Զեղ վերցրի բերեցի այստեղ: Հիմա ոչ առնելիք մնաց, ոչ տալիք: Հաջողություն, գնաք բարով:

Օրեր անց՝ Ստամբուլ ժամանած հունգարական մի նվագախմբի հանդիպեցի, բաղկացած տասը հոգուց: Կոչվում էր Բրոզմանների ընտանիք: Իսկապես էլ նրանցից ութը ազգականներ էին՝ հայր, որդի, քեռի, հորեղբայր, կապես էլ նրանցից ութը ազգականներ էին՝ հայր, որդի, քեռի, հորեղբայր, աներձագ: Նվագախմբի ղեկավարն էր տասը հոգիանոց ընտանիքի ամենատարեց մարդը՝ Մոսյա Բրոզմանը:



**ԱՆԿԱՐԱՅՈՒՄ ՏՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՀԱՄԵՐԳՆԵՐԸ
ՏԱՐԱՉԱՅՆՈՒԹՅՈՒՆ ԲՐՈՎՄԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ. ՀՈՎՎԻ
ԳԱՄՓՈՆԵՐԻ ՀԱՐՉԱԿՈՒՄԸ.
Ո՞Վ Է ՍՏԵՂԾԵԼ ԲԵՐԴԻ ՉԱՐԴԵՐԸ**

Համերգները տրվում էին շքեղ և ասեղնագործված զգեստներ հագած երաժիշտներով: Այդ նվագախումբը հենց իմ թատրոնի համար էր ստեղծված: Սկսվեց բանակցությունը: Ավստրո-հունգարական հյուպատոսարանում ստորագրեցինք պայմանագիր, որի համաձայն պարտավոր էի Բրոզմանների ընտանիքին վճարել ամսական 45 ոսկի՝ շաբաթավճարով: Պայմանագրի տևողության ընթացքում նրանց ապահովելու էի բնակարանով և ջրով: Դրա փոխարեն Բրոզմանների ընտանիքը որոշյալ օրերին ներկայանալու էին նվագելու պաշտոնական զգեստներով և հոգեբանորեն տրամադրված, այսինքն՝ ոչ հարբած վիճակում: Իմ համաձայնությամբ, եթե մի այլ տեղ նվագեին, եկամտի կեսը պարտավոր էին ինձ տալ: Նշանակված ժամանակից ուշ, հարբած վիճակում կամ ոչ պատշաճ զգեստով գալու դեպքում, կամ՝ առանց իմ համաձայնության ուրիշ տեղ նվագեին, պայմանագիրը համարվում էր չեղյալ:

Դրանս վերջացել էր: Վազեցի Ռուբեն Պինեմենյանի մոտ, փող խնդրեցի: Սակայն նա էլ դրամ չուներ: Կնոջ մանյակը գրավի դնելով՝ ինձ քսան ոսկի տվեց: Անշուշտ, հենց որ հասա Անկարա, իսկույն ուղարկեցի նրան այդ գումարը, սակայն կատարածը բարեկամության անմոռանալի մի վերաբերմունք էր:

Բրոզմանները Անկարա էին գալու՝ իմ այնտեղ ժամանելուց 15 օր հետո, որովհետև, ծերունու հավաստիացումով, Հունգարիայից նոր զգեստներ էին սպասում: Իրականում այդպես չէր: Նրանք ուզում էին ավարտել իրենց բոլոր այցելությունները Պոլսում: Այնուամենայնիվ նրանց որոշ կանխավճար տվի: Դրա փոխարեն Բրոզմանն ինձ մոտ թողեց 22 տարեկան որդուն, որպեսզի օգնի ինձ:

Հենց հաջորդ օրը նստեցինք գնացք և Ժամոնի օժանդակությամբ գնացինք մինչև Սինջան: Ես այդ երիտասարդին բացատրեցի մեր ապագա անելիքը:

Սինջան հասնելիս մութն արդեն ընկել էր: Սրան նրան հարցրինք, թե մինչև Անկարա քանի՞ ժամվա ճամփա է մնում: Երկուսից երեք ժամ՝ ասացին: Այդ ճանապարհը կարող էինք ոտքով գնալ: Իմաստ չուներ մինչև

առավոտ տառապել սարերի գլխին, որպեսզի հաջորդ առավոտ որևէ սայլ գտնեինք:

Նախ բանվորների համար պատրաստված լոբու փլաքիով փոքր կշտացրի: Երիտասարդը չկերավ: Սև ու կեղտոտ ամանից զզվել էր:

Սակայն նա չէր կարող մտածել, որ Երջանիկ Անադոլուի առատությունը հենց այդ սև ամանի միջի կերակուրներն էին: Այդ ամանի շուրջ բոլորված ձեռքերը կոշտուկով, վառված մարմնով բանվորներն էին, հողի ուժին հավատացող մարդիկ: Ես էլ նրանց նման էի, ես էլ՝ բեմի մարդ: Լույսերը գուցե մի քիչ ուժ էին տալիս, սակայն մարդկայնորեն, այդ բանվորներից տարբեր չէի, քանի որ, ինչպես Տոլստոյն է ասում. «Աշխարհում միայն ուժն ու միտքն է ղեկավարում, ուրիշ ոչինչ չկա»:

Երիտասարդի այդ փոքրիկ արարքը ինձ այնքան բան մտածել տվեց: Ես առհասարակ, նման բաների մասին շատ եմ մտածում և ներշնչվում:

* * *

Հունգարացի տղան մի քանի նախադասություն գիտեր թուրքերեն: Ժամացույցս հանեցի թվանշանների վրա մատով մի գիծ քաշեցի և ասացի.

– Այստեղից Անկարա... երեք ժամ... կարո՞ղ ես գնալ:

– Օ, ես զինվոր,- ասաց,- գնալ... տասը ժամ...

Դրա վրա ընկանք ճանապարհ: Եղանակը կարգին ցրտել էր: Դանապարհները ցեխով էին պատած:

Երեք ժամ քայլեցինք, սակայն բարձր խավարի մեջ՝ ոչ տուն էինք տեսնում, ոչ էլ որևէ կենդանի արարած: Անվերջ մեր առաջ ցրցվում էին աստծո դաշտերը, ամալի տարածությունները:

Սինջանում տասը ժամ քայլել խոստացող տղան, պայուսակն ու ջութակը դրեց գետին և փուլ եկավ... Մի քիչ հետո պայուսակը ուսիս դրի և շարունակեցինք ճանապարհը: Մեկ երկու ժամ էլ քայլեցինք: Քրիստափոր Կոնստանտինովի մարդկանց նման հուսահատության էինք մատնվել: Գոտիս լումբոսի նավի մարդկանց նման հուսահատության էինք մատնվել: Գոտիս քանդեցի, դրանով կապեցի ճամպրուկն ու ջութակը, զգեցի ուսիցս: Տղան դանդաղ քայլերով հետևում էր ինձ: Հոգնաժողովից աչքներս փակ, հարդանդաղ քայլերով հետևում էր ինձ: Հոգնաժողովից աչքներս փակ, հարբածի նման էինք քայլում: Հասել էինք մի բարձունքի ստորոտը: Մեկ էլ մեր բաժի նման էինք քայլում: Հասել էինք մի բարձունքի ստորոտը: Մեկ էլ մեր վրա հարձակվեցին վզներից երկաթյա փշե շղթաներ ունեցող հովիվների հսկա գամփոռներ:

Երիտասարդը սարսափից սկսեց բղավել: Ես հորիցս լսել էի, որ եթե շուրջ արձակվում է, իսկոյն պետք է նստել: Անմիջապես երեխի թևից բռնելով

նստեցրի գետնին, ես էլ նստեցի: Երկուսիս լեզուն էլ փակվել էր: Շների աչքերը վառված երկաթի նման փայլում էին: Նրանցից մեկը ծնոտը պատռելու աստիճան բաց անելով ուժգին հաջոցով մոտեցավ ինձ: Աչքերս փակել էի: Բոպե առ բոպե սպասում էի, որ պիտի կծի մտերս: Հաչելիս՝ նրա տաք շունչը դիպչում էր դեմքիս: Բոլոր ուժովս աշխատում էի սիրաշահել շանը. ասում էի,- «քչի... քչի... աման չչի...»: Ամեն կերպ աշխատում էի հանգստացնել նրան: Ծնկների վրա, շատ դանդաղ, հիսուն մետրի չափ ետ գնացինք:

Վերջապես երևացին բարձունքի ետևում գտնվող հոտի հովիվները: Իջան, վերցրին ու տարան շներին:

Այս փորձանքից ազատվեցինք, սակայն վախիցս՝ վզիցս մինչև գուլպաներս քրտինքի մեջ լողում էի:

Հանգստացանք, մի քիչ մեզ գտանք և կրկին ճամփա ընկանք: Լուսաբացին հասանք Անկարա: Մինջանում մի խելոքի խոսքի հավատալով ենթարկվել էինք այդքան տանջանքի:

* * *

Անկարա հասնելուն պես իսկույն սկսեցի նախապատրաստական աշխատանքը: Բրոզմանների ընտանիքի համար հարմար բնակարան վարձեցի: Գործընկերս՝ Գրիգորն էլ վարձել էր Կոջամանօղլուի թատրոնը՝ նախօրոք պահանջած գումարի կեսով: Հիմա երկու թատրոն ունեինք: Ջենդերջիօղլուի թատրոնում տեղավորեցի Անկարա եկած մնջախաղի

խումբը, Կոջամանօղլուի թատրոնն էլ պատրաստեցի համերգների համար:

* * *

Մինջանից մինչև Անկարա ընկնող ճանապահի մաքրումն ավարտվել էր, սկսվել էր կառուցումը: Դրա հիման վրա քաղաքապետ Աբեդին փաշան, խանդավառվելով, հրամայել էր Անկարայի բերդերը սպիտակեցնել ու նկարազարդել:

Ինձ կանչեց: Արդեն մեր հարաբերությունը այդ մարդու հետ շատ լավ էր: Առաջարկեց գնացքի ճամփից երևացող բերդի պատերը զարդարել մի մեծ նկարով:

Յանկոյին վերցրի ինձ հետ: Մոտավորապես քառասուն մետր մեծությամբ օսմանյան պետությունը խորհրդանշող մի նկար պատրաստեցի: Գույները շատ վառ էին, հեռվից երևացող:

* * *

Այդ ընթացքում Բրոզմանները եկել և համերգները սկսել էին: Եկամուտն էլ վատ չէր: Սակայն տեղացիներից ավելի, աշխատանքի բերումով հաճախում էին այդ քաղաքը եկած օտար ինժեներները, մեքենագետները և բանվորները:

Քաղաքապետը առաջիկա շերթի համար կառուցվելիք շքականարների տեղերն ընտրելու գործն էլ հանձնեց հանրային կրթության լիազորին և ինձ: Գիշեր ցերեկ աշխատում էինք: Քաղաքը, մասնավորապես կայարանի շրջապատը վերածել էինք դրախտի: Գնացքի ժամանան օրն էլ բերել էի տվել Բրոզմանի նվազախումբը, որպեսզի նվազի: Այս բոլորը բավականաչափ օգուտ տվեցին ինձ:

Սակայն գործերը միանգամից վատացան:

Մեջտեղ եկած հայկական դեպքերի հետևանքով մի գիշերվա մեջ սրբվեցին Անկարայում եվրոպական գլխարկները: Կեսարիայից բերված չորս ցին Անկարայում եվրոպական գլխարկները: Կեսարիայից բերված չորս ցին Անկարայում եվրոպական գլխարկները: Կառավարությունը հրաժարվել էր Կեսարիայի շինարարական աշխատանքից:

Այս տհաճ դեպքը բոլորիս մտահոգել էր:

Գործընկերոջս հետ գլուխ գլխի տվինք: Սնանկանալու ճանապարհին էինք: Որոշեցինք ընդհատել գործը: Սակայն Բրոզմանների հետ պայմանագիր ունեինք: Ճարահատ համակերպվելու էինք:

Մի գիշեր դրամարկը բաց արած՝ սպասում էինք, որ տոմսերը վաճառվեն: Եկավ համերգի ժամը, անցավ: Բրոզմանները մեջտեղ չեկան:

Մի ժամ անց՝ եկան հարբած վիճակում, առանց զգեստավորման: Իմ համաձայնությունը չվերցրած՝ մասնակցել էին կայարանի ինժեներների կերուխումին: Իսկույն կանչեցի Բրոզմանին և ցույց տվի պայմանագիրը, այդ հարցին վերաբերող կետը և ասացի թե մեր պայմանագիրը այլևս կորցրել է իր ուժը: Ծերունին գլուխը օրորեց և «նաթյուրիշ» (բնականաբար) ասաց:

* * *

Մի քանի օր անց կրկին դիմեցին մեզ և համաձայնվեցին նվազել ամսական երեսուն ոսկով: Սակայն անօգուտ էր: Աշխատանքը շարունակելու հեռանկար չկար:

**ԱՆԿԱՐԱՅԻ ԱԽՈՌՈՒՄ ԳՏՆՎԱԾ ԳԱՆՁԻ ԱՐԺԵՔԸ
ԲՈԼՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԵՐԸ ՆՎԱԳՈՂ ԽՈՒՄԲԸ.
ԿՆՈՋ ՀԵՏ ԳԱՇՅՈՒՆԱԽԱՂԵՐ ՅՈՒՑԱԳՐՈՂ ԻՏԱԼԱՅԻՆ
ՆԱՄԱԿԱՔԵՐ ԶՈՌՔԱՅԻ ԴԵՄ ՈՍՏԻԿԱՆ**

Մեզ համար սկսվել էր ծանր մի շրջան: Անկարայում առաջին անգամ ինձ համակել էր անփողության մտահոգությունը: Մի օր Կոջամանօղլույում՝ գործընկերոջս հետ վիրավոր աղավնիների նման գլուխներս կախ մտածում էինք: Ծիշտն ասած, այդ տասնըվեց տարվա տևական հոգնությունը այլևս փակել էր ուղեղիս բոլոր բջիջները, ծեփել էր: Իմ առջև կանգնած էր վերջը չերևացող մի մթություն: Աստված իմ, ասում էի այդ մթության մեջ գոնե առաջին քայլս անելու համար մի կաթիլ լույս տուր, լույս...

Ծիշտ այդ պահին մեզ մոտեցավ դեռևս մեջքը ուղիղ պահել կարողացող պղնձագույն դեմքով փայտի կտորի նման մի ծերունի: Մաշվել, քուրջ էին դարձել նրա զեյբեկի շորերը: Թևի տակ ուներ հնացած մի սև ջութակ:

- Թատրոնի տերը դուք եք երևի, - ասաց ու շարունակեց, - մենք 12 հոգի ենք, բոլորս էլ ջութակահարներ ենք: Աշխարհի բոլոր պետությունների հիմները, անատոլիական ընտիր երգերը, Ջեյբեկի բոլոր եղանակները: Եթե ցանկանում եք, կարող ենք ձեզ համար նվագել:

Այնքան էլ կարևորություն չընձայեցի նրա ասածներին, բայց առաջարկեցի գալ և նվագել, որպեսզի ծանոթանանք նրանց կարողությանը:

Մարդը գնաց և կարճ ժամանակից եկավ ընկերների հետ: Բոլորն էլ նույնպիսի զգեստներ հագած գնչուների մի ընտանիք էր:

Սկսեցին հիմներից: Իսկապես էլ բոլորն էլ վարպետ արվեստագետներ էին: Բրոզմանի նվագախմբից բարձր էին: Գոհ մնացի: Իսկույն հրավիրեցինք:

Չութակահարների այս խումբը Բրոզմաններից ավելի լավ գործ տեսավ և մեր դեմքին մի քիչ ժպիտ բերեց:

Բայց ի վերջո նրանք էլ գնացին:

Ռամազանին շատ չէր մնացել: Մեր գործը երկու հոգի ապրեցնել չէր կարող: Կոջամանօղլուի թատրոնը թողի Գրիգորին, իսկ ես սկսեցի ղեկավարել Ջինդերջիօղլուի թատրոնը:

Մնջախաղի խումբը մի կերպ դեռևս քարշ էր տալիս գոյությունը: Մի ճար մտածեցի Ռամազանի համար: Մնջախաղի խմբից վերցրի երեք-չորս հոգի, որոնք կարող էին ինձ պիտանի լինել: Մտադրությունս էր նրանց

հետ որոշ զիշերներ ցուցադրել մեկ գործողությամբ կատակերգություններ:

Արդեն փորձերը սկսել էի: Այդ օրերին Պարտիզայանյան անունով մի մարդ եկավ: Նրան էլ վերցրի ինձ մոտ: Նա կանխավճար չուզեց, պայմանով որ Ռամազանի վերջին զիշերվա եկամուտը ինձ տրվի: Նրանից հետո էլ եկավ իր կնոջ հետ դաշյունախաղ ցուցադրող մի իտալացի: Նրան տվեցի ընկերոջս՝ Գրիգորին: Արդեն հին բարեկամիս օգնում էի ինչով որ կարողանում էի: Նա էլ ինձնից շատ գոհ էր: Մեր միջև ոչ մի անախորժություն չեղավ:

* * *

Բրոզմանների մեկնումից հետո նրանց համար վարձած տունը տվեցի նոր խմբիս: Համաձայն պայմանի՝ այդ տունը դեռ մի քանի ամիս մնալու էր իմ տրամադրության տակ: Բրոզմանների մեկնումից հետո ախոռը հատկացրել էի հավերի համար:

Մի օր էլ, ախոռում միանգամից պայթեց գետնին թաղված ինչ որ դուռ: Մեկ էլ տեսնեմ՝ մի նկուղ՝ լիքը փայտերով: Գանձ գտնողի չափ ուրախացա, որովհետև Անկարայում փայտի պակասի պատճառով ձմռանը աթար էին վառում: Այդ առատ փայտով կարող էի տաքացնել թե՛ բնակարանս և թե՛ թատրոնը:

* * *

Ռամազանի տոները հաջող անցան: Առհասարակ Պարտիզայանի ներկայությունը ապահովել էր մի շարք հաճախորդներ: Պարտքերս տվել էի: Միայն թե Պարտիզայանը Ռամազանից հետո թողեց հեռացավ:

Դերասանների կազմը շատ խայտաբղետ էր: Մեկը հույն էր, բայց ինքն իրեն համարում էր մուսուլման, մեկը հույն լինելով՝ դարձել էր հայ, հայն էլ իրեն համարում էր ֆրանսիացի: Մի ուրիշը, մեջտեղ գցելով իր իտալացի լինելը, փորձում էր այդ բանը ապացուցել յոթը պորտի փաստարկներով: Կարող եմ ասել՝ այս խառնակ խմբում ձեռք ու ոտը կարգին, կարգապահ և լեզուն էլ բավականաչափ լավ իմացող երկու-երեք հոգի կար: Հենց դրանց միջոցով էլ, երբեմն, երբ անհրաժեշտ էր լինում լրացուցիչ հասույթի, ցուցադրում էի Կեղիկ փաշայի թատրոնի խաղացանկից մեկ գործողությամբ կատակերգություններ, ըստ հնարավորին դերասաններին մարզելուց հետո:

* * *

Չմռան զիշերներն անցնում էին մեծ ուրախության ու զվարճության մեջ: Ընդհանուր առմամբ մտերմիկ այս գործունեությունը փակել էր մեր ականջ-

ները և սրբել տարել էր նկատառումները մեր ուղեղներից: Մենք, Օսար Խա-
յամի ասացի նման՝ զինու փարչից բաժակը լցվող արյան գույնից հիմարա-
ցած, մոռացել էինք զիշերն ու ցերեկը: Սա էլ մեր արվեստի առանձնահատ-
կություններից մեկն է:

* * *

Մեր այս զվարճություններին մասնակցում էր փոստում աշխատող Ռուկ-
նեղդին անունով մի մարդ: Գալիս էր, խմում և հարբած լինելու արդարա-
ցումով անվայել արարքներ էր թույլ տալիս: Գիտեինք, որ անտանելի այս
մարդը պալատի հետ կապված խաՖիե էր, այսինքն լրտես: Նա ինձ շատ էր
զայրացնում: Մի քանի անգամ խաթեցի: Չհասկացավ: Վերջապես բողո-
քեցի քաղաքագլուխ Աբդին փաշային և ասացի.

- Ձերդ վսեմություն, այդ թղթատարը իմ տունը անբարոյականության
վայր է կարծում: Այո, մենք դերասան ենք, սակայն ես բարոյականության
դեմ մեղանշող դերասան չեմ: Խնդրում եմ, ասեք այդ մարդուն, որ այլևս իմ
տուն ոտ չդնի:

Չնայած Աբդին փաշան ինձ շատ էր սիրում ու գնահատում, նա այդ
խնդրում ձեռնպահ մնաց, քանի որ Ռուկնեղդին բեյը պալատի ամենամեծ
լրտեսներից էր և Անկարան սարսափի մեջ էր պահում: Անգամ քաղաքագ-
լուխ Աբդին փաշային էր վախեցրել:

Երկու օր անց քաղաքագլուխը ինձ կանչեց իր մոտ և ասաց.

- Մի ճար եմ գտել: Դու ամուրի մարդ ես: Մեր քաղաքն է եկել մուսուլմա-
նություն նոր ընդունած կեսարացի մի կին, անունը՝ Իքբալ, որի համար Կե-
սարիայում արյուն են թափել: Արի քեզ ժամանակավորապես ամուսնաց-
նենք Իքբալի հետ: Փոստային աշխատողը, իմանալով որ քո տունը հարե-
մային բաժին ունի, չի համարձակվի այցելել:

Վատ խորհուրդ չէր: Հայտնեցի համաձայնությունս: Փաշան խոստա-
ցավ իր պաշտոնյաների միջոցով լուծել հարցը և նույն օրը այդ կնոջն ու-
ղարկեց իմ տուն...

Իքբալ հանընդ բարի սրտով, հիվանդոտ կին էր, նա ինձ ազատեց Ռու-
կանեղդին բեյի փորձանքից:

* * *

Անկարայում ոստիկանությունը նոր էր սկսել գործել: Ոստիկանների հա-
մար մեր թատրոնում առանձնացրի հատուկ օթյակ: Ներկայացումների

զիշերները այդ օթյակը բերնե բերան լցված էր լինում:

Մի երեկո, վարագույրը բացվելու վրա էր, որ Անկարայի պորտաբույժ
երիտասարդներից Յաղլի Ահմեդը, որն իր կյանքում առաջին անգամն էր
թատրոն տեսնում, հարբած վիճակում դառնալով ժողովրդին՝ հայիոյեց բո-
լորի կանանց:

Ոստիկաններն իսկույն խցկվեցին նրա մոտ, հարգալիր բարևեցին և
նստեցրին տեղը: Յաղլի Ահմեդը նրանց հրամայեց նարգիլե և սուրճ բե-
րել: Ապա ասաց, թե ուզում է զուգարան գնալ... Փոքր բեյերի պահանջները
բավարարող աղախիճների նման ոստիկանները նրան տարան զուգարան,
սպա կրկին բերեցին և նստեցրին իր աթոռին: Ես, որ այդ դեպքը զայրույ-
թով ու վրդովմունքով էի դիտել, հաջորդ առավոտ բողոքեցի վալի փաշային:
Նա ինձ հարցրեց.

- Իսկ ի՞նչ արեցին ոստիկանները:

- Ի՞նչ պիտի անեին, օգնեցին Յաղլի Ահմեդին, զուգարան տարան:

* * *

Մի անգամ էլ այս անբանը թատրոնում դաշույն էր քաշել ինչ որ մեկի
վրա: Մոտեցա ոստիկաններին և ասացի:

- Ինչո՞ւ չեք ձերբակալում:

- Ես հերթապահ չեմ,- ասողը կծիկը դրեց, գնաց:

Դրանից հետո վերջնականապես համոզվեցի, որ Մարկո փաշային
հանձնելուց բացի ուրիշ ճար չկա:

Թատրոնի գազինոն վատ չէր աշխատում, սակայն Անկարայի անպատ-
կառ երիտասարդները Յաղլի Ահմեդի դեպքից հետո գազինոյից չէին հե-
ռանում, մինչդեռ գազինոյի հիմնական հաճախորդներն էին կառավարչու-
թյան պաշտոնյաները և Պոլսից հատուկ հրամանագրերով այնտեղ աքսոր-
ված սպաները: Ամեն զիշեր նվագողներին, մատուցողներին արհամարհող
Վառլաբաշը, Ղասաբ Շերիֆը և Ղասաբ Իքբահիմը ոնց որ սպաներին էին
զայրացնում, ինձ էլ էին շատ ջղայնացնում:

Մի զիշեր, սպաների հետ մի սեղանին նստած մտածում էինք, թե ժամա-
նակը չի՞ եկել, որպեսզի մի լավ դաս տանք մեզ այդքան զայրացնող հիմար-
ներից: Որոշեցինք նման մի դաս տալ նրանց:

Վատն այն էր, որ այդ երեք զորբաները վայելում էին պետական պաշ-
տոնյաներից «Բել բինբաշիի» հովանավորությունը:
Գնացի կազինոյի դրամարկղի պաշտոնյաի մոտ, հարց ու փորձ արի,

իմացա, որ 15 ոսկի պարտք ունեն: Այա մոտեցա նրանց սեղանին: Ամեն անգամվա պես քոքել էին տվել սազը, իրենց երևակայելով մի այլ աշխարհում, փաթաթվել էին միմյանց և անճոռնի ձայնով երգում էին ու մատուցողներին հրամայում՝ արի, բեր, վերցրու, տար: Կատարյալ սանձարձակ ստահակներ էին:

Այլևս անհնար էր համբերել: Պետք էր նրանց հետ խոսել իրենց հասկացած լեզվով, այսինքն՝ տուրուդմբոցով: Ինչպես կեսարացիներն են ասում, «այս աշխարհս պտտվում է, ետևից վազես՝ չես հասնի, դիմացից գաս՝ քեզ տակով կտա: Լավագույնը հարմարվելն է»: Չնայած այս խոսքը մտքումս էր, բայց շատ էի գայրացել: Չմեռ լինելու պատճառով հագիս մի կարճ վերարկու կար, ոտքերիս՝ ռեզինե սապոգներ:

Մի քայլ էլ մոտեցա նրանց: Կողոբաշը հրամայեց մատուցողին աղանդեր բերել: Միանգամից պոռթկացի:

- Ոչ մի բան չի բերելու: Այստեղ Սաքայի աղբյուր չէ: 15 ոսկի պարտք ունեք և առանց ամաչելու ուտելի՞ք եք պահանջում:

Երեքն էլ շշմեցին: Կարծեք գլխներին հարված իջած լինեք: Կատաղել էին: «Այստեղ մեզ ասպարեզ կարդացող մարդ էլ կա հա՞» բառերը մատնող ակնարկներով ինձ նայեցին: Այա Կողոբաշը՝ փտած ատամները կափկափելով՝ վեր կացավ տեղից, հրեց սեղանը և մեկ հարվածով ցատկեց վրաս: Սպաները աստիճաններից վար թափվելով՝ սկսեցին ինձ պաշտպանել: Այլևս այդ վայրը վերածվել էր կռվի դաշտի: Կոկորդներ՝ երակները ուռած ձեռքերի մեջ, մի կողմում խեղդուկ ձայներ, մյուս կողմում՝ լամպերի լույսի տակ փայլվող պողպատի կտորներ, բաժանվող, կրկին միմյանց ագուցվող ձեռքեր, սրունքներ, այդ արանքում «աղիքները թափեցեք» հոխորտանքներ:

Այս իրարանցման մեջ, չիմացա ինչպես պատահեց, ինձ գտա մի անկյունում, ոտներս՝ վառված կրակարանի մեջ: Գոլաջի Հակոբի բազուկների մեջ էի: Ոտներիս սապոգները սկսել էին ճաքճքվել, իսկ մարմինս վառվում էր:

- Թող ինձ, - բղավում էի Գոլաջը Հակոբին:

Նա էլ, «աման, Ֆեհիմ էֆենդի, ինչ ես անում, կաց», ասելով ուզում էր ինձ պահել: Իմ գտնված մասի փակ դուռը շարժվում էր. նա ուզում էր ինձ հանձնել ներս մտնողներին: Այդ մարդն էլ թատրոնից մնացած ոխ ուներ իմ դեմ:

Այլևս չկարողացա համբերել: Ըմբիշների նման իմ գլխի ամբողջ ուժով խփեցի Հակոբի ծնոտին և փախաի նման շարտեցի գետնին՝ երկու մետր այն կողմ:

Բարեբախտաբար ոստիկաններն ու զինվորները եկել, այդ մարդկանց հավաքել, ոստիկանատուն էին տարել:


Հազիվ մի ժամ էր անցել, մեկ էլ տեսնեմ՝ Կողոբաշը ցցվեց առջևս, դաշույնը հանած ճոճում էր ինձ վրա: Բայց Պոլսից նոր եկած մի մարդ, որն իրեն կոչում էր Մուրադ բեյ, թեև իրականում Պերայի հայտնի խաղամուլներից՝ «Չարկ իշի նիշան» էր անունը, անմիջապես թևերի մեջ առնելով Կողոբաշին, իբր թե նրան պաշտպանելու համար, մարդու ոսկորները փշրեց: «Չարկ իշի նիշանը» ինձ շատ էր սիրում և այս անգամ էլ փրկեց ինձ փորձանքից:

Ահա այսպիսի անպետք, հասարակության մակարոյժ մարդիկ խառնակ այդ ժամանակներում կառավարությանը դարձրել էին անուժ, դրանով էլ անապահով վիճակի մեջ գցել գործի մարդկանց, նրանց մատնել հուսահատության, ինչպես ինձ էին մատնել:

Ամառը եկել էր: Այլևս Անկարայում գործ չկար: Երկու թատրոնների ու բնակարանների համար կնքած պայմանագրերիս ժամկետներն էլ լրանալու վրա էին:

Վերցրի դերասաններին և գնացի Չանկրի: Այլևս Անկարայի հետ հաշիվ չունեի:

Սակայն երկու և կես տարվա ընթացքում պատահած այդ դեպքերն ահա իմ մտքում թողել են այս անմոռանալի հիշողությունները:



ՄԱՍ 7

ՉԱՆՔԸՐԸՅԻՑ ՍԱՄՍՈՒՆ

Չանքըրին ամայի մի վայր էր... Խոնավ և կարծր: Առաջին օրն այս ու այն կողմ ընկնելով՝ աշխատեցի թույլտվություն ձեռք բերել: Մեզ թույլտվություն չտվեցին, քանզի հայկական դեպքերի առիթով այդ վայրերում արտակարգ դրություն էր հայտարարված: Տասը օր չարչարվեցի, սակայն արդեն ինձ մոտ եղող գումարով անհնար էր պահել 12 հոգինոց խումբը:

Հանդերձարանիցս իսպանական զգեստները հանեցի և մի հույն խանութպանի մոտ գրավ դրի: Այդ գումարով տասերորդ օրը սայլեր վարձելով, Սյունկյուրլու ուղևորվեցիմք: Անշուշտ, կարծես թե գրավ դրած զգեստները չնչին գումարով վաճառել էի:

* * *

Սյունկյուրլույում մեծ դժվարությամբ թույլտվություն ստանալով, մի հին իջևանի անկյունում բեմ պատրաստեցիմք և սկսեցիմք ներկայացումները: Մնջախաղի մարդիկ հիմա արդեն դարձել էին պիեսներ խաղացող դերասաններ: Օրինակ, Խրիստո Մեհմեդը դարձել էր այդ գործի ամենից նվիրյալը: Նրանց մասնակցությամբ բեմադրեցի «Այար Համգա» պիեսը: Սակայն դարձյալ հայկական դեպքերի պատճառով, վեցերորդ ներկայացումից հետո կրկին ետ վերցրին մեզ տրված թույլտվությունը:

Մեզ մոտ եղած գումարը շատ քիչ էր: Մեր համբերությունը սպառվել էր: Չարաբաստիկ այդ հայկական խնդիրը ամբողջ Անատոլիան բռնել էր, ամեն մի գործ ու շարժում մատնել էր անգործության: Որոշեցիմք այնտեղ բաժանվել միմյանցից, քանի որ այլևս չէինք կարող վերադառնալ Անկարա: Ընկերներս բոլորն էլ անտուն մարդիկ էին: Որտեղ առավոտ, այնտեղ երեկո ասողը մի տեղ գլուխը դնում քնում էր: Դիզիմքս փիլիսոփայի ճամփորդներն էինք դարձել:

Բաժանումն անխուսափելի էր: Ամեն մեկս սկիզբն ու վերջն անհայտ, մեկ-մեկ ճամփա ընկանք: Ես վեց մեջիդիով մի սայլ վարձեցի և տիկնոջս հետ Չորում-Մարզվան ճանապարհով Սամսուն ուղևորվեցի: Զաղաք հասնելուց հետո սայլի դրամ վճարելու համար այլևս ոչ մի գումար չունեի: Առաջին անգամ Ֆասուլաճյանի հետ Սամսունում եղածս ժամանակ մտերմացել էի Պինեմենճյանի եղբոր՝ Սուքիասի մի ընկերոջ հետ, նախկին դերասան

Իբրահիմ Սաիմի հետ: Որոշեցի նրանից դրամ խնդրել սայլի համար, ապա մտածել նավի մասին և ընկնել Ստամբուլ:

Ես նման բաների մասին էի մտածում, որ հանկարծ սայլը կանգնեց: Վզովս փաթաթվեց Չեննե Մեհմեդ Չեմիլի մարդկանցից Սուլեյմանը:

- Մեր տնօրենը ամիսներ ի վեր քեզ է փնտրում,- ասաց,- քեզ չեմ թողնելու: Իսկույն գնալու ենք մեր տուն:

Ասաց ու ինձ իսկույն քարշ տվեց Մեհմեդ Չեմիլի՝ իր խմբի հետ գտնված տեղը: Մեհմեդ Չեմիլը ինձ տեսնելով շատ ուրախացավ, վեր կացավ փաթաթվեց, համբուրեց: Դեռևս Անկարայից թատրոնի, արվեստի նկատմամբ սեր տածելով՝ ինձ շատ էր հարգում ու սիրում:

- Այլևս քեզ բաց չեմ թողնի, ասաց,- երկնքում էի քեզ որոնում, գետնի վրա գտա: Այստեղ քեզ սենյակ կտամ, քո բոլոր տեսակի պահանջների և հանգստի մասին կմտածեմ:

- Ինչ ես ասում, տղաս,- ասացի,- ես հինգ փարա անգամ չունեմ: Սայլապանին ութը մեջիդիե պարտք ունեմ... Կամ Իբրահիմ Սաիմից կամ Սուքիասից պիտի վերցնեմ ու տամ: Հետո կինս էլ հետս է:

Իսկույն բղավեց.

- Ահա ձեզ երկու սենյակ: Իրերդ հանիր վեր, հանգստացիր: Հիմա Իբրահիմը կամ մի ուրիշը իրենց խանութներում չեն:

Ապա Սուլեյմանին մի անկյուն տանելով գաղտնի ինչ որ բաներ խոսեցին: Վերջապես Սուլեյմանին ուժգնորեն հրեց, և իր վրայից երեք հինգուկիանոց պոկելով երկարեց ինձ:

- Վերցրու, Ֆեհիմ էֆենդի,- ասաց,- վերցրու սրանք, սայլի փողը վճարիր, մյուս գործերդ տես... սիրտդ հանգիստ թող լինի: Դու մեր գլխի թագն ես:

Ես այդ երիտասարդի մեծահոգության առաջ սառած մնացել էի: Հուզմունքից լեզուս փակվել էր, աչքերս արտասուքով լցվել:



ՄԱՍ 8

ԹՈՒԼՈՒԱԹԻ ԽԱՂԱՅՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ

ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ ՄԵԿ ՄՈՒՍՈՒԼՄԱՆ ՉԵԿՈՂ ԴԵՐԱՍԱՆ ՉԱՐՇԱՄԲԱՅՈՒՄ ԹՈՒԼՈՒԱԹ ԵՆ ԽԱՂՈՒՄ. ԽԱՂԱՅՈՂԻ ԴԵՄ ԽԱՂ ԽԱՂԱՅՈՂ ԲԱՆՏԱՊԵՏԸ

Մեհմեդ Ջեմիլը, այդ գիշեր խաղից հետո Սուլեյմանին դրեց մի սայլի վրա և ուղարկեց Չարշամբա: Հաջորդ օրը հեռագրով խմբին հրավիրեց: Բոլորս էլ մեկնեցինք Չարշամբա: Բաղաբազուխ Չերքեզ Մուսա բեյը դեռևս Սևծովյան մեր առաջին հյուրախաղերի ժամանակվանից բարեկամս էր: Այցելեցի իրեն: Խոստացավ իր օգնությունը չխնայել: Արդարև, Ռեժիից ծխախոտի մի քանի սնտուկ բերել տվեց, որպեսզի բեմ պատրաստենք:

Հենց մեր իջևանատան բակում բեմ կառուցեցինք: Բակը նայող երկու հարկերի դահլիճներն էլ վերածեցինք օթյակների:

Սկսեցինք ներկայացումները: Գործը մեր սպասածից ավելի լավ էր ընթանում: Երկրի պետական պաշտոնյաները և ծառայողները մեզ ամեն օր գնություն էին ցույց տալիս: Ներկայացումների ընթացքում ամենից շատ ուշադրություն գրավողներն էին՝ դիրեկտոր Մեհմեդ Ջեմիլ բեյը, Սուլեյմանը, Ալի էֆենդիները, Սուլեյմանի կինը՝ Իբսունանին, Կատինան և վերջապես ազգությունն ու կրոնը անհայտ, կիպրացի մի կին ու նրա ամուսինը:

Թուլուաթ խաղացողները բեմում խաղացողներին դերասան ասելու փոխարեն՝ «թայֆա» էին ասում, իսկ գործը ղեկավարողին՝ դիրեկտոր: Ես էլ դարձել էի դիրեկտոր Մեհմեդ Ջեմիլ բեյի խմբի ամենից լավ թայֆաներից մեկը: Այդ երիտասարդի իմ նկատմամբ ցուցաբերած հարգանքի հանդեպ զարմացել մնացել էի: Այդ մարդկանց միջավայրում մեր ապրածը կատարյալ բոհեմական կյանք էր:

Չարշամբայում շաբաթը երկու անգամ, անշուշտ ցերեկները, ցուցադրում էինք մեր խաղացանկը որպես թուլուաթային ներկայացումներ: Ամբողջ խումբը գալիս շարվում էր առջև: Նրանց բացատրում էի երեկոյան խաղացվելիք պիեսի կամ կատակերգության բովանդակությունը: Դրան ասում էինք «խաղի վրայով անցնել»:

Այդ քաղաքը գալու հենց առաջին շաբաթը Մեհմեդ Ջեմիլն իմ օգտին մի

ներկայացում տվեց և քառասուն ոսկու հասույթը հանձնեց ինձ: Երբ ցանկացա երեք ոսկու պարտքս վճարել, չընդունեց և ասաց թե երբեք էլ չի ընդունելու: Այդ լավության փոխարեն պարտք համարեցի շաբաթը երկու գիշեր խաղալ, թեև երբեք հարկադրանք չեղավ, որպեսզի անպայման խաղամ:

* * *

Այն օրերին, որ ես չէի խաղում, նրանք ցուցադրում էին իրենց խաղերը: Դրանք Պոլսում հայտնի չէին: Մոլիերի՝ անցյալում խաղացված կատակերգությունների փոխադրություններ էին, յուրահատուկ խմբագրմամբ ներկայացնում էին որպես Օրթա օյունու: Փոփոխությունների մասին խաղացողները ամենևին տեղեկություն չունեին, անգամ չգիտեին, թե ով է Մոլիերը: Դերակատարման եղանակը, ցուցադրվող խաղերը փոխանցվել էին պապերից և դարձել զբաղմունք: Օրինակ՝ ամենից ավելի սիրված «Զյուսահտա օյուն»-ը Մոլիերի «Բռնի ամուսնություն» կատակերգության հիման վրա ստեղծված գործ էր: Ամուսնանալ ցանկացող ինչ-որ մեկը դիմում է բազմաթիվ մարդկանց, նրանց կարծիքը հարցնում: Այդ մարդկանցից յուրաքանչյուրն ինչ որ չափի խենթ է: Ամուսնանալ ցանկացողը նրանցից մեկին հարցնում է.

- Այսինչ աղջկա հետ ամուսնանալ եմ ուզում, ի՞նչ է քո կարծիքը:

Նա էլ պատասխանում է.

- Բո ասած աղջիկը հարմար չէ, Թոփգափույում, Թոփալ Հասանը Թոփգցելիս թոփ, թոփալ, թոփուզ է ասել. քիհ... քահ... քիհ... քահ... Մի չարչարվիր, մի տառապիր, ինչ որ լինելու է, կլինի... հի... էի... հի...

Մի ուրիշն էլ այսպիսի պատասխան է տալիս.

- Ուն գափույում, Արբաջը օղլու Ֆեյլուլլահը, հնդկական դոլմա, յուղալի փլավ...

Սակայն տարօրինակն այն էր, որ այս տափակ, անկապ սրախոսություններից ժողովուրդը ծիծաղից թուլանում ու գետին էր փռվում:

Խենթերից մեկի դերը կատարում էր Ալի էֆենդին: Այդ մարդու հայրը աշխատել էր ծովային նախարարությունում: Շատ փափուկ սիրտ ուներ, աղոթելու սովորության գերի, միաժամանակ փողանոլի հավատացյալ էր, աղոթելու սովորության գերի, միաժամանակ փողանոլի հարցերում ձեռքը մաքուր մարդ էր:

Իմ նրանցից բաժանվելուց հետո գնացել էին Չոնգուլդակ:

Մի օր էլ գնացել էին ինչ որ սրբատեղի: Այնտեղից հեռանալիս Ալի էֆենդին ասել էր այդտեղ թաղված սրբին. - Ես քեզ մոտ կգամ վաղը... Եվ խ-

քը, փող վաստակեցի, հարստացա: Ահա այսպես, բարեկամ, ձեզ էլ սիրեցի, դրա համար չինկենե ասացի: Բայց դու ընտանի չինկենե ես, դրա համար պետք է իմ հյուրը լինես:

Այդ պահին փողոցով անցնում էր քաղաքապետը: Կանչեց: Ինձ արժանավայել կերպով ներկայացրեց, ապա, դառնալով ինձ ասաց.

- Գայմագամ բեյն էլ չինկենե է...

* * *

Չինկենե Ահմեդը այդ օրը մեզնից գաղտնի իր մարդկանց հրահանգներ էր տվել: Մեկ էլ տեսնենք՝ տանից սինիներով կերակուրներ բերեցին, մեզ պատվեցին: Իմացանք, որ այդ ծովայինը երկրին մեծ օգուտներ էր տվել և դրա համար բոլորը հարգում էին նրան:

* * *

Ունյեում ներկայացումները տալիս էինք նավահանգստի մոտ գտնվող քարաշեն մի շենքում: Դա թատրոն չէր, սակայն Նուրի փաշայի և Չինկենե Ահմեդի օժանդակությամբ տան մեծ սալոնում մի քանի օթյակ պատրաստեցինք և վերածեցինք բեմի:

Ամեն գիշեր մեծ բազմության առաջ էինք տալիս ներկայացումները: Պարտական էինք Նուրի փաշայի օժանդակությանը, քանի որ այս մարդը տեղի հնագույն գերդաստաններից էր, ժողովրդին անտրտունջ իրեն ենթարկած մի կրոնական տոհմ: Նրա ապրած պալատը մեծ ընտանիքի անցյալը, ավանդները պահող մի գիշատիչ արծվի աղմկոտ անկումով միջնադարի դերերեյների շաթոների պես անառիկ մի ապառաժ էր:

Մեկ ու կես ամիս հետո, գործը իր քաղցրության մեջ պահած, մի առագաստանավով բաժանվեցինք Ունեյից: Նավակում մեր ընկերներից մեկը աջ ու ձախ Չինկենե Ահմեդին էր քննադատում, բայց պատճառը չէի հասկանում: Հանկարծ, մեզ հետ նավակ նստող հաճախորդներից մեկը, չղիմանալով բղավեց.

- Ինձ նայիր, երիտասարդ, այդ մարդը կարող է մեզ բոլորիս հայիոյել, որովհետև այս երկրին մեծ ծառայություններ է մատուցել: Հետո՝ անտեղի չի հայիոյում, դու իրավունք չունես այդ մարդու անունը բերանդ առնել: Խելքդ գլուխդ հավաքիր:

Սրա վրա քիչ էր մնում նավակում մեծ կռիվ սկսվեք, բայց դա հենց վկայում էր Չինկենե Ահմեդի վաստակած մեծ հեղինակությունը:

Ծովում բավական օրորվելուց հետո եկանք Կիրեսուն: Հունական մի մեծ դպրոցի սրահը սկսեցինք նախապատրաստել: Թույլտվություն խնդրելու համար դիմեցինք նահանգապետին: Մեր դիմումը ուղարկվեց կառավարչության պետ կապիտան Յորջին: Այս կապիտան Յորջին Կիրեսունում մեծ բարեգործության էր կատարել և թե մուսուլմաների, և թե քրիստոնեաների սերն ու համակրությունը վաստակած մի սևծովցի մարդ էր: Մեզ հրավիրեց իր մոտ: Գնացինք: Մեր խնդրագիրը աչքի անցկացնելուց հետո ասաց.

- Ձեզ թույլտվություն չէի տալու, սակայն դուք էլ աղքատ մարդիկ եք: Մանավանդ որ ձախս անելով մինչև այստեղ եք եկել: Ձեզ միայն երեք օրվա իրավունք եմ տալիս, ավելին չեմ կարող, քանի որ իմ քաղաքն էլ աղքատ է:

Ես էլ պատասխանեցի.

- Ես Պոլսի Օսմանյան թատրոնի մարդկանցից եմ: Լավությունն ու վատությունը ամբողջովին կարող եմ գնահատել: Ամեննին էլ այստեղ չենք եկել մարդկանց կողոպտելու համար: Մեր նպատակը արվեստ ցույց տալն է, ժողովրդին ծառայելը: Դրա համար էլ պիտի խնդրեմ, որ վաղվա մեր ներկայացումը պատվեիք ձեր ներկայությամբ:

Հաջորդ գիշեր «Պարտականությունը սիրո մոտ պարտված» դրամայով բաց արինք Կիրեսունի թատերաշրջանը: Ժողովուրդը լցվել էր թատրոն: Ներկայացումն ավարտելուց հետո կապիտան Յորջին վեր կացավ տեղից և դիմելով ժողովրդին ասաց.

- Հայրենակիցներ, ես չէի ուզում այս մարդկանց թույլտվություն տալ, բայց այս գիշեր համոզվեցի, որ սրանց նպատակը ձեզ ծառայելն է: Այս օրվա ներկայացումը բոլորիս դաս պետք է լինի, օրինակ պետք է առնենք: Ընդհանրապես ինչ էն հայտնում սրանց: Սրանից հետո, որքան որ ցանկանան, կարող են ներկայացումներ տալ մեր քաղաքում: Թույլ եմ տալիս:

Ժողովուրդը խանդավար գոչեց «Կեցցե կապիտան Յորջին»: Ապա կապիտան Յորջի կարգադրությամբ, ի պատիվ մեզ, զարեջրի սափորներ բացվեցին և ժողովրդին էլ բաժանեցին:

Առաջին գիշերն ահա այսպիսի խանդավառ և հարգալից մթնոլորտում անցավ:

Չորս օր անց ճանապարհին ինձ կանգնեցրեց կապիտան Յորջին և ասաց.

- Ձեր թղթերը կկնքեմ և վաղվանից շուտ չկա, առաջին հանդիպած նավով պետք է թողնեք քաղաքը:

Այս վճռական կարգադրությունից ինձ կորցրի և հարցրի դժգոհության պատճառը:

ասացի: Իսկույն վերկացավ, գնաց Օննիկի մոտ, պարտքս վճարեց, գորգերս ուղարկեց մեր տուն. միաժամանակ, ինձ էլ հինգ ոսկի տվեց: Տասը ոսկի էլ հաջորդ օրը տվեց, հետո էլ մի մեծ ժամացույց՝ նվեր: Սակարկել էինք ութը ոսկով, մարդը 25 ոսկի տված եղավ: Երբ հարցրի պատճառը, պատասխանեց.

- Քո պատրաստածը գին չունեցող բան է, երևի քո արվեստի արժեքը չգիտես, սակայն իրավացի ես, քանի որ մեր քաղաքում նման բաներին արժեք տվող չկա:

Այդ մարդու վերաբերմունքը, խոսքերը, վիրավոր սրտիս սպեղանի էին եղել: Անշուշտ գիտեի պատրաստած գործիս արժեքը, բայց իմ քաղաքի բոլոր արվեստագետների պես ես էլ բախտի առջև վիզս ծռած, առաջին շրջանի բողոքների անարժեք լինելը հասկացել էի և որոշել էի հլու հնազանդ աշխատել:

**ԱՀՄԵԴ ՎԵՖԻԿ ՓԱՇԱՅԻ ԹԱՏՐՈՆՈՒՄ ՏԻՆԻԿՆԵՐ ԵՆ
ԽԱՂԱՅՆՈՒՄ. ԺԱՆՏԱԽՏԻ ԺԱՄԱՆԱԿ ԹԱՏՐՈՆ ՀՆԱՐԱՎՈՐ Է
ԽԱՂԱԼ. ՋԵՆԱԲ ՇԵՀԱԲԵԴԴԻՆ ԲԵՅ. ՄԻՋՆԱՄԱՍԸ ՅՈՒՅՑ ՏՎՈՂ ՄԻ
ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ**

Ժամագործ Մեհմեդ բեյի հետ բարեկամությունս ավելի էր շեշտվել: Մի ջրաներկ էլ պատվիրեց իր խանութի համար: Թիթեղյա մի տուփի մեջ դնելով ուղարկեց Վիեննա, որպեսզի կլիշե պատրաստեն և բազմացնեն: Ինձ այդ գործի համար կրկին մի բուռ ոսկի տվեց: Տալու ժամանակ էլ խոսեց համեստության մասին: Այդ գիշեր Սեթբաշիյի կազինոն էինք գնացել և սեղանի շուրջ քաղցր քաղցր խոսել էինք: Այդ օրը Բուրսան սարսափի մեջ պահող «Ասիական ժանտախտից» բռնվածների անհուսալի վիճակի մասին էինք խոսում: Երբ մի քիչ գլուխներս սկսեց պտտվել, տուն դարձանք:

Հաջորդ առավոտ, երբ փողոց դուրս եկա, լսեցի որ Մեհմեդ բեյն էլ է ժանդախտից բռնվել: Մի օր չանցած մարդը մեռավ: Տասը ոսկի պարտք ունեի նրան: Մեռնելուց առաջ իր տետրը բերել տալով իմ պարտքը ջնջել էր տվել և ինձ ազատել էր պարտատերերի ձեռքից: Արվեստը և արվեստագետներին գնահատող մեծահոգի այս մարդու մահը խորապես ցնցեց ինձ:

* * *

Ժանտախտն ամբողջ ուժով մոլեգնում էր: Բազմաթիվ մարդիկ մեռնում էին:

Դրա համար առողջապահության պետ Բոնֆոսփիլ փաշան և նրա օգնական Ջենաբ Շեհաբեդիին բեյը եկել էին Բուրսա՝ տեղում քննություններ կատարելու: Ջենաբ բեյը այն ժամանակ դեռ շատ երիտասարդ էր: Հին ծանոթներիցս էր: Դեռևս դպրոցական աշակերտ՝ գալիս էր Թավուք բազարի իմ համբավավոր սենյակը: Քննությունների օրերին ընկերների հետ դասեր էր պատրաստում: Բանաստեղծության դասերին էլ կատակներ էր անում: Ես էլ գնում էին նրանց մոտ՝ դպրոց և այնտեղ քնում էի:

Հենց որ ինձ տեսավ, շատ ուրախացավ:

* * *

Ահա այդ օրերին եկել էր Թուլուաթի խումբը: Ինչպես միշտ, նրանց հետ էլ ծանոթներ դուրս եկանք: Խնդրեցին, որ իրենց համար թույլտվություն ձեռք բերեն: Այդ խեղճ մարդկանց գործին օգնելը մեծ բարիք էր: Նրանց խնդիրքը գոհունակությամբ ընդունեցի, քանի որ ծանոթ-բարեկամներ շատ ունեի: Վալի Մյունիր փաշայի սիրելիներից էի, դրա համար էլ հեշտությամբ գլուխ բերեցի գործը: Իսկույն մի խնդրագիր պատրաստեցի, տարա կառավարչություն: Անադմուկ ուղարկվեց ոստիկանապետին: Հինգ-վեց օր անց ոստիկանապետը անձամբ կանչեց ինձ և ասաց.

- Հիմա խաղի ժամանակ չէ, ժանտախտ կա:

Ես էլ պատասխանեցի.

- Քանի որ ժանտախտի մասին խոսեցինք, գուցե մեր խնդրագիրը առողջապահության վարչություն ուղարկեք:

Այդ բանը իմ գործին գալիս էր, քանի որ Ջենաբ բեյը խոստացել էր օժանդակել: Սակայն ես հազիվ էի ավարտել խոսքս, որ ոստիկանապետը իր բոլոր անպատկառությամբ ցույց տվեց միջնամատը, և ասաց. - Ահա՛, քեզ... Խելառ եմ, որ այնտեղ ուղարկեմ, որ գործդ գլուխ բերես, ահա՛, քեզ:

Ես էլ, այս անկիրթ պաշտոնյայի առաջ ինձ պինդ պահելով ասացի.

- Բեյ էֆենդի, դուք ինչպե՞ս եք համարձակվում միջնամատ ցույց տալ աշխատող մարդկանց: Ձեզնից պատիվ կարող եմ պահանջել: Ձեր դիմաց գտնվողը շատ պատվավոր, բայց չքավոր մի մարդ է, ձեզնից խնդրում է օրենքով սահմանված իր իրավունքը: Խնդրագիրս պարտավոր եք առողջապահական մարմիններին ուղարկել:

Ոստիկանապետը իմ այդ խոսքերը համարել էր ընթոստություն և բողոքել էր վալիին: Մեկ-երկու ժամից երկու ոստիկան եկան մեր տուն և ինձ վերցնելով տարան կառավարչատուն:

Փաշան երբ ինձ տեսավ, ասաց.

- Բեյ էֆենդի, դու ոստիկանապետին դիմադրել ես: Ես այդ բանը քեզնից չէի սպասում, քանի որ քեզ լավ եմ ճանաչում: Բացատրիր, ինչ է պատահել:

Ես էլ պատմեցի պատահածը նույնությամբ: Փաշան հասկացող մարդ էր: Ինձ իրավացի համարեց, սակայն ասաց, թե խնդրագիրը առողջապահության վարչություն ուղարկելով՝ թեկուզ հնարավոր լիներ թույլտվություն ձեռք բերել, այդ բանը քաղաքում ժանտախտ եղած ժամանակ, ժողովրդի մեջ դժգոհություն կարող էր առաջացնել, ուստի լավ կլիներ խնդիրը կարճ ժամանակով հետաձգել: Բնական էի համարել բացատրությունը և գլխիկոր հեռացել էի կառավարչատնից:

* * *

Կրկին անգործ էի մնացել, դրանով հանդերձ ամենևին չէի հուսահատվել և հռետես չէի դարձել, քանի որ ծնվել էր առաջին որդիս՝ Ջենաբը: Արվեստի այս հին կենտրոնում մի քանի բարեգործությունների էի խառնվել: Այլևս հայր և արվեստագետը խառնել, պայքարում մեծ ուժով մասնակցելու մի նոր մարդու վիճակի մեջ էի:

Ռ-ամազանը մոտեցել էր: Նախօրոք փայտից իմ պատրաստած տիկնիկները տվեցի իմ լավ բարեկամ, և ժամանակի հայտնի Կարագյոզ խաղացողներից Բյազիմ էֆենդիին: Սկսեց ներկայացնել: Սա Բուրսայում նոր երևույթ էր: Հաջողություն գտավ: Ժանտախտի ուժը կոտրվել էր, նախկին ուժգնությունը կորցրել էր: Թուլուաթի խմբին էլ թույլտվություն տրվեց և սկսեցին ներկայացումները Ռ-եֆիկ փաշայի թատրոնում: Կառավարման գործն ինձ տրվեց: Բյազիմն էլ ներկայացումներից առաջ տիկնիկներ էր խաղացնում, որը ավելի շատ հաճախորդ էր գրավում: Ես բեմ չէի բարձրանում. ղեկավարում էի աշխատանքները, ծրագրեր պատրաստում:

Ճիշտն ասած, ամենևին չէի ուզում մի քիչ փող վաստակելու համար Թուլուաթային ցուցադրությունների մասնակցել այն բեմում, որտեղ խաղացել էի ամենաականավոր հեղինակների պիեսներում: Սա իսկապես որ արվեստի խոր զգացողության արտահայտություն էր:

* * *

Ռ-ամազանը վերջացավ: Ամեն մեկը մի կողմ քաշվեց ու գնաց: Գրպանումս որոշ գումար կար: Ընտանիքս վերցրած վերադարձա Ստամբուլ: Վերադարձիս բուն պատճառն էլ մորս հիվանդությունն էր: Իսկապես էլ խեղճ մայրս Սկյուտարի իր անկյունում վերջին օրերն էր ապրում: Մորս առողջացնելու համար բոլոր բժիշկներին դիմեցի, բայց ապարդյուն անցավ: Շատ չանցած խեղճ կինը վախճանվեց: Այդ մահը իմ կյանքում մի մեծ վերք եղավ:



*Դերասանուհի Զակոր Վարդուլյան
(Գյուլի Զակոր)*

ՄՆԱԿՅԱՆԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ

ՄՆԱԿՅԱՆԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ ԻԶՄԻՐՈՒՄ ԵՎ ՍԱԼՈՆԻԿՈՒՄ. ՀԱՅԿԱԿԱՆ
ԴԵՊՔԵՐԻՅ ՀԵՏՈ. ԻԶՄԻՐ ԵՆՔ ԳՆՈՒՄ. ՄԻ ԲԵՄՈՒՄ ՕՐԸ ԵՐԵՔ
ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ Է ՏԱԼԻՍ. ԻՆՉՊԵՍ ԳՆԱՅԻՆՔ
ՍԱԼՈՆԻԿ

Վշտերիցս մի քիչ հեռանալու համար արագ-արագ այցելում էի բարեկամներիս, թատրոնի ընկերներիս: Ամենից շատ Պինեմենճյանի մոտ էի լինում, որովհետև նրա հետ իմ հարաբերությունը ուրիշ էր: Հոգեկան կապ ունեինք: Սակայն 1895-1896 թվերի հայկական դեպքերը բոլոր հայերի հետ միասին բեմի մարդիկ էլ քաշվել էին մի անկյուն և ահ ու սարսափի մեջ էին:

Պինեմենճյանը շարունակ այդ խնդրի շուրջ խոսք էր բաց անում և գանգաւովում էր ինձ: Մի օր էլ ասաց թե ուզում են Իզմիր գնալ: Ես էլ կատակի տալով ասացի թե ինձ էլ չե՞ն տանի իրենց հետ: Անշուշտ իմ ասածը սովորական մի ավելորդաբանություն էր: Պինեմենճյանը իսկույն, գանձ գտնողի գոհունակությամբ աչքերը չոեց իմ վրա, ձեռքը տարավ գլխին և ասաց.

- Հայ հայ, մեր գլխի վրա տեղ ունես:

Ես շատ չխորանալով հարցի էության մեջ, շոթներս փակած անցել էի:

Հաջորդ օրը կրկին հանդիպեցի Պինեմենճյանին: Մի քիչ անց՝ Մնակյանն էլ եկավ: Մի քանի րոպե ուրախ-ուրախ զրուցելուց հետո Պինեմենճյանը չտեսնված մի գոհունակությամբ դարձավ Մնակյանին և ասաց.

- Ֆեհիմ էֆենդին էլ է գալու մեզ հետ:

Երբ Մնակյանը հավանություն տվեց, Պինեմենճյանը բարձրաձայն աղաղակեց.

- Այս գործը պետք է ավարտված համարել: Հաջորդ օրը գնում ենք Ֆեհիմ էֆենդի:

Այդ բոլորին ականատես, ես էլ ամենևին չհակառակվելով, համաձայնվեցի: Սակայն գլխի էի ընկնում, որ գործի մեջ ինչ-որ բան կար խառնված: Անպայման Պինեմենճյանը գիշերը խոսել էր Մնակյանի հետ, բոլորը մի տեղ հավաքվելով անհրաժեշտ էին համարել իմ մասնակցությունը:

Հաջորդ օրը կնոջս, երեխաներիս, ճամպուրակներս վերցրած, իջա նավահանգիստ: Փողի մասին ամենևին խոսք չէր բացվել: Ամսական բաժինս

ստանալու էի, բայց թե որքան էի ստանալու, չգիտեի: Իմանալու իրավունք էլ չէի տալիս ինձ: Մյուս կողմից, ճիշտ թե կատակ՝ ուզում էի Իզմիր գնալ:

Նավամատույցում, չորս բոլորս շրջապատած դերասանները, իրենցից առաջ ձգվող, ամեն մի պաշտոնյայի, ինձ իրենց առջևը զգած մեծարում էին:

Նստեցինք նավ: Մեծարանքի ծիսակատարությունը նույն ձևով շարունակվեց: Սկզբում դրա պատճառը շատ էլ չհասկացա: Հետո սակայն, հայկական խնդրի վատ ազդեցությունը հիշեցի: Վախից իրենց դեմ եկողներին ինձ այդպես մեծարելը իրավացի գտա:

Հասանք Իզմիր: Հազիվ ափ ելած, դեմառդեմ հանդիպեցինք մորաքրոջս տղային: Ինձ ընտանիքիս հետ միասին վերցրեց իրենց տուն տարավ: Դրանով էլ հյուրանոցի անկյուններից օձիքս ազատեցի:

Մի քանի օրվա նախապատրաստությունից հետո սկսեցինք ներկայացումները Կորդոնի Քուրուլի թատրոնում:

Խմբում տղամարդկանցից կային Մնակյանը, Պինեմենճյանը, մեծ Շահինյանը, Ալեքսանյանը, Յալազճյանը, Սիսակը, Արամ Մնակյանը, ակտեսուարիստ Միհրան Կարինյանը, կանանցից՝ տիկին Ազնիվն ու տիկին Պինեմենճյանը: Մեր խումբը շատ փոքր էր, իսկ կանանց կազմը՝ շատ աղքատ:

Իզմիր հասնելուն պես մեզ հանդիպած Զյուլբանյանին ու նրա կնոջը, նույնիսկ ոչ մի բանի պիտանի չեղող Սիշել Պերպերյանին էլ վերցրել էինք մեր խմբի մեջ:

Բայց այս երեքը չկարողացան արգելք հանդիսանալ Ժան Պրիմեյի դերակատար, հարբեցող Յալազճյանի կամակորություններին: Տիկին Ազնիվն էլ իր գեղեցկությամբ մնացել էր որպես փայլուն աստղ: Դրանով



Մարտիրոս Մնակյան

հանդերձ վատ չէր բեմի ներդաշնակությունը: Մեր մելոդրամներից հաջողությամբ բեմադրեցինք «Կարմիր դրամապանակը», «Մեղրամունտ արձան շինողը», «Հացագործի կինը»: Ես էլ ներկայացնում էի մի գործողությամբ կատակերգություններ: Դրանք, թե՛ հանդիսականի կողմից գնահատված, և թե՛ ինձ հանդիսականներին սիրելի դարձրած գործեր էին:

Հիշեմ մի դեպք. մի օր Միսակի հետ փողոցում շրջագայում էինք: Գիշերվա ներկայացումից շատ հոգնած վիճակում էի. օդի, արևի կարիք ունեի: Երկուսով մի ծառի տակ քաշված հանգստանում էինք: Մեզ մոտեցավ Իզմիրի հարուստներից Արաբաջը Վիչենը: Դառնալով ինձ, ասաց.

- Ֆեհիմ էֆենդի, երեկվա կատակերգությունում շատ հիանալի էիր: Անունը չեմ ուզում տալ՝ մի ուրիշն էլ է նույն դերը կատարում, սակայն ոնց որ բեռնակիր լինի: Անունը չտված դերասանը, ինչպես հետո իմացա՝ Մաթոսյանն էր: Հիշյալ կատակերգությունում շատ կարող կատակերգակ էր համարվում: Սակայն հազիվ էր Վիչենը հեռացել մեր մոտից, որ Միսակը սկսեց հայհոյել: Հարցրի թե ինչն է մարդուն հայհոյում: Խուսափողական պատասխան տվեց: Միտքս մի քիչ չարչարելուց հետո, պատճառն իմացա. «Նախանձ»: Մաթոսյանը նրանց մեջ մի աստված էր, իսկ ես՝ ո՞վ էի:

* * *

Քուրուլին հայտնի և շարունակ զբաղված մի թատրոն էր: Առաջին գիշերը հարյուր փարայի և հինգ դուրուշանոց տոմսերով ութսուն ոսկի վաստակեցինք: Սակայն գործերի այսպես գնալով հանդերձ, թատրոնի հույն տերը, այցելու ֆրանսիական և հունական խմբերից ոգևորված, շարունակ աշխատում էր մեզ վռնդել: Մենք էլ, անգործ չմնալու համար, թատրոն փնտրել և չգտնելով, ուզում էինք թատրոն կառուցել: Կրկին տեղավորվեցինք Քուրուլինի թատրոնը:

Քուրուլինում խաղալու շրջանում նույն թատրոնում օրական երեք ներկայացում էր տրվում. առավոտյան՝ ֆրանսիական խումբը, ցերեկը՝ հունական, մենք էլ՝ երեկոյան:

Արդեն մեր գործը կարգի էր ընկել, որ Մնակյանը սկսեց նամակագրություն Սալոնիկի Էդեն թատրոնի տիրոջ հետ: Երկար տևող և գաղտնի պահվող բանակցություններից հետո համաձայնության էին եկել: Ստացվեց կանխավճարը: Սկսեցին ճանապարհի պատրաստությունները:

Ես Մնակյանին հայտնեցի, թե պիտի չկարողանամ Սալոնիկ գնալ: Չնայած մեր մեջ ծայր առած որոշ հակասություններին, բոլորը շրջապատեցին

ինձ և հարցրին չգնալուս պատճառը: Ես էլ ի վերջո պատճառը հայտնեցի:

- Երբ այստեղ էիք գալիս, բերնիցս թռավ, թե ինձ էլ ձեզ հետ տարեք: Իսկույն ինձ վերցրիք, անշուշտ ամենին խոսք բաց չանելով նյութական հարցերի մասին: Այդ հարցը բարձրացնելու իրավունք չունեի և այդ բանը ձեզ ասպացուցեցի: Անշուշտ հիշում եք, որ այստեղ գալուց անմիջապես հետո, մի թղթի կտորի վրա սկսեցիք յուրաքանչյուրի ստանալիք բաժինը գրել: Իմ անվան դիմաց մի 6 և մի 7 թվանշան էիք գրել: Ես հենց որ նայեցի, իբր թե 7-ը չէի նկատել: 6-ը ընդունեցի միայն ձեզ իմ նկատմամբ ցուցաբերված անբարյացակամությանը անքաղաքավարությամբ չպատասխանելու և տված խոսքս պահելու նպատակով: Հիմա, որ Իզմիրի թատերաշրանը վերջացել է, ես իրավունք ունեմ վերադառնալու, որովհետև 6 բաժնով չեմ կարող Սալոնիկ գալ: Այս 6 բաժինը միայն իմ շաքարի փողն է, մինչդեռ ես տան, երեխաների տեր մարդ եմ: Սելանիկում էլ մորաքրոջ տղա չունեմ: Չեմ կարող գալ: Այո, կարող եմ գալ, մի պայմանով: Մնակյանի նկատմամբ խոր հարգանք ունեմ: Նրան կարող եմ զիջել 1 բաժին. նրանը պետք է լինի 13, իմն էլ 12 բաժին:

Մնակյանը համաձայնվեց:

Սակայն մոտս կանգնած Պինեմենճյանը, կանաչ գույն ստացած, շունչը կտրվել էր: Այդ պահին միտքս փոխվեց: Չէի ուզում տեսնել Պինեմենճյանին այդպես հուզված: Խեղճ Ֆեհիմ, բեմում ինձ ամենից մոտ կարծած մարդը այդ հարցում իր գույնը ցույց էր տվել: Սակայն չնեղացա, որովհետև այդ գործի հիմքում արմատ գցած մի ցանկություն կար մեջս, քանդող, խորը մի ցանկություն:

* * *

Գնացինք Սալոնիկ: Հրեայի թատրոնը վերանորոգվել էր, բայց շատ անճաշակ էր: Երկու հարկ օթյակներ, այս ու այն կողմ դրված արձաններ, փայլուն սովաքաթղթի զարդեր: Շենքի մի կողմն էլ կազինո էր: Մի խոսքով Էդենի թատրոնը, Սալոնիկի Թահթաքալեսիում տեղավորված՝ թռչնի վանդակի էր նման:

Առաջին գիշերը 16 ոսկի եկամուտ ունեցանք: Մեր հայտնի մելոդրամներն էինք խաղում: Սելանիկում գտանք Հաջի Թաթոսին ու կնոջը՝ Աղավնիին, քեզին նման Ռեջիմեին և Պալազարին: Բոլորին էլ վերցրինք մեր խմբի մեջ: Գործը կանոնավոր վիճակի էր հասել: Սակայն իմ 12 բաժնի հարցը աչքի էր խփել և տեղի տվել մի շարք ասեկոսների: Սակայն, «շունը կհաչի, քարվանը կգնա» ասելով, պինդ կպել էի գործիս: Ծաբաքվա երկու գիշերները խաղում էի մեկ

գործողությամբ երեք կատակերգություն: Այս կատակերգություն ասվածները Մալոնիկի ժողովրդին պարզապես խենթացրել էին: Համբավա թատրոնի մարդիկ էլ էին ընդունում: Լավից լավ՝ այս ու այն կողմ խոսել սկսեցին:

Մի կողմից համբավա, մյուս կողմից ստացած գումարս չէին հանդուրժում: Նույնիսկ ասում էին, թե Յալդրզյանը շատ գայրացել է, չի կարողանում դիմանալ քո 12 բաժին ստանալուն, թե ուզում է վեր կենալ գնալ, սակայն չեն թողնում: Անշուշտ սա հնարովի մի բան էր, քանի որ Յալդրզյանը առաջավոր դերասան չէր: Նպատակը իմ նկատմամբ իրենց մտքում եղածը դուրս տալն էր: Մնակյան էլ, տեսնելով որ մեյրոդամները եկամուտ չեն բերում, սկսեց կատակերգություններ խաղալ:

Մի գիշեր Մնակյանը, Պինեմեճյանը և ես, երեքով խաղացել էինք «Մարդս միշտ սխալական է» կատակերգությունում: Մնակյանի դերը անհաջող էր անցել, չէր կարողացել ցույց տալ ողբերգություններում ունեցած ուժը: Դրա համար էլ, որքան կարողանում էր, ինձ կատակերգություններ էր խաղալ տալիս: Վերջապես, ինձ թոցնելու համար՝ Բուլդարիայից բերել տվեցին հայտնի կատակերգակ Մաթոսյանին, կնոջ՝ տիկին Սաթենիկի հետ:

**ԲԵՄԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ ՆԱԽԱՆՁԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՏԻԿ. ՄՆԱԿՅԱՆԻ ՀՆԱՐԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ. ԱՀԱ ՉԻ, ԱՀԱ ՎԱԶՔԻ ԴԱՇՏ.
ՄԱԹՈՍՅԱՆԻ ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ. ՀՈՒՇԱՐԱՐ ՍԱԴԸԿԻ ԹՈՒԼՈՒԱԹԻ
ԽՈՒՄԸ**

Նախանձի, չկամության դեպքերը հաջորդում էին մեկ-մեկու: Շաբաթվա մի օրը հատկացրել էինք կանանց: Մաթոսյանի շաբաթվա կանանց հավաքին իմ տիկինս էլ երեխայի հետ մասնակցել էր: Տիկ. Մնակյանը շարունակ առաջին շարքերի օթյակներին էր նայում: Կնոջս երկրորդ շարքում տեսնելով, հանել էր այնտեղից: Նա էլ երեխայի թևից բռնած, քաշվել էր մի անկյուն: Մոտով անցնելիս տեսել էի կնոջս ոտքի վրա, վիզը ծուռ կանգնած: Երբ պատճառը հարցրի, կինս ուզեց փակել, սակայն ես չլսեցի նրան և իսկույն մտա բեմ և սկսեցի բղավել: Արամը ուզեց միջամտել, բաժինը տվի... Կրակ էի կտրել: Արդեն չափն անցկացնում էին: Նրանց նպատակը ինձ հեռացնելն էր, բայց ինչու այդ բանը բացե ի բաց չէին ասում: Միայն կպել էին թշնամանքի և խարդախության զենքի: Սկսել էին արժանապատվությանս հետ խաղալ: Գործը հասել էր կռվի: Մասնավորապես, Մաթոսյանի գալուց

հետո, առանց հաղթանակի որոշել էի թողնել ասպարեզը: Բեմը կռվի դաշտ էր: Ես էլ իմ ամբողջ ուժով բղավում էի՝ ահա ձի, ահա մրցման դաշտ, դեհ, սկսեք: Արդեն հազար տարի առաջ ողբերգակ Էսքիլեսի և կատակերգակ Արիստոֆանի բանավեճով այս բանը հրապարակ էր նետվել: Ըստ երևույթին այդ ժամանակներից մինչև այսօր այդ երկու ուժերի աղմուկը բեմի մարդկանց գլխից դուրս չէր եկել:

Մաթոսյանը բացառիկ գոհ վիճակում էր, կարծեք խաղի հերոս լինել:

Մի քանի օր անց, նրան հրավիրողները հիասթափություն ապրեցին, որովհետև ժողովուրդը չհավանեց Մաթոսյանին: Անհաջողություն տեսած ինքնահավան կատակերգուն իսկույն առագաստները ջուրն իջեցրեց: Իրեն համարեց ծանր լսող, բժիշկներից տեղեկանք բերեց: Սակայն շրջապատը կրկին իմ ներկայության մասին խոսքեր գցելուց ետ չէր մնում: Մի գիշեր “Խռմփոց” կատակերգությունում Պինեմեճյանը ինձ հակառակվելու համար դերը ցանկացավ տալ Մաթոսյանին: Իսկույն պոռթկացի:

- Ես չեմ կարող խաղալ: Այս մարդը խուլ է, ես չեմ կարող բեմ դուրս գալ խուլ մարդու հետ:

Մաթոսյանին ու նրա հովանավորներին հարվածել էի իրենց զենքով:

Գործն ամբողջովին չխափանելու, ժողովրդին գրավելու նպատակով կրկին սկսեցին ինձ հրապարակ հանել: Սակայն դա բամբակի թելի նմանփող միջոց էր: Օրերից մի օր անպայման կտրվելու էր:

Մի օր շատ վաղ գնացել էի թատրոնի սրճարան պարզապես առավոտյան սուրճ խմելու: Մոտս եկավ ակսեսուարիստ Միհրանը: Նստեց: Այդ մարդը շատախոսի մեկն էր: Ոչինչ հաշվի չէր առնում և իսկույն սկսում էր դուրս թափել նախորդ գիշեր իր հետ պատահած դեպքերը, զրույցները:

- Զո պատճառով բոլորս այստե՞ղ պիտի մնանք, - ասաց և շարունակեց.

- Այստեղ մի նշանավոր մարդ կա՝ դոկտոր Ռեֆաթ բեյը: Ահա այդ մարդը երեկ գիշեր եկավ Մնակյանի մոտ, խոսեց քո հաջողությունների, Սելանիկի ժողովրդի ցուցաբերած խանդավարությունների մասին, ի վերջո գիտե՞ս ինչ ասաց.

- Մեկ տարվա ձեր վաստակածի կրկնապատիկը կտանք, եթե այստեղ մնաք:

Սակայն միայն կատակերգություններ ենք խաղալու ու նրանց թարգմանած վողեկները: Տարվա ութը ամիսներին խաղալու ենք, մնացած չորս ամիսներն էլ որտեղ որ ցանկանանք, այնտեղ պիտի անցկացնենք: Բայց սա գործ է, բոլորը քո արած բաներն են:

Ասաց, եթե զարդը թողնելու էի Նիազի բեյին... Ստացած երկուհարյուր քառասուն դուրուշով նրա համար էլ մի զարդ պատրաստեցի և տվեցի:

Քյամիլը, աճուրդի դնելով այն, վաճառեց մի մեծ գումարով և եկավ ինձ մոտ.

- Հը ո՞նց է, տեսա՞ր: Վերցրու փողը, մեկն էլ պատրաստիր: Կրկին այս ձևով կվաճառեն:

Հետաքրքրվում էի: Այս մարդը անշուշտ ինձնից ճարպիկ էր դուրս եկել և իմ օգտի մասին էր մտածում:

**ՄՆԱԿՅԱՆԻ ԽՈՒՄԸ ԱՆՑՆՈՒՄ Է ԳՈՐԾԻ ՊՈԼՍՈՒՄ
ՀՈՒՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՊԱՅԹՈՒՄ Է. ԱՍՏԾՈՒ ՄԻՏՔԸ Ո՞ՐՏԵՂԻՅ Է
ԳԱԼԻՍ ՆՄԱՆ ԿԱՆԱՆՅ ՆԱԽԱԳԻԾ.
ԻԶՄԻՐՈՒՄ ԹԱՏՐՈՆԻ ԳՈՐԾԸ ՉԻ ՔԱՅԼՈՒՄ**

Մենք նման առևտրով էինք զբաղվել, որ Իսկեջիում հայտնվեց Մնակյանի որդին՝ Արամը: Բարև-Աստծու բարևից հետո անցավ գործնականի և ասաց.

- Խումբը Կավալայում է, եկել եմ ձեզ տանելու: Ամեն ինչ կարգին է:

Մի քիչ մտածելուց, խորհրդակցելուց հետո որոշեցինք գնալ: Պալթազարը, Հաջի Թաթեոսը, Ռեջինան, Աղավնին հավաքվեցինք: Կարծում էի, թե Արամի մոտ փող կա: Դու մի ասա՛ նա էլ դատարկ քսակով է եղել: Աղբիանապոլսում ժամացույցների առևտրով և միաժամանակ դերասանությամբ զբաղվող մի մարդ՝ Ժամկոչյան անունով, այժմ Իսկեջեում ծխախոտի մեծ առևտրով էր զբաղվում: Նրանից երեք ոսկի պարտք վերցրինք, նստեցինք սայլերն ու Կավալայի ճամփան բռնեցինք: Այդ ճանապարհը անցանք մեծ տառապանքով: Ինչպես հեքիաթներում՝ սար ու ձոր հաշվի չառնելով, ուղիղ գնացինք: Սակայն մենք այս ճանապարհին էինք, որ 1897 թվականին Հունական պատերազմը պայթեց: Որտեղ որ կանգ էինք առնում, իրարանցում էր: Էթեն փաշայի բանակներն արդեն պատրաստվում էին Աթենք մտնել: Ամեն գյուղից հեղեղի պես թափվում էին մոտս:

Մեծ դժվարությամբ հասանք Կավալա:

Արդեն այստեղ գտնվող մեր ընկերները դիմավորեցին մեզ: Անցյալում մեր տարածայնությունները, կռիվները մի կողմ դրած, անկեղծորեն ողջագուրվում էինք: Քաղաք հասնելիս, ռազմաճակատում առաջին հաղթանակները արձանագրվել էին: Գլխատված հույների գլուխներ էին բերել Կավալա: Լապտերների նման՝ դռների առաջ կախված կախարդական գլուխ-

ների շուրջ ժողովուրդը օրերով խրախճանք էր անում: Անշուշտ այսպիսի իրարանցումի ժամանակ չէինք կարող թույլ տալ մեզ, որպեսզի թատրոնի դուռը բաց անենք: Այս ու այն կողմ դիմեցինք, օգուտ չտվեց:

Վերջապես, ճարահատ, անիվները կողքերին՝ Նուհի-Նեբիի օրերից մնացած մի նավ նստեցինք, Իզմիրի ճամփան բռնեցինք:

Մաթոսյանը, Սաթենիկը և ես՝ մեր երեխաներով նավի ետնամասում, վերևում փռել էինք մեր անկողիները և քաղցր քաղցր զրուցում էինք: Գայմագամի եղբայրն էլ իր համար տեղ էր փնտրում, բայց հարմար տեղ չգտնելով եկավ և մեր ետևի մասում տեղավորվեց: Փռեց իր չուլը, զամբյուղից հանեց օղին, ուտելիքները, սկսեց շրջապատող դարդիման տղաներին պատմել իր սխրագործությունները, առանց հաշվի առնելու շրջապատի մարդկանց: Նրան լսողներին կարող էր թվալ, թե գործ ունեն ժամանակի հայտնի Չալ Արդեն գայմագամը իր գլուխը նրանից ազատելու և խաղաղություն ապահովելու համար էր, որ նրան բռնի գտնել էր տվել, այդ նավը դրել և քշել:

Գիշերը հենց մեր գլխավերևում վառեցին նավթի մի լամպ: Մարդը կատարելապես խմում էր: Իր խզված ձայնով էլ ինչ-որ երգեր էր երգում, մերթ ընդ մերթ էլ ուշադիր նայում էր տիկին Սաթենիկին, և քթի տակից ինչ-որ բան մռլտալով գլուխը օրորում էր: Մաթոսյանը ծայր աստիճան զայրացած վիճակում էր: Սկսեց կնոջ հետ ինչ-որ բաներ փսփսալ, վերջապես ոտքի վիճակում էր: Սկսեց կնոջ հետ ինչ-որ բաներ փսփսալ, վերջապես ոտքի կանգնեց, խանգարելով լամպի լույսին: Դարձավ ինձ և հայերեն ասաց.- Այս մարդը չափն անցկացնում է, կռվի առիթ է տալու:

Մարդը դարձավ մեզ և ասաց. - Ի՞նչ հրամայեցիք: Մաթոսյանը կարկա- մեց, ոչինչ չասաց: Մարդը շարունակեց. - Լույսը մի խանգարիր, ուրիշ բան չեմ ուզում: Ապա, գավաթը լցրեց և ասաց.

- Օ՛ ..., չգիտեմ թե մեր եղբայր Աստուծը խելքին ինչ փչեց և ստեղծեց այսպիսի կնոջ կերպարանք:

Այլևս ազդվեցի: Մեջտեղ էր նետվում մի գեղեցիկ դիտողություն, վատ դիտողություն չեմ ասում, որովհետև մարդը իրավացի էր: Մաթոսյանն ինքն էլ կնոջ գեղեցկությանը վստահ չէր:

Շատ չանցած մի մեծ փոթորիկ սկսվեց: Չկարողացանք հանգիստ մնալ: Բոլորս տեղավորվեցինք նավի մեքենայական մասում: Ամբողջ գիշեր մահվան վտանգի մեջ անցկացրինք: Ոմանք սրտխառնոց ունեցան: Առավոտվա դեմ ծովը մի քիչ հանդարտվեց: Ցերեկով միմյանց նայեցինք և սկսեցինք ծիծաղել: Բոլորս էլ անուխի փոշուց արաբ տղաներ էինք դարձել:

Հասանք Իզմիր: Նախնական որոշ պատրաստություններից հետո «Սև քար» պիեսով սկսեցինք ներկայացումները:

Պատերազմի պատճառով քաղաքը տազնապի մեջ էր: Ներկայացման գիշերը հազիվ հազ մի բան էինք վաստակում: Շաբաթվա որոշ օրերին սկսեցինք հաճախել Կուկուլիյե: Մեր ամենալավ մեյլոդրամները հազիվ մի բուռ հանդիսականների ներկայությամբ էինք կարողանում ցուցադրել: Խաղացինք կատակերգություններից ամենից ծիծաղ առաջացնողները, կատարյալները: Չստացվեց, չստացվեց: Ամենից տարօրինակն այն էր, որ այս բոլոր անգործության և աղքատությանը դեմ հանդիման, ամեն մեկն իրեն մոռանալով, տարվել էր ինքնագովությանը:

Մի օր էլ հունական պատերազմը վերջացավ մեր հաղթանակով: Իզմիրի հույները պատերազմի օրերին կատարած իրենց խանդավառ պոռթկումների պատճառով մեծ երկյուղի մատնվելով, կրկին սկսեցին թուրք ձևանալ: Եվրոպական գլխարկները դեն գցելով ֆես էին դնում, խանութների վրա թուրքական դրոշներ, թագավորի նկարները կախում, իրենց ամեն ինչը ներկում էին կարմիր և սպիտակ:

Ես ուշադիր հետևում էի այս բոլոր կերպարանափոխություններին: Արդեն անգործ էինք: Մի բան ներկայացնենք, թե չներկայացնենք ասելով օրերն անց էինք կացնում և մատնվել էինք անբացատրելի մի երկյուղի: Մտածեցի ապրուստս ապահովելու համար մի փոքր գործ փնտրել: Նավահանգստում զբոսնելիս տեսա, որ սպիտակ տակառների երկաթյա կապույտ գոտիները կարմիր էին ներկում: Հիշեցի իմ պատրաստած հուշանվեր զարդերը: Հենց այդ գործի ժամանակն էր: Թևերս քշտեցի: Ինձ մոտ եղած փողը հատկացրի ստվարաթղթի, տախտակի, շրջանակի, ներկի: Սենյակս դարձրի աշխատանոց: Պատրաստածներս վաճառում էի Միհրանին, սրան նրան:

Իզմիրը լցվեց իմ պատրաստված նկարներով: Յուրաքանչյուրը վաճառում էի 4-5 ոսկով, չհաշված միջնորդների շահը:

Սակայն այս գործը ինձ մի քիչ ամոթով էր թողում: Օրինակ, երբ իմ պատրաստած հուշանվերը տեսնում էի մեծ բազմության առաջ ցուցադրվելիս, սակարկությունը, իսկույն փոխում էի ճանապարհս: Այնուամենայնիվ, դրանից մեծ գումար վաստակեցի: Վերջապես հավաքվեցինք, Ստամբուլ վերադարձանք:

ՄՏԱՄԲՈՒԼԻ ԱՆԿՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Քաշվեցի Սկյուտարի իմ անկյունը: Ամեն մեկը մի կողմ ցրվեց: Միառժամանակ այսպես անգործ անցկացրինք: Այդ ժամանակ Հայկական խնդրի պատճառով Բուլղարիա, Ռուսաստան, այս ու այն կողմ փախած հայ դերասանները սկսեցին կրկին վերադառնալ Ստամբուլ: Վերադարձողներից Հուլաք, Սանճագճյանը, Չափրաստը, Պոլսում մնացածներից էլ Չոպանյանը, տիկ. Հեքիմյանը մտան Մնակյանի թատերախմբի մեջ:

Մի օր Պոլսում Մնակյանի ղեկավարությամբ ականավոր ուժերի մի ժողով էր հրավիրվել: Ես մի քիչ ուշ էի իջել Սկյուտարից և գնացել էր ուղիղ նրանց հավաքատեղին:

Ժողովի նպատակն էր վերականգնել թատերական կյանքը: Թատրոնից բան չէր մնացել: Սկսեցին որոշել նոր թատերախմբում յուրաքանչյուրի ստանալիք շահաբաժինը: Ես էլ ասացի, թե կատակերգակներին ինչ բաժին որ որոշվի, այդ բաժինը ստանալու համաձայն եմ: Թվում էր, թե իմ այդ համաձայնությունը խնդիրը լուծված պիտի դարձներ: Մյուս կողմից գիտեի, որ այդ ժողովը մասամբ էլ հրավիրել էին ինձնից վրեժ լուծելու համար: Ուստի, երբ համաձայնվեցի մյուս կատակերգակների համար որոշված ութ բաժինը ստանալ, բոլորը զարմացան, սակայն ժողովի վերջում չկարողացան իրենց ուրախությունը քաբցնել: Որոշեցինք ամբողջ ամառվա ամիսներին Պոլսի թաղամասերում ցուցադրել մեր խաղացանկի բոլոր պիեսները:

**ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻ ՔԵՈՒ ՄԱՐԻ ԴԻՄԱԿԸ
ԿԵԴԻԿ ՓԱՇԱՅԻ ԹԱՏՐՈՆԸ ԱՐՎԵՍԻ ԴՊՐՈՑ ԷՐ
ԵՐԿՐՈՐԳ ԹՈՒՐՔԸ ԲԵՄՈՒՄ. ՄԵՀՄԵԴ ՀՈՒԼՈՒՍԻ. ՊԻՆԵՄԵՃՅԱՆԻ
ԽԱՂԸ**

Թատերախումբը մեծացել էր: Կարող էինք ներկայացնել նաև որոշ մեծ մեյլոդրամներ: Կաղըքեոյում՝ Փափազի պարտեզում, Սկյուտարում, Թոփհանեփիօղլույում, Միլլեթ Բահչեում, Կղզիներում, Գյոկսույում, Բաքըրքեոյում սկսեցինք ներկայացումները: Սակայն մեր ցուցադրած արվեստում որևէ նոր շարժում չկար: Դեկոր, թատերական գրականություն, դերասան,

միզանցեան, ամեն ինչ ամենահին վիճակից էլ ետ էր, ենթակա պատահականության: Կեդիկ փաշայի ժամանակներում, որքան էլ լինի դասական արվեստի մի շարժում կար, օտար ռեժիսորների միզանցեաներ, դեկորներ: Կեդիկ փաշան մի տեսակ արվեստի դպրոցի տեսք էր ընդունել: Մինչդեռ այժմ միայն մեր ստամոքսի մասին մտածելու հարկադրանքի տակ էինք: Ինքնուրույն պիեսներ չէինք կարող խաղալ, քանի որ կառավարության կողմից պաշտոնապես արգելված էին:

* * *

Մի օր Կադրբեռյուն Փափազի պարտեզում նստել էինք: Թատրոնի խենթերից Մահմուդ բեյը շեկ բեղերով մի հսկա երիտասարդի հետ մեզ մոտ եկավ: Երիտասարդին ներկայացրեց Մնակյանին և խնդրեց, որ ընդունի իր խմբի մեջ: Մնակյանը Մեհմեդ Հուլուսի կոչվող այդ երիտասարդին ընդունեց իր խմբի մեջ:

Հուլուսին արտաքինով, առաջին ակնարկից թողնում էր փաշայի ապարանքի խոհարարի կամ կառապանի տպավորություն, սակայն իրականում շատ ազնիվ հոգու տեր մարդ էր:

Հուլուսիից հետո էլ Թուլայանը եկավ, «Կավոռ» երգիծաբերթի խմբագիր Թուլայանը:

Մի օր Սկյուտարում խաղալու համար Հուլուսիի հետ ճամփա էինք ընկել: Երկուսով հանգստանալու համար ծառի տակ նստեցինք, Հուլուսին ասաց.

- Ֆեհիմ էֆենդի, դեռ չկարողացա՞ք ինձ հիշել, չճանաչեցի՞ք:
- Ահա ճանաչում եմ. – ասացի:

- Չէ, հիմա չեմ ասում, անցյալի մասին եմ ուզում խոսել: Ռոդոստոյում «Ռոմեո և Ջուլիետ» իմ անունով էիք տվել: Ես այն ժամանակ Չանբազի մոտ էի աշխատում:

Այդ խոսքերից հետո վերհիշեցի Ռոդոստոյի նիհար, երիտասարդ Մեհմեդ Հուլուսիին:

- Դու այդ մա՞րդն ես, - ասացի: Շատ ես փոխվել, - ասացի, առանց զարմանքս թաքցնել կարողանալու:

Հուլուսին գիր ու գրականություն, թատրոն սիրող մարդ էր, սակայն միջակության վիճակում մնացած դերասան էր: Թեև որպես թուրք առաջին դերասաններից իր արժանի տեղն ունի:

Չեմ կարող չխոսել նաև այլ դերասանների մասին: Օրինակ, Սանճակճյանը չափից ավելի տյուզենի սեվեն (ուղղամիտ) մի տարօրինակ դերասան

էր: Հարցրեք նրան, թե թունելից մինչև Կեդիկ փաշայի թատրոնը քանի քայլ է, իսկույն տեսրը բաց կանի և ձեզ կպատասխանի: Հարցրեք ժամը քանի՞սն է ըստ Պերայի Սանթա Մարիա եկեղեցու ժամացույցի՝ այսքան է: Դրամարկդին հանձնվող տոմսերին էր հետևում: Հաշիվը իմացող և ծանրագլուխ մարդ էր:

Կանանցից ինքնատիպ մի անհատականություն էր Մարին, որին ճանաչում էի Կեդիկ փաշայի թատրոնի օրերից: Նրան այլապես կոչում էին Քյոռ Մարի, քանի որ այդ խեղճ կնոջ մի աչքը վնասված էր: Լուսանկարը հանել տալիս միշտ պրոֆիլ էր կանգնում: Բեմում էլ, որքան հնարավոր էր թեք էր գնում, գալիս: Մարիից հետաքրքիր մի դեպք պատմեմ:

Ժամանակին Մարին մասնակցել էր Պերայում կազմակերպված մի դիմակահանդես-պարահանդեսի, անշուշտ դիմակով: Պարող տղամարդկանցից մեկի ուշադրությունն է գրավել: Որոշել է ինչ գնով լինի ծանոթանալ գրավիչ արտաքինով, բարձրահասակ, բայց դեմքը փակ այդ կնոջ հետ: Քաշվել են առանձին մի սենյակ, բացվել են շամպայնի շշեր: Մարդը, այլևս չկարողանալով համբերել, քաշել պոկել է Մարիի դեմքի դիմակը: Բայց երբ տեսել է մեջտեղ ելած տգեղ դեմքը, ասել է. - Այ դու խորամանկ կին, հարտեսել է մեջտեղ ելած տգեղ դեմքը, ասել է. - Այ դու խորամանկ կին, հարբած եմ, բայց չեմ կլի նման կատակ. մյուս դիմակդ էլ հանիր: Խեղճ մարդը դիմակի տակից երևացող տգեղ դեմքն էլ դիմակ է կարծել: Դրանով հանդերձ Մարին բարի սրտով և համակրելի մի կին էր:

Երբ ամառը եկավ, խմբի անդամներից մի քանիսը կամաց-կամաց ցրվեցին: Խումբը դարձյալ փոքրացավ: Չմռանը՝ Բուրսայում, Ադրիանապոլսում և շրջապատում սկսեցինք ներկայացումներ տալ: Ռամազանին էլ գործեցինք Շահգադե բաշիում: Ստամբուլը, այդ ժամանակ մայրաքաղաք լինեց լով գրկաբաց ընդունում էր Անադոլից եկող հազարավոր այցելուների: Ռամազանի օրերին այդ առիթով էլ թատրոնի դռները լցվում էին:

Ռամազանից հետո կրկին ցրվեցինք Պոլսի ամառանոցային վայրերը: Մի օր Բաքրբեռյից վերադառնալիս Պինենեճյանը սաստիկ զայրացել էր: Եղա մոտը և հարցրի հուզման պատճառը.

- Ինչ պիտի լինի, - ասաց, - ամեն մի ներկայացման համար, որպես հանդերձարանի վարձ մեկ մեջիդիե ենք տալիս: Երկու կտոր շորի համար հնարավոր է այդքան փող տալ: Ես էլ հաշիվներին եմ հետևում: Այդ հաշվով ամեն մի ներկայացման համար մեկ մեջիդիե էլ ե՞ս պիտի առնեմ: Եթե ամեն մեկը իր կատարած նման աշխատանքների համար առանձին փող ստանա, մեր վիճակն ի՞նչ կլինի:

- Քեզ մի մարդ տեսնել է ուզում: Օթյակների ետևում կանգնած նիհար, երկարահասակ մի մարդ ներկայացավ: Անունը Հասան բեյ էր: Չանաքքալեից էր գալիս: Թուրքական նավատորմը Չանաքքալեի մոտ խարխախ էր գցել: Քաղաքում ծովայինների մեծ բազմություն և եռուզեռ էր տիրում: Մեզ էլ հրավիրում էին այնտեղ ներկայացումներ տալու: Քանի որ ես Չանաքքալեում ծանոթ դեմք էի, նախ ինձ էին կանչում մասնակցելու:

Հայտնեցի թատերախմբին: Բոլորն էլ ուզում էին, որ իսկույն ճամփա ընկնեն: Նախապատրաստական աշխատանքների համար նախ իմ մեկնումն էր անհրաժեշտ: Օր չկորցրած ինձ գցեցի ավստրիական մի նավ: Այս ճանապարհորդությունը նման չէր իմ մյուս ճանապարհորդություններին: Նախ հատուկ սենյակում էի, հետո՝ կրկին բեմ դուրս գալու միտքն ինձ մեծագույն երջանկություն և ուրախություն էր պարզվում: Շատ հիշողություններ էին կապված Չանաքքալեի հետ և ժամ առաջ այն կրկին տեսնելու համար դիտում էի հեռու հորիզոնները:

Նավում վար ու վեր անելիս՝ ականջիս օպերայի ձայն հասավ: Երաժշտությունը գրավեց ինձ: Մտածում էի, թե օպերային խումբն ի՞նչ գործ ունի այս նավի մեջ: Միաժամանակ առաջանում էի դեպի ձայնը:

Վերջապես գտա: Նավի ետնամասում գտնվող մառանի մի անկյունում մի խումբ ռուսներ պաշտամունքի արարողություն էին կատարում՝ վառված մոմերի առաջ: Կանանցից, երեխաներից և տղամարդկանցից բաղկացած աղոթքի այս հանդեսը մի օպերայից ավելի տպավորեց ինձ: Կյանքումս այսքան գեղեցիկ և ներդաշնակ մի օպերա չէի լսել:

* * *

Հասա Չանաքքալե, տեսակցեցի նավատորմի հրամանատար Հասան Ռամի փաշայի հետ: Լսեցի հրամանատարին և սպաներին ու համարձակություն ստանալով նրանցից՝ բանակցեցի Մաարիֆի կազինոյի տիրոջ հետ: Կազինոյում նվագախմբի համար պատրաստված մի տեղ կար: Շրջապատը քանդել տվեցի, շինել տվեցի բավականաչափ մեծ մի բեմ: Շինանյութն ամբողջությամբ տրամադրել էր նավատորմի ղեկավարությունը: Առանց որևէ դժվարության ցանկացածս կառուցել էի տալիս:

Թատրոնի նախապատրաստական աշխատանքն ավարտելուց հետո նավատորմի կողմից որպես կանխավճար տրված 45 ոսկին ուղարկեցի մեր թատերախմբին և հեռագրեցի, որ իսկույն գան: Բայց հիմա էլ կազինոյի տերը սկսեց վարձի կանխավճար պահանջել:

- Ի՞նչ եք տալու, - ասաց:

- Դ՞ու մեզ ինչ ես տալու, - պատասխանեցի: Կազինոյի քանդվելու վիճակում էր, չէր աշխատում, այժմ կարող ես սուրճ, հանքային ջրեր վաճառել:

Մարդը բերանը փակեց, ոչ միայն վարձ չվերցրեց, այլև համաձայնեց նվագի փողն էլ ինքը տալ, քանի որ իսկապես եկամուտը մեծացել էր:

Եկող թատերախմբի մեջ էին՝ Մնակյանը, Պինենճյանը, Շահինյանը, Սանճագճյանը, Ահմեդ Հուլուսին, Նեջիբը, տիկիները Պինենճյանը, Ազնիվը, Քեյֆլի Մարին (Քեռո): Հոլասը և Ալեքսանյանը, ինչպես միշտ, խռովել էին և չէին միացել խմբին: Այս երկու դերասանները առհասարակ խռովկան բնավորություն ունեին: Մի թատերաշրջանում երեքից չորս անգամ խռովում էին:

Սկսեցինք ներկայացումները: Թատրոնը առհասարակ լիքն էր լինում նավատորմի հրամանատարներով և սպաներով: Չէինք կարողանում դրամարկդից տոմս վաճառել: Շաբաթը մեկ անգամ գնում էի հրամանատարություն և 120-150 ոսկի էի ստանում, իսկ դա մեծ գումար էր և մեզ ամեն ինչ մոռացնել էր տալիս:

Ամեն գիշեր մեզ համար զվարճություններ էին կազմակերպում, խնճույքներ սարքում, իսկ ես ցերեկները գերեզմանատները թափառող ծերունիների նման հարազատներիս թաղված անկյուններն էի ման գալիս, և հին բարեկամներիս այցելում: Ցերեկները շրջում, գիշերները գալիս նավերն էի դիտում:

Ի վերջո մի գաղտնիք իմացա: Պոլսում, հրեաների մի խումբ, ցեղն ու ազգությունը անորոշ գեղեցիկ կանանց երեսներին քող գցած տանում էին Ամերիկա որպես թուրք երգչուհիներ: Բոլորին հայտնեցի գաղտնիքը: Մեզ էլ զվարճություն էր պետք. կարողացանք Ամերիկա մեկնող նման մի խմբի երկու-երեք օր պահել, անշուշտ վարձատրելով...

Այլևս մեր օրերն անցնում էին քեֆի և ուրախության մեջ: Մեր գլուխները դարձյալ տաքացել էին, կարծեք ապրում էինք հենց այդ օրերի համար: Երկու-երեք հոգուց բաղկացած և մի անկյուն առանձնացած խմբերի մոտ էի մտնում դուրս գալիս: Շատ հաճելի էր լսել այդ արվեստագետների միջև փոխանակված գրույցները:

Անցյալի և ապագայի մասին խոսող չկար: Յուրաքանչյուրը վատահ էր, որ ամբողջ կյանքում այդպիսի հաճելի ժամեր չի ապրել և հետագայում էլ երբեք չի ապրելու:

Այս հաճելի ժամանցն ավարտվեց երկու ամսից: Բոլորի գրպաններում

առատ փող կար, դեմքերին ուրախություն: Դա, ըստ երևույթին, մեր բոհեմական կյանքի վերջին դրվագն էր:

**ՇԵՀՉԱԴԵ ԲԱՇԻՈՒՄ, ԲՈՒՐՍԱՅՈՒՄ, ԿԱԴՐՔԵՈՅՈՒՄ, ՔԵԼ ՀԱՍԱՆԻ
ԵՎ ՇԵՖՔԻՒ ՄԻՉԵՎ. ՄՆԱԿՅԱՆԻ ԹԱՏՐՈՆԸ. ՍՈՒԼԵՅՄԱՆ ՆԱԶԻՖ
ԲԵՅԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ.
ՖԵՀԻՄ ԷՅԵՆԴԻԻ ՆԿԱՐՆԵՐԸ ՔԱՆԻՍՈՎ ԵՆ ՎԱՃԱՌՎՈՒՄ**

Վերադարձանք Ստամբուլ: Ռամազանը եկել էր: Պոլսում մնացած դերասանները կրկին մտան խմբի մեջ: Բացի նրանցից մեզ միացավ նաև Ֆասուլաճյանի խմբում խաղացող և Վառնայից նոր վերադարձած Քնարը:

Ռամազանի ներկայացումները սկսվեցին Շեհզադեբաշիում, Լեթաֆեթի մեծ շենքի վերին մասում Թալաթ փաշայի դարպասում, Սուլթան Համիդի գլխավոր սենեկապետի՝ Արիֆ բեյի կառուցած թատրոնում: Արիֆ բեյը փող տալով այդ թատրոնը կառուցել էր տվել Սուլթան Համիդից գաղտնի, նախքան մեր գալը: Դիմացի շարքում, Ֆելվադիեի թատրոնում, Քել Հասանը, իսկ մեզնից ներքև էլ Շեվքին էր ներկայացումներ տալիս: Թատրոնների կամարների տակ լցվում էին մարդիկ: Թատրոնների դռներին ամեն զիշեր կանգ էր առնում որևէ պալատականի կառք: Գլուխները կրակե ածուխի նման հարեմ աղաները շրջում էին օթյակների աջ ու ձախ կողմերին: Դա փառքի ու խրախճանքի մի շրջան էր: Մենք էլ, կեղծ բուրժուազիան, վարագույրների ետևում, նավթի սնտուկից պատրաստված մի սեղանի վրա գցած մի հին շոր, մի կտոր հացի փողի համար հարկադրված էինք զվարճացնել թուրքական բուրժուաներին:

Այնուամենայնիվ արվեստ չէինք ստեղծում:

* * *

Ես ընտանիքս թողել էի Սկյուտարում և Ռամազանը անցկացնելու համար Շեհզադեբաշիում մի փոքրիկ սենյակ էի վարձել, սակայն Իթիլի Մահմուդը չէր թողել ինձ այնտեղ, հարկադրաբար քարշ էր տվել Բեյազիդում գտնվող պալատական շենքերը: Մահմուդ Նեջիմը, տպարան «Օսմանի» տիրոջ՝ Բեքիր Էֆենդիի տղան էր, գլխավոր խմբագիրը՝ «Կարագյոզ» թերթի: Կոկիկ հագնված, շատ ճաշակով մարդ լինելով հանդերձ, մի քիչ չափից ավելի բաց երիտասարդ էր: Իր ապարանքում արաբական ոճի, լյուդովիկ-

յան ճաշակի և ալաթուրքա սալոններ ուներ:

Սակայն, ես առհասարակ, որքան հնարավոր էր աշխատում էի նման երիտասարդներից հեռու մնալ: Ռեշադ Ռըդվանի պատճառով քաշածներս չէի կարող մոռանալ: Ողորմած հոգի Ռըդվան փաշան, իր որդուն թատրոնից կտրելու համար ինչեր բերեց խեղճ դերասանների գլխին: Թուլայանին բանտարկել էր տվել, Մաթոսյանին վեցերորդ բաժանմունքի ներքևում, կառավարչական ոստիկանների միջոցով դաժան ծեծի էր ենթարկել, իմ՝ Ռեշադի հետ կնքած մի պայմանագիրն էլ ձեռքը անցած լինելով՝ ինձ էլ էր հետապնդել:

Անգամ այս խաղերից հետո մի զիշեր, ոնց էր պատահել, Ռեշադի խելքին էինք ընկել, Պերայում գլուխներս կարգին տաքացնելուց հետո, Շիշլիի կողմերի ապարանքներն էինք գնացել, և փաշայի բիլիարդի սրահում պատրաստված անկողնու վրա էի գտել ինձ...

Առավոտ երբ զարթնեցի, և գլխավերևումս տեսա փաշային, խեթ-խեթ ինձ նայելիս՝ իսկույն կրկին փակեցի աչքերս, վախից լեղաճաք էի եղել: Մի քիչ հետո կրկին թարթիչներս բաց արի և ուշադիր նայեցի. դու մի ասա՝ տեսա՞ս ոչ թե նույնիսկ փաշան է եղել, այլ առաստաղի վրայի նրա յուղաներկ դիմանկարը:

Այս բոլորը շարունակ մտքումս լինելով, որոշել էի որքան հնարավոր է խելամիտ և կարգապահ երիտասարդների հետ լինել, որովհետև հայրերը և մայրերն առհասարակ իրենց երեխայի լավ ու վատ լինելը ուրիշներից են իմանում: Քանի որ մեջտեղում այսպիսի վատ մտքեր կային, չէի ուզում մեծահարուստների խմբերին խառնվել:

* * *

Ռամազանը ավարտվել էր: Թատրոնը կրկին քաշվել էր իր պատյանի մեջ, խորքից հոսող մի ջրի էր նմանվել:

Արանքից մի քանի տարի անձայն անցավ: Այդ ժամանակ էր, որ Մյունիֆը և աղջիկս՝ Նյուզիտը աշխարհ էին եկել:

Չորրորդ տարում գնացինք Բուրսա, սկսեցինք ներկայացումները՝ Վեֆիկ փաշայի թատրոնում: Ես ցերեկները տանը գրադվում էի գրականությամբ: Տարվել էի Կուֆի կոչվող տառերով և ամիսներով շարժարվեցի ու պատրաստեցի մի մետր մեծությամբ ութը նկար:

Մի օր խմբի գործերով եղա գրաքննության վարչությունում: Ընդունարանում մի մեծ քարտեզ էր կախված: Տառերը «Կուֆի» էին: Աչքերս չէի հեռաց-

նում: Պաշտոնյայի ուշադրությունը գրավեց: Դարձավ ինձ և հարցրեց.

- Երևում է, որ գեղագրության սեր ունես:

- Այո, - ասացի, - ես էլ զբաղվում եմ կուֆիով: Անկյունում կուչ եկած պաշտոնյան ասաց.

- Այս քարտեզը ես եմ գծել:

Այդ մարդուն ճանաչում էի: Ժամանակին թուլուաթով զբաղված, ի վերջո իրեն Բուրսա գցած նկարիչ Բեքիրն էր:

Մտերմիկ հարցուփորձից հետո հրավիրեցի իմ տուն, որ տեսնի իմ գծածները: Եկավ: Նկարներս երբ տեսավ, հիացավ, գովեստի խոսք չէր գտնում:

Նա ըստ երևույթին իմ այդ հմտությունը հայտնել էր վարչությունում, քանի որ երկու օրից ինձ կանչեցին:

Գծագրություններս տարա: Բարձրաստիճան բոլոր պաշտոնյաները հիացել էին: Որոշեցին գնել և կախ տալ իգական ուսուցիչների դպրոցում:

- Ի՞նչ պիտի վճարենք, - հարցրին:

- Այստեղ տպագրական տեսչությունն է, ինձնից լավ կարող եք գնահատել:

Դրանք էլ ասացին.

- Այս գործերը անգնահատալի են, սակայն դուք էլ գիտեք, որ նյութական մեծ հնարավորություններ չունենք, դրա համար էլ եկեք համաձայնվեք, որ յուրաքանչյուրին վեց մեջիդիե վճարենք: Պատասխան չգտա: Ես նրանցից ամեն մեկի վրա քսան օր էի աշխատել:

Ութն էլ գրեցի ու դուրս եկա:

Այս դեպքը իսկույն հայտնի էր դարձել ամեն կողմ: Ի վերջո փոստի պաշտոնյաններից Մուլեյման Նազիֆը ինձ կանչեց: Մինչ այդ լավ չէի ճանաչում Մուլեյման Նազիֆին: Նկարներս տեսավ, ասաց, թե դրանք աճուրդի կղնի և ինձ 180 ոսկի կապահովի:

Ասածի նման էլ արեց: Ստացածս 180 ոսկին ինձ համար մեծ գումար էր: Մուլեյման Նազիֆ բեյը սրա նման մի քանի լավություններ էլ ցուցաբերեց: Ինձ ամեն օր հրավիրում էր իր գրասենյակը, հաճելի գրույց էինք ունենում:

Թագվորի Չամբուղլու թատրոնը քանդվել էր: Մեր գրպաններում եղած փողերը միացրինք, պարտք վերցրինք, վարկով շինանյութ ձեռք բերեցինք, քանդված թատրոնի գավիթում մի նոր թատրոն կառուցեցինք:

Երեսուներեք բաժնով կառուցված այս թատրոնն անշուշտ խղճուկ մի բան էր, սակայն ի վերջո մեր օջախն էր, մեր աշխատեղին: 54 օթյակ ուներ: Սակայն այդ 54 օթյակներից 53-ը տրամադրել էինք կառավարական պաշտոն-

յաններին: Միայն մեկը կարող էինք վաճառել: Այլևս հասկացեք, թե թատրոնի վիճակն ինչ էր:

Ուրբաթ և կիրակի օրերը սկսեցինք ամառային ներկայացումներ տալ: Հայտարարությունները ես էի գրում և դրա համար շաբաթական 30 դուրուշ էի ստանում: Այդ գումարով էլ հազիվ տանս վարձն էի կարողանում տալ: Մի օր ասացին, թե հայտարարությունները այլևս ես չեմ գրելու, քանի որ թատրոնից փող էի վաստակում: Իրականում դուրսը մնացած Յալտրզճյանը շատ աղքատ վիճակի մեջ էր: Օգնելու նպատակով որոշել էին հայտարարությունները նրան գրել տալ:

Այս որոշման դեմ բողոքեցի: Գնացի Մնակյանի մոտ և ասացի.

- Կամակոր մի պատմության պատճառով թատերախմբից դուրս նետված մի ընկերոջ օգնելու նպատակով իմ եկամուտը կտրելու որոշում կայացրիք: Ի՞նչ իրավունքով: Ես էլ երեխաների տեր եմ: Դրանով հանդերձ, խնդրեմ, ահա ձեզ երկու մեջիդիե եմ տալիս, իսկ դուք այդ խեղճ դերասանին ի՞նչ եք տալիս, չէ որ նա իրականում ավելի շատ ձեր ընկերն է: Ինչո՞ւ չեք օգնում:

Այս խոսքերս Մնակյանին դուր չեկան: Սակայն, եթե ճիշտն ասեմ՝ այդ 30 դուրուշը ինձ համար մեծ արժեք չունեի, սակայն վաղուց ծրագրած մի որոշման առաջին քայլն անելու համար այդ բանը առիթ էի դարձրել: Հարցը հրահրեցի, որքան կարող էի: Վերջապես Մնակյանին ասացի.

- Այստեղ ինձ նման ընտանիքի, երեխաների տեր մի քանի մարդ կա: Թույլ տուր, ութ-տասը հոգու ընտրեմ, քո ղեկավարությամբ մի փոքրիկ կատակերգական թատերախումբ ստեղծեմ: Մենք ներկայացումները կտանք ուրբաթ և կիրակի օրերից բացի մյուս օրերը այն վայրերում, որտեղ բուն թատերախումբը ներկայացումներ չի տալիս: Զեզ կտանք արդյունքի հարթուրից հինգ տոկոսը, որպես երկերի իրավունք, քանի որ ձեր խաղացանկի կատակերգություններն ենք խաղալու:

Մնակյանը համաձայնվեց: Ես իսկույն անցա գործի:

Այդ ժամանակ իմ առաջարկի խմբում առաջացրած արձագանքների առիթով ուզում եմ մեջ բերել Մնակյանի ինձ ասած մի քանի խոսքերը: Օրեր անց Մնակյանը ասաց.

- Թատերախումբ եմ ստեղծելու, ասում էիր, ո՞ւր է:

Նա հաճախ էր կրկնում այդ միտքը: Դրանով էլ ուզում էր ասել, որ ես ոչ մի բան ձեռնարկելու ուժ չունեմ: Դրա համար էլ խմբի կառավարիչ Արամին քաշեցի մի կողմ, առաջարկեցի վարձել Մյուհուրդարի թատրոնը:

Առաջին ներկայացումը տվի Պինենճյանի, Հոլասի, Չոպանյանի, Շա-

էր փոփել, ուշագնաց եղել: Անշուշտ, սա բնական մի վախճան էր, որովհետև հուշարարը խուլ լինելով գլխի չի ընկել, թե ինչ է ասում Իհսանը: Կարծելով, թե իր ասածներն է կրկնում, վարագույրը փակել չի տվել: Այս պատմությունը տարիներ շարունակ պատմում էինք մեր շրջանակում:

* * *

Պատրաստվում էինք երկրորդ ներկայացումը տալ Բաքրբեյում: Ես մի օր զբոսնելու նպատակով քայլեցի մինչև Չամլըճայի Լիքադեն: Այստեղ կազինոյում պարում էր թուխ, դեմքը տգեղ, սակայն մարմինը գեղեցիկ մի կին: Երևում էր, որ տաղանդավոր մի պարուհի լինելու կոչված կին էր: Իսկույն անցա բանակցության: Անունը Քամելա էր, իսկ ամուսինը ջութակ էր նվագում, անունը՝ Մանդիլի: Երկուսին յուրաքանչյուր գիշերվա համար ութը մեջիդիե վճարելու խոստումով վարձեցի: Բաքրբեյում իմ տված երեք գործողությամբ կատակերգությունների ընդմիջումներին Քամելան պարում էր: Բոլորը հիացել էին նրա պարով: Ծափերից թատերասրահը թնդում էր: Այդ գիշեր 24 ոսկի հասույթ ունեցանք:

Բոլոր ընկերներս շատ գոհ էին մնացել թե՛ հասույթից, և թե՛ այդպիսի մի պարուհու մեզ հետ կապելու իմ նախաձեռնությունից: Այլևս բոլորը, անգամ Մնակյանի տղան Արամն ու նրա կինը՝ Ազնիվը, ամուր կապերով կապվել էինք միմյանց հետ և կազմել յուրահատուկ խումբ: Մենք, կատակերգուներս, որոշել էինք մեր մեջ ոչ մի ուրիշի, մասնավորապես ողբերգուների չվերցնել: Անգամ ֆիգուրանտ դերերն էլ հանձն էինք առել կատարել: Դրանով հանդերձ, ողբերգուների՝ որևէ ընդհանրացում, մասնավորապես Մնակյանի նկատողությանը չարժանանալու համար, գիշերը հենց որ խաղը վերջանում էր, Բաքրբեյի ասփերից նստում էինք Դոլմաբահչե մեկնող նավակը, գնում էինք Կաղը գյուղ, բոլորից շատ էինք լինում փորձերին:

Դրանով էլ ոչ մեկի դժգոհությանը առիթ չէինք տալիս: Բաքրբեյում երրորդ ներկայացմանը 44 ոսկի, չորրորդ ներկայացմանն էլ 54 ոսկի հասույթ ունեցանք: Եվ այսպես շարունակվեց:

Քամելայի համբավը տարածվեց ամբողջ Պոլսով մեկ: Այդ կինը արդարև նշանավոր պարուհի էր: Հետագայում ֆրանսիացիները վերցրել Փարիզ էին տարել նրան: Այնտեղ տարիներ շարունակ Փարիզի ժողովրդի ծափերին էր արժանացել և վերջում էլ, այնտեղ խոր ծերության մեջ վախճանվել:

Քամելան, ուր որ գնում էինք, իր հետ վերցնում էր մի կին, և մի լազան: Պարից առաջ փակվում էր իր սենյակում և այդ կնոջը ժամեր շարունակ

սպունգով մերսել էր տալիս մարմինը: Հազում էր շատ գեղեցիկ զգեստներ, այդպես բեմ էր դուրս գալիս և կատարում հատվածներ աշխարհի տարբեր երկրների բալետներից: Իսկ դա մի հրաշք էր: Քամելայի ոտքերը ծայրեծայր մի վայելք էին: Նրա շնորհիվ մենք ուր որ գնացինք Ռամազանի գիշերների չափ եկամուտ ունեցանք: Փողերը մեր գրպանից դուրս էր հորդում: Արդեն ողբերգակ դերասանները սկսել էին մեզ խեթ խեթ նայել, դեմքերը կախել: Տիկին Հեթիմյանը մի օր ինձ մի անկյուն քարշ տվեց և ասաց.

- Ֆեհիմ էֆենդի, ինչո՞ւ մեզ էլ ձեր խմբի մեջ չեք ընդունում:

- Աման, տիկին, դա ձեզ հարմար գործ չէ, - ասացի, - օրինակ՝ «Փունջինելլա» կատակերգությունում աղախին Կոլոմբիայի դերը եթե ձեզ տամ, կխաղա՞ք:

Նա իսկույն, անշուշտ բռնազբոսիկ պատասխանեց.

- Ինչու պիտի չխաղամ: Փող չկա՞:

Անշուշտ ասածը չկատարեց: Այսպես սկսվեց ասեկոսների մի շրջան: Մենք տալը դերասաններով մեծ նվիրվածությամբ կապվել էինք միմյանց հետ: Շաբաթազխիսի հարյուրից հինգ տոկոսի իրավունքը եղող հինգ ոսկին տարել հանձնել էի Մնակյանին: Այդ փողը հենց որ տեսավ, ուրախացավ.

- Նշանակում է դուք այդքան մեծ գործ եք անում, - ասաց:

Ճիշտն ասած այդ խոսքը մի քիչ վախեցրեց ինձ: Նա օրերով նստեց, չկերավ, չքնեց, խմեց... խմեց և լարեց, և վերջապես ցանկացավ խափանել մեր գործը: Արամը, Շահինյանը, Պինեմեճյանը գնացին, աղաչեցին: Վռնդեց նրանց: Եկան և ասացին ինձ՝ քեզնից զատ ոչ ոք չի կարող նրան խոսք հասկացնել:

Վեր կացա և գնացի նրա տուն: Կինն ասաց, թե հուշարար Գևորգի տանը խմում է: Գնացի Գևորգի տուն: Իմ աստիճաններով բարձրանալիս՝ նա էլ իջել էր և պատրաստվում էր մեկնել:

- Ես էլ ձեզ մոտ էի եկել, - ասացի:

Դեմքը թթվեցրեց. - Բայց ես քեզ չեմ կանչել, - ասաց:

- Բայց ես այցի եմ եկել, - պատասխանեցի:

Նա կրկին բղավեց ու գնաց: Իրենն էր պնդում: Ասաց.

- Քամելայի նման պարուհիներին խաղացնելուց հետո չեն կարող իմ բեմում խաղալ: Թող գործը քանդեն, ես ֆիրման վերցնում եմ:

Սկսեցինք նամակներ գրել: Բոլորին հակառակ պատասխան էր տալիս: Վերջապես Հոլասը, Պինեմեճյանը, Արամը, Ազնիվը, Չոպանյանը միացան, բանակցեցին և որոշեցին ներկայացումներն իմ անունով տալ:

Քնարը այս պայքարի ընթացքում Մնակյանի կողմն անցավ, իսկ մեր խմբին միացան Հուլուսին, Գևորգը և Հերմինեն: Մի մարմին էինք դարձել:

Ես, նախօրոք գուշակելով Մնակյանի կողմից գալիք վտանգը, բոլորի աշխատավարձից որոշ գումար ետ պահելով՝ 65 ոսկով Քամելային էի հրավիրել: Հենց այդ գումարն էլ վկայում էր պարուհու արժեքը, քանի որ այդ տարիներին նման մի աշխատավարձի ոչ ոք չէր արժանեցել:



Մանեղ Վեֆիկ փաշա

ՄԱՍ 12

«ԱՀՄԵԴ ՖԵՀԻՄ» ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ

ԿԵԴԻԿ ՓԱՇԱՅԻ ԵՎ ԲՈՒՐՍԱՅԻ ԹԱՏՐՈՆՆԵՐԸ. ՄԱՆԱՍՐԻ ԹԱՏՐՈՆԸ. ԱՆՇՈՒՇՏ ՀԱՅԵՐԸ ԾՈՎԱՀԵՆՈՒԹՅԱՆ ԲԵՄՈՒՄ ՖՐԱՆՍԻԱՅԻՆԵՐԻՑ ԱՎԵԼԻ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՈՒՆԵՆՈՒՄ. ՍՈՎԱԾՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԵՌՆՈՂՆԵՐԸ. ՍԵԼԱՆԻԿՈՒՄ ԳՈՐԾՈՒՄ Ե ԽԱԲԵՈՒԹՅԱՆ ՄԵՔԵՆԱ

Այլևս ցանկացած գործ ձեռնարկելու վիճակում էի: Համաձայնության եկա Մալոնիկից ժամանած մի հրեայի հետ և մեկնեցիք Սալոնիկ: Խումբը հենց փորձի համար թատրոն էր եկել: Դիրեկտոր Դիաքոն մոտս եկավ Քամելային ցույց տալով ասաց. - Այս տգեղ կնոջն ինչու՞ եք բերել: Նա առաջուց էլ այստեղ էր: Հավուզլու Քահվե սրճարանում երգում էր: Անունն էլ Ֆոքիքո է: Լսել եմ, որ Արաքիա է մեկնել, վերադարձին դարձել է Քամելա:

Չպատասխանեցի: Սպասեցի գիշերվան: Վարագույրը բացվեց: Երևաց Քամելան և սկսեց պարել: Հրեա Դիաքոն ապշել էր: Արդեն ամբողջ Սալոնիկի ժողովուրդը իրար էր անցել: Կաֆեշանտանների և բառերի տերերը Քամելային 120 ոսկի ամսական առաջարկելով ցանկացան մեզնից բաժանել, սակայն չկարողացան: Սալոնիկում ամենամեծ հասույթն էինք ստանում: Ապա հրավեր ստանալով մեկնեցիք Մանաստր: Ողորմածիկ Հուլուսին գնացքում եկավ ինձ մոտ և ասաց.

- Ֆեհիմ էֆենդին, երբ Մանաստրում իջնենք, կանանց բոլորին ցույց չտանք, թե չէ գործներս լավ չի գնա: Ազնիվի ետևում թող թաքնվեն Քեյֆլի Մարին և Հերմինեն, տիկին Պինեմենյանի թիկունքում էլ մյուսները: Թող չերևան այդպես: Չմոռանաս պատվիրել: Այդ խոսքերի վրա ծիծաղեցի, սակայն Հուլուսին իրավացի էր:

Մանաստրում մարշալ Քերիմ փաշայի կառուցած թատրոնում խաղացիք: Թատրոնը շատ գեղեցիկ էր: Փաշան այն կառուցել էր քաղաքին սպասարկելու նպատակով: Իսկապես էլ, բռնապետության շրջանում Թուրքիայի ամեն կողմը մշակույթի մի կենտրոն էր հիմնվել և մի արվեստասեր փաշա էր գտնվում:

Սակայն, ուշադրությունս գրավողն այն էր, որ այս փաշաները, չհաշված Վեֆիկ փաշան, կառավարման ղեկի մոտ գտնված, իրենց քաղաքնե-

րում փակված, մոռացված մարդիկ էին:

Մանաստրում էլ սկսեցինք նույն բարձր հասույթը ստանալ:

Մի գիշեր «Երկու որբերը» խաղացինք: Հաջորդ օրը մի քանի հոգով գնացինք սրճարան: Մեր մոտի սեղանին նստած մարդկանց զրույցն ունկնդրեցինք: Մեկը խեղճ Քեյֆլի Մարիի մասին ասում էր. – Այդ կինը ո՞վ է, դժոխքի դռանը կուպր ծախող է:

Չկարողացանք մեզ զսպել և ծիծաղեցինք: Ընկերներին մեջ, ըստ ամենայնի ազնիվ սրտով, ուրախ մարդիկ կային: Օրինակ՝ Չոպանյանը շատ խելամիտ մարդ էր: Նա բոլորի համար վազում էր դես ու դեն, կերակուրներ էր պատրաստում, ուղեկցում էր կանանց՝ որևէ տեղ գնալիս, հարդարում էր բեմը, հետո՝ գիտակցաբար կամ անգիտակցաբար տարօրինակ բաներ էր ասում:

Մի օր Մանաստրում, ոստիկանապետի սենյակում նստել էինք: Խոսք բացվեց Սալոնիկում դոկտոր Վանդերիուսի ոգեհարցական և հեռագրացության (տելեպատիա) փորձերի մասին: Ոստիկանապետն ասաց.

- Երևի այդ մարդը սենջի (սևամորթ) է եղել:

Չոպանյանը մեծ վստահությամբ պատասխանեց.

- Այո, էֆենդի, զենգին է (հարուստ) եղել, «սենջի սևամորթ» բառը հասկանալով «զենգին՝ հարուստ»: Ապա շարունակեց. – Նա հարուստ չլիներ, մե՞նք պիտի լինեինք:

Ոստիկանապետը սեղանին դրված թղթերը հավաքեց և ծիծաղը թաքցնելու համար դեմքը ծածկեց:

Չոպանյանը Սալոնիկում սրա նման մի դեպք էլ էր ունեցել: Իքիլի Մահմուդ Նեջիմը եկել տեղավորվել էր Սալոնիկում: Մենք, նրա տանը հավաքված, զվարճանում էինք: Մի օր խոսք բացվեց Մեծ Պենկյանի Եգիպտոսում ունեցած հաջողություններից: Ֆրանսիական խմբի դիրեկտորը ասել է, թե «Ժիրոֆլե Ժիրոֆլյա» օպերետում Պենկյանը ծովահենների դերը ավելի լավ էր կատարում, քան բուն ծովահեններն են եղել:

- Անշուշտ հայերը բեմում ավելի լավ ծովահեններ են, քան ֆրանսիացիները, քանի որ նրանք սուվազեաններ են:

Չոպանյանն իսկույն վեր թռավ և հարձակվեց Իքիլի Մեհմեդի վրա, ասելով.

- Այո, հայերը գավազանակիրներ են, սակայն լավ արվեստագետներ են: Այդ բացատրությունն էլ մեզ շատ ծիծաղեցրեց:

* * *

Մանաստրում սկսվել էր սաստիկ մի ձմեռ: Սննդեղենը ամբողջովին սանել էր: Սովից և ցրտից մեռնողներ էին եղել:

Վալին հեռագրով Ստամբուլ էր հայտնել, թե ջերմաստիճանը մինչև 24 է իջել: Այս լուրը հայտնելուց հետո քաղաք ժամանած մի սպա հայտնել է թե 34-35-ի է իջել: Մենք օրերով մի յուրոտ սիմիթով և ընկույզով ապրեցինք: Կյանքում այդպիսի սաստիկ ձմեռ չէի տեսել:

Գործերը իսկույն ավարտեցինք և Սալոնիկի ճամփան բռնեցինք: Ճանապարհին գտնվող բոլոր ծառերը կտրել էին: Երբ հասանք Վողինա կայարանը, եղանակի փոփոխություն նկատեցինք: Անգամ զամբյուղներով խաղող էր վաճառվում: Չարմացել էինք օղի նման փոփոխության հանդիպելով:

Հասանք Սալոնիկ: Մեզ եղած խնդրանքին ընդառաջելով՝ վարիետեյի սրահում երկու- երեք ներկայացում տվեցինք, ապա վերադարձանք Ստամբուլ:

Ես քաշվեցի իմ անկյունը: Ընկերներս էլ Քաղըքեյի իրենց տներում իբր թե հանգստանում էին: Ես այդպես էի կարծել: Մինչդեռ նրանք իրականում սեղանի շուրջ կերուխումի մեջ էին:

Մի օր, Սկյուտարում, Ստամբուլ նոր ժամանած Իքիլի Մեհմեդի հետ Շահինյանը եկան ինձ մոտ և իրազեկ պահեցին գաղտնի թակարդին և նրանց առաջին ժողովի որոշումներին: Պինեմենճյան ընտանիքը և նրանց համախոհները չէին ցանկացել, որ խումբը ներկայացումներ տա իմ անվան ցուցանակով: Որոշել էին ինձ դիրեկտորությունից զրկել:

Այս բոլորը լավ, բայց գործը սկսելիս իմ անունը որպես խմբի ֆիրմա ընդունողներն էին, որ այժմ դեմ էին դուրս գալիս դրան: Ես չէ, որ խնդրել էի անել այդ բանը: Հիմա ինչու՞ էին գլուխ բարձրացրել և ուզում էին խանգարել գործին, մի՞թե իմ անունը արատավորված մարդու անուն էր, թե՞ դիրեկտորություն անելով իրենց որևէ վատություն էի արել:

Այս բոլորի բացատրությունը ուզում էի իմանալ իրենցից, բայց Մահմուդն ու Շահինյանը գտան, որ այնպես պետք է անեմ, որ իբր թե ոչնչից տեղեկություն չունեմ: Բայց ես չհանգստացա, քանի որ ինձ խփում էին սրտիցս, անձիս դեմ մի տեսակ մահափորձ էին պատրաստում:

Մեր հավաքի օրը հարցը բաց արեցի: Շատ խիստ և կտրուկ լեզու էի գործածել: Դրա վրա, միայն նախանձի և չկամության պատճառով այդ բանն անողները սկսեցին կատակի տալ, ջանալով խոսքս հարթեցնել:

Ես պնդեցի և «վարիչ Ահմեդ Ֆեհիմ»-ի մոտ Պինեմեճյան անվան հիշատակվելուն համաձայնել տվի բոլորին:

Մեզ արված առաջարկի վրա Բուրսա գնացինք, անշուշտ ինչպես որ կայինք, առանց որևէ փոփոխության: Քամելան էլ մեզ հետ էր:

Սկսեցինք ներկայացումները Վեֆիկ փաշայի թատրոնում: Այդ թատրոնը դարձել էր ավերակ: Արդեն փաշայի պաշտոնանկությունից հետո նրա հակառորդները որքան կարողացել էին, քանդել էին թատրոնը: Ահա այդ փլված վիճակում էլ շարունակում էր մնալ: Փաշայի ժամանակից դեկորատոր Շիշեճյանի պատրաստած դեկորներից հետք չէր մնացել: Դրա համար էլ հարկադրված էինք եղել Բուրսա դեկորներ տանել: Մի խոսքով՝ Բուրսայի թատրոնի այդ քարուքանդ վիճակը ինձ հիշեցնում էր Կեդիկ փաշայի թատրոնը: Ես այդ երկու թատրոնները երկու սպանությունների էի նմանեցնում:

Կեդիկ փաշան մահվան էր դատապարտվել միանգամից, Բուրսայի թատրոնը աստիճանաբար էր մեռնում:

Թատերական այս երկու օջախների նկատմամբ ես հատուկ հարգանք ունեի, միշտ աչքերս քացացնող մի հարգանք: Ինչ որ է:

Գործերը վատ չէին գնում: Բուրսայում ամենից բարձր հասությն էինք ունենում: Սուլեյման Նազիֆ բեյը դեռ փոստի աշպխատող էր: Ինձ կանչեց իր մոտ: Ինձ կրկին գրություններ պատվիրեց, աճուրդի դրեց և կրկին նույն օգնությունը ցույց տվեց: Նրան երախտապարտ էի:

Բուրսայի գործն ավարտելուց հետո վերադարձանք Ստամբուլ: Ես կրկին քաշվեցի Սկյուտարի անկյունս, իսկ մյուսները Կադը գյուղում մի քիչ շունչ առնելուց հետո, կրկին սկսել էին իրենց խարդախության մեքենայի գլուխն անցնել: Ես անտեղյակ ամեն ինչից, հանգստի սուրճս խմելիս՝ նրանք տեսակցել էին Մնակյանի հետ, հաշտվել, ամեն ինչ կարգավորել: Ամենից առաջ ցրել էին մեր փոքրիկ խումբը, սակայն խղճացել էին, և ինձ ակնհայտորեն դուրս չէին թողել:



ՎՈՂԵՎԻԼՆԵՐ ՊՈԼՍԻ ԲԵՄՈՒՄ. ՄՆԱԿՅԱՆԻ ՈՏՔԻ ԿՈՏՐՎԵԼԸ. ԱՀՄԵԴ ՎԵՖԻԿ ՓԱՇԱՅԻ ԿՈՐԱԾ ԵՐԿԵՐԸ. ՌԵՇԱՏ ՌԸՏՎԱՆ ԲԵՅԻ ՊԻԵՄՆԵՐԸ. ԻԲՆ ՈՒՐՐԵՖԻԿ ԱՀՄԵԴ ՆՈՒՐԻ ԲԵՅԸ

Չամբօօղլուի թատրոնը մեր ձեռքից գնալու վրա էր: Միայն երեքշաբթի գիշերները տրվեց Շեվքիի թատերախմբին: Թատրոնի վերջին օրերից ինչ-որ պոկեիմք՝ շահ էր:

Մենք էլ թատերաշրջանը Բաքրբեյում բացեցինք: Բոլորս հավաքվել էինք Մնակյանի դրոշի տակ և աշխատում էինք վերակենդանացնել մեր հին արվեստը: Քամելան բաժանվեց մեզմից: Այդ բանը լինելու էր, քանի որ Մնակյանը թքածը լիզել չուզելով՝ մեզ հետ կրկին միավորվելու համաձայնվել էր այն պայմանով, որ Քամելան դուրս մնա:

Դրանով հանդերձ, Քամելան Մնակյանի ամբողջ խմբից բարձր էր: Արվեստում մեծ շրջադարձ էր անում, մինչդեռ մենք հետամնացների պես չորս ձեռքերով կպել էինք մելոդրամներին:

Մի գիշեր, Բաքրբեյում, մելոդրամայից հետո, ես սկսել էի մեկ գործողությանը կատակերգություն խաղալ: Այդ ժամանակամիջոցում Մնակյանը գնացել էր բուֆետ, խմել էր, ապա դեպի բեմը գալու ժամանակ մթության մեջ ճամփան կորցրել, պատից ցած ընկնելով՝ ոտքը կոտրել էր:

Լուրը իսկույն հասավ պարտեր և բեմ: Այդ գիշեր Մնակյանին առաջին օգնություն ցույց տրվեց, իսկ հաջորդ օրը տարան Հայոց ազգային հիվանդանոց: Ոտքերը գիպսի մեջ դրին: Ամիսներով մնաց բժիշկ Չարդարյանի խնամքի տակ, չկարողացավ անկողնուց վեր կենալ:

Ռամազանը եկել էր: Մնակյանի անունով ընկերության ներքո սկսեցինք ներկայացումները Շահադեբաշիում, Ֆերահ թատրոնում: Ռամազանի 25-ի գիշերը Մնակյանի օգտին մի ներկայացում տվինք: Հիմա արդեն ձեռնափայտով կարողանում էր քայլել: Այդ գիշեր «Խաղամուլի վախճանը» դրամայում երկու հոգու թևերը մտնելով Չորջիոյի հոր դերը կատարեց: Դերը փոքրիկ էր: Լավ ծափահարվեց: Այդ գիշեր հավաքված 200 ոսկին տրվեց իրեն: Արդեն հասությանց

էլ իր բաժինը ստանում էր: Դրանով հանդերձ՝ օգնության կարոտ էր: Մնակյանի ոտքի կոտրվելը թատերասերների շրջանակներում անհանգստություն և հուզում էր առաջացրել: Մի գիշեր Սուլթանահմեդում գտնվող մի պալատում ընթրիքի էի հրավիրվել: Հյուրերի մեջ էին նաև Թեշրֆատջը Սատրզ բեյը և «Մայումաթ» թերթի խմբագիր Թահիր բեյը: Իմ այնտեղ լինելը առիթ տվեց թատրոնի հետ կապված հարցերի հրահրման:

Սատրզ բեյը, պիեսներ էր գրում, սիրում էր լինել դերասանների հետ: Իսկ Թահիր բեյը մոլեռանդ թատերասեր էր: Մնակյանի խոսքը բաց անելով երկուսն էլ հայտնեցին իրենց մտահոգությունը: Եվ դա արդարացի մտահոգություն էր: Մնակյանի հեռանալը բեմից, մելոդրամի ժանրի մահն էր նշանակում: Վեճեր եղան: Ի վերջո սկսեցի խոսել Ֆասուլաճյանի մասին: Ներկաներին այն հետաքրքրեց: Վերջում ասացի.

- Դուք բոլորդ ճանաչված մարդիկ եք: Որքան լավ պիտի լինի, եթե ջանք թափեք, և Ֆասուլաճյանին Եգիպտոսից բերել տաք այստեղ: Վեֆիկ փաշայի բոլոր երկերը նրա մոտ են, մանավանդ որ դրանց մեծ մասն էլ անտիպ է: Շատ օգտակար պիտի լինի:

Բոլորն էլ խոստացան օժանդակել, սակայն ափսոս, այն որպես խոսք էլ մնաց: Խեղճ Ֆասուլաճյանը նույն տարում, Եգիպտոսում մեծ թշվառության և անօգնական վիճակում վախճանվեց: Նրա մոտ եղող սնտուկը վերցվել էր Եգիպտոսի Հայոց եկեղեցու կողմից, բայց ափսոս, որ պարունակությունը ոչնչացվել էր:

Վեֆիկ փաշան՝ բացի Մոլիերից ուներ մի շարք թարգմանություններ, ինչպես «Խաղացողին մի խաղ»-ի նման փոքր ու մեծ մենախոսություններ: Գերմանացի իշխան Վիլիելմը երբ Բուրսա եկավ, Ահմեդ Վեֆիկը չափածո թարգմանեց Շիլլերի «Ավագակներ»-ը: Մոլիերից էլ թարգմանեց «Պճնամուկները», և մենք ներկայացրինք: Սրանք բոլորը ոչնչացած երկերի մեջ էին: Դա թուրքական բեմի համար մեծ կորուստ էր: Մեր տերական գրադարանի համար էլ մի մեծ պակաս:

* * *

Չմեռը սկսվել էր: Մնակյանը դեռ կաղում էր: Այս ու այն տեղ մերթ ընդ մերթ ներկայացումներ էինք տալիս, սակայն հազիվ հաց ու պանրի փող էինք վաստակում:

Մի օր Արամը եկավ մեր տուն:

- Հայրս բարևում է, ասաց թե վարիտեություն իր օգտին ուզում է մի ներկայացում տալ: Կխաղա՞ս:

Առաջարկը հաճույքով ընդունեցի, սակայն Ալեքսանյանը և Հուլասը Կաղը գյուղում այս առաջարկի առիթով դռնե դուռ ման գալով փրփրել էին:

- Մենք այդ մարդու գերիներն ենք: Ներկայացումները խաղում ենք, բաժինը տալիս ենք: Կարծեք դա քիչ է, մեկ էլ նպաստ է ուզում: Մեր ի՞նչ գործն է, որ ոտքը կոտրվել է, - ասել են:

Մնակյանը երևի լսել էր այդ բանը, սաստիկ ազդվել, սակայն անաղմուկ, հայտնի հայերի աջակցությամբ Պերայում, Հալեպ Չարշե-ում, Վարիտեություն նպաստի ներկայացում էր տվել: Գիշերը, ներկայացումից հետո, անշուշտ երկուսս էլ մնալու էինք հյուրանոցում: Մնակյանն ինձ հարցրեց.

- Բո գիշերելիք հյուրանոցում անկողին կա՞:

- Անշուշտ պիտի լինի, - ասացի:

- Բեզ մի բան եմ ասելու, - ասաց և մտնելով թևս գնացինք հյուրանոց: Երկու անկողինով սենյակ գտանք: Մնակյանը շատ գրուցողի տեսք ընդունելով սկսեց.

- Որդիս, ես քեզ շատ երախտապարտ եմ: Այս գիշեր հայ մեծամեծները առաջարկեցին վարիտեություն վողևիլի մի շրջան սկսել: Օթյակների բոլոր տոմսերը, ամբողջ թատերաշրջանի համար հայ հարուստներին հենց իրենք են վաճառելու: Բաժանորդագրություն են բացելու: Աշխատելու են, որպեսզի մեզ համար մեծ շահույթ ապահովեն: Անշուշտ դու էլ լինելու ես իմ առաջին օգնականը: Առհասարակ, այս վողևիլի գործին մասնակից չեմ դարձնելու ապերախտ Ալեքսանյանին և Հուլասին:

- Չեր գործն է, - ասացի: - Գործի ղեկավարը դուք եք, ինչպես ցանկանաք, այնպես էլ կարող եք անել:

Ասածի պես արեց: Պիեր Հակոբյան անունով մի հայի օժանդակությամբ և ջանքերով բացեցինք վարիտեյի թատերաշրջանը: Սկսեցինք Ռեշատ Ռըղվանի և Օսման Նուրիի թարգմանած երեք գործողությամբ վողևիլներով:

Այս նոր միջոցառումը ընդարձակել էր թատրոնի շրջանակը և մեծ հետաքրքրություն առաջացրել: Առաջին վողևիլը «Մաղամ Մոնգողին» էր: Հիմա ես արդեն կարգին բարձրացել, անուն էի հանել, կենտրոնական դերեր էի խաղում: Երկրորդական կարգի դերերն էլ խաղում էին Ռուբեն Պիրեր էի խաղում: Երկրորդական կարգի դերերն էլ խաղում էին Ռուբեն Պիրերն էին խաղում: Երկրորդական կարգի դերերն էլ խաղում էին Ռուբեն Պիրերն էին խաղում: Երկրորդական կարգի դերերն էլ խաղում էին Ռուբեն Պիրերն էին խաղում: Երկրորդական կարգի դերերն էլ խաղում էին Ռուբեն Պիրերն էին խաղում:

վողևիլների ամենից փնտրված դեմքը:

Այդ թատերաշրջանում մեր ներկայացրած գործերից էին «Դյուրան-Դյուրան»-ը, «Ընտանեկան երջանկությունը», «Երեք գլխարկ», «Արձակուրդային զվարճություններ» և այլ վողևիլներ: Սրանցից վերջինը մեծ հետաքրքրություն էր առաջացրել և քանիցս այն կրկնեցինք:

Մի գիշեր Պիեր Հակոբյանը որոշել էր եկամտի ավելացած գումարից ստացված քսանինը ոսկին բաժանել առավել սիրված դերասաններին:

Մի քանի հայ երիտասարդներ միանալով այդ ցանկությանը ցանկացել են փողը բաժանել և ցուցակը ուղարկել Մնակյանին:

Այդ ցուցակով Մնակյանն ինձ համար նախատեսել էր երկու, Պինեմեն-յանի համար հինգ, Հեքիմյանի համար հինգ, մի ուրիշին՝ 6, իրեն էլ 10 ոսկի էր նշել: Նախաձեռնող դերասանները զայրացել էին և պատռել, դեն էին գցել ցուցակը, ասելով, թե՝ «դա ծիծաղելի մի բաժանում է: Որ այդ գործի գլխավոր դերակատարը Ֆեհիմ էֆենդին է, ուստի ամենամեծ բաժինը իրեն պետք է տալ: Պարզվում է մեր աչքերն ավելի ճիշտ են տեսնում»: Քիչ անց բեմ եկան, ինձ շնորհակալություն հայտնեցին, գովեցին և 12 ոսկի տվեցին, իսկ մյուսներին երկուական ոսկի բաժանեցին:

Այդ գիշեր ներկայացում չունեինք: Թեփերաշիում, Ամֆիթատրոնում ֆրանսիական մի խումբ ցուցադրում էր «Արձակուրդի զվարճությունները»: Ռեժատ Ռեդվանը և Իբնու Բեֆիկ Ահմեդը, որը նոր էին սկսել թատրոն գալ ու գնալ, և որի հետ Մնակյանի միջոցով Կադը գյուղում էինք ծանոթացել, գնացինք:

Ֆրանսիական խումբը շատ վատ էր խաղում, փչացնում էին վողևիլը: Երկու ընկերներով էլ զայրացել էին, Ռեժատին հարցրի.

- Եթե ես այդպես խաղայի, ի՞նչ կանեիր:
Ռեժատ Ռեդվանը, որ մի քիչ ազատ խոսող մարդ էր, առանց մտածելու ասաց.

- Ձեռնափայտը գլխիդ վրա կկտորեի:
Նրա այս խոսքն ինձ դուր չեկավ, ցանկացա, որ բացատրի միտքը: Ներկայացման ժամանակ չցանկանալով վեճի բռնվել, միասին «Լոնդոն» զարեջրատուն գնացինք, որը մեր հավաքատեղին էր արդեն: Ռեժատին ասացի.

- Թատրոնում մի մեծ անքաղաքավարություն թույլ տվեցիր, ի՞նչ իրավունքով: Այդ խոսքը եթե Պիեր Հակոբյանն ասեր չէի զարմանա, քանի որ տես՝ այս գիշեր 12 ոսկի նվեր տվեցին ինձ: Ձեր ի՞նչն են տեսել:

Ռեժատ Ռեդվանը ծիծաղելով պատասխանեց.

- Ես քեզ բոլորից ավելի եմ հավանում: Վաղը Շթեյնի Օննիկի մոտ անցիր, շորերդ վերցրու:

Ամաչեցի:

Հաջորդ օրը գնացի Շթեյնի խանութը: Իսկապես որ ինձ համար երեք ձեռք կոստյում, մեկ թավշյա օձիքով պիժամա և հինգ շքեղ ժիլետ էր պատրաստել տվել: Վերցրի: Դրա համար այդ կրակոտ թուրք թատերասերին մինչևս մահս շնորհակալ եմ մնալու:

ՖԻԼՄԱԿԱՆ ՀԱՅՏՆԻ ԵՐԿԵՐԸ ԹՈՒՐԲԱԿԱՆ ԲԵՄՈՒՄ ԱՐԳԵԼՎՈՒՄ ԵՆ ՎՈՂԵՎԻԼՆԵՐԸ ՆՈՐ ՖԻԼՄ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ. ԱԹԵՆՔԻՑ ԵԿՈՂ ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԸ. ՊԻՆԵՄԵՃՅԱՆԸ ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ԽԱՂԱԸ. ԵՐԿՈՒ ԹՈՒՐԲ ԴԵՐԱՍԱՆ

Վարիտեռի թատերաշրջանն ավարտվեց, սակայն այնքան էլ հաճելի ազդեցություն չէր թողել:

Հրապարակը պայթեցրած համատարած աղմուկի դեմ Մնակյանն իրավացիորեն անհանգստություն ցուցաբերեց: Չոպանյանին վերցրեց մոտը: Միջնորդներ փնտրեց: Տպագրական գրաքննչության Վեհբի բեյին դիմումներ ուղղելով, առաջարկեց արգելել վողևիլները: Վարչության պետ Վեհներ ուղղելով, առաջարկեց արգելել վողևիլները: Վարչության պետ Վեհներ ուղղելով, առաջարկեց արգելել վողևիլները: Վարչության պետ Վեհներ ուղղելով, առաջարկեց արգելել վողևիլները:

Ասացի թե Մնակյանն իրավացի էր: Քանի որ ինքը վողևիլներում ամենևին անելիք չունեի, իսկ մելոդրամներում աստվածային վարպետություն ունեցող այդ մարդը որևէ վողևիլում կարող էր լուր երրորդական, չորրորդական դեր կատարել: Սա իրականություն էր:

Այո, այդ բանն իր հաշվով արդարացի գտա, բայց իմ հաշվով շատ մղկտացի: Նոր ծագող արևը միանգամից մայր էր մտնում: Բախտս կրկին սևանում էր:

Կրկին սկսեցինք հնացած մելոդրամներ խաղալ: Եկավ Ռամազանը: Այս անգամ ժամանակը մոռացնել էր տվել վողևիլը: Ես, իմ համախոհներ-

րով անցա աշխատանքի: Ռ-ամազանի մեջ վողևիլ ներկայացնելու թույլտվություն ձեռք բերի: Իբր թե տեղյակ չլինելով, որ, Մնակյանն էր պատճառ դարձել վողևիլների արգելքին, ուրախ ուրախ լուրը նրան հայտնեցի: Սակայն նա շրթները կծեց և ասաց.

- Հրաժարվիր, տղաս: Հրաժարվիր, - և հարցն անորոշ թողեց:

Ռ-ամազանից հետո խումբը պատրաստվել էր Ռ-ողոստո մեկնել: Մնակյանին հայտնեցի, թե պիտի չկարողանամ գալ:

- Լավ չես անում, - ասաց:

- Մեր տեսակետների միջև շատ տարբերություն կա, - ասացի:



Մարի Նվարդ

«ԱՀՄԵԴ ՖԵՀԻՄ» ՆՈՐ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ

Վարձակալ Դրակոն Մեհմեդ էֆենդիից վարձեցի Ֆերրահ թատրոնը, սակայն բեմում որպես դեկոր մի սպիտակ պաստառ անգամ չկար: Մնակյանականներն իմանալով իմ նպատակը, ինձ հակառակ, բոլոր դեկորները վերցրել, իրենց հետ տարել էին:

Ձեռնարկեցի խմբիս ձևակերպման գործը: Ռ-ողոստո չմեկնողներից ինձ հետ վերցրի Պինեմենճյանին, Շահինյանին, Թոլայանին, հուշարար Արշակին, տիկին Հեքիմյանին, տիկին Պինեմենճյանին, Օրթա օյունում խաղացողներ Քեմալ էֆենդիին, Ուզունչարշըրը Ալի էֆենդիին, Արշակի տիկնոջը, Բաքրգյուղցի Մարիին, Արաքսի Շահինյանի եղբորը:

Շատ գեղեցիկ մի խումբ դարձավ: Հատկապես թուրքերի համար բաց էի արել ճշմարիտ թատրոնի դռները: Իբնուրբեֆիկ Ահմեդ Նուրի բեյն ինձ համար թարգմանեց Էոժեն Լաբիշի նշանավոր «Մ.Պերիշոնի ճանապարհորդությունը»: Միաժամանակ «Բանաստեղծը» վերնագրով մեկ գործողությամբ մի կատակերգություն պատրաստեց:

Ես էլ թևերս բշտեցի, 17 օր աշխատեցի Ֆերրահ թատրոնի բեմում: Մի կողմից դեկորներ էի պատրաստում, մյուս կողմից էլ՝ պիեսների փորձերն էի կատարում: 18-րդ օրը երեկոյան, Ֆերրահի դռները բացվեցին և թատրոնը ԼԳՎԵԳ: Բացվեց վարագույրը: Բեմը մաքուր և գեղեցիկ էր:

Հենց որ ես բեմ մտա, - չեմ չափազանցնում, - հինգ լույս տևող մի ծափահարություն պայթեց: Հուզումից սիրտս սեղմվեց: Քիչ էր մնում ուշագնաց ընկնեի: Մեր թատրոնի պատմության մեջ շրջադարձ հանդիսացող գիշերը սկզբից մինչև վերջ խանդավառ մթնոլորտում անցավ:

Լաբիշի «Պերիշոնի ճանապարհորդությունը» ֆրանսիական կատակերգությունում մեծ հեղափոխություն արած գործ էր: Վերջին տարիներին Կոմեդի Ֆրանսեզն անգամ կատակերգությունն իր խաղացանկի մեջ մտցրեց: Այժմ Ֆերոդի նման մեծ արվեստագետն էր այն ներկայացնում:

Այդ գիշեր խաղի վերջում շատ հոգնած ուղիղ տուն գնացի, հաշվի գործը թողնելով Շահինյանին: Հաջորդ առավոտ Շահինյանը եկավ, ասաց, թե հասույթի հիսուր հինգ ոսկի է եղել: Դրագոն Մեհմեդը, հասույթի քսան հինգ տոկոսը վերցրել էր որպես թատրոնի վարձ: Խելքս չհասավ այդ հաշիվին: Գնացի Մեհմեդ էֆենդիի մոտ և ասացի:

- Ի՞նչ է նշանակում հարյուրին 25 տոկոս վարձ: Նա ձեռքիս մեջ սեղմեց 5 ոսկի և բազմիմաստ մի ակնարկով էլ ասաց. - Մուս մնա, գործ չունես:

Իսկույն հասկացա, թե բանը ինչու՞մն է: Հոնքերս պռստեցի:

- Ես այդպիսի գողություն չեմ ընդունի, թատրոնին որպես վարձ միայն 20 տոկոս կարող եմ տալ, - ասացի: Բոլորի իրավունքն էլ այդ է: Ասաց.

- Հոգիս, Ֆեհիմ էֆենդի, 2,5 ոսկի էլ Շահինյանին եմ տվել, ընդունեց, շատ մի երկարացնի գործը:

Դրա վրա ավելի զայրացա: Սկզբից գողությունը ինձ հուզել էր: Հաշիվը կրկին նայեցի, մի քանի ծանր խոսքեր էլ ասելով 25 ոսկին էլ Շահինյանի բաժնից ետ պահեցի,

«Բերիշոնի զվարճությունը» այդ շաբաթվա ընթացքում Պերայի վարիտենյուն խաղացինք: Մեծ տպավորություն թողեց: Աթենքից արքայական թատրոնի դերասանները եկել և նույն թատրոնում սկսել էին իրենց ներկայացումները: Նրանց խմբի ռեժիսորն էր Պանդոպուլոսը: Նա ինձ տեսել էր փորձերի ընթացքում և քանի որ իրենք էլ նույնն էին բեմադրելու, իմ մեծ հաջողությունը նրան մեծ զարմանք էր պատճառել: Դրա համար էլ մեր խաղացած գիշերը այդ պիեսի համար իրենց բերած բոլոր դեկորները տրամադրեցին ինձ:

Ես վարիտենյուն շաբաթը մեկ ներկայացում դրի: Մտերմացել էի Պանդոպուլոսի հետ: Հույն դերասանները շրջապատում էին ինձ և հետաքրքրությամբ դիտում: Մեկնելիս էլ, նրանք ինձ մի քանի վողկիլներ նվիրեցին:


Թե՛ վարիտենյուն և թե՛ Ֆերրահում մեր տված ներկայացումները գնալով աշխուժացել էին: Հուսով էի, որ եկամուտը լավ էր լինելու: Մի գիշեր Ֆերրահի իմ զարդասենյակում զբաղված էի դիմահարդարմամբ: Կից սենյակում էլ Պինեմենճյաններն ու Արշակի կինը հայերեն զրույցի են բռնվել: Ունկնդրեցի: Պինեմենճյանը պարծենում էր, թե խանգարելու է այդ գործը և արդեն որոշ բան արել է: Տրամադրությունս մի քիչ ընկավ, բայց իսկույն ինձ գտա, վարվեցի այնպես, իբր թե ոչնչից տեղեկություն չունեի:

Շեֆի խմբում Պինեմենճյանի իմ նկատմամբ ցուցաբերած տոգել արարքը չէի մոռացել, դրա համար էլ այդ խումբը ստեղծելիս աշխատել էի նրան չընդունել, սակայն ոստիկան Բամիլ էֆենդի անունով մի բարեկամի միջնորդությունն ու երաշխավոր լինելն ինձ երկընտրանքի մեջ էր զգել:

Օրեց օր սպասում էի ավերված խողովակից լսվելիք ձայնին:

Վերջապես երբ ամառը եկավ, Պինեմենճյանները և Շահինյանները ինձ թողեցին ու գնացին: Ես բոլորովին ինձ չկորցրեցի: Իմ բաց արած ուղին ինձ անսպասելի մի ուժ էր ներշնչել:

Չափրաստին վերցրի ինձ հետ և սկսեցի շրջագայել Պոլսի թաղերում: Իսկ երբ ձմեռը եկավ, թատերաշրջանը բաց արի Ֆերահում և վարիտենյուն: Խմբիս հետ կապել էի երկու նոր թուրքերի. մեկը Իսմեթ Ֆահրին էր, մյուսը՝ Հակկ Նեշիբը: Այս երկու երիտասարդները նաև շատ լավ Կարագոյ էին ցուցադրում: Հենց դրանով էլ գրավել էին ուշադրությունս:



Առաջ փաշան մեր մեջ հետաքրքրություն էր առաջացնում՝ «Լալեի» շրջանի օսմանցիների հագուստների, կենցաղի վերաբերյալ օգտակար գիտելիքների տալով:

Արդեն փաշան Մոլիերի ամեն մի պիեսի նախապատրաստման ընթացքում մեզ մանրամասնորեն ծանոթացնում էր լյուդովիկյան դարաշրջանի կենցաղային հատկանիշներին:

Անշուշտ, մեր այդ թատրոնի գործունեության ընթացքում ստեղծված բեմական զգեստների ճոխ հանդերձարանը հետագայում, խմբի քայքայումից հետո մնացել է այդ թատրոնը փակողի ձեռքին և մինչև մեր օրերը բեմական ոչ մի զգեստ ժառանգություն չի մնացել: Եթե մի քանի բան էլ մնացել է, ապա դրանք Սաադեթին փաշայի պիեսների համար պատրաստված 20-30 կտոր փոքր ու մեծ զգեստներ են եղել, որոնց ներքնամասն էլ ամբողջովին պայմանական է եղել:

Մեր թատրոնում ավելի բարձր զարգացում է ունեցել դիմահարդարումը: Այդ խառնիխուռն ու թույլ կերպարները միշտ էլ ստեղծագործող դերասանների կատարմամբ կենդանություն են ստացել:

* * *

Մեր ժամանակում այժմյան կատարյալ դիմահարդարումներ չեն եղել և ոչ էլ ներկեր են գոյություն ունեցել: Ամեն մի դերասան իր ներկը, մորուքը, մազերը ինքն էր պատրաստում: Մեր փոքրիկ սենյակի կոտրտված դարակների վրա կային մի շարք փոքր բաժակներ: Դրանց մեջ քերված, խմորի տեսք ընդունած, օճառի հետ խառնված փոշի ներկերի խառնուրդներ կային: Դրանցից ինչ գույն որ ցանկանայինք կարող էինք պատրաստել: Զիթ, ծնոտ և այլն, երեսի ձևափոխություններ բամբակի, խմորի կամ հացի միջուկից էինք պատրաստում, ապա ներկում: Մորուքները, տարբեր գույնի մազերը «կրեպ» կոշվող նյութից պատրաստված սոսինձով կպցնում էինք: Կեղծամների մի մասը բերել էինք տալիս Եվրոպայից, մի մասն էլ Մեծ Պենկլյանն ու Չափրաստն էին պատրաստում: Նրանք երկուսն էլ այդ գործի մասնագետներն էին, հատկապես Պենկլյանը: Դա նրան էլ էր պետք, քանի որ ճաղատ էր և ամենից առաջ կեղծամները իրեն էին պետք:

Կանայք դիմափոշու փոխարեն օգտագործում էին սպիտակ ներկ և «Մեքքայի ծարիր» (սյուրմեն):

Մրանք բոլորը այլանդակում էին մեր դեմքը, սակայն ըստ ամենայնի, ներկայացնում էին ժամանակաշրջանի ճաշակը: Դրանով հանդերձ կարող

են ասել, որ շատ լավ, անգամ իրենց դեմքը չափսասցող դիմահարդարումներ անողներ կային:

Ոմանք էլ «Մանթարը կոմիկի» նման էին հարդարում մեր երեսները: Մանթարը կոմիկ էին ասում թուլութուն խաղացող այն դերակատարին, որն իր բեղերն ու հոնքերը պատրաստում էր շշի վառված խցանով (մանթարով) և կատարում էր «իբիշի» դերը:

Դիմահարդարման աշխատանքից խույս տվող դերասանների գրպանում միշտ լինում էր այդ խցանից, որով մի քիչ սևացնում էինք մեր աչքերի շուրջը, իսկ քթատակին բարակ բեղ էինք քաշում: Ախ, ես այդպիսի անպարտաճանաչների ձեռքից ինչեր են քաշել:

Մի օր, Կեղիկ փաշայի թատրոնում բոլոր դերասանները սովորականի պես լցվել էին իմ սենյակը, մատները թաթախած փոքր սրվակների մեջ, զբաղված էին դիմահարդարումով: Ես ուշացել էի: Հարկադրված էի իսկույն հագնվել և պատրաստվել, որովհետև հենց որ վարագույրը բացվեր՝ առաջինը ես էի մտնելու: Սենյակումս տեսնելով այդ իրարանցումը, սկսեցի բղավել: Ինչպես միշտ, այս անգամ էլ ոչ մեկը կարևորություն չտվեց, մինչդեռ բոլորն էլ ինձնից հետո էին բեմ մտնելու: Ոչ մեկը չէր ուզում հեռանալ հայելու մոտից:

Այդ անհասկացողներին հեռացնելու համար խլեցի հայելին և զայրացած շարտեցի գետին: Նոր նոր բեմ մտնող մի երիտասարդ թեքվեց և գետնից հայելու մի կտոր վերցնելով շարունակեց գործը: Տեսնելով այդ՝ ավելի զայրացա:

ՄԵՐ ԲԵՄՈՒՄ ԵԿՈՂ-ԳՆԱՅՈՂ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԸ, ՌԵԺԻՍՈՐՆԵՐԸ, ՈՂԲԵՐԳՈՒՆԵՐԸ, ԿԱՏԱԿԵՐԳՈՒՆԵՐԸ, ՈՎԲԵՐ ԵՒՆ ԵՐԻՏԱՍԱՐԳ ՆՈՐԵԿՆԵՐԸ ԵՎ ԵՐԲ ԵՒՆ ԴՈՒՐ ԳԱԼԻՍ, ԹՈՒՐԲԵՐԵՆ ՉԱՎԵՇՏՆԵՐ ԳՐՈՂ ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿ, ԺԱՄԱՆԱԿԻ ԳԵՂԵՑԻԿ ԿԱՆԱՅՔ, ԱՅԳ ԺԱՄԱՆԱԿ ԳՐՎԱԾ ՊԻԵՍՆԵՐ

Անցնում են դերասաններին: Մեզ մոտ առանց մասնագիտական կրթության աճող դերասաններ շատ են եղել: Այդ 31 տարիների ընթացքում միայն հայերից բաղկացած խմբեր են եղել: Այդ խմբերի անդամները հայտնի են: Իրենց դիրքերն ամրացնելու համար ամեն նորեկ սիրողի համար մի քիչ զիջել են և սիրաշահել, առանց մտահոգվելու նրանց հետագա ճակատագրով:

Իրականում այդ մարդիկ չգիտեին թե ինչու են թատրոն մտնում, պիտի կարողանա՞ն գործի դժվարությունը հաղթահարել: Նրանք թատրոնի տեխնիկական կողմին անծանոթ մարդիկ էին: Ոմանք եղել են ողբերգու, ոմանք կատակերգու, սակայն ողբերգու լինելու նախապայման էին համարում բեմում գոռալ կանչելը, աչքերը չռելով ներվային գալարումներ ունենալը, դրանով կարծում էին, թե իրենք մեծ ողբերգու են:

Կատակերգակներ էլ կային, որոնք առանց հեռանալու հուշարարի անկյունից, ծամածռություններով, տափակ սրախոսություններով ուզում էին գրավել, ապացուցել իրենց բեմական կարողությունը: Եվ Թուրքիայում թատրոնը արդեն դարձել էր ձեռնհասների եւ անճարակների, դատարկամիտների և խելոքների պայքարի վայր:

Բայց, դրանով հանդերձ նրանց մեջ կային այնպիսիները, որոնց հանդեպ հարգանք միայն ունեն: Դրանց առաջին շարքում դնելով իմ ուսուցչին ու վարպետին՝ Ֆասուլաճյանին: Նա կարող, իր նմանը չունեցող արվեստագետ էր: Վիթխարի մարմնով այդ մարդը ամեն ժանրի պիեսների գլխավոր հերոսն էր, ամենափոքր դերի մեջ էլ մեծ: Միաժամանակ շատ ինքնատիպ և ստեղծագործող արվեստագետ էր: Ամեն մի դերում ի հայտ էր բերում տարբեր նկարագիր: Ուշադրություն էր դարձնում դիմահարդարության, ձեռքից մինչև դեմքը ներկում: Բուրսայում՝ Վեֆիկ փաշան նրան էր վստահում Մոլիերի բոլոր գործերի գլխավոր դերերը: Նա այդ կատակերգություններում այնքան լավ էր խաղում, որ հնարավոր չէ նկարագրել:

Մյուս պիեսներում նույնպես ընդհանուր առմամբ մեծ պրիմիերի (առաջնակարգի) դերեր էր կատարում: Իմ հիշողության մեջ անմոռանալի է մնացել Ֆրեդերիկ Լեմետրի համար գրված «Ծերունի տասնապետում» նրա տասնապետը: Նա այդ դերը այնպիսի հուզականությամբ խաղաց, որ իմ աչքերից արտասուքներ խլեց: Գյուղական եկեղեցում հոգեհանգստի համար կատարված աղոթքը այնպիսի ապրումներով էր ունկնդրում, որ մամար կատարված աղոթքը այնպիսի ապրումներով էր ունկնդրում, որ մագերես փշաքաղվում էին: Հինգ գործողությունից բաղկացած պիեսը սկզբից մինչև վերջ խաղում էր բեմական նույն պատասխանատվությամբ, մի բան, որ շատ դժվար էր: Աչքերի և դեմքի իմաստավորված շարժումների արվեստը ես Ֆասուլաճյանի այդ խաղում տեսա: Վարպետիս բոլոր դերերն էլ անցնում էին հաջողությամբ: Եթե կամակորությունը և բարկությունը այս մարդուց հեռու լինե՞ր՝ բնությունը շատ ավելի կատարյալ և մեծ մարդ ստեղծած պիտի լինե՞ր: Սակայն նման որդեր ամեն մի արվեստագետի սրտում էլ բուն են դնում: Կատարյալ մարդ չկա:

Իմ տեսած ժեռն (երիտասարդ) պրեմիերների մեջ ամենից կատարյալը Թոսպատյանն էր: Այդ դերերը ապերախտ դերեր են: Արվեստով ցուցադրված գեղեցկությունը միշտ էլ դերասանին սիրելի կարող է դարձնել: Ահա թե ինչու նրանք իրենց երիտասարդ տարիքում նման դերերով շատ մեծ համակրություն են ձեռք բերում կանանց մոտ:

Սակայն այդ հաջողությունը ժամանակի անցնելուց հետո թուլանում է: Այդպես չէր Թոսպատյանը: Նա իր բեմական մեծ կարողությամբ այդպես էլ մոռացնել չտվեց իրեն: Մասնավորապես իտալերենից թարգմանված «Համբերություն» պիեսում բարձրանում էր մարգարեի աստիճանի: Չափավորությունը և հոգեբանական անցումների վարպետությունը նկատելի էր նրա դեմքին: Լավ էր նրա թուրքերեն առոգանությունը: Նույնիսկ գրել էր թուրքերեն մի կատակերգություն: Մեծ սեր ուներ դեպի բանաստեղծությունը:

Կատակերգակ դերասանների մեջ իմ ամենասիրելիներն էին Թրյանցն ու Չափրաստը: Երկուսն էլ շատ համակրելի, կիրք արվեստագետներ էին:

Մի մեծ դերասան էլ կար, որ միայն հայերեն էր խաղում՝ Ադամյանը: Այս մարդու համբավը լսել էի: Մի անգամ խաղում էր «Թերեզա» պիեսում: Հենց որ լսեցի՝ իսկույն վազեցի թատրոն:

Վարագույրը բացվեց: Խաղը սկսվեց: Ադամյանը մտավ բեմ: Սկզբում մի բացառիկ բան չտեսա: Ականավոր դերասանի մի ակնառու թերությունը նկատելու համար աչքերս չորս բաց արած՝ ուշադիր դիտում էի: Ադամյանը մեծ ոգևորությամբ շարունակում էր դերը: Բայց խաղի վերջում երբ մեջտեղ եկավ ընտանեկան ձախողանքը, և ընդունեց դրամատիկական կերպարանք, Ադամյանը թրի նման կտրեց, ցնցեց, փոթորկեց հոգիս:

Այդ ժամանակ զգացի, որ նրա առաջ պետք է հարգանքով ու երկյուղածությամբ գլուխ խոնարհել: Խաղի վերջում վազեցի բեմ, համբուրեցի նրա ձեռները: Մեծ ցանկություն ուներ թուրքերեն էլ խաղալ, սակայն առոգանությունը վատ լինելով՝ չէր կարողանում, չնայած չափից ավելի աշխատում էր: Թուրքերեն «Օթելլո» խաղալ պատրաստվելիս հիվանդացավ և մահատեղի: Թուրքերեն չխաղալ պատրաստվելիս հիվանդացավ և մահատեղի: Սակայն լավ արեց, որ թուրքերեն չխաղաց, որովհետև համբավը գրոցավ: Մահացավ լավ արեց, որ թուրքերեն չխաղալով արդեն չիմացած լեզվով:

Գալով կանանց՝ հավանաձեռնիցս ստացած տպավորություններս եթե փորձեմ ամփոփել, հետևյալը պիտի ասեմ, թեև այդ տպավորություններս շատ թերի են:

Առաջնությունը տալով Մարի Նվարդին՝ հերթականությամբ ուզում եմ

խոսել Հրանույշի և տիկ. Պինեմենյանի մասին:

Մարի Նվարդը տգեղ կին էր. դեմքը թաթարի էր նման, սակայն ուներ վայելուչ արտաքին, արտահայտիչ ու գեղեցիկ աչքեր, հաճելի ձայն, արտասանությունը հուժկու էր: Առանց որևէ սեփեթանքի, անբնականության, ճիգի, ընդօրինակման փորձի, մի հոգեվիճակից մտնում էր մի այլ հոգեվիճակի մեջ: Ուներ ներդաշնակ շարժում: Յուրաքանչյուր դերի համար հոգեվիճակների բացահայտման ու մատուցման տարբեր արտահայտչամիջոցներ գտնելով հանդերձ, հասնում էր անհասանելի բարձրության: Հրաշք էր Վիկտոր Հյուգոյի «Էռնանիում», մանավանդ «Դոն Սեզար դը Բագանի» Մարիտանայի դերում: Անմահ էր կատարում վայրագ Դոն Սեզարի առջև օձի նման գալարվող հարուստ, փառքի տեր իսպանուհու դերը: Նրա խաղը դիտելիս՝ հուզմունքից վերանում էի: Այս կինը սիրահար էր բանաստեղծության և երաժշտության: Մահվան գիշերը ցանկություն էր հայտնել, որ դագաղի վրա «Տրավիատայից» նվագեն: Նրա թաղումը այնքան շուքով ու հանդիսավորությամբ եղավ, որ անհնար է նկարագրել: Գեթ ես, իմ կյանքում Ստամբուլում այդպիսի շքեղ հուղարկավորություն չեմ տեսել:

Գալով Հրանույշին՝ Բուրսայի չորս և կես տարվա գործունեության շրջանում անուն վաստակած, Մոլիերի կատակերգություններում իր հավասարը չունեցող արվեստագետ էր:

Նրա մասին անհրաժեշտ չափով խոսել եմ: Այստեղ միայն ավելացնեմ, որ ժամանակի դերասանուհիների մեջ ամենից ճաշակով հագնվողը նա էր: Մանավանդ Բուրսայում նրա հագած ամեն մի զգեստն իսկույն ուշադրություն էր գրավում և անցնում էր մոդայի շարքը: Օրինակ՝ մանրաձախ մի առևտրական «Հրանույշի լեվանթ», «Հրանույշի Կոլոնյա», «Հրանույշի թաշկինակներ», «Հրանույշի գուլպաներ» էր պատրաստում և դրանք վաճառում էր ամենաթանկ գներով:

Տիկին Պինեմենյանը մինչև վերջ էլ երիտասարդ մնացած դերասանուհի էր: Շարունակ և մեծ հաջողությամբ խաղում էր «սուբրետ», այսինքն աղախիճների դերեր:

Բնարի հետ «Ֆանֆան Կոլոնյա» խաղալիս հիանալի էր: Արվեստի ուժով միշտ էլ կարողանում էր բեմում երիտասարդ երևալ:

Ուզում եմ ասածներս ամփոփել մեր բեմի ամենամեծ վարպետի, ամենամեծ ռեժիսորի մասին իմ տպավորություններս հայտնելով:

Առհասարակ մեզ մոտ մասնագիտական կրթություն ստացած, փորձառու ռեժիսորներ չեն աճել: Իմ ճանաչած մի քանի ռեժիսորներին ավելի

ճիշտ կլինի կոչել բեմի վարպետներ: Նրանցից ոչ մեկը ուղղություն տվող, բեմական նորություն բերողներ չեն եղել: Օպերետներ բեմադրելիս Եվրոպայից հրավիրվել էին ռեժիսորներ. նրանց մասին արդեն խոսել եմ: Հիմա էլ խոսեմ Ֆասուլաճյանի, Մաղաքյանի և Մնակյանի մասին:

Ֆասուլաճյանը ճաշակի տեր և փորձառու ռեժիսոր էր, մեծ կարևորություն էր տալիս միզանցեմային տեսարաններին, հնարավորին չափ ուշադրություն դարձնելով ներդաշնակության և բնականության վրա:

Մաղաքյանը, որ ամբողջովին առաջնորդվում էր հին թատրոնի սկզբունքներով, ավելի շատ կարևորություն էր տալիս դերասանի խաղին, աշխատելով ստեղծել տիպական կերպարներ: Միանգամայն անտեղյակ էր տեխնիկական հնարավորություններն օգտագործելու միջոցներից:

Գալով Մնակյանին՝ հմուտ էր խճճված դեպքերով ու հանգույցներով լի մեկուդրամները տարածուն պատկերների մեջ մտցնելու արվեստին: Նա բուն իմաստի վրա շատ էլ ուշադրություն չէր դարձնում: Կարևորություն էր տալիս դերասանների խաղի նրբերանգներին, դիմախաղին, շարժումներին: Բեմի էսթետիկական կողմը այնքան էլ հաշվի չէր առնում: Խաղի կենտրոնում ուզում էր տեսնել դերասանի խաղը:

Իմ կարծիքով՝ երեքի սկզբունքներն էլ թերի էին, չնայած անուրանալի է նրանց մատուցած ծառայությունները մեր թատրոնին:

Այժմ հերթը եկավ պիեսներին ու թատերական գրականությանը: Ինչպես հիմա, այն ժամանակ էլ այդ գրականությունը չեղածի չափ քիչ էր: Այժմ գոնե, որքան էլ քիչ լինի, ստեղծվել է թատերական գրականության լեզու և այն բավականին զարգացել է: Մեր ժամանակներում խառնակ և անհասկաբավականին զարգացել է: Մեր ժամանակներում խառնակ և անհասկանալի լեզվով կատարված թարգմանությունները զգվեցրել էին մարդկանց: Տարիներ շարունակ կաշկանդված մնացինք հայերեն մտածված և հայերեն մատուցվող կամ՝ Ֆրանսերենից թարգմանվելիս էլ՝ թուրքերենը կրկին ֆրանսերեն մտածողության մեջ մնացած պիեսների միջև:

Այնպիսի գործեր էինք խաղում, որոնց ոչ անունն էր հայտնի, ոչ էլ հեղինակը: Կատարյալ մի առեղծված:

Առեղծվածը սկսվում էր ձեռագիր հայտարարություններից: Հերոսների անուններն այնքան հնարովի, շինծու էին, որ կարող էին խելամիտ մարդուն ծիծաղ պատճառել: Զիչ թե շատ՝ Մնակյանին բերված թարգմանական պիեսների հեղինակների անունները միշտ անծանոթ էին մնում: Ինքը գործը կրկին հեղինակների անունները միշտ անծանոթ էին մնում: Ինքը գործը գնում էր, թարգմանչի անունը ջնջում էր, փոփոխություններ մտցնում և ներկայացնում որպես իր թարգմանությունը: Պիեսի վրա երբեմն այնքան շատ

ուղղումներ էր կատարում, որ դժվար էր ճանաչել բուն տեքստը:

Հայտնի երկու թարգմանիչ միայն կար՝ դոկտ. Ահմեդ Մյունիֆ բեյը և բանաստեղծ Խալիդ Ֆահրի բեյի հայրը՝ Ֆահրի փաշան: Ահմեդ Մյունիֆ բեյի թարգմանություններից «Դերասանուհին», Ֆահրի փաշայի թարգմանություններից էլ «Խաբված սիրտը» (Մաղտուր գալպ), դրամաները մեծ ընդունելության էին արժանանում:

**ԹԱՏԵՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԻՅ ՀԵՏՈՎ
ՎԻԵՆՆԹԱԼ ԷՖԵՆԴԻ ԵՐԿԵՐԸ. ԿԱՄՐՁԻ ՏԱԿԻ ԿԱԶԻՆՈՆ
ԹԵՎՖԻԿ ՖԻՔՐԵԹԻ ՄԻ ԱՌԱՋԱՐԿԸ
«ԲԵՍԱ» ՊԻԵՍԻ ԲԵՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԱՄԵՆ ՄԻ ԱՆԿՅՈՒՆՈՒՄ ԹԱՏՐՈՆ**

Վեֆիկ փաշայի կողմից Բուրսայում ստեղծված «Թատերասերների միության» մեջ էր նաև Վիեսենթալ Էֆենդին: Նա թարգմանել էր մի շարք պիեսները և տվել Ֆասուլաճյանին: Այս մարդը լավ գիտեր արաբերեն, պարսկերեն, հունարեն, իտալերեն, ֆրանսերեն, գերմաներեն: Մի խոսքով՝ գիտեր 12 լեզու: Հունարենից թարգմանել էր «Ջրադացյալներ» խորագրով երաժշտական մի պիես:

Հստակ կարող եմ ասել, որ Վեֆիկ փաշայից բացի ոչ ոք թատերական ակնառու դեր չէր կատարում: Կեդիկ փաշայի թատրոնում խաղացված Նամըկ Քեմալի, Շեմսեդդին Սամիի և Միդիատ Էֆենդիի երկերը բեմական գործեր լինելուց հետո էին: Լավ գրված ընթերցանության երկեր էին: Դրանով հանդերձ՝ գրական այդ շարժումը եթե շարունակվեր, հիմա մենք կունենայինք թատերական գրականության մի մեծ գրադարան: Օրինակ՝ Նամըկ Քեմալի «Խեղճ երեխաներից» հետո գրական մի մոդա սկսվեց: Թեև գրված երկերից շատերը նման էին «Խեղճ երեխաներ»ին, սակայն գրողները պատահական մարդիկ էին: Իմ կարծիքով՝ Վեֆիկ փաշայի նման մի թարգմանիչ և փոխադրող, միաժամանակ նրա չափ խորը ու վերլուծական մտքի տեր մարդ եթե աճած լիներ և հետևեր այդ ճիշտ գծին, մեր թատրոնը թե դերասանների, թե՛ տեխնիկայի և թե՛ խաղացանկի տեսակետից մեծ քայլ արած պիտի լիներ և մենք այսօրվա փլուզման առջև կանգնած պիտի չլինեինք:

Սա է երեսունմեկ տարվա թատերական կյանքի պատկերը, որ փորձեցի ներկայացնել իմ այս «մատյանում»:

Սահմանադրության հռչակման օրերին Ստամբուլը դարձել էր խրախուսանքի կենտրոն: Ես էլ ընկել էի ահա գլխապտույտ առաջացնող այդ շարժման ոլորապտույտի մեջ և ապրում էի խանդավառ վիճակ: Դարձել էի Ռեզա Թեվֆիկի, Սելիմ Սըրրուի, Թեվֆիկ Ֆիքրեթի խմբի անդամ, որի հավաքատեղին էր Կամրջի տակ գտնվող կազինոն:

Թեվֆիկ Ֆիքրեթը՝ երկարահասակ, լավ դաստիարակության տեր, առողջ գաղափարներով մարդ էր: Վաղուց գրավել էր իմ սերը և մտերմացել էինք: Սահմանադրության հռչակման օրերին թատերական ծրագրերս ծանոթացրի նրան: Երբ ասացի, թե Ռեշատ Ռեզվանն էլ ինձ հետ է, իսկույն հակառակվեց, և խորհուրդ տվեց նրան մասնակից չդարձնել գործին: Մասամբ իրավացի էր: Նրա հայրը՝ Ռեշտվան փաշան, որդուն թատրոնից հեռու պահելու համար ձեռքից եկածն անում էր: Խեղճ Թուլայանի և Թոսպատյանի գլխին բերած փորձանքները կարծեք քիչ լինեին՝ Սահմանադրության հռչակմանը նախորդող տարիներին արգելել էր Պուլսի կառավարչության սահմանում գտնվող բոլոր թատրոնները: Մի կտոր հացի կարոտ մարդկանց, արվեստին նվիրված մարդկանց երկու տարի մատնել էր թշվառության ու տազնապի: Այդ երկու տարիների ընթացքում իմ կրած տառապանքները մեկ ես գիտեմ, մեկ էլ Աստված: Բարեբախտաբար հացագործս լավ մարդ էր և երկու տարի շարունակ, առանց որևէ դժգոհության հաց էր տվել: Մյուս դերասանները թափվել էին Անատոլիա:

Գնալով ավելի ու ավելի վտանգավոր դարձած այդ Ռեզվան փաշան ի վերջո սպանվեց երենքեյում Բուրդ Ալի Շամիլ փաշայի կողմից: Նրա տեղը եկավ Բուրսայի կուսակալ Ռեշիդ փաշան և թույլ տրվեց թատերական ներկայացումներին: Վերսկսվեց բնականոն կյանքը:

Բացի այդ՝ Ռեշադի հորեղբայր Ռեշիդ փաշան էլ, ժողովրդի գլխին փորձանք էր դարձել որպես պալատի լրտես: Այդ մարդն էլ սպանվեց սահմանադրության հռչակումից հետո. դիակն էլ քարշ էին տվել փողոցներում:

Այս բոլորը Ռեշադ Ռեզվանի դեմ ատելություն էին ստեղծել, առիթ տվել վերին շրջանակներից լավող աննպաստ կարծիքների:

Սակայն ես, հաշվի առնելով նրա ծառայությունները արվեստին և օգտակար դերը, անհրաժեշտ էի համարել նրան էլ ընդունել իմ խմբում որպես բեմական գործերի վարիչ: Սահմանադրության հռչակումից երկու օր անց վարձեցի Թեփերաշիի ամֆիթատրոնը:

Ինձ մոտ վերցրի նաև Էքրեմ անունով մի թատերասերի: Նպատակս էր Պուլսի բոլոր թաղամասերում ներկայացնել Կեդիկ փաշայի թատրոնի

դեռ շարունակվում էր: Հրապարակ եկած նորելուկ գրողները բեմում, տեսակ տեսակ անուններով ասպարեզ եկած խմբերը «Սահմանադրության առավոտը», «Երիտասարդ թուրքեր», «Համիդի վերջին օրերը», «Պալատի գայթակղությունները» և սրանց նման արտառոց գործեր էին ներկայացնում: Ունանք էլ բեմ էին բերում առաջին սուլթանից մինչև Սուլթան Մահմուդը ընկած ժամանակաշրջանի բոլոր փաղիշահներին: Անտարակույս սա մի ապստամբություն էր, հեղափոխության անարխիա, որ թատրոն էին բերել:

Սակայն դա էլ իր լավ կողմն ուներ, իր օգտակարությունը՝ թուրք երիտասարդության անգուսպ վազքն էր դեպի բեմական ասպարեզ, իսկ դրան մղողը Նամըք Քեմալի «Հայրենիք կամ Սիլիստրան» էր:

**ԵՍ ՄԻ ԳԻՐՔ ԵՄ, ՈՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՎ ՎԵՐՋԻՆ ԷՋԵՐԸ ԿՈՐՍՎԵԼ ԵՆ
ԲԵՄԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶ Է ՄՏՆՈՒՄ ԳԱԼԻԲԸ. ԲՅՈՒՐՀԱՆԵԴԴԻՆԻ
ՎԵՐԱԴԱՐՉԸ ՓԱՐԻՉԻՑ. ՄՈՒՎԱՀԻԴ ԲԵՅԸ ԿԱՆԱՅԻ ԴԵՐՈՒՄ.
ՆԱՎԱՏՈՐՄԻՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ. ՍՏԵՂԾՎՈՒՄ Է
«ԴԱՐ ՈՒԼ ԲԵԴԱՅԸ». ՀՈՐԵԼՅԱՆ**

Թատրոնի պատճառով խռովություն էր առաջացել Ռաշիդ Ռեզայի և ընտանիքի միջև: Սալոնիկից վերադառնալուց հետո նա չցանկացավ դա ինձ պատմել, որովհետև նախապես ինձ ասել էր, թե ընտանիքի համաձայնությամբ էր եկել, անգամ երդվել էր: Այդ սուտը, անշուշտ, ասել էր հանուն թատրոնի սիրո: Մնալով անտուն, ինձնից գաղտնի Սիրքեջիում, Օսմանյն հյուրանոցում սենյակ էր վարձել և այնտեղ էր գիշերում:

Մի օր պատահամբ իմացա գաղտնիքը: Նրան վերցրի և մեր տուն տարա: Հարազատ որդու պես պահեցի: Բայց այդ ժամանակ Նեմլիզադեից Սամսունի թատրոնի ղեկորները պատրաստելու համար հրավեր ստացա: Ռաշիդին էլ վերցրի հետո ու գնացինք: Այդ թատրոնի համար անցյալում իմ պատրաստած ղեկորները իշխանությունների հետապնդումներից վախենալով՝ Նեմլիզադեները բռնել վաճառել էին հունական թատրոնին:

Պատրաստեցինք ղեկորները և վերադարձանք Ստամբուլ:

Սկյուտարում, Շահգադե Աբդյուլ Մեջիդ էֆենդիի հովանավորության տակ գտնվող ակումբը թլփատման արարողության համար ընդարձակ գավիթը վերածել էր կատարյալ բեմի, ղեկավարությունն էլ հանձնել մի թատերասերի:

Ռաշիդի հետ այնտեղ մի պիես ցուցադրեցինք: Ապա այդ գավիթը վերոհիշյալ թատերասերի հովանավորությամբ վերածվեց իրական թատրոնի և կոչվեց «Դիլքյուշայի թատրոն»:

Մեր փոքրիկ խմբով սկսեցինք այնտեղ շաբաթական մի քանի ներկայացում տալ: Այդ օրերին նիհար նիհար մի երիտասարդ եկավ, Սավջը Ֆերիդոն բեյից մի նամակ տվեց Ռաշիդ Ռեզային: Այդ երիտասարդը Ի. Գալիբն էր: Նրան էլ ընդունեցի իմ խմբի մեջ: Այս երիտասարդների շնորհիվ ամբողջովին խափանված, ցրիվ եկած մեր խմբի գործը վերսկսեցինք:

Վերականգնման այս շրջանից հետո սկսեցինք ավելի հիմնական միջոցառումների ձեռնամուխ լինել: Մյուս կողմից էլ, պալատի հարվածներին ենթարկված ժողովրդին զվարճացնելու համար ասպարեզ եկած Աբդյուրեյիզադե էլ կրկին հրապարակ էր իջել և գործում էր Համդիի հետ: Ի վերջո, Յողուրդյու Չաիրում կառուցված թատրոնում բուն դրամ Օրթասյունի ծաղրածուներ հանդիսացող այդ մարդիկ համարձակ ասպարեզ էին կարդում թատրոնի մարդկանց:

Սակայն նախքան պալատ ընդունվելը, ամսական վեցհարյուր ոսկի ստացող Աբդյուրբազակն այժմ կորցրել էր հեղինակությունը, քանի որ ճշմարիտ արվեստագետ հանդիսացող Համդիի մոտ շատ բոբիկ էր:

Համդին Մոլիերի «Քաղքենին ազնվական» կատակերգության Վեֆիկ փաշայի թարգմանության հիման վրա սարքել էր «Անկիրթ մարդը» խորագրով մի գործ և ներկայացնում էր: Շատ լավ էր ստացվել և ինքն էլ իր դերը բացառիկ հաջողությամբ էր կատարում: Համդին զգայուն, սակայն առողջությամբ տկար մարդ էր: Սովորաբար նրա ամեն մի դերում լինում էր մի մենախոսություն, որը սկզբից մինչև վերջը հորդառատ զգացումներ էր պարունակում:

Աբդյուրբեզակն էլ Համդիի հետ ցուցադրել էր «Հնակարկատ Արդի» անունով մի գործ, որին ոչ ոք կարևորություն չէր տվել: Առհասարակ Աբդյուրբեզակը կոշտ ու կոպիտ մարդ էր, խմբի մարդկանց նկատմամբ դաժան: Խաղն ավարտվելուց հետո բեմի մեջտեղում փռել էր տալիս մի կտոր, ինքն էլ, հագված կապված, օրորվելով, ձեռքին սաթից մի մեծ ծխամորճ, գալիս նստում էր. մի կողմում՝ բեմի հսկիչը, մյուս կողմում՝ դրագոն Մեհմեդը: Դիտում էր առաջը դիզված և փայլվող փողերը, ապա հարցնում էր, թե ո՞ր մասն ումն է: Վերջապես մեկ մեկ ներս էին կանչում դրամի սպասող դերասաններին: Աբդյուրբեզակը նայում էր իր դեմ բարևի կանգնած խեղճ դերասանին և ասում էր.

- Հը, երբ ես կոշիկս նետեցի քո վրա, ասում էիր, թե նավթի ամանով խփելու ես իմ գլխին: Ինչու՞ չխփեցիր:

Այս ասելով նրա աշխատավարձի կեսը դնում է գոտու տակ, մյուս կեսը տալիս էր դերասանին: Տալու ժամանակ էլ ասում էր.

- Ահա այսպես, մտքումդ պահիր, մեկ էլ չանես:

Մի ուրիշին էլ ասում էր.

- Ծո, ախպար, ես քեզ չէի՞ պատվիրել, որ գիշերները իմ եղած տեղս քիթդ պիտի չկոխես: Ես այստեղ կոտոշավո՞ր եմ:

Այս ասելով նրա փողի մի մասն էլ էր վերցնում:

Մի ուրիշին էլ ասում էր.

- Անցած շաբաթ շատ ստացար: Այս շաբաթ այսքանը բավական է: Վերցրու, այս էլ միացրու մյուսին:

Նման անիրավություններով խլում էր խեղճ ու կարիքավոր մարդկանց իրավունքը: Մի խոսքով Արդյուրեզակը շատ անպետք մարդ էր: Միայն թե Սահմանադրությունից հետո էլ նույնն էր անում:

Թուրք երիտասարդները շատացել էին: Ես ու Ռաշիդը միացանք Մնակյանին և մի ամբողջ Ռամազան միասին գործեցինք: Սակայն իր վերջին տարիներն ապրող Մնակյանը երբ սկսեց առաջ քաշել Նուրեդին Շեվքաթին և գործել Ռաշիդի դեմ, թողեցինք հեռացանք:

Վեր կացանք ու գնացինք Սամսուն և մեկ տարով վարձեցինք Նեմլինների թատրոնը, երկուսով գործեցինք: Երբեմն երկուսս էլ խաղում էինք: Մեզ հետ վերցրել էինք նաև սամսունցի մի քանի երիտասարդների:

Առհասարակ այդ քաղաքը եկող հունական թուլուսթի խմբերին թատրոնը վարձով տալով՝ շատ լավ և խաղաղ կյանք վարեցինք: Տարվա վերջերին վերադարձանք Ստամբուլ:

Դերասան Բյուրհանեդդինն էլ նոր է վերադարձել Եվրոպայից և իրեն հայտարարում էր Սալվինիի տաղանդավոր աշակերտը ու հրապարակը լցնում աղմուկով: Սալվինիի դեմ արվող այս գրպարտության դեմ լռել էին անգամ ամենից լուրջ մարդիկ:

Բյուրհանեդդինը գտել էր Բյուփեյան անունով հարուստ դրամագլուխ ունեցող մի մարդ և գործում էր Թեբեբաշիում:

Նա հրավիրեց Ֆրանսիացի մի ռեժիսորի, որին հանձնարարել էր մեծ պիեսների պատրաստումը: Ինձ ու Ռաշիդին էլ հրավիրեց կատակերգությունների համար: Այսպիսով ստեղծվեց մի մեծ թատերախումբ, որի մեջ էին Մուվահեդդինի, Ի. Գալիբի, Ռաշիդի, Ռըզա Հյուսեինի, Ջեվեդի, Քեմալ

Դավերի, Ռաբ Սալահեդդինի, Շադի Ֆիքրեթի նման արժեքավոր երիտասարդներ:

Բյուրհանեդդինը բեմադրեց «Նապոլեոն», «Շերլոկ Հոլմս», «Թոգեր», «Ֆինթեն», «Ջեյներ», «Ժամանակ» և այլ գործեր: Ես էլ վողնիլներ էի ցուցադրում: Որպես նոր վողնիլ ներկայացրի Էրջումենդ Էքրեմի թարգմանած «Ֆրամաստոնները»: Խաղացինք Մուվահեդդինի հետ միասին: Նա այն ժամանակ շատ երիտասարդ և համակրելի անձնավորություն էր: Կանացի դերերով ապշեցնում էր հանդիսականներին, զարմացնում բոլորին իր հաջողություններով:

Բյուրհանեդդինի այս խմբով մեկնեցինք Սալոնիկ, բոլորեցինք հյուրախաղային մի փայլուն շրջան և միաժամանակ ունեցանք զվարճալի դեպքեր:

Գալիբը և Ռաբ Սալահեդդինը կատարյալ արվեստագետներ էին, սակայն երբ Բյուրհանեդդինը սկսեց հրապարակ հանել իր բուն դրամագլուխը, վերադարձին գործերը սկսեցին կաղալ:

Դրանից հետո ստեղծված «Դոնանմա» միության խումբը սկսեց ղեկավար դիրք գրավել: Այդ խմբի աշխատանքները ղեկավարում էին Լազիստանի կառավարիչ Սուդին և Յաղջի Շեֆիկ բեյերը: Այդ խմբի մեջ էին տղանի մարդկանցից Մնակյանը, Նուրեդին Շեֆքեթը, Շաթին, Մուվահիմը, Ֆահմարդկանցից Մնակյանը, Նուրեդին Շեֆքեթը, Շաթին, Մուվահիմը, Ֆահմարդկանցից Մնակյանը, Նուրեդին Շեֆքեթը, Շաթին, Մուվահիմը, Էմին Քեկը, Հաքքը Նեջիբը, Գալիբը, Քեմալ Դավերը, Ռաբ Սեյահեդդինը, Էմին Քեկը, Տյուլկերյանը, Չոպանյանը, կանանցից՝ տիկին Պինեմեճյանը, Քնալիջը, Ազնիվը, Չապելը և ուրիշներ:

Խումբը բացառիկ էր: Բոլորս էլ խանդավառված էինք մի մեծ թատերախումբ ստեղծելու գաղափարով: Մեզ համար պատրաստել տվեցին սև կտորից շորեր: Ես և Մնակյանը ռեժիսորի պաշտոն էինք վարում: Մնակյանն արդեն շատ էր ծերացել: Շաբաթը մեկ երկու անգամ հազիվ կարողանում էր գալ: Էլիզ Պինեմեճյանը և Քնարը դարձել էին խմբի ամենափայլուն աստղերը:

Ռուբեն Պինեմեճյանը այս երջանիկ շրջանին չէր հասել: Վախճանվել էր: Այս խմբի ցուցադրած պիեսներից էին Ազա Գյունդյուզի «Պատվավոր մարդասպան», Սալահ Ջիմջոզի և Էսադ բեյերի գրած «Սելիմ 3-րդը», Հյուսեյն Սուադ բեյի «Շարունակենք դասը» և «Կեղտոտ շորերը», Իբնուրեֆիկ Ահմեդ Նուրի բեյի «Կույս Բաքիրը» և այլն:

Բալկանյան պատերազմը խափանեց այս խմբի գործունեությունը: Ռեշադ Ռըդվանն էլ մի մեծ գայթակորության մեջ ընկնելով՝ միացել էր Բուլղարիայից եկած տիկ. Ռոզալիի և Պենկյանի օպերետային խմբին և իրեն տվել

էր օպերետին, սկսել էր հայհոյել, որի հետևանքով անհամար փող վատնեց:

Վերջապես՝ Ջենիլ փաշան երբ դարձավ քաղաքի կառավարիչ, Ռեշադ Ռըդվանի ջանքերով Փարիզից կրկին հրավիրեց հայտնի ռեժիսոր Անթուանին և այսպիսով հիմնադրվեց «Դար ու Բեդայի» անունը կրող թատերա-երաժշտական կոնսերվատորիան: Դա ըստ էության շատ անհրաժեշտ միջոցառում էր, թեև ձևը սխալ էր:

Ստեղծվեց մի մեծ խումբ: Թերթերում տպագրվեցին հայտարարություններ: Բնություններ տեղի ունեցան: Բնություն հանձնող վեցհարյուր հոգուց ընտրվեց երեք հարյուրը:

Սկսվեցին դասերը: Դասախոսների մեջ էին Թեշրիֆաթի Սադրբը, դպրոցի տնօրեն Ռ-ահիֆը, Մնակյանը, Շահաբ Ռ-ըզան և ուրիշներ: Ես էլ փորձերի ընթացքում Մոլիերի գործերն էի ցուցադրում:

Սակայն այս նոր կազմակերպությունն էլ քայքայվեց առաջին համաշխարհային պատերազմի սկսվելով: «Դարուլբեդայը» վերածվեց միայն թատերախմբի:

Այլևս ինձ շատ հոգնած էի զգում: Աստիճանաբար քաշվեցի մի կողմ: Մեկ մեկ բեմադրություններ էի ունենում: Վերջապես «Հաշմանդամ վետերաններ»-ում «Բիննազ» և «Մյուրեբբիե» ֆիլմերը հանեցի: Վերջինում խաղացի Կամբուրի դերը: Դրանից հետո արդեն աշխատում էի ամեն կերպ ինձ մոռացնել տալ:

Ահա այդ ժամանակներում վախճանվեց Մնակյանը: Դրանով էլ մեր թատերական դպրոցը վերջ գտավ: Մեր շրջանն ավարտված էր:

Վերջապես 1926 թ. հունվար ամսին, բեմի բոլոր որդիներիս կողմից ի հարգանս ինձ կազմակերպված հոբելյանով վերջ տվի հիսուն տարվա թատերական գործունեությանս:

Չգիտեմ, իմ այս հուշերը գոնե թողնելո՞ւ են ընթերցողներիս թե ոչ: Աչքերիս արտասուքի կաթիլներով շարադրվող այս վերջին տողերիս բովանդակությունը նման է փեշերը հավաքելով հեռացող գիշերվան, բոլոր քաղցր դառնություններս, քաղցր տազնապներս, քաղցր վշտերս ի ցույց ներկայացնող մի գիշերվա:

Պարսիկ բանաստեղծի կողմից աշխարհի մասին ասվածը ես էլ ուզում եմ ասել ինձ համար.

Ես այնպիսի մի հին գիրք եմ, որի առաջին և վերջին էջերը կորել են...

ՄԵԾ ՎԱՐՊԵՏԻ ՈՐԳԻՆ Է ՊԱՏՄՈՒՄ

Վարպետ Ահմեդ Ֆեհիմ Էֆենդիի առանձնահատուկ կյանքը ճանաչելու համար,

նրա՝ իմ շատ սիրելի և հարգելի որդին, նկարիչ և իլյուստրատոր Մյունիֆ բեյ Օզարմանը Էսենթեփեյի իր տանն ինձ հյուրընկալեց: Հոր անձնական կյանքի մասին տեղեկություններ խնդրեցի: Ուշադրությունս գրաված բառերը կրկնում եմ.

«Հայրս, հարգելի, սիրելի, ընտանիքին և զավակներին չափազանց նվիրված մարդ էր: Տանն իրեն հարմար զբաղմունքներ էր գտնում և այդպես ազատ ժամանակն անցկացնում: Շատ հետաքրքրված էր լուսանկարչությամբ: Իր արած նկարների մեծ մասը Բեյոզլիի ցուցահանդեսներում ներկայացվել են: Եթե Ձեզ ասեմ, որ լուսանկարչական մի ապարատ է պատրաստել, անհայտ մի բան մեջտեղ հանած կլինեմ: Օբյեկտիվը միակ մասն է, որ շուկայից էր գնել:

Հայրս առանձնահատուկ մի նկարիչ էր: Յուրաներկ, ջրաներկ, սև մատիտանկար, բազմաթիվ կտավներ ուներ: Ալի Ռ-ըզա բեյի, Սամի Յեթիբի, Չյաթի բեյերը նրա հաճախ այցելուներն էին: Մի որոշ ժամանակ էլ կլիշեներով (կաղապար) էր զբաղվում: Այդ տարիներին մեր երկրում կլիշեներ չկային: Մինչ այդ «Կարագյոզ» թերթի արտոնատեր Մահմուդ Նեդիմ բեյը թերթի և ամսագրի ողջ կլիշերեները Վիեննայում էր պատրաստել տալիս: Հայրս այս նյութի շուրջ Փարիզից գրքեր էր բերել: Կլիշեներ պատրաստող մի գործատեղի հիմնեց: Պարզ ձևերով աշխատող Ութունյանին եթե մի կողմ թողնենք, եվրոպական ոճի առաջին կլիշեներ պատրաստող արհեստանոցը հայրս է հիմնել: Իր արած կլիշեների մակերեսի հարթության մասին լուրը կարճ ժամանակում տարածվեց երկրում:

Ոչ միայն Ստամբուլում, այլև գավառներից ևս պատվերներ սկսեց ստանալ:



Չեզ հայրիկիս մասին մի քանի դեպքեր պատմեն:

Մի օր, մի ֆոնոգրաֆ տուն բերեց: Գիտեք, դա գրամոֆոնի պարզունակ տեսակն է:

Արտաքուստ այժմյան ժապավենի նման ձայնագրում էր և դրանք կրկին արտաբերում: Այդ օրը հայրիկիս չալմայով և երկար հագուստով մեկն այցելեց: Ֆոնոգրաֆը տեսնելով գրպանից մի սրինգ հանեց և սկսեց փչել: Ֆոնոգրաֆն այն ձայնագրեց:

Հետո հասկացա: Այդ մարդը հայտնի Նեյգեմ Թեվֆիկն էր: 45 տարի անց, մի օր Բեյազեթում, բուկինիստների շուկայում, չինարի տակի սրճարանում Նուրեդդին Արթամի, Ռեֆիկ Ահմեդ Սևենգյուլի հետ նստած գրուցում էինք: Սրնգահարը եկավ: Ինձ.

-Քեզ մի բան պիտի հարցնեն: Դուք մի ֆոնոգրաֆ ունեիք: Արդյոք իմ սրինգով փչածս մնու՞մ է:

Մի օր հայրս կրկին անհանգիստ տուն եկավ: Մայրիկիս՝

-Երեխաներին պատրաստիր, պիտի թլպատենք: Ինձ և եղբորս վերցրեց: Չիֆթե հավուզներում (Չույզ լճեր)ում գտնվող Մանյասիզադե Ռեֆիկ բեյի տուն տարավ: Շատ բազմություն կար: Երեկոյան օրթաօյուն խաղացին: Այդտեղ Մանյասիզադե Ռեֆիկ բեյը, Ֆիլոզոֆ Ռըզա Թեվֆիկը, Իբնուրեֆֆիկ Ահմեդ Նուրի բեյերը դերեր էին կատարում: Երբեք չեմ մոռանա, Ֆիլոզոֆ Ռըզա Թեվֆիկը, Իբնուրեֆֆիկ Ահմեդ Նուրին ավրանացու կերպարով դուրս եկան: Այս շտապ թլպատման իրական պատճառը հետո հասկացանք: «Միություն և Առաջադիմություն» կուսակցության մի գաղտնի ժողով էին անում: Այն կոծկելու համար էին հնարել ու այդպես վարվել:

Հորս մոտիկ բարեկամներից էր պալատական երաժիշտ, կոմպոզիտոր Հայդար բեյը որն ասում էր, թե իր աղջկա գրկում եմ ծնվել: Որդին, Բեհզադ բեյը Թուրքիայի առաջին քանդակագործներից էր: Հաճախ էինք այցելում Հայդար բեյի Բաղլարբաշիում գտնվող առանձնատունը: Այդ առանձնատան դիմաց երկու աշտարակ ունեցող մի առանձնատուն էլ կար: Դա պատկանում էր Կուշուբաշը (Թռչնավաճառների ղեկավար) Հուրշիդ բեյին: Հուրշիդ բեյի գավակները կոմպոզիտոր Մուհսին Սահաբեթբինը և Հալիս բեյը՝ ավագ դուստր Ագյահ Հանըմը սքանչելի դաշնակահարուհի էր: Մյուս դուստրն էլ՝ Էմինե Շադմանը ևս կոմպոզիտոր էր: Կարծես Նեվեսեր Կյուքդեշի նման մի որակ ունեցող ընտանիք էր:

Մուհսին Սահաբեթբինը մի գործ ստեղծելու ժամանակ, երբ նրան լսում

էիր, կարծես թե մեր տան երգեհոն-դաշնամուրն էր նվագում՝ հայրիկիս լսեցնելով և հիացնելով:

Հայրս հայ ստեղծագործողների հետ ավելի լավ համագործակցելու համար հայերեն սովորեց: Հայերեն լավ խոսում, գրում, կարդում էր: Բեմում իր դերերը հայատառ թուրքերենով գրում, հետո դերասանների ստուգում էր: Մահմուդ Բալերը Սուլթան Աբդուլ Ազիզի գլխավոր սենեկապետ Մեհմեդ բեյի տղան էր: Սուլթան Աբդուլ Ազիզը մի օր Մեհմեդ բեյին՝ նրա տուն այցելելու մասին է ասում: Նա էլ հափշտապ կամրջե հյուրատուն է պատրաստում: Այն հետագայում դարձավ: Տնօրենն էլ Քեման Օնեթ բեյն էր: Դպրոցում նախատեսված էր թլպատման արարողություն: Արարողության ժամանակ հայրս մեկ գործողության կատակերգություն, Քավուքլու Համդին էլ օրթաօյուն խաղաց: Երբեք չեմ կարող մոռանա օրթաօյունում Տատիկի ետևում արաբ կնոջ դերը հաջողությամբ մարմնավորած իմ բարեկամ Բուրհան Ֆելեթ բեյին:

Միակ բանը, որ հայրիկիս հետ համաձայնության չեկանք դա նկարչությունից իմ կախվածության պատճառով էր:

-Ուզում ես ինձ նմա՞ն լինես,- հաճախ հարցնում էր: Նկարչությունը ևս դերասանության նման է: Նա հավատում էր, որ չէի կարող ապրուստ վաստակել: Այս համոզմունքն ու տխրությունը մինչ օրս չի իրականացվել:

Հորս սիրած մարդկանցից մեկն էլ Հյուսեին Ռահմի բեյն էր: Անգամ նրա «Ռեսիմլի բիթափում» հրատարակվող «Էջիր Սաբր» (Պարզևատրում-համբերություն) անունով հեքիաթը պիեսի էր վերածել: Հետո էլ սցենարի վերածեց», ֆիլմ նկարեց: Այն Թուրքիայում նկարված առաջին ֆիլմերից էր: Բեմադրիչն էլ հայրս էր:

Հյուսեին Ռահմի բեյը մի օր ասաց, թե ուզում է ինձ մի գաղտնիք վստահել:

-Ես նաև նկարում եմ: Բայց շատ բաներ կան, որ չեմ կարողանում: Օրինակ, ծով եմ նկարում՝ պատի նման է դուրս գալիս: Անհրաժեշտ խորություն չեմ կարողանում տալ, ասելով մոտեցավ:

Հայրիկիս ամենասիրված աշակերտը Ռաշիդ Ռըզան էր: 5 տարի մեր տանն էր մնացել: Նրան Ի. Գալիպ Արջանն էր հետևում: Հայրիկիս Սկյուտարի գլխավոր դատախազ Ֆերիդուն բեյից նամակով թատրոն նրան ընդունելու առաջարկ եկավ: Ինչպես գիտեք, նա մեզ հպարտություն պատճառող արվեստագետ եղավ:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Շեհզադեբաշիում

նկարի, կլիշեյի, աֆիշաների և դեկորների արհեստանոց բացեց, հայր ու որդի սկսեցինք աշխատել: Իմ կյանքում առաջընթացն այսպիսին էր:

Կյանքիս 73 տարիների 53 -ը երկրիս թատրոնին եմ նվիրել: Հաջողություն ունեցած հորս արկածներով լի հիշողությունները թատերասերների նոր սերունդներին փոխանցելով, կարծում եմ, որ պարտականությունս եմ կատարել և մեծ հավատով շնորհավորում եմ ձեզ:»



Թեֆիկ Ֆիքրեթ

ՏԱՐԲԵՐ ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԳԱԼԻՊ ԱՐՉԱՆ ԱՀՄԵՂ ՖԵԻԽ ԲԵՅԸ ՊԱՏՄՈՒՄ Է

Ահմեդ-Ֆեհիմ էֆենդիի հիշողությունների հրատարակության առիթով մեծ բացթողում կլինեք, եթե հանդիպում չունենայի և չգրուցեի բեմարվեստում նրա կողքին սկսած, նրա թանկագին բարեկամի՝ Ի. Գալիպ Արջանի հետ: Ահա այս մտքերով, մահվանից 10 օր առաջ այցելեցի նրան Մալթեփեյում գտնվող նրա առանձնատանը: Պատմելով հուշագրության մասին, խնդրեցի նաև իր հուշերը պատմել: Նրա պատմածները եղածի պես շարադրում եմ:

Ահա թե ինչպես առաջին անգամ բեմ ոտք դնելու նման առաջին դրամս էլ Ահմեդ էֆենդիից այսպես ստացա: Ահա մի հայտարարություն, որը գրել եմ վարպետի մահվան տասնամյակի առթիվ.

Այստեղ Ահմեդ Ֆեհիմ էֆենդիի մասին դուք կարող եք գտնել իմ գիտելիքների և կարծիքների ընդարձակ մտքերը»:

Գրքի ավարտելու տարին մեզանից ընդմիշտ բաժանված Ի.Գալիպ Արջանի այս գրությունը ցած եմ դնում և թանկագին հիշողությունների առջև հարգանքով խոնարհվում եմ:

Ահմեդ Ֆեհիմ էֆենդին մեր երկրի անկրկնելի արվեստագետ, ուսուցիչ է եղել:

Ըստ իս, թատրոնի նկատմամբ նա մանկուց է սեր ունեցել:

Նպատակիս հասնելու համար դիմեցի «Բուրհանեդդին (Թեփսի) հեյեթի Թեմսիլիյեսի» Դ.բեյին: Սա մի երշխավորագիր տվեցի Ահմեդ էֆենդիին:

Ինձ վերցրեց իրենց ընկերություն և Ահմեդ Վեֆիկ փաշայի կատարած Մոլիերի «Բնական սեր» ադապտացված պիեսում մի փոքր դեր տվեցին:

Ահա այսպես եղավ, որ ես առաջին անգամ ոտք դրեցի բեմ:

Ահմեդ Ֆեհիմ էֆենդին բեմադրությունը նախապատրաստելիս այնպես լրջորեն էր վարվում, կարծես այն հանդիսատեսի ներկայությամբ լիներ: Մենք ուշադիր հետևում էինք նրա շարժումներին ու համապատասխանաբար այդպես աշխատում:

Հայրս չգիտեր թատրոնի հետ իմ կապի մասին: Խորթ մարս գիտեր և ինձ

աջակցում էր: Մի օր Ֆեհիմ էֆենդին ինձ իր մոտ կանչեց և գրպանից մեկ մեջիդիյե հանելով:

-Վերցրու: Բայց բոլորը քոնը չէ: Այս փողից սովարաթուղթ, երկնագույն, կարմիր և դեղին թանաք կզնես և դրանով խաղի գունային աղյուսակը կզրես: Տուն վերադարձին մեջիդիյեն մեծ հպարտությամբ մորս ցույց տվեցի:

-Ասում ես թատրոնից փող չեմ առնում, ահա, վերցրու:

Ահա թե ինչպես առաջին անգամ բեմ ոտք դնելու նման, առաջին դրամս էլ Ահմեդ էֆենդիից ստացա: Ահա մի հայտարարություն, որը գրել եմ վարպետի մահվան տասնամյակի առթիվ:

Այստեղ Ահմեդ Ֆեհիմ էֆենդիի մասին դուք կարող եք գտնել իմ գիտելիքների և կարծիքների ընդարձակ մտքերը»:

Գրքի ավարտելու տարին մեզանից ընդմիջտ բաժանված Ի.Գալիպ Արջանի այս գրությունը ցած եմ դնում և թանկագին հիշողություններն առջև հարգանքով խոնարհվում:

ԱՀՄԵԴ ՖԵՀԻՄ

Այս անունն այսօրվա թուրք թատրոնի հիմնաքարում ոսկե տառերով է փորագրված:

Թանգիմաթից սկսյալ այս երկրի զարգացման պատվավոր շարքում նա իր համեստ, հիմնավոր տեղն ունի: Եթե արվեստագետը հասարակությունը զարգացնող և նրա առաջընթացի մեջ առաջատար դեր կատարող իդեալական մարդ է, թատերասերների համար խղճի պարտք է համաշխարհային ասպարեզից հեռանալու տասնամյակին ոգեկոչել այս մեծ արվեստագետին, ով իր կյանքի ամենակարևոր մասը՝ կես դար զոհաբերեց հանուն թատերասերների, հանուն բարձր իդեալի:

Ուղիղ մեկ տարի առաջ կյանքից հեռանալիս, արվեստի ջահը, որ վառել էր իր հոգում վառվող կրակով, ինչպես յուրաքանչյուր հերոս, նա թողեց իրեն շրջապատողներին ու իր ճանապարհով գնացողներին: Նա մարգարեի խիզախությամբ ու անձնուրացությամբ այս ջահը տարավ հին ռեժիսների ամենամութ միջանցքներով, ամենադժվար ու սարսափելի ճանապարհներով և առանց հանգցնելու այն հասցրեց մեզ: Այսօրվա մեր բեմի, արվեստի արտաքին տեսքը ինչ-որ չափով հիշեցնում է լույսն ու կրակը:

Ներողություն եմ խնդրում իմ տիրոջ սիրելի հոգուց՝ ուշացումով նրան հի-

շելու համար: Իր իդեալին հասնելու և այս օրվան պատրաստվելու համար նա բազմաթիվ խոչընդոտներ է հաղթահարել: Նա բազում ցավեր է կրել, ամեն օր թաղելով մի նոր փառասիրություն:

Որքան էլ որ մենք ուշացանք մեր արվեստի պատմության այս մեծ գործչի հիշատակը ողորմությամբ և երախտագիտությամբ ոգեկոչել, պատմությունը փորագրել է նրա անունը այն հավերժական էջում, որը վերապահված է մեծ հասարակության քաղաքացիական մակարդակը բարձրացնելու փորձ կատարած առաջնորդներին:

Հասարակությունների քաղաքակրթական պատմությունը գրող և հիշող արվեստագետների քարավանում ի՞նչ դժբախտ քարավան է թատրոնի դերասանների: Ինչը որ վեցերորդ դարում ապրած նկարիչ «Թեսալիսն» էր հույների համար, նույն բանն է թուրք թատրոնի դերասանների մեծ վարպետ «Ֆեհիմի» համար:

Քանզի թատրոնը կերպարվեստի մյուս ճյուղերից ամենաանշուքիալ կալ գործն է, և թատրոնի դերասանը ինչպես մյուս արվեստագետները, թեև կատարելություն է ցուցաբերում արվեստի ստեղծման և կատարման մեջ, բայց ճակատագրի առումով նա ամենադժբախտն է բոլորից: Որովհետև թատրոնի արտիստի արվեստը հեղինակուկ է ու անկայուն՝ ըստ իր խորության, նրբության և հյուծվածության: Այն հատուկ է միայն ներկայացման պահին:

Դերասանի խոնավ ձայնը երբեք նոտայի տեսքով չի մնացել, իսկ նախադասության ինտոնացիայի մեջ նրա տված գույնն ու իմաստը երբեք արձանի նման չեն քարացել:

Բեմը, արվեստը ստատիկ չի, այլ դինամիկ է:

Դերասանի ձայնը, անցնելով լարվածության միջով, արտահայտում է այն մարդու հոգին, ում մեջ մտնում է, իր ազդեցությունն է ունենում և մի պահ՝ մարում: Ինչպես Վիկտոր Հյուգոն է ասել. «քանդակագործը մահապահ՝ մարում է, գործը մնում է, նկարիչից հետո՝ նկարները, կոմպոզիտորը թողնում է նոտաները, ճարտարապետն էլ հուշարձաններ է թողնում, բայց դերասանը, որ գնում է, ի՞նչ է մնում նրանից հետո»: Դերասանը բեմում իր անհատականության արտահայտման համար ողջ հոգին է տալիս: Սակայն երբ կյանքի այդ անկյունում վարագույրը փակվում է, նրանից հետո մնացածը ի՞նչ է:

Հանդիսատեսի ականջներում, երևակայության մեջ մնացող նրա հոսող ձայնի ստվերն է մնում: Ափսոս որ բեմի մահացող արվեստագետը, այդ

գործն իր հետ տանում է:

Դրա համար էլ դերասանը անշնորհակալ արվեստի ստրուկ է:

ՎԱՐՊԵՏԻ ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ֆեհիմ էֆենդին հազվագյուտ, հարուստ և գունեղ, գեղարվեստական խառնվածքով արվեստագետ է: Բեն դուրս ելած չելած նրա անհատականությունը պարուրվում էր օդով և մինչև վերջ բաց չէր թողնում և հանդիսատեսին ուզածի պես փաթաթում էր օդով: Տրամադրությունը, որ հրամանում էր, մինչև վերջ բաց չէր թողնում: Նրա ստեղծած անհատականության ատրան սկսեց արթնանալ: Նրա որդեգրած դերերում կերպարներն այնքան ռեալիստական և այնքան աշխույժ էին, կարծես ապրում էին: Ինչպես Մոլիերը կասեր. «Քանի որ նա անձամբ խանդավառ ու հուզված է, նրա ուրախությունը կանցնի բեմեզրը և կտարածվի հանդիսատեսի վրա»:

Արվեստագետի և հանդիսատեսի միջև անտեսանելի, անարտահայտելի զգացմունքային շփում կա, հուզական շփում: Իսկ մեծ արվեստագետն այն մարդն է, ով առաջին իսկ պահին կարող է ապահովել այս հոգետրերելույթը:

Ահա այստեղ է Ֆեհիմ էֆենդիի արվեստի գաղտնիքը: Նա դեռ բեմում առաջին քայլն արած չարած, առաջին նախադասություններն ասած չասած, հանդիսատեսին թախաման էր դարձնում:

Այս տերմինը նրան տրվել է, քանի որ նա խառնվածքի առումով ավելի շատ կատակերգական կերպարներ է ստեղծել: Բայց նա պարզապես «զվարճալի», «զվարճալի դերասան» չէր, նա ավելի շատ կատակերգու էր: Սա նման է «առևտրականի թատրոնի» և «արտիստի» միջև եղած տարբերությանը: Նրա հոգին, որն օժտված էր իսկական կատակերգուի հատկանիշներով, այնքան փափուկ էր ու հարուստ, որ տեղավորվում էր ցանկացած կերպարի մեջ:

Իր ժամանակի «կոմ-կի քաղաքները» մասնագիտական առօրյայի հետ կապված իդենտներ էին:

Ամեն ներկայացման ժամանակ, երբ նրանք կատարում են «կատարողական շարադրանք»՝ հանդիսատեսին ծիծաղեցնելու համար, ինչ էլ որ լինի պատճառը, իրենց հայտնի պատառոտված ֆեսերով ու կտոր-կտոր շալկած հագուստով, վարպետից աշակերտ փոխանցված կլիշեներով, իսկ

հաճախ անբարոյական ոտանավորներով, նա միշտ ցույց է տալիս իր ներկայացրած կերպարների էությունը եւ հազնվում էր ըստ իր մակարդակի ու չէր անցնում պիեսում գրված բառերից այն կողմ:

Նա գիտեր, որ դերասանի առաջին պարտականությունը դրամատուրգի գաղափարների ու զգացմունքների հավատարիմ ներկայացուցիչ լինելն է: Ֆեհիմ էֆենդին իր դերին համապատասխան կերպար էր ստեղծում և գիտեր, թե ինչպես ուրախություն տարածել բոլոր տեսակի մարդկանց վրա՝ ապրելով իր մաքուր, պարկեշտ և միայնակ դերի անհատականությունը:

Վարպետի դեմքը, միմիկան հոգեկան արտահայտությունների աղբյուր էր, որը հարմար էր արտահայտելու բոլոր տեսակի հուզմունքներն ու զգացմունքները, որոնք կարող էին առաջանալ մարդկային հոգում: Ի՞նչ է «միմիկան» և ինչպե՞ս է այն արտահայտվում դեմքի վրա: Առաջին անգամ դա մենք նրանից սովորեցինք: Նրա Մոլիերի «Դժվար ամուսնություն» կատակերգության մեջ Իվագ աղայի դերում լսելով շատախոս փիլիսոփային, դեմքին տեսնելով այնպիսի զգացմունքների արտահայտությունների արտացոլումը, ինչպիսիք են երկինաստությունը, զարմանքը, անտարբերությունը, զայրույթը և ըմբոստությունը, արվեստի յուրահատուկ դրսևորման և հաճույքի, ուրախության անվերջ աղբյուր ես զգում: Նրա արտիստիկ խառնվածքը ցույց տվեց փոփոխությունների խորության այնպիսի հարստություն, որ հազարից մի նկարիչ անգամ չէր կարող դա ունենալ:

«Լաբիշ» կատակերգության մեջ զվարճալի այդ դերը դիտելիս քահքահ ծիծաղում ես ու ծիծաղում, իսկ նրան «Հիմմեթ աղայի» դերում տեսնելիս՝ արցունքների մեջ ողողվում ես:

Գրեթե չկար մեկը, ով չհուզվեր՝ տեսնելով նրա համակրելի դեմքը, խելացի, պայծառ աչքերը և լսելով նրա բյուրեղյա մաքուր ձայնն ու զրնգացող ծիծաղը:

Աշխատում էր մաքուր ու բծախնդիր, իսկ փորձերն անում էր լրջությամբ ու ուրախությամբ, ասես ներկայացման մեջ լիներ: Նա պատահականության չէր թողնում ոչ մի Կոլպոյու: Նախօրոք ծրագրում էր, թե ի՞նչ է անելու ներկայացման մեջ ու կգործեր չափված:



Առաջին թուրք մեծ արվեստագետ հանդիսացող Ֆեհիմ էֆենդին մեր բեմը եվրոպական ուղով գնալու բարի լուրը բերող առաջին մարդն էր: Նրանից նախ տեղեկացանք, որ թատրոնը սոսկ ավանդույթ ու կարծրատիպային կրկնօրինակ չէ, այլ մշակույթ: Լինելով մասնագիտական հասուն կուլտուրայով ու նրբաճաշակությամբ օժտված մարդ, իր շուրջը հավաքած երիտասարդներին վարպետը միշտ խորհուրդ էր տալիս ընթերցել:

Ֆեհիմ էֆենդին Սկյուտարի կողմում փոքրիկ մի տուն ուներ: Երբեմն այցելում էի: Ամեն անգամ ինձ հետ անմիջապես սկսում էր խոսել Մոլիերի երկերի հայտնի թարգմանիչ Ահմեդ Վեֆիկ փաշայի մասին:

-Ահա, - ասում էր, նա մեր թատրոնին ամենամեծ լավությունն արած մարդն է...

Թարգմանել է Մոլիերի գլուխգործոցները, թատրոնի արմատները բերել ու տնկել մեր երկրում: Ալլահն օրհնի նրան...

-Տես, լսիր, քեզ «Միզանտրոպից» մի պատկեր կարդամ:

Եվ նա ծանր տոնով կարդաց «Միզանտրոպից» մի պատկեր: Հետո ոգևորված ավելացրեց.

-Ահ Մոլիեր, Մոլիեր... Թատրոնը վերակենդանացնող, շենացնող մարդ:

Այս երկերը ցույց են տալիս, մինչև արմատները, մարդու ինչ լինելը: Մարդկային կերպարները շատ են և բոլորի էությունը սրանց մեջ է: Մոլիերի պիեսները թատրոնի համար ուղենշային են: Նրանից հետո գրված բոլոր կատակերգություններում խնդիրները, կերպարները հնարավոր է այստեղ կգտնես: Նա ամբողջ «մարդուն» և «կյանքն» է գրել: Եվ այն էլ՝ կատակերգությունների ակնոցով... Միայն թե իմացեք, որ այդ կատակերգությունների դառը կողմերն էլ կան: Դերասանը, ով խաղում է Մոլիերի կատակերգություններում, հեշտությամբ կարող է խաղալ բոլոր այս նոր կատակերգություններում՝ եթե խաղում է ըմբռնումով: Դրա համար ամեն մարդ պետք է կարդա այդ ստեղծագործությունները... Նա պետք է վայելի... Ապագան այն դերասանին է, ով շատ է կարդում ու ժամանակի հետ առաջ է գնում... Կարդացեք, հետաքրքրվեք գրականությամբ, թե չէ վաճառական կղառնաք ու կզնաք հեռու: Ֆեհիմ էֆենդին այս կարգի հակիրճ խորհուրդներով ամեն առիթով փորձում էր արթնացնել ինքնասիրահարված երիտասարդներին և խրախուսել նրանց դեպի առաջադիմություն:

Մի օր Սկյուտարի Դողանջըլարի փոքրիկ պարտեզի թատրոնում մի ներկայացման փորձ էր: Երիտասարդներից մեկին հին թատրոնի ավանդույթով «Երիտասարդ կոմիկ» կրծքանշան են տվել: Չափազանց ինքնավստահ ու անտաղանդ երիտասարդը ցանկանում էր ծիծաղել, ինքն իրեն ծաղրում էր, խոսում էր տարօրինակ ձայնով, շրջում էր խոսքերը, անիմաստ կնճիռներով շարունակում շարժել դեմքն ու աչքերը: Լսվեց վարպետի ձայնը.

-«Տղաս», - գոռում էր նա: Կոմիկ լինելու համար ի՞նչ կարիք կա ինքզինքդ ծաղրել:

Թատրոնի բեմը ոչ այլ ինչ է, քան կյանքի բեմ: Մենք այստեղ խաղեր չենք խաղում, մենք աշխատում ենք կյանքի որոշ օրինակներ ցույց տալ: Այդպիսի տոնով են խոսում այն զվարճալի մարդիկ, ովքեր մեզ ստիպում են ծիծաղել կյանքում: Իրենց դեմքն ու աչքերը այդպես պատշաճ ու անպատշաճ են շարժում:

Պիեսը կյանք է: Դրանցից մի մասը զվարճալի են, որոշները՝ տխուր: Մենք չենք պատրաստվում մեր հանդիսատեսին ծիծաղեցնել... Այս դերը, որ խաղում ես, հիմար մարդ է: Հիմա դու պետք է այնպես անես, որ նմանվի այն օրինակներին, որոնք երբեմն տեսնում ենք կյանքում, լինի տեսակ, ոչ թե ծաղրանկար, հասկացա՞ր:

Երիտասարդը կես բարկացած տոնով հարցրեց.

-Լավ, ասա ինչպե՞ս խաղամ...

Ֆեհիմը.

-Ինչպե՞ս, բնական...

Երիտասարդը.

-Այսինքն..

-Այսինքն՝ ինչպես կա: Առանց ոչինչ ավելացնելու...

Անսպառ են վարպետի օրհնությունները մեր թատրոնին... Բնության առատաձեռն ձեռքով իր գլխին դրված գնահատանքի թագը մեծ արվեստագետն այն լուսապսակով իր երկրպագուների ձեռքով հավերժական հանգրվան տարավ:

Չի կարելի համարել, որ մենք հարգանքով ու երախտագիտությամբ նշելով նրա անունը այս էջերում, հատուցել ենք նրա ջանքերի համար՝ թատրոն հասկացությունն իր ամենաարժանապատիվ իմաստով երկրի բոլոր անկյուններում տարածելու համար:

ԴԵՊՔԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Ահմեդ Ֆեհիմը ծնվել է Սկյուտարում 1851 թվականին: Նրա հայրը հայտնի գեղագիր էր և գիտուն մարդ էր՝ Աբդուլբադիր էֆենդի անունով:

Աբդուլբադիր էֆենդին իր որդուն տվել է Թոփիհանե, քանի որ նա ցանկանում էր, որ իր հաջորդը կարողանա սեփական ջանքերով հաց վաստակել: Փոքրիկ Ֆեհիմն այստեղ աչքի է ընկել և աշխատել «İdare-i Mahsusa» գործարանում որպես խառատ: Որոշ ժամանակ անց նշանակվել է Արդյունաբերական դպրոցի արտադրամասի ղեկավար: Նա նաև հետաքրքրված էր լուսանկարչությամբ, ցինկոգրաֆիայով և տեխնիկայով: Երիտասարդ ու կենսուրախ երիտասարդը հաճախ էր գնում Կեդիքփաշայի թատրոն և բեմադրություններ դիտում: Ամենաշատը նրան դուր էր գալիս թատրոնը: Մի օր նա հանդիպեց այս թատրոնի դերասաններին Կեդիկ փաշայի ժամագործ Սկրտիչ Ադայի խանութում: Երբ 1876 թվականին սկսվեց ռուսական պատերազմը, Կեդիկ փաշայի թատրոնի մի քանի հայ դերասաններ փախան Էդիրնե: Դերասաններից մի քանիսը, որոնց նա հանդիպեց Սկրտիչ Ադայի խանութում, առաջարկեցին թատերասեր Ֆեհիմ էֆենդիին, որ միանա թատրոնին:

Ըստ էության, նա իր հոգում արվեստի անդիմադրելի ցանկություն էր զգում:

Երիտասարդ Ֆեհիմն ընդունեց այս առաջարկը: Եվ առաջին անգամ բեմ դուրս եկավ «Կրկնակի խուլ» կատակերգությունում «Բոնիֆասի» դերակատարմամբ:

Կեդիք փաշայի թատրոնից հետո Ֆեհիմ էֆենդին ժամանակի նշանավոր մարդկանցից Ֆասուլաճյանի ներկայացուցչական պատվիրակության հետ հյուրախաղերի է գնացել Բուրսա և գեղեցիկ զուգադիպությամբ հանդիպել Ահմեդ Վեֆիք Փաշային, ով այդ ժամանակ Բուրսայի նահանգապետն էր:

Պատվիրակությանը հովանավորող փաշայի ուշադրությունն առավել գրաված դերասանը Ֆեհիմ էֆենդին էր՝ իր խելացի ու համակրելի դեմքով: Վեֆիք փաշան, ով առաջին անգամ սկսեց թուրքերեն դասավանդել պատվիրակությանը, Մոլիերից իր թարգմանած և ադապտացված շատ գործերում հատկապես Ահմեդ Ֆեհիմ էֆենդիին դերեր տվեց, և պատմեց նրան Մոլիերեի մասին: Փաշայից դասեր քաղելը շատ շահավետ զարգացումներ է առաջացրել երիտասարդ Ֆեհիմի հոգում և նրա մասնագիտական մշակույթի մեջ:

Քանի որ նա առանձնանում էր հատկապես Մոլիերի կատակերգությունները ժողովրդին ներկայացնելով, Բուրսայից վերադառնալուն պես մեծ հաջողություններ ունեցավ ներկայացուցչական կոմիտեներում, որոնց անդամակցում էր, և իր անասան համբավը տարածեց՝ չնայած բազմաթիվ դառը փորձառությունների, տառապանքների և զրկանքների: Նա հիմնել էր ընկերություն իր ղեկավարությամբ և պատասխանատվությամբ (Օսմանյան կատակերգության կոմիտե):

Այդ օրվանից Ֆեհիմ էֆենդին ավելի հարմար դաշտ գտավ իր աշխատանքի համար: Թուրքական բեմում սկսեց նոր մթնոլորտ և թարմ բուրմունք հայտնվել: Ժողովուրդը, ում խանդավառությունը փչացրել էին կոտրված թուրքերենով բեմադրված վատ մեկողրամաները, այժմ ուզում էին բեմում մաքուր թուրքերեն լսել և պարկեշտ կատակերգություններով զվարճանալ: Ֆեհիմ էֆենդին սկսեց թուրքական բեմ տեղափոխել ժամանակակից ֆրանսիական թատրոնի կատակերգություններն ու վոդևիլները՝ ընտրված ու թարգմանված նուրբ ճաշակով:

Սահմանադրական միապետության ժամանակ (1908 թ.) նա է առաջինը բեմադրել Նամըք Զեմալի «Հայրենիք կամ Սիլիստրա» պիեսը:

1914 թվականին, աշխատանքից հետո, որը տևեց մինչև ընդհանուր պատերազմը, Ստամբուլի քաղաքապետարանի կողմից, Ֆրանսիայից հրավիրվել էր հայտնի ռեժիսոր և թատերոնի տնօրեն Անջելո Անտուանը՝ կոնսերվատորիա հիմնելու համար: Նա մասնակցել է Ֆեհիմ էֆենդիի և նրա վետերան ընկերոջ ներկայացմանը:

Որպես ուսուցիչ՝ աշխատել է նաև Դարուլբեդայիի կատակերգության բաժնում: Վարպետը մահացել է 1930թ. օգոստոսի երկրորդ օրը ժամը տասնհինգ անց կեսին՝ կաթվածահարության և միզապարկի լուրջ ստենոզի հետևանքով: Թաղված է Բույուկ ադայի (Մեծ կղզու) Թեփեկոյ գերեզմանատանը:

Ի. ԳԱԼԻՊ ԱՐՉԱՆ

Ստորև ներկայացնում ենք Սաֆա Պեյամիի անեկդոտը, որը հրապարակվել է «Cumhuriyet» թերթի «Ինչպես կարծում են» սյունակում 31.7.1937թ.

ՖԵՀԻՄ ԷՖԵՆՂԻԻ ԾԻԾԱՂԸ

] Մինչ մեր երկրում կատակերգության արվեստը Օրթա օյունից պարզ էվոլյուցիայի միջով անցավ մինչև պարային բեմ, մեկ այլ ճյուղ գնաց դեպի թուրքական բեմում հունա-լատինական մշակույթի ձևավորված եվրոպական հումորի ըմբռնումն ու հաստատումը:

Այս առումով սկզբում որպես հեղինակ հանդես է եկել Վեֆիք փաշան, իսկ որպես նկարիչ՝ Ֆեհիմ Էֆենդիին: Աշխատեցին մեզ հուշել, որ քաղաքակիրթ ծիծաղը ծնվում է մտորումների ծամաձուռության մեջ: Այս պատճառով հիսուն տարի թուրքական բեմը լցրած Ֆեհիմ Էֆենդիի ծիծաղը կոմիկական չէ, որն իր տարօրինակությունը քաղում է անսպասելի իրադարձությունների և բանականության կոպիտ հակադրությունից: Նա մեծ արվեստով և բանականությամբ աղետի թույնի համը վերածում է խորհրդածության ուրախության:

Ահա թե ինչու Ֆեհիմ Էֆենդիին երբեք գռեհիկ չէր և չէր հասկացվում չոր ամբոխի կողմից.

Ահա թե ինչու նա հինգ տարի առաջ օգոստոսին ասաց.

«Մեզանից քչերը կան, որ չեն հիշում, որ նա մահացել է օգոստոսի երկրորդ օրվա կեսօրվա ժամը երեքն անց կեսին: Քչերը գիտեն, որ ես ապրել եմ նրանից յոթանասուն տարի առաջ և որ նա թուրքական բեմում կենդանի է պահել ֆրանսիական կատակերգությունն ու նրբագեղությունը Մոլիերից մինչև Լաբիշ: Թերթերի և գրքերի ձեռագրերում նա «Մեծ Ֆեհիմ է»: Բայց ոչ բոլորը գիտեն, թե ինչու է այն մեծ, և շատերը գիտեն, թե ինչու է այն փոքր:

Որովհետև Ֆեհիմ Էֆենդիին հիսուն տարի փորձեց լռեցնել Օրթա օյունից եկող ծիծաղը: Այն, որն ուզում էր ծիծաղեցնել բանականությանը և իմպրովիզային կատակերգության թիթեղյա աղմուկը, բայց դա նրան չհաջողվեց: Այսօր հենց այդ իմպրովիզային կատակերգությունն է, որ գերիշխում է նույնիսկ պաշտոնական թուրքական բեմում: Մի քանիսի ականջներում մնացել են Ֆեհիմ Էֆենդիի ծիծաղի արձագանքները, որոնք մտքի ու բանականության հազվադեպ արտացոլումներ են:

(Peyami SAFA)

Ո՞Վ Է ՎԻԶԵՆԹԱԼԸ, Ո՞Վ ՀԱՃԱԽ ՀԻՇԱՏԱԿՎՈՒՄ Է ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հետաքրքիր է, ո՞վ էր Վիզենթալը, ով ձեռք բերեց Ահմեդ Վեֆիք փաշայի նման մեծ կուլտուրայի տեր մարդու մտերմությունը: Մենք սկսեցինք հետազոտություններ և հետաքննություն կատարել: Եվ... Մենք գտանք և խոսեցինք ութսունամյա երրորդ Վիզենթալի հետ, որը որպես խորհրդատու է աշխատում մի բանկում:

Վիզենթալների պատմությունը հետևյալն է. Երբ սուլթան Աբդուլմեջիդը փաղիշահ էր, պրուսական տոհմից մի արքայազն էր եկել Ստամբուլ՝ շնորհավորելու նրան:

Փաղիշահը ժամանակին ուզում էր, որ հրետանու սպա ուղարկեն մեր երկիր՝ դասավանդելու արդիականացվող բանակում:

Արքայազնը սիրով ընդունեց դա և Բեռլին վերադառնալուն պես ընտրեց գնդապետ Ալեքսանդր Վիզենտալին և ուղարկեց Թուրքիա: Ընտանիքով Ստամբուլում հաստատված գնդապետն արագորեն աչքի ընկավ իր աշխատասիրությամբ ու հմտությամբ և հասավ փաշայի (գեներալի) կոչման: Բայց դժբախտաբար 1844թ. կայծակը նրան հարվածեց Մելիմիյե գորանոցի այգում քայլելիս: Սա անսպասելի մահ էր: Նրա կինը չվերադարձավ հայրենիք: Կառավարությունը անհրաժեշտ օգնություն ցուցաբերեց:

1845 թվականին ծնվեց է նրա որդին՝ Վիլիելմ Վիզենտալը:

Մայրն իր ողջ կյանքը նվիրեց զավակի դաստիարակությանը: Վիզենթալը կրթությունն ավարտել է Ստամբուլում, այնուհետև ուղարկվել Փարիզ: Նրա ընկերությունը Ահմեդ Վեֆիք փաշայի հետ սկսվում է Սենթ-Լուի դպրոցի ժամանակներից: Վիլիելմ Վիզենթալը, ով շատ լավ ծանոթ էր թուրքերենին, ֆրանսերենին, գերմաներենին, իտալերենին, հունարենին, արաբերենին և պարսկերենին, կրթությունն ավարտեց Ֆրանսիայում և 1872 թվականին վերադարձավ Ստամբուլ, նշանակվեց ֆինանսների նախարարության տեսուչ: Այս պաշտոնում նա մնաց մինչև 1879 թվականը: Նրա մտերիմ ընկեր Ահմեդ Վեֆիք փաշան Վիզենտալին արտաքին գործերի նախարարությունում պաշտոնի նշանակեց: Փաշայի պաշտոնակցությունից հետո նա հրաժարական տվեց և որպես թարգմանիչ և գրող աշխատեց Ահմեդ Միդհադ Էֆենդիի «Tercüman-ı Hakikat» և Ահմեդ Ջադեթ բեյի «İk dam» թերթերում (1890 թ.), թարգմանիչ և գրող՝ «Սարայ» թերթում: Միևնույն ժամանակ նա աշխատում էր որպես «Պալատական թարգմանիչ»: 1891 թվականին նա

մտավ «Ինժեներական դպրոց» որպես ուսուցիչ: Նա այս պաշտոնում մնաց մինչև իր մահը՝ 1900 թ.: Նրա տպագրած և չհրատարակված գործերից է նաև 1805 թվականին գրված առ Կարապետի կողմից հրատարակված 1075 էջանոց «Ֆրանսերենից թուրքերեն» գրպանի բառարանը:

Նրա որդին՝ Ֆրեդերիկ Վիգենթալը, ով մեզ փոխանցեց այս տեղեկությունը և մահացավ երկու տարի առաջ, ծնվել էր Ստամբուլի Քաղաքային թաղում 1888 թվականին:

Գալաթասարայի կայսերական դպրոցը ավարտելուց աշխատել էր Օսմանյան բանկում, և հաճախել Իրավաբանական դպրոց: Ֆրեդերիկ Վիգենտալը, ով լավ տիրապետում էր լեզուներին, ինչպես իր պապն ու հայրը, 1926թ. թվականին միացավ իրենց հիմնադրած «Régie Ggnorral de Chemin de fer de Paris» -ին, (Փարիզյան երկաթուղու գլխավոր ընկերություն) որպես ընկերության Թուրքիայի ներկայացուցիչ:

Սա շարունակվել է մինչև 1945 թվականը՝ ընկերության լուծարման օրը: Կինն ավարտել է Ամերիկյան քոլեջը և Գեղարվեստի ակադեմիան: Նա կիրք տիկին էր և ինչպես ամուսնը խոսում էր մի քանի լեզուներով: Նրանց որդին՝ Վիլի Վիգենթալը, մահացել է սրտի կաթվածից երիտասարդ տարիքում, երբ Իզմիրի շրջանի ապահովագրական ընկերության մենեջեր էր: Չորս սերունդ Թուրքիան որպես հայրենիք ընդունած այս ընտանիքի վերջին որդին, ինչպես վերը նշեցինք, Ֆրեդերիկ Վիգենթալն էր, ով կյանքից հեռացավ նախորդ տարի ութսուն տարեկան հասակում:

ՄԵՐ ԵՐԿՐՈՒՄ ԹՈՒՐԲԵՐԵՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՅՈՒԼԼՈՒ ՀԱԿՈՔԻՆ ՏՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՏԵՔՍԵ

Առաջին հոդված. Տերսաադեթում (Ստամբուլ) և հարակից վայրերում (Էյուր, Գալաթա, Սկյուտար) թուրքալեզու դրամա, ողբերգություն, կատակերգություն և վոդևիլային պիեսներ ներկայացնելու համար 1291-ի (1874), Ռամադանից սկսյալ Գերագույն պետության հպատակներից Գյուլյու Հակոբին տասը տարի ժամկետով տրվել է արտոնություններ, ինչը մեծ պատիվ է նրա համար:

Երկրորդ հոդված. Արտոնությունը վերաբերում է պիեսներին, որոնք գրվել կամ թարգմանվել են թուրքերենով և չեն ներառի այնպիսի պիեսներ,

որոնք կներկայացվեն օպերայի նման երգերով: Այն չի ներառի այնպիսի պիեսներ, որոնք կներկայացվեն այնպիսի երգերով, ինչպիսին օպերան է:

Երրորդ հոդված. Այսուհետ բացվող մյուս թատրոններին սահմանափակ ժամկետում արտոնագիր չի տրվի ցուցակում նշված պիեսները թուրքերենով խաղալու համար:

Չորրորդ հոդված. Արտոնություն ունեցող թատրոնը պարտավոր է վեց ամսվա ընթացքում գործել Սկյուտարում, Գալաթայում, Թոփիհանում և Բեյոզլում՝ երեք տարվա ընթացքում, իսկ Ստամբուլում՝ արտոնագրի տրման օրվանից վեց ամսվա ընթացքում: Ժամկետները եթե չպահպանվեն՝ կզրկվեն արտոնության իրավունքից:

Հինգերորդ հոդված. Քաղաքապետը կտեղեկացնի կառավարությանը թատրոնի համար իր ընտրած վայրերի մասին, իսկ կատարումը կիրականացնի այն բանից հետո, երբ ոստիկանությունը ստուգի և քաղաքապետարանը պարզի, որ վնաս չկա:

Վեցերորդ հոդված. Թարգմանված կամ գրավոր պիեսներ չեն ներկայացվի թատրոնում, քանի դեռ դրանք նախապես չեն տրվել քաղաքապետարանին և լիցենզիա ստացել:

Յոթերորդ հոդված. Առաջին տարում կներկայացվեն տաս տեսակի երկեր, որոնք հետագայում կընդլայնվեն:

Հոդված ութերորդ. Անկախ շահույթից կամ վնասից, ներկայացումները յուրաքանչյուր տարի կտրվեն երեսուն անգամ Սկյուտարի թատրոնում և հիսուն անգամ՝ Գալաթայի և Ստամբուլի թատրոններում:

Իններորդ հոդված. Ներկայացումը երեք անգամ տրվելուց հետո, ուզածի չափ կխաղարկվի ի նպաստ աղքատների, իսկ հասույթը կտրամադրվի քաղաքապետարան՝ ծախսերը հոգալուց հետո:

Տասներորդ հոդված. Հաստատված խորհուրդը ամուսնության արտոնություն ունեցող անձի դեպքում Գերագույն դատարանին դիմելու դեպքում անհրաժեշտ պայմանավորվածություններ կկատարի և անհրաժեշտ թվով անձնակազմ կհավաքագրվի թատրոնից դուրս՝ ներկայացումների ժամանակ: Ներկա կլինեն ոստիկաններ:

Հոդված տասնմեկերորդ. Թատրոնի դահլիճի տարբեր տեղերի արժեքը չի գերազանցի վերը նշված չափը:

Առաջին կարգի օթյակ 60
Երկրորդ կարգի օթյակ 40
Երրորդ կարգի օթյակ 20
Մուտքը 6
Բազմոց և բազկաթոռ 20
Համարակալված բազմոց 15
ևս 10
Նոմինալ վարձատրություն, անձնական վարձատրություն 5

(*) Ֆեհիմ բեյի հուշերում հաճախակի հիշատակված և Թուրք թատրոնում կարևոր դեր խաղացած Գյուլյու Հակոբ Էֆենդիին այս փաստաթուղթը տալիս է թուրքական գործեր կատարելու արտոնություն: Ներկայացնում ենք բառացի՝ այդ օրվա մթնոլորտն արտացոլելու համար:

15 Safer 287 - 4 մայիս 86 (17 մայիս 1870)



ՔԱՌԱՐԱՆ

Ալաթուրքա – թրքական ոճով, թրքական ձևով

Քալքը բազար -ձկան շուկա
Բողազիչի-Ոսկեղջյուր

Պայմագամ -թաղապետ
Գյուլլի Հակոբ – պոլսահայ ականավոր դերասանապետ Հակոբ Վարդովյան

Պալլաք-վարսավիր
Դերբեյ-Ֆեռդալ

Ձեյբեկ-Իզմիրի շրջանի թուրքական ցեղ

Թաբլո -նկար (ֆր.)
Թայֆա -դերասան
Թուլուաթ -իմպրովիզացիա, իմպրովիզացիայի թատրոն
Թեփեբաշի- Պոլսի կենտրոնական թաղերից
Թոփիանե-արսենալ, զինանոց
Թուրա- սուլթանական թույլտվությունն ապացուցող դրոշմանիշ, կնիք

Իբիշի դեր-ապուշի, հիմարիկի դեր
Իննալահ Մասսաբիրին -հուսով եմ մասսաբիրին

Լաջիվերդ-մանուշակագույն
«Լալեի» շրջան-Երբ Օսմանյան կայսրությունում մողայիկ դարձավ
Հոլանդիայից վարդակակաչներ բերել և տարածել երկրով մեկ

Կարագյոզ – փողոցային, ստվերների, տիկնիկային թատրոն, երբեմն
տեղում հորինվող սյուժեներով
Կադը գյուլ (Քաղըքեոյ) - Պոլսի թաղերից
Կլլի (կլլեյ) -կուլ տալ
Կուֆի- տառատեսակ

Մաքրաաի Օսմանի -Տպարան «Օսմանի»

Մեզեներ-նախուտեստ, խավարտ, սալաթներ

Մյուսուրդար, Գյուկսուի, Մաքրիքեոյ, Բաղլարբաշը Պոլսի թաղերը և արվարձանները

մեթելիկ - կոպեկ

Մյուսուրդար, Գյուկսուի, Մաքրիքեոյ, Բաղլարբաշը Պոլսի թաղերը և արվարձանները

Մյուքասարիֆ-շրջանի ոստիկանական ղեկավար

Մեզեները-նախուտեստ, խավարտ, սալաթներ

Յըլդըզ -սուլթանի պալատը Պոլսում: Գրաքննիչներն արգելում էին օգտագործել պալատի անունը

Շաթո -դոյակ (ֆր.)

Չավուշ – սերժանտ

չարսաֆ -սավան

Պերա-Պոլսի կենտրոնական, եվրոպական թաղերից

Պունտո-տպագրական տառատեսակ

Ռեժի -ծխախոտի հայտնի ընկերություն

Ռեսիմլի քիթափ -նկարագարդ գիրք

Սադրագամ- մեծ վեզիր

սիմիթ - փողոցում վաճառվող օղակաձև էժան խմորեղեն

սուտ դոլմա-առանց մսի, սոխով

սմոկինգ -պաշտոնական կոստյում

սուտ դոլմա -միջուկը մսի փոխարեն սոխով է

սիմիթ - փողոցում վաճառվող օղակաձև էժան խմորեղեն

Սուտ դոլմա -միջուկը մսի փոխարեն սոխով է

Քեդինգոտ -երկար բաճկոնով պաշտոնական հագուստ, համերգային

կոստյում

Փլաքի-սպիտակ լոբիով պոլսական ճաշատեսակ

Օրթագյուղ- Պոլսի թաղերից

Օրթա օյուն - թատրոն բաց երկնքի տակ, առանց հիմնակա տեքստի, նաև լարախաղացներով, ծաղրածուներով



ԱՀՄԵԴ ՖԵՀԻՄ ԲԵՅԻ
ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(1851-1930)

ВОСПОМИНАНИЯ
АХМЕД ФЕГИМ БЕЯ
(1851-1930)



ՀԱՍՄԻԿ ԱՏԵՓԱՆՅԱՆ

Ծնվել է 1950թ. Երևանում, մտավորականի ընտանիքում: 1972թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի Արևելագիտության ֆակուլտետը, թուրքերեն լեզու և գրականություն մասնագիտությամբ:

1972-1997թթ. աշխատել է Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտում: 2005թ. մինչ օրս աշխատում է նույն ինստիտուտում, որպես առաջատար գիտաշխատող:

Միաժամանակ, 1992-93թթ. աշխատել է ՀՀ ԱԳՆ Մերձավոր և Միջին Արևելքի վարչությունում, ապա՝ 1995-98թթ. դիվանագիտական առաքելությամբ մեկնել Ժնև, աշխատել ՄԱԿ-ի և միջազգային այլ կազմակերպություններին առընթեր ՀՀ Մշտական ներկայացուցչությունում և Շվեյցարիայում ՀՀ Գլխավոր հյուպատոսությունում:

1987թ. պաշտպանել է պատմական գիտությունների թեկնածուական թեզ՝ «Հայատառ թուրքերեն գրականության դերը Օսմանյան կայսրության սոցիալ-մշակութային կյանքում» թեմայով:

«Հայատառ թուրքերեն գրքերի մատենագիտություն (1727-1968)» գիրքը հրատարակվել է 1985թ. Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի հրատարակչության կողմից:

«Հայատառ թուրքերեն պարբերական մամուլը» մատենագիտական քառալեզու աշխատանքը նույն հրատարակչության կողմից լույս է ընծայվել 1987 թվականին:

«Հայատառ թուրքերեն գրականությունը» աղբյուրագիտական հետազոտությունը լույս է ընծայվել Երևանի պետական համալսարանի հրատարակչության կողմից 2001 թվականին:

2005թ. Ստամբուլի «Թուրքուագ» հրատարակչությունը լույս է ընծայել «Հայատառ թուրքերեն գրքերի և հայատառ թուրքերեն պարբերական մամուլի մատենագիտություն» քառալեզու աշխատությունները մի գրքով: Այն պարունակում է ավելի քան 2000 անուն գրքեր, հրատարակված 1727-1968թթ., աշխարհի 50 քաղաքների շուրջ 200 տպարաններում: Հայատառ թուրքերեն պարբերական մամուլի մատենագիտությունը ներառում է շուրջ 120 անուն պարբերականներ, սկսած 1840 թվականից:

2005թ. պաշտպանել է պատմական գիտությունների դոկտորական ատենախոսություն «Հայատառ թուրքերեն գրականությունը 15-20-րդ դարերում» (Աղբյուրագիտական հետազոտություն) թեմայով:

2008թ. լույս է տեսել «Ցուցակ հայերեն ձեռագրերի հայատառ թուրքերեն նյութերի և հայատառ թուրքերեն ձեռագրերի» մատենագիտական աշխատությունը: Այն ներկայացնում է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հայատառ թուրքերեն ձեռագրական հարստությունը:

«Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում» ուսումնասիրությունը հայերեն լեզվով լույս է տեսել 2011թ. և արժանացել ՀՀ Նախագահի մրցանակին: Գրքի Բ տպագրությունը կատարվել է 2012թ.: Նույն թվականին գիրքը լույս է տեսել ռուսերեն և Միմսկում արժանացել «Գրքերի արվեստ» ԱՊՀ երկրների մրցույթի «Գրան Պրի» մրցանակին: Թուրքերեն լեզվով ուսումնասիրությունը հրատարակվել է 2014թ.:

2012թ. լույս է տեսել «Հայատառ թուրքերեն գրականությունը» (ֆրանսերեն), 152 էջ 2016թ. լույս է տեսել «Լուզինյան թագավորական տան հայ ժառանգները», 218 էջ 2018թ. լույս է տեսել «Գեվորգ Բամպուկճյան», 168 էջ

2022թ. լույս է տեսել «Բարս Թուղլաճի. կյանքի էջեր», 132 էջ

2023թ. լույս է տեսել «Հայատառ թուրքերեն գրականությունը», 206 էջ,

2023թ. լույս է տեսել «Հայատառ թուրքերեն գրականությունը» (անգլերեն), 198 էջ



1. Եղբ Մկրտաւարդին
2. Բարխանեղդին Թեւիսի
3. Կիկի Տրաչյա
4. Մյունիք Ճեհիմ
5. Շեխաբեղդին Մուկեյման
6. Կիկի Պիսնեմիճյան
7. Մուկախիր
8. Էլիզ Պիսնեմիճյան
9., 10. ...
11. Արթիմն
12. Արշալույս
13. Աննեղ Ճեհիմ
14. Շեխյէր
15. Շարի
16. Իսմայիլ Գալիպ Արշան
17. Թառնիսն Նախիր

